



ԴԱՅԱՐԵԱՆ ԵՐՈՒԲԻՐ  
ԿԻՐԱՎԿՈՒՅԱՆ ԱԼԲԵՐՏ  
ՄԵԼԻՔՅԱՆ ԳԱԳԻԿ  
ԹՈՍՈՒԻՆՅԱՆ ՈՂՈՏՈՑ  
ՄԱՐԼԵԱՆ ՄՈՒ



# Ֆիզիկա



Եղուսրդ Դաշտավան  
Ալբերտ Կիրսկովան  
Գագիկ Մելիքջան  
Ուստու Թուսուխչան  
Սոս Մահլեան

# ՖԻԶԻԿԱ.7

Համրակրթական դպրոցի 7-րդ դասարանի դասագիրը



Եղիթ Պրիս  
Երեսն 2007

Հաստատված է  
ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից

Խմբագրությամբ՝  
պրոֆ. Ա. Կիրակոսյանի և պրոֆ. Է. Ղազարյանի

Խմբագրությամբ՝  
պրոֆ. Ա. Կիրակոսյանի և պրոֆ. Է. Ղազարյանի  
«ՎՐԱՏՈՒԹՅՈՒՆ ԺԱՌՈՒՄ»  
ԽՍՀՄԱՏԳԹԵՐԱՆՑ ՎԱՐՏՈՂԵՐԱՆ

ՀՏԴ 373.167.1:53(075)  
ԳՄԴ 22.3 ց72  
Ֆ 524

Ֆ 524 Ֆիզիկա-7. Հանրակրթական դպրոցի 7-րդ դասարանի դասագիրք/ Է. Ղազարյան, Ա. Կիրակոսյան, Գ. Մելիքյան և ուրիշ. —Եր.: Էղիք Պրինտ, 2007—196 էջ:

4306021200  
Ֆ 789(01)2007 2007

ԳՄԴ 22.3 ց72

ISBN 978-99941-61-68-3

© Եղիք Պրինտ, 2007  
© Է. Ղազարյան, Ա. Կիրակոսյան, Գ. Մելիքյան,  
Ռ. Թոսունյան, Ս. Սահյան, 2007

## ՖԻԶԻԿԱԿԱՆ ՄԵԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ: ՊԱՐՁԱԳՈՒՅՆ ՉԱՓՈՒՄՆԵՐ

**ՖԻԶԻԿԱՅԻ ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ:**  
**ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՐԵՎՈՒՅՅԹՆԵՐ**

§ 1

Մարդն ապրում է բնության մեջ: Բնությունն այն է, ինչ շրջապատում է մարդուն՝ ջուրը, օդը, հողը, ծառերը, կենդանիները, աստղերը, մոլորակները: Մարդը ևս բնության մասն է:

Բնության մեջ մշտապես տեղի են ունենում քազմազան փոփոխություններ: Օրինակ՝ խոր աշխանք սաղսակալում են լճակները, գարնանը հալվում է ձյունը, ամռանն անձրևն է զայխ, իսկ ձմռանը՝ ձյուն: Երբեմն անձրևի ժամանակ որոտում է ամպրոպը, փայլատակում է կայծակը: Անձրևից հետո հաճախ շողում է երփներանգ ծիածանը: Ծարժվում են Արեգակը, Լուսինը, աստղերը, մարդիկ և կենդանիները, տեղափոխվում են փոխադրամիջոցները, աճում են ծառերը և ծաղիկները:

Բնության մեջ տեղի ունեցող փոփոխություններն անվանում են բնության երևոյթներ: Վաղ ժամանակներից մարդը դիտել է իրեն շրջապատող աշխարհը, որից կախված էր նրա ողջ կյանքը, յանկացել հասկանալ այնուեղ տեղի ունեցող երևոյթները:

Ուստմանասիրելով դրանք՝ մարդը պարզել է, որ բնության մեջ ամեն մի փոփոխություն տեղի է ունենում օրինաչափորեն, այսինքն՝ գոյություն ունի երևոյթի պատճառ, և ամեն մի պատճառի համապատասխանում է որոշակի հետևանք:

Արեգակը ջերմացնում է Երկիրը, սակայն նաև չորացնող երաշտի պատճառ է դառնում: Անձրևը կենարար խոնավություն է բերում դաշտերին, սակայն առաջացնում է նաև ջրհեղեղներ: Անհաշիվ դժբախտություններ են պատճառում նաև փորորիկներն ու երկրաշարժերը: Ջիմանալով դրանց առաջացնան պատճառները՝ մարդիկ մեծ վնասներ էին կրում: Բայց աստիճանաբար նրանք սկսեցին հասկանալ

բնության երևոյթների իրական պատճառները, կանխատեսել դրանց հետևանքները և այդ գիտելիքներն օգտագործել իրենց առօրյա կյանքում:

Բացատրել բնության երևոյթները փորձել են դեռևս Հին Չինաստանի, Հին Հնդկաստանի և Հին Հոնաստանի գիտնականները: Հին աշխարհի մեծագույն մտածող, հույն գիտնական Արիստոտելը (մ.թ.ա. IV դար) գրել «Ֆիզիկա» գիրը («Փիզիկա» բառն առաջացել է հունարեն «Փյուգիս»՝ բնություն բառից): Այդ գրքում նա հավաքեց այն ամենը, ինչ մարդկանց հայտնի եր բնության երևոյթների մասին, և այդ տեղեկությունները լրացրեց բնության մասին իր հայացքներով ու սեփական դիտումների նկարագրություններով:

Հետագայում բնության երևոյթների մասին մարդկանց գիտելիքներն այնքան ընդարձակվեցին ու խորացան, որ ֆիզիկայի աստիճանաբար առանձնացան և որպես ինքնուրույն գիտություններ ծառավորվեցին աստղագիտությունը՝ գիտություն տիեզերքի մասին, Երկրաբանությունը՝ գիտություն Երկրի ընդերքի մասին, օդերևութաբանությունը՝ գիտություն Երկրի մքնոլորտի մասին, կենսաբանությունը՝ գիտություն կենդանի օրգանիզմների մասին, քիմիան՝ գիտություն նյութերի փոխակերպումների մասին և որիշ շատ գիտություններ:

Ֆիզիկան ուսումնասիրում է մեխանիկական, ջերմային, էլեկտրական, մագնիսական, լուսային երևոյթները, որոնք կոչվում են ֆիզիկական երևոյթներ: Ֆիզիկական երևոյթներ տեսի են ունենում և տիեզերքում, և Երկրի ընդերքում, և կենդանի օրգանիզմներում, և մքնոլորտում, այլ կերպ ասած՝ ամենուր:

Ավտոմեքենայի շարժվելը, քարի ընկնելը, ջրի սառչելը, սառույցի հալվելը, ջրի գոլորշիանալը, կայծակը, որոտը ֆիզիկական երևոյթների օրինակներ են:

Ուսումնասիրենով ամենապարզ երևոյթները՝ ֆիզիկուները կարողանում են ստանալ բնության երևոյթները նկարագրող առավել ընդիմանուր օրենքները: Առանց այդ օրենքներն իմանալու և դեռևս շիայտնաբերված երևոյթների կանխատեսումների համար դրանք կիրառելու, մարդը չէր կարող ապահովել իր անվտանգ գոյությունը:

Մեզ ջրապատող յուրաքանչյուր առարկա ընդունված է անվանել ֆիզիկական մարմին կամ պարզապես մարմին:

Այն, ինչից բաղկացած են Ֆիզիկական մարմինները, կոչվում է Շյուր, օրինակ՝ երկաք, պլինձ, փայտ, ջուր, ող և այլն: Դռան բռնակը երկարից է: Բռնակը Ֆիզիկական մարմին է, երկաքը՝ նյութ: Կարսան պղնձից է, քանոնը՝ փայտից, ջրի կարիքը՝ ջրից, երկրի մքնուրոտը՝ օդից և այլն:

Այն ամենը, ինչ գոյություն ունի տիեզերքում՝ երկնային մարմիններ, բույսեր, կենդանիներ և այլն, գիտության մեջ անվանում են մատերիա: Նյութը մատերիայի տեսակներից է:

Մատերիայի այլ տեսակի օրինակներ են լույսը, ռադիոալիքները: Մեզ հայտնի է, որ ռադիոալիքներ իրականում գոյություն ունեն, չնայած մենք դրանք չենք տեսնում:

## Հարցեր և առաջադրանքներ



- Ի՞նչ է բնությունը:
- Ի՞նչ է բնության երևույթը:
- Ի՞նչ է նշանակում «ֆիզիկա» բառը:
- Ի՞նչ է ուսումնասիրում ֆիզիկան:
- Բերեք ֆիզիկական երևույթների օրինակներ:
- Թվարկեք ֆիզիկական երևույթների տեսակները:
- Ի՞նչ է ֆիզիկական մարմնները: Բերեք օրինակներ:
- Ի՞նչ է նյութը: Բերեք օրինակներ:
- Ի՞նչ է մատերիան:
- Մատերիայի ի՞նչ տեսակներ գիտեք:


## Ֆիզիկոսների ՍԱՍԻՆ: ՀԱՅ ՖԻԶԻԿՈՍՆԵՐ

§2

Բոլոր մեծ ֆիզիկոսները եղել են աշխատասեր, համբերատար և համար: Ամենից առաջ նշենք, որ Ֆիզիկոսները նաև շատ հետաքրքրասեր մարդիկ են: Նրանք հասուն «ինչուիկներ» են. նրանց հետաքրքրությունը է և երևույթը, և՝ այն, թե ինչու և ինչպես է այդ երևույթը տեղի ունենալու:

Ֆիզիկոսների բնավորության հիմնական գծերից մեկն է սովորականի մեջ անսովոր տեսնելն է:

Բոլոր ժամանակներում էլ բնության ուսումնասիրությունը պահանջել է տարրեր երկրների և ժողովուրդների բոլոր գիտնականների համար աշխատանքը: Նրանց գիտական



Անանիս  
Շիրակացի  
VII դ.



Վիկոնտ  
Համբարձումյան  
(1908-1996)



Արքահամ  
Ալիխանյան  
(1904-1970)



Արտեմ  
Ալիխանյան  
(1908-1978)

Ֆիզիկայի լաբորատորիա, կազմվել են դասագրքեր, այդ թվում՝ տեսական և փորձարարական ֆիզիկայի եռահատոր դասընթացը:

Հայաստանի առաջին Հանրապետության հոչակումից անմիջապես հետո հիմնադրվեց Երևանի պետական համալսարանը (1919 թ.), որը դարձավ գիտական կաղըերի պատրաստման և գիտական հետազոտությունների հիմնական կենտրոն:

1943 թվականին հիմնադրվեց Հայաստանի գիտությունների ակադեմիան, իսկ նրա կազմում՝ Ֆիզիկայի գիտահետազոտական ինստիտուտը՝ Արտեմ Ալիխանյանի գլխավորությամբ: Վերջինս իր եղբոր՝ Արքահամ Ալիխանյանի հետ տիեզերական ճառագայթների ֆիզիկայի բնագավառում հետազոտություններ կազմակերպելու նպատակով Լենինգրադից (այժմ՝ Սանկտ-Պետերբուրգ) տեղափոխվել էր Երևան:

Երևանի պետական համալսարանում ստեղծվեց միջուկային ֆիզիկայի ամբիոն՝ Արքահամ Ալիխանյանի ղեկավարությամբ, իսկ ավելի ուշ՝ Երևանի ֆիզիկայի ինստիտուտը՝ Արտեմ Ալիխանյանի գլխավորությամբ:

1946 թ. աշխարհահոչակ աստղաֆիզիկոս, ֆիզիկոս և մարեմատիկոս Վիկոնտ Համբարձումյանի նախաձեռնությամբ ու դեկավարությամբ հիմնադրվեց Բյուրականի աստղադիտարանը, որը դարձավ աշխարհի լավագույն աստղադիտարաններից մեկը: Այս ամենը խթանեց Հայաստանում ֆիզիկայի բուռն զարգացումը XX դարի երկրորդ կեսին:

## Շետաքրքիր է իմանալ

1856 թվականին Վիեննայում լույս է տեսել Մխիթարյան միաբանության անդամ Քարտաղ Նորիճանյանի «Փորձառական թնագիտություն կամ ֆիզիկա» (աշխարհաբար) 550 էջանոց աշխատությունը, որը հիմնականում նվիրված է ֆիզիկային և մեջանում առաջինն է որպես ֆիզիկայի դասագիրը:

XX դարի 20-ական թվականների վերջին «Բազմավեց» հանդեսում առաջին անգամ հայերեն տպագրվել են Ալբերտ Այնշտայնի եռդիմության երկուոր՝ հեղինակի համաձայնությամբ:

1903 թվականին Միերան Գասպարյանը Ֆիլադելֆիա քաղաքում հիմնադրել է ԱՄՆ-ի առաջին ունիտգեներամ լաբորատորիան:

## Տ3

### ԻՆՉՊԵՍ ԵՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԸ

Ֆիզիկական երևոյթների ուսումնասիրման նպատակով օգտագործվում են տարրեր մերողներ: Ֆիզիկայում որոշ երևոյթների ուսումնասիրման համար օգտագործվում են դիտումները: Շատ գիտելիքներ նարդիկ ծեռք են բերել դիտումների միջոցով:

Այսպես, օրինակ, մեզանից յուրաքանչյուրը նկատել է, որ հենարան կամ կախոց չունեցող մարմիններն ընկնում են, գետավի ջուրը խոխոցում է, սառույցը սենյակում հալվում է, մագնիսը ձգում է երկար առարկաները և այլն:

Բնության երևոյթների՝ ծիածանի, կայծակի, Արեգակի ու Լուսնի խավարումների և այլնի մասին մեր գիտելիքները նույնպես հիմնվում են դիտումների վրա: Դիտումները հատկապես կարևոր են երկնային մարմինների շարժման օրինաշափությունները պարզելու և դրանց դիրքերը որոշելու համար:

Սակայն դիտումները միշտ չեն, որ բավարարում են գիտնականներին մանրազնին ուսումնասիրությունների համար: Երևոյթները հաճախ կարծատ են (օրինակ՝ կայծակը) կամ դրանք ոչ միշտ և ոչ ամենուրեք կարելի է դիտել (օրինակ՝ ընեռափայլերը, խավարումները), ուստի ֆիզիկայում շատ երևոյթների ուսումնասիրման համար դրվում են հատուկ

Փորձեր, կատարվում են փորձարարական հետազոտություններ: Օրինակ՝ կայծակի շատ հատկությունների ուսումնասիրման համար կարելի է այն վերարտադրել դպրոցական էլեկտրածավալ մեքենայի միջոցով:

Ի տարրերություն դիտումների՝ փորձերը հնարավորություն են տալիս նույն պայմաններում բազմից կրկնելու ուսումնասիրվող երևոյթը և հատուկ արքերով կատարել համապատասխան չափումներ: Փորձի արդյունքների վերլուծման հիմնան վրա արվում են համապատասխան եղանակներ:

Ըստ ավանդագրույցի՝ իտալացի նշանավոր ֆիզիկոս Գալիլեյը մարմինների անկումն ուսումնասիրելու համար իր հայրենի Պիզա քաղաքի թեր, բարձր աշտարակից զանազան գնդեր էր բաց բողնում (նկ. 1): Դիտելով դրանց անկումն ու նիստամանակ անհրաժեշտ չափումներ կատարելով՝ նա հայտնաբերեց մարմինների անկնան օրենքները:

Անգլիացի նշանավոր ֆիզիկոս Մայքլ Ֆարաելը, օգտվելով մագնիսի հատկություններից, տասը տարվա լարված փորձերի արդյունքում կարողացավ մագնիսի միջոցով ստանալ էլեկտրական հոսանք: Ներկայումս էլեկտրաէներգիայի արտադրության մեջ հիմնականում օգտագործվում է Ֆարաելի հայտնագործած երևոյթը:

Ամերիկացի գյուտարար Թոնաս Էդիսոնը կատարել է հազարից ավելի փորձ՝ լուսավորության համար պիտանի էլեկտրական լամպ ստեղծելու համար:

Դիտումներն ու փորձերը ֆիզիկական գիտելիքների աղբյուր են: Դիտումներով և փորձերով ոչ թե ավարտվում, այլ սկսվում է ֆիզիկական երևոյթի ուսումնասիրությունը:

Դիտումների ու փորձերի ընթացքում ձեռք բերված փաստերը պետք է բացատրել արդեն ունեցած գիտելիքների օգնությամբ: Ուսումնասիրվող երևոյթը բացատրելու համար նախ արվում է որոշակի ենթադրություն կամ, ինչպես ընդունված է ասել, առաջադրվում է վարկած: Այսուհետև վարկածի օգնությամբ տվյալ երևոյթի բացատրության ճշտությունն ստուգելու նպատակով կատարվում են նոր փորձեր:

Ենդիանքաց նելով բնության երևոյթների մասին դիտումների և փորձերի արդյունքում ստացած տվյալները՝ գիտնականները հայտնաբերում են օրենքներ, որոնք նիմյանց են կապում բնության տարրեր երևոյթներ, գտնում դրանց պատճառները:



Նկ. 1  
Պիզայի  
աշտարակը

## Հարցեր և առաջադրանքներ

- Ի՞նչպես ենք գիտելիքներ ձեզ բերում թնույթան երևույթների ծասկն:
- Ի՞նչ է փորձը, և ինչով է այն տարրերվում դիտումից:
- Ի՞նչով են փորձի ժամանակ չափումներ կատարում:
- Ի՞նչ է գարկածը:
- Ի՞նչ է օրենքը
- Նկարագրեք ձեզ ծանոթ որևէ ֆիզիկական երևույթի դիտման արդյունքները:

## § 4

### Ֆիզիկական Մեծություններ: Ֆիզիկական Մեծությունների Զափուսը: ԶԱՓՈՍԱՆ ՄԽԱԼ

Առօրյա կյանքում հաճախ անհրաժեշտ է կատարել ամենաբազմազան չափումներ: Ինչ էլ որ պատրաստելու լինենք՝ փոքրիկ տուփ, գրքերի դարակ, որևէ մեքենայի մողել և այլն, անպայման չափումներ ենք անում:

Հիշենք ժողովրդական առածը. «Յոր անգամ չափիր, մեկ անգամ կտրիր»: Մարդկի վաղուց են զիտակցել ճշգրիտ չափումների անհրաժեշտությունը:

Դիտենով երևույթները և կատարելով փորձեր՝ գիտնականները միաժամանակ կատարում են նաև չափումներ: Այսպես, օրինակ, մարմնի անկումն ուսումնասիրելիս անհրաժեշտ է չափել անկման բարձրությունը, մարմնի զանգվածը, նրա արագությունը, անկման ժամանակը: Բարձրությունը (երկարությունը), զանգվածը, արագությունը, անկման ժամանակը ֆիզիկական մեծություններ են: Ֆիզիկական մեծությունը կարելի է չափել:

**Չափել ֆիզիկական մեծությունը՝ նշանակում է այն համեմատել նոյնատիպ մեծության հետ, որն ընդունված է որպես միավոր:**

Օրինակ՝ չափել սեղանի երկարությունը՝ նշանակում է այն համեմատել երկարության միավորի, օրինակ, մետրի հետ:

Յուրաքանչյուր ֆիզիկական մեծության չափման արդյունքում ստացվում է թիվ, որն ընդունված է անվանել տվյալ

Ակ. 2  
Չափաբանն



Ֆիզիկական մեծության բվային արժեքը: Ֆիզիկական մեծությունն այդ բվային արժեքն է՝ արտահայտված ընդունված միավորներով:

Աշխարհի գրեթե բոլոր երկրներն իրար հետ կապված են գիտական, մշակութային, առևտրական և այլ կապերով, և դրա համար էլ երկրների փոխադարձ համաձայնությամբ ստեղծվել է Միավորների միջազգային համակարգը (կրճատ՝ **ՄՀ**):

Միավորների **ՄՀ**-ի հիմնական միավորներից են՝

- երկարության միավորը՝ մետրը (1 մ),
- ժամանակի միավորը՝ վայրկյանը (1 վ),
- զանգվածի միավորը՝ կիլոգրամը (1 կգ):

Ինչպես հայտնի է մաթեմատիկայի դասընթացից, օգտագործվում են ինչպես բազմապատիկ միավորներ, որոնք 10, 100, 1000 և ավելի անգամ մեծ են հիմնական միավորներից, այնպես էլ մասնային միավորներ, որոնք 10, 100, 1000 և ավելի անգամ փոքր են հիմնական միավորներից:

Օրինակ՝ մեծ երկարությունների չափման համար օգտագործվում է կիլոմետր (կմ) միավորը. 1 կմ = 1000 մ, իսկ փոքր երկարությունների չափման համար՝ սանտիմետր միավորը. 1 սմ = 0,01 մ, միլիմետր. 1 մմ = 0,001 մ, միկրոմետր. 1 մկմ = 0,000001 մ:

Ժամանակի չափման գործածական միավորներն են՝ րոպեն. 1 ր = 60 վ, ժամը. 1 ժ = 60 ր = 3600 վ, միլիվայրկյանը. 1 մվ = 0,001 վ, միկրովայրկյանը. 1 մկվ = 0,000001 վ:

Ֆիզիկական մեծությունների չափման և փորձեր կատարելու համար անհրաժեշտ են զանազան ֆիզիկական սարքեր:

Պարզագույն չափիչ սարքեր են չափաքանոնը (նկ. 2), չափերիզը (նկ. 3), չափազլանը (նկ. 4): Կան ավելի բարդ չափիչ սարքեր՝ վայրկենաչափ (նկ. 5), սենյակային ջերմաչափ (նկ. 6. ա), բժշկական ջերմաչափ (նկ. 6. բ) և այլն:

Ֆիզիկայի և տեխնիկայի զարգացմանը զուգընթաց չափիչ սարքերը կատարելագործվել և բարդացել են:

Յուրաքանչյուր չափիչ սարքը ունի սանրդակ:

Նայեք ձեզ լավ ծանոթ չափաքանոնին: Բաժանումների գծիկները և որոշ գծիկների մոտ գրված թվերը միավին ներկայացնում են քանոնի սանդղակը: Երկու հարկան գծիկների հետավորությունը կոչվում է սանդղակի քաժանման արժեքը (տվյալ դեպքում քաժանման արժեքը 1 մմ է):



Նկ. 3  
Չափերիզ



Նկ. 4  
Չափազլան



Նկ. 5  
Վայրկենաչափ



**Ակտ 6**  
Սեմյակային (ա)  
և թշխական (ր)  
ջերմաչափներ



**Ակտ 7**  
Չափազանի  
սանդղակի մի  
հաստված

**Ակտ 8**  
Նույն մարմնի  
երկարության  
ափումը տարբեր  
չափարաններով

Չափիչ սարքի սանդղակի ամենամեծ արժեքը կոչվում է սարքի չափման սահման (նկ. 2-ում պատկերված չափարանոնի համար այն 15 սմ է):


Չափիչ սարքի սանդղակի բաժանման արժեքը որոշելու համար անհրաժեշտ է գտնել սանդղակի մոտակա այն երկու գծիկները, որոնց կողքին մեծության բվային արժեքներ են գրված: Այնուհետև մեծ արժեքից հանել փոքրը և ստացված թիվը բաժանել դրանց միջև եղած բաժանումների քվին: Որպես օրինակ որոշենք նկ. 7-ում պատկերված չափազանի սանդղակի բաժանման արժեքը:  $100 \text{ սմ}^3$  և  $150 \text{ սմ}^3$  գծիկների միջև սանդղակն ունի  $10$  բաժանում, հետևաբար  $յուրաքանչյուր$  բաժանման արժեքն է՝  $(150 \text{ սմ}^3 - 100 \text{ սմ}^3) / 10 = 5 \text{ սմ}^3$ : Չափազանում լցված հեղողկի ծավալը հավասար է՝  $100 \text{ սմ}^3 + 6 \times 5 \text{ սմ}^3 = 100 \text{ սմ}^3 + 30 \text{ սմ}^3 = 130 \text{ սմ}^3$ :

Այժմ առաջարկենք հետևյալ հարցը՝ հնարավո՞ր է արդյոք չափման միջոցով ստանալ ֆիզիկական մեծության ճշգրիտ արժեքը: Ինչի՞ն է կախված չափման ճշտությունը:

Նկ. 8-ում պատկերված է նույն մարմնի երկարության չափումը տարբեր չափարաններով: Առաջին չափարանով մարմնի երկարությունը  $4$  սմ-ից մեծ է,  $5$  սմ-ից փոքր, սակայն ավելի մոտ է  $4$  սմ-ին (նկ. 8. ա), իսկ երկրորդ քանոնով մոտ  $4,1$  սմ է (նկ. 8. բ):

Առաջին քանոնի բաժանման արժեքը  $0,5$  սմ է, երկրորդինը՝  $0,1$  սմ: Երկրորդ քանոնով չափման արդյունքն ավելի ճշգրիտ է: Եթե վերցնենք ավելի փոքր բաժանման արժեքով չափիչ սարք, ապա կստանանք էլ ավելի ճշգրիտ արդյունք:


Ֆիզիկական մեծությունը բացարձակ ճշտությամբ չափել հնարավոր չէ: Չափման սխալը կախված է բաժանման արժեքից, և այն ընդունված է համարել հավասար բաժանման արժեքի կեսին: Առաջին քանոնով չափելիս սխալը  $0,5 \text{ սմ} : 2 = 0,25 \text{ սմ}$  է, իսկ մարմնի երկարությունը՝  $L = (4,0 \pm 0,25) \text{ սմ}$ : Երկրորդ քանոնով չափելիս սխալը  $0,1 \text{ սմ} : 2 = 0,05 \text{ սմ}$  է և նույն մարմնի երկարության համար ստացվում է՝  $L = (4,0 \pm 0,05) \text{ սմ}$ :





Ակ. 9

Չափաքանոնի ճիշտ (ա) և սխալ (բ) դիրքերը



Ակ. 10

Աչքի ճիշտ (ա) և սխալ (բ) դիրքերը

Չափման սխալը կախված է նաև չափվող առարկայի վրա չափաքանոնը սխալ դիրքով դնելուց (Ակ. 9), ինչպես նաև չափման արդյունքները դիտելիս աշքին ոչ ճիշտ դիրք տալուց (Ակ. 10):

Ֆիզիկայում չափումները լինում են ուղղակի և անուղղակի: **Ուղղակի** են անվանում այն չափումը, որը կատարվում է անմիջականորեն չափիչ սարքի միջոցով, ինչպես, օրինակ, ջերմաստիճանի չափումը ջերմաչափով, գանգվածի չափումը լժակավոր կշեռովով և այլն: **Ինչ անուղղակի** են անվանում այն չափումը, եթե տվյալ մեծության արժեքը որոշվում է այլ մեծությունների ուղղակի չափման միջոցով, օրինակ, արագության որոշումը անցած ճանապարհի և ժամանակի չափմամբ, ուղղանկյունանիստի ծավալի որոշումը նրա երկարության, լայնության և բարձրության ուղղակի չափման միջոցով և այլն:

## Հարցեր և առաջադրանքներ

1. Բերեք ֆիզիկական մեծությունների օրինակներ:
2. Ի՞նչ է նշանակում չափել ֆիզիկական մեծությունը:
3. Ի՞նչ ֆիզիկական սարքն գիտեք:
4. Ի՞նչ է չափիչ սարքի սանդղակը:
5. Ի՞նչն են անվանում սանդղակի բաժանման արժեքը:
6. Ո՞րն է սարքի չափման սահմանը:
7. Ի՞նչից է կախված չափման սխալը:
8. Ո՞րն է կոչվում ուղղակի և ո՞րը՝ անուղղակի չափում: Բերեք օրինակներ:
9. Շարավի՞ր է արդյոց սանտիմետրական բաժանումներ ունեցող չափաքանոնով երկարություն չափել 1 մմ-ի ճշությամբ:
10. Ինչպես կարող եք միլիմետրական բաժանումներով քանոնով չափել ֆիզիկայի դասագրի թերթի հաստությունը:

- Որոշեք նկ. 4-ում, նկ. 5-ում և նկ. 6-ում պատկերված սարքերի սանդղակների բաժանման արժեքները և սարքերի ցուցմունքները:
- Որոշեք ձեր տակ սենյակային ու թշչական ջերմաչափների բաժանման արժեքները և ցուցմունքները գրանցեք տեսորում:
- Տանը չափաժապակենով չափեք ձեր սենյակի լայնությունը ու երկարությունը և հաշվեք սենյակի մակերեսը:

## §5

### ԼԱԲՈՐԱՏՈՐ ԱՇԽԱՏԱՆՔ 1

#### Ընդուկի ծավալի չափումը չափանորի միջոցով


Աշխատանքի նպատակը՝ սովորել չափանորի միջոցով չափել հեղուկի ծավալը և անորների տարրությունները:

**Սարքեր և նյութեր.** չափանոր, ջրով լցված բաժակ, ոչ մեծ սրվակ և այլ անորներ:

**Ցուցանիներ՝ աշխատանքի վերաբերյալ.**

- Դիտեք չափանորը, ուշադրություն դարձրեք դրա բաժանումներին և սանդղակի թվերին:
- Հաշվեք թվերով նշված երկու հարևան զծիկների միջև բաժանումների քանակը:
- Որոշեք չափանորի սանդղակի բաժանման արժեքը: Դրա համար օգտվեք ձեզ հայտնի կանոնից՝  

$$\text{բաժանման արժեքը} = \frac{\text{մեծ թիվ} - \text{փոքր թիվ}}{\text{բաժանումների թիվ}} = \dots \text{սմ}^3 (\text{մl})$$
- Հիշեք՝  $1 \text{ l} (\text{լիոր}) = 1 \text{ m}^3 = 1000 \text{ սմ}^3$ ,  $1 \text{ ml} = 1 \text{ սմ}^3$ :
- Չափանորի մեջ լցրեք ջուր, որոշեք և գրեք, թե որքան է լցված ջրի ծավալը և հետո դատարկեք:
- Փորբ բաժակը լիբը լցրեք ջրով, այնուհետև ջորը զգուշ լցրեք չափանորի մեջ: Չափեք և նշեք լցված ջրի ծավալը, որն էլ կլինի բաժակի տարրությունը:
- Նոյն ձևով որոշեք սրվակի տարրությունը:
- Չափումների արդյունքները գրանցեք աղյուսակում:



Նկ. 11  
Աշի ճիշտ դիրքը

Փորձի համարը	Անորի անվանումը	Հեղուկի ծավալը, սմ <sup>3</sup>	Անորի տարրությունը, մլ
1	Բաժակ		
2	Սրվակ		

Հեղուկի ծավալը հաշվելիս ուշադրություն դարձրեք աշի ճիշտ դիրքին: Չափանորի պատերի մոտ ջուրը փորբ-ինչ բարձրացնե՞ք: Աշի պեստը է ուղղել այն բաժանմանը, որը համընկնում է մակերսույթի հարք մասին:

## ՖԻԶԻԿԱՅԻ ԿԱՊԸ ՄՅՈՒՍ ԲԱՍԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇԵՏ: ՖԻԶԻԿԱՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱՆ

§ 6

Այն բոլոր գիտությունները, որոնք ուսումնասիրում են բնույթունը և բնական երևույթները, կոչվում են բնական գիտություններ: Դրանք են՝ ֆիզիկան, աստղագիտությունը, քիմիան, կենսաբանությունը, աշխարհագրությունը, երկրաբանությունը, բժշկությունը և այլն: Այս բոլոր ոլորտներում էլ լայնորեն կիրառվում են ֆիզիկայի օրենքները: Այդ պատճառով էլ առաջ եկան նոր գիտություններ՝ երկրաֆիզիկա, կենսաֆիզիկա, ֆիզիկական քիմիա, աստղաֆիզիկա և այլն:

Ժամանակակից բժշկությունը դժվար է պատկերացնել առանց շափման ֆիզիկական մերողների մեծ կիրառության ինչպես ախտորոշման, այնպես էլ բուժման բնագավառներում:

Ֆիզիկայի հայտնագործությունները հասկապես կարևոր նշանակություն ունեն տեխնիկայի համար:

Ծոգեմերենաները, ներքին այրման շարժիչները ստեղծեցին մեխանիկական և ջերմային երևույթների մանրակրկիտ ուսումնասիրության շնորհիվ:

Էլեկտրական լուսավորությունը, էլեկտրաշարժիչները, հեռագիրը, հեռախոսը, ռադիոն, հեռուստացույցը և բազմացան այլ սարքեր ու սարքավորումներ էլեկտրական երևույթների ուսումնասիրության արդյունք են:

Գիտությունն ու տեխնիկան սերտորեն կապված են միմյանց հետ: Գիտության նորանոր հայտնագործություններին հետևում է տեխնիկայի հետագա զարգացումը, որն իր հերթին, նպաստում է գիտության նորանոր նվաճումներին:



Զնն Ռուաստ  
(1736-1819)



Չորջ Ստենֆենսոն  
(1781-1848)



Բորիս Յակորի  
(1801-1874)



Ռուբեն Դիզել  
(1858-1913)



Թոմաս Էղյան  
(1847-1931)



Վոնստանին  
Շմլյանսկի  
(1857-1935)

Գիտության և տեխնիկայի զարգացման ժամանակակից մակարդակն աշխարհի բոլոր երկրների գիտնականների և գյուտարարների անունները, որոնք մեծ ավանդ ունեն տեխնիկայի զարգացման գործում:

Նշենք մի քանի հանրահոչակ գիտնականների և գյուտարարների անունները, որոնք մեծ ավանդ ունեն տեխնիկայի զարգացման գործում:

1784 թ. անգլիացի Ջ. Ուատորը ստեղծեց առաջին շոգեմեքենան, իսկ նրա հայրենակից Ջ. Ստեփենսոնը 1816 թ. ստեղծեց առաջին կատարելագործված շոգեքարշը:

1834 թ. ռուս գիտնական Բ. Ցակորին ստեղծեց առաջին էլեկտրաշարժիչը: Բազմաթիվ գյուտերի հեղինակ է ամերիկացի Թոմաս Էղյանը: Նա է հայտնագործել ճայնի մեխանիկական գրանցման սարքը, կատարելագործել շիկացման լամպը, ստեղծել հզոր էլեկտրական գեներատորներ և շատ որիշ սարքավորումներ: Միայն ԱՄՆ-ում նա իր գյուտերի համար ստացել է 1098 արտոնագիր:

Գերմանացի գյուտարար Ռ. Դիզելը 1893 թ. ստեղծեց բառատակու դիզելային շարժիչ: Ռուս գյուտարար Կ. Ցիոլկովսկին, ուսումնասիրելով ռեակտիվ շարժման օրենքները, մշակեց թռչող սարքի՝ հրթիռի նախագիծ՝ Երկրից դեպի Արեգակնային համակարգի մյուս մոլորակները թռչելու համար:

Բազմաթիվ գյուտերի հեղինակ է հայ ճարտարագետ Հովհաննես Աղամյանը: Մեծ է նրա ավանդը հեռուստատեսության զարգացման գործում: Նա է գունավոր հեռուստատեսության և լուսահեռագրության գյուտարարը: 1925 թ. Հ. Աղամյանը Երևանի պետական համալսարանում ցուցադրել է, թե հեռուստատեսությանը ինչպես են հաղորդվում գունավոր պատկերները: Հ. Աղամյանի առաջարկած գունավոր հեռուստատեսությունն իրականություն դարձավ 1928 թ. Լուդում: 1930 թ. նա իրականացրել է սև-սպիտակ պատկերների առաջին հաղորդումը Մոսկվայի Պետերբուրգ:

Երկրի և մյուս երկնային մարմինների ուսումնասիրման մեծ հնարավորություններ ստեղծեց տիեզերագնացությունը: 1957 թ. հոկտեմբերի 4-ին ԽՍՀՄ-ում արձակվեց Երկրի առաջին արհեստական արքանյակը: Իրականացավ մարդու դարավոր երազանքը՝ 1961 թ. ապրիլի 12-ին «Վլուսուկ» տիեզերանավով ուսումնացանաց Յուրի Գագարինն իրականացրեց առաջին թռչքը տիեզերքում: 1969 թ. ամերիկյան տիեզերագնացներ Նեյլ Արմատրոնը և Էդվին Օլդրինը ուրագնեցին Լուսնի վրա: Նրանք Երկրի թթերեցին Լուսնի մակերևույթի լուսանկարը և լուսնահողի նմուշ:

1989 թ. մարտի 13-18-ը, որպես քծկակենսաբանական հետազոտությունների մասնագետ, ամերիկյան «Դիսկավերի» տիեզերանավով թռչք է կատարել հայազգի առաջին տիեզերագնաց, քծկագիտության դրվագը Չեմս Բաղյանը (ծն. 1952 թ.):

Տիեզերական հետազոտությունները չեն սահմանափակվում միայն Երկրի և նրա արքանյակ Լուսնի ուսումնափրություններով: Արդեն արձակվել են միջնորդակային ավտոմատ կայաններ դեպի Հրատ (Մարս), Արտայակ (Վեներա) և Լուսնքազ (Յուպիտեր) մոլորակները: Քննարկվում է մոտ ապագայում դեպի Հրատ նաև տիեզերագնացների ողևորության հնարավորությունը:

## Հարցեր և առաջարրանքներ

1. Ո՞ր գիտություններն են կոչվում բնական: Թվարկեք դրանցից մի քանիսը:
2. Ի՞նչ դեր է կատարում ֆիզիկան այդ գիտությունների զարգացման գործում:
3. Բերեք ձեզ ծանոթ տեխնիկական սարքերի օրինակներ:
4. Ի՞նչ դեր է կատարում ֆիզիկան տեխնիկայի զարգացման գործում:
5. Ինչպիսի՞ն է տեխնիկայի դերը ֆիզիկական ուսումնասիրություններում:

## Շետաքրքիր է ինձնալ

### Եղիստնի կատարելու

Եղիստնի հյուրերը դժվարությամբ էին բացում նրա այգու դրմակը: Մի օր նրանցից մեկը հանդիմանում է Եղիստնին՝ ասելով, որ նրա նման տաղանդավոր գյուտարարը կարող էր ավելի լավ դուռ պատրաստել:

— Դունակը կատարյալ է.— պատասխանում է Եղիստնի. — այն պարանով միայնված է ջրհարի պոմախին, և ամեն մերս մտնող 20 լիտր ջուր է մղում դեպի ջրամբար:

ՊՐԵԴԻԿԱԴՐԱ  
ԺԵՂՈՒՅԱՅԻ  
ԺԱԿՈՎՈՎ  
ԱՎԱՐԱՐՈՒՄ  
ՎԱՐԱՐՈՒՄ

## ՄԱՐՍԻՆՏԵՐԻ ՀԱՐԺՈՒՄ ԵՎ ՓՈԽԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

87

### ՄԵԽԱՆԻԿԱԿԱՆ ՀԱՐԺՈՒՄ: ՀԱՐԺՄԱՆ ՀԱՐՄԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Թեզանից ո՞վ չի տեսել, թե ինչպես են փողոցում շարժվում ավտոմեքենաները, մարդիկ, ինչպես է երկնքում սավառում ինքնարիոը, ինչպես են տատանվում ծաղի ճյուղերը և այլն: Շարժվում են ինչպես երկրագնդի, այնպես էլ տիեզերքի մարմինները, մոլորակները պտտվում են Արեգակի շուրջը, Երկրի արհեստական արրանյակները և Լուսինը պտտվում են Երկրի շուրջը: Շարժվում են աստղերն ու գալակտիկաները, նյութի փոքրագույն մասնիկները՝ ատոմներն ու մոլեկուլները: Այս բոլորը մեխանիկական շարժման օրինակներ են:

Իսկ ի՞նչ ենք հասկանում «մարմնի շարժում» ասելով: Չնայած առօրյա դիտումների շնորհիվ որոշակի պատկերացում ունենք մարմինների շարժումների մասին, այնուամենայնիվ այս հարցին հատակ պատասխանելու այնքան էլ հեշտ չէ: Դրանում համոզվելու համար հարցը ձեր դասընկերներին՝ շարժվո՞՞մ են արյուք ձեր դպրոցի շենքը, դասասենյակը կամ պորակի հուշարձանը: Նրանց մի մասն անմիջապես կպատասխանի: «Իհարկե՛՞ո՛, ինչպե՞ս կարող է շարժվել շենքը, հուշարձանը, դրամբ դադարի վիճակում են»:

Եթե փոքր-ինչ մտածենք, կտեսնենք, որ այդ պատասխանը ճիշտ չէ: Շե՞՞ո՞ որ մեզ լավ հայտնի է, որ Երկրագունդը պտտվում է Արեգակի շուրջը, հետևաբար դրա վրա գտնվող բոլոր

Նկ. 12

Հարժվող  
ավտոմեքենան  
փոխում է իր դիրքը  
ծաղի և տների  
նկատմամբ



մարմինները, այդ թվում՝ նաև շենքերն ու հուշարձանները, նոյնպես պտտվում են Արեգակի շուրջը: Նմանապես շենք կարող պնդել, որ բռչող ինքնարիում նատած ուղևորը շարժվում է, քանի որ նա, շարժվելով երկրագնդի նկատմամբ, դադարի վիճակում է ինքնարիոի նկատմամբ: Այս օրինակները ցույց են տալիս, որ շարժման վերաբերյալ մեր առօրյա պատկերացումներն ամբողջական չեն և հաճախ կարող են խաբութիվ լինել:

Նորից վերադառնանք մեր առօրյա դիտումներին և փորձենք պարզել, թե ի՞նչն է առավել բնորոշ շարժմամբ, և սովորաբար ինչպե՞ս ենք որոշում շարժվու՞ն է արդյոք այս կամ այն մարմինը, թե՞ ոչ:

Եթե ենտևենք փողոցում շարժվող ավտոմեքենային, կնկատենք, որ այն ժամանակի ընթացքում անընդհատ փոխում է իր դիրքը շրջապատի շենքերի, ծառերի նկատմամբ (նկ. 12): Երկնքում բռչող ինքնարիոը փոխում է իր դիրքն ամպերի նկատմամբ (նկ. 13):

Պատկերացրեք՝ նատած ենք նաև հավահանգստից ուղևորյան մեկնող նավի մի սենյակում, որի պատուհանը վարագույրով ծածկված է: Կարո՞ղ ենք հաստատ ասել՝ նավը սկսե՞լ է իր շարժումը, թե՞ ոչ: Հավանաբար՝ ո՞չ: Աշխատող շարժիչի ձայնը կամ նավի ճոճվելը շենք կարող մնայ օգնել այս հարցում, քանի որ շարժիչը կարող է աշխատել, իսկ նավը՝ ճոճվել ինչպես շարժման, այնպես էլ տեղում կանգնած վիճակում: Ուրեմն ի՞նչ անել: Պարզապես պեսոք է բայել վարագույրը և նայել ափի մարմիններին: Եթե ժամանակի ընթացքում նավի դիրքը փոխվում է դրանց նկատմամբ, որենք նավը շարժվում է, իսկ եթե չի փոխվում, այն լոդում է տեղում:

Քերպած օրինակները ցույց են տալիս, որ շարժման ժամանակ մարմինը փոխում է իր դիրքը շրջապատի մարմինների նկատմամբ:

**Ժամանակի ընթացքում մարմնի դիրքի փոփոխությունն այլ մարմինների նկատմամբ կոչվում է մեխանիկական շարժում:**

Մենք շենք կարող պնդել՝ շարժվու՞ն է մարմինը, թե՞ ոչ, քանի դեռ շենք նշել՝ ո՞ր մարմնի նկատմամբ:

**Այն մարմինը, որի նկատմամբ դիտարկվում է այլ մարմինների շարժումը, կոչվում է հաշվարկման մարմին:**



Նկ. 13  
Թուղող ինքնարիոը  
փոխում է իր դիրքը  
ամպի նկատմամբ

Եթե մարմնի դիրքը ժամանակի ընթացքում չի փոխվում տվյալ հաշվարկման մարմնի նկատմամբ, ապա ասում են, որ դրա նկատմամբ մարմնը դադարի վիճակում է: Օրինակ՝ տները և ծառերը դադարի վիճակում են Երկրի նկատմամբ:

Որպես հաշվարկման մարմն՝ կարելի է ընդունել ամեն մի մարմն, այսինքն՝ մինույն շարժումը կարելի է դիտարկել տարբեր հաշվակման մարմինների նկատմամբ: Պատկերացրեք շարժվող գնացքում նստած ուղևորին: Ի՞նչ կարելի է ասել ուղևորի շարժման մասին: Նրա կողքին նստած ուղևորը կամի, որ նա անշարժ նստած է վագոնում և գնացքի նկատմամբ դադարի վիճակում է, իսկ կառամատույցին կանգնած դիտողը կպնդի, որ նա շարժվում է գետնի նկատմամբ: Այդ դեպքում երկուսն ել ճիշտ են: Առաջին դեպքում որպես հաշվարկման մարմն ընտրվում է գնացքը, իսկ երկրորդ դեպքում՝ գետնինը: Այսպիսով՝ շարժումը և դադարը հարաբերական են, ամեն ինչ կախված է հաշվարելման մարմնի ընտրությունից:

Մենք ապրում ենք Երկրի վրա, և մեր առօրյա կյանքում որպես հաշվարկման մարմն ստվորաբար ընտրում ենք երկրագունդը: Այն համարում ենք անշարժ և այլ մարմինների շարժումը դիտարկում նրա նկատմամբ:

## Հարցեր և առաջադրանքներ

- Ի՞նչն են անվանում մեխանիկական շարժում:
- Բերեք մեխանիկական շարժման օրինակներ:
- Ո՞ր մարմններ են անվանում հաշվարկման մարմններ:
- Աղյուսակի ձախ սյունակում թերված են մեխանիկական շարժման օրինակներ: Փորձեք այդ սյունակում հիմնավորել թերված պնդումները:

Կարելի է պնդել, որ	քանի որ
գրելիս գրից շարժվում է,	
ինքնարիոց շարժվում է,	
ժամացույցի պլազը շարժվում է,	

- Շարժվող գնացքի վագոնում սեղանի վրա դրված է գիրք: Ո՞ր մարմինների նկատմամբ է գիրքը՝ ա) շարժվում, բ) գտնվում դադարի վիճակում:
- Ո՞վ է շարժվում՝ ընթացող ավտորոպուտը նստած ուղևորը, թե՝ կանգառում կանգնած մարդը:
- Բնագիտուրիան դասընթացից ձեզ հայտնի է, որ Երկիրը պտույվում է Արեգակի շուրջը, մինչդեռ ամենօրյա մեր դիտումները ցույց են տալիս, որ, առավոտյան ծագելով, Արեգակը շարժվում է Երկրի շուրջը և մայր մոռնում: Ո՞ր պնդումն է ճիշտ. Երկի՞րն է պտույվում Արեգակի շուրջը, թե՝ Արեգակը՝ Երկրի:

Այժմ, երբ դուք որոշակի պատկերացում ունեք մեխանիկական շարժման մասին, անցնենք դրա ուսումնասիրմանը: Այս նպատակով նախ ծանոքանամբ մի քանի կարևոր հասկացությունների հետ:

Վերցրեք տեսորի թերթ և որոշ բարձրությունից այն բաց քողեր: Օրորվելով՝ թերթը գետնին կը նկնի: Եթե այդ թերթը ճնորեք և նորից նույն բարձրությունից բաց քողեր, այն կշարժվի ուղիղ գծով և ավելի շուտ կհասնի գետնին: Այս պարզ փորձը ցույց է տալիս, որ միևնույն պայմաններում շարժման բնույթը կախված է մարմնի ծեփությամբ:


Մարմնի չափերը հաշվի առնելը կարևոր է նաև այն պատճառով, որ հաճախ նրա առանձին մասերն են կատարում տարրեր շարժումներ: Օրինակ՝ եթե դիտարկում ենք Երկրի պտույտն իր առանցքի շորջը, նրա տարրեր կետեր մեկ օրվա ընթացքում գծում են տարրեր շառավիղներով շրջանագծեր (նկ. 14):

Սակայն միշտ չէ, որ շարժումը նկարագրելիս մարմնի չափերն էական են: Եթե, օրինակ, գետնին կանգնած մարդն ուսումնասիրում է մեծ բարձրությամբ քոչող ինքնարիոի շարժումը, ապա ինքնարիոի չափերն ամենափել կարևոր չեն, քանի որ դրանք շատ անգամ փոքր են մարդուց մինչև ինքնարիո ինքավորությունից: Կամ եթե ուզում ենք հաշվել, թե որքան ժամանակում է արհեստական արրանյակը պտտվում Երկրի շորջը, մեզ արրանյակի չափերը չեն հետաքրքրում: Նման դեպքերում մարմնի չափերը կարելի է անտեսել և այն դիտարկել որպես նյութական կետ:

**Այն մարմինը, որի չափերը տվյալ պայմաններում կարելի է անտեսել, կոչվում է նյութական կետ:**


Սահմանման մեջ «**նյութական**» բառը շեշտում է նրա տարրերությունը երկրաչափական կետից: Նյութական կետը երկրաչափական կետից տարրերվում է նրանով, որ այն ֆիզիկական մարմին է՝ օժտված որոշակի հատկություններով, մինչդեռ երկրաչափական կետը գործի է դրանցից: Երականում բնույթյան մեջ նյութական կետը գոյություն չունի: Դա հասկացություն է, որը սահմանում ենք՝ պարզեցնելու համար մարմնի շարժման ուսումնասիրությունը:

Ուշադրություն դարձրեք նաև սահմանման մեջ մտնող «**տվյալ պայմաններում կարելի է անտեսել**» բառակապակ-



Նկ. 14  
Երկրագնդի  
տարրեր կետեր  
մեկ օրվա  
ընթացքում  
գծում են տարրեր  
շրջանագծեր

**Ակ.15**  
Մատիսի ծայրի  
շարժման  
հետազոհը



**Ակ.16**  
Ենթարկող  
շարժման  
հետազոհը



ցուրյանը: Վերջինս ցույց է տալիս, որ տվյալ մարմինը նյութական կետ համարելը կախված է դիտարկվող խնդրի պայմաններից: Օրինակ՝ Երևանից Փարիզ քոչող ինքնարիտի շարժումը դիտարկելիս ինքնարիտը կարելի է համարել նյութական կետ, քանի որ նրա չափերը շատ անգամ փոքր են Երևան-Փարիզ հեռավորությունից: Սակայն ինքնարիտի վերելքն ու վայրէջքը կամ օդի դիմադրության դերն ուսումնասիրելիս ինքնարիտի ձևն ու չափերն ունեն էական նշանակություն, և այդ դեպքերում այն չի կարելի համարել նյութական կետ:

Մեկ այլ օրինակ: Եթե հետազոտում ենք Արեգակի շուրջ մոլորակների պտտման օրինաշափուրյունները, մոլորակներն ու Արեգակը կարող ենք դիտարկել որպես նյութական կետեր, իսկ եթե ուսումնասիրում ենք մոլորակների և Արեգակի կառուցվածքը, ապա դրանք նյութական կետեր չենք կարող համարել:

Այս օրինակները ցույց են տալիս, որ միևնույն մարմինը որոշ խնդիրներում կարելի է համարել նյութական կետ, իսկ որոշ խնդիրներում՝ ոչ:

Եթե մատիսի սուր ծայրը հպենք բրդին և շարժենք, ապա բրդի վրա կմնա մատիսի ծայրի շարժման տեսանելի հետքը (Ակ. 15): Մեծ քարձորությամբ քոչող ինքնարիտը նույնպես իր հետևից բողնում է տեսանելի հետք (Ակ. 16): Նշված դեպքերում ասում են, որ դիտարկվող մարմինը շարժվում է որոշակի գծով, որն անվանում են մարմնի շարժման հետազոհ: Քննարկած դեպքերում մարմնի հետազոհը տեսանելի է: Սակայն միշտ չէ, որ այդպես է:

Կախված շարժման տեսակից՝ հետազոհը կարող է լինել ուղիղ, թեկյալ, շրջանագիծ կամ կամայական տեսքի կոր գիծ: Եթե շարժման հետազոհն ուղիղ գիծ է (Ակ. 17), շարժումը կոչվում է ուղղագիծ, իսկ եթե կոր գիծ է (Ակ. 18), շարժումը կոչվում է կորագիծ:


Տարբեր մարմնների շարժման հետազոհները միմյանցից կարող են տարբերվել ոչ միայն ձևով, այլև երկարությամբ:



**Ակ.17**  
Ավտոմեքնան  
կառարում է  
ուղղագիծ շարժում



**Ակ.18**  
Գողակը  
կառարում է  
կորագիծ շարժում



**Նկ. 19**  
Սեղանից ընկած  
գնդակի շարժման  
հետագիծը

Հետազօտի այն տեղամասի երկարությունը, որով շարժվել է մարմինը որոշակի ժամանակամիջոցում, կոչվում է այդ ժամանակամիջոցում մարմնի անցած ճանապարհ:

Օրինակ՝ նկ. 19-ում պատկերված կոր գծի AB տեղամասի երկարությունը սեղանից ընկած գնդակի անցած ճանապարհն է՝ գետնի հետ առաջին և երկրորդ բախումների միջև ժամանակամիջոցում:

Ճանապարհն արտահայտվում է երկարության միավորներով: Միավորների միջազգային համակարգում ( $ՄՀ$ ) որպես ճանապարհի միավոր ընդունված է մետրը (1 մ): Գործնականում օգտագործվում են նաև այլ միավորներ՝ կմ, դմ, սմ և այլն:

## Հարցեր և առաջադրանքներ

1. Ի՞՞նչ են անվանում նյութական կետ:
2. Ո՞ր դեպքում մարմինը կարելի է համարել նյութական կետ, ո՞ր դեպքում ոչ: Բերեք օրինակներ:
3. Ենունյալ ո՞ր դեպքերում ուսումնասիրվող մարմինը կարելի է համարել նյութական կետ:
  - ա) չափագլանով որոշում են պողպատե գնդի ծավալը,
  - բ) դիտարկվում է Երկրի պտույտն իր առանցքի շուրջը,
  - դ) դիտարկվում է Լուսնի պտույտը Երկրի շուրջը,
  - ե) ինքնաթիզը վայրէց է կատարում:
4. Կարելի՞ է Երկրագումը համարել նյութական կետ:
5. Ի՞՞նչ են անվանում շարժման հետագիծ:
6. Բերեք ուղղագիծ և կորագիծ շարժման օրինակներ:
7. Դիտեք սեղանի վրա գլորվող և գնդմին ընկնող գնդիկի շարժումը: Գետք նրա շարժման հետագիծը:
8. Ի՞՞նչ են անվանում մարմնի անցած ճանապարհ:
9. Ի՞նչո՞վ է տարրերվում հետագիծն անցած ճանապարհից:
10. Կիանոյիկ՞ արդյոք Երկու նյութական կետերը, եթե հայտնի է, որ դրանց հետագենը հատվում է են:
11. Զարգեր ձեր քայլի միջին երկարությունը և, օգտվելով դրանց, որոշեք տնից մինչև մոտակա կամսացը ձեր անցած ճանապարհը:

## ԾԱԿԱՍՄՐԱՎԱՓ ՏԱՐԺՈՒՄ: ԱՐԱԳՈՒԹՅՈՒՆ

Կատարենք հետևյալ փորձը: Սայլակի վրա տեղադրենք կարողիկը, ինչպես ցույց է տրված նկ. 20-ում: Կարողիկի հավասար ժամանակամիջոցներից հետո ընկնում են գունավորված հեղուկի կարիւմեր և հետո բոլնում հարթակին ամրացված թրի վրա: Սայլակը շարժվում է թելից կախված թերի ազդեցությամբ:


Թելից կախված տարրեր բեռներ՝ կտեսնենք, որ որոշակի թերի դեպքում շարժվող կարողիկի բոլած հետքերի հեռավորություններն իրար հավասար են (նկ. 20), այսինքն՝ սայլակը հավասար ժամանակամիջոցներում անցնում է հավասար ճանապարհներ: Այժմ կարողիկի փականը պտտենք այնպես, որ կարիւմերն ավելի հաճախ ընկնեն: Փորձը ցույց է տալիս, որ այս դեպքում ևս կարիւմերի հետքերի հեռավորություններն իրարից հավասար են, սակայն ավելի փոքր են: Նշանակում է՝ ավելի փոքր հավասար ժամանակամիջոցներում սայլակը նույնպես անցնում է հավասար ճանապարհներ: Փորձում փոփոխելով դիտարկվող ժամանակամիջոցները՝ կհանդգենք, որ սայլակը կամայական հավասար ժամանակամիջոցներում անցնում է հավասար ճանապարհներ:

**Այն շարժումը, որի ընթացքում մարմինը կամայական հավասար ժամանակամիջոցներում անցնում է հավասար ճանապարհներ, կոչվում է հավասարաչափ շարժում:**

Եթե ավտոմեքենան յուրաքանչյուր մեկ ժամում անցնում է 60 կմ, դա դեռևս չի նշանակում, որ այն շարժվում է հավասարաչափ: Շարժման հավասարաչափ լինելու համար

Նկ. 20

Որոշակի թերի դեպքում կարողիկի բոլած հետքերը հավասարահեն են



անհրաժեշտ է, որ այս պայմանը տեղի ունենա կամայական հավասար ժամանակամիջոցների համար, այսինքն՝ ավտոմեքենան յուրաքանչյուր կես ժամում անցնի 30 կմ, յուրաքանչյուր քառորդ ժամում՝ 15 կմ, յուրաքանչյուր մեկ րոպեում՝ 1 կմ և այդպես շարունակ:

Հավասարաչափ շարժում են կատարում, օրինակ, ժամայույցի պլաների ծայրերը, հեղուկում անորի հատակի դեպի մակերևույթ շարժվող օդի պղպջակը՝ որոշակի պայմաններում, եռիզոնական հարք ճանապարհով շարժվող ավտոմեքենան՝ շարժիչի անփոփոխ աշխատանքի դեպքում և այլն:

Հավասարաչափ շարժման կարևոր բնութագիր է արագություն կոչվող ֆիզիկական մեծությունը, որին դուք ծանոք եք մարենատիկայի և բնագիտության դասընթացներից:

Ենթադրենք՝ հեծանվորդն ու հետիոտնը միաժամանակ դուրս են գալիս **A** քաղաքից և մայրուղով հավասարաչափ շարժվում դեպի **B** քաղաք: Թեև մինչև **B** քաղաք հասնելը երկուսն էլ շարժվում են նույն հետազծերով և անցնում նույն ճանապարհը, բայց հեծանվորդն ավելի շուտ է տեղ հասնում, քան հետիոտնը:

Եթե մինույն հեռավորությունն առաջին մարմինն ավելի փոքր ժամանակամիջոցում է, անցնում, քան երկրորդը, ապա ասում են, որ առաջին մարմինն ավելի արագ է շարժվում: Շարժման այս հատկությունը քանակապես բնութագրվում է մի մեծությամբ, որը կոչվում է արագություն:

**Հավասարաչափ շարժման արագությունը ֆիզիկական մեծություն է, որը հավասար է մարմնի անցած ճանապարհի հարաբերությանն այն ժամանակամիջոցովին, որի ընթացքում մարմինն անցնել է այդ ճանապարհը:**

Սահմանումից հետևում է, որ մարմնի հավասարաչափ շարժման արագությունը որոշելու համար պետք է չափել ժամանակամիջոցում մարմնի անցած ճանապարհը և այն բաժանել այդ ժամանակամիջոցին, այսինքն՝

$$\text{Արագություն} = \frac{\text{Ճանապարհ}}{\text{Ժամանակամիջոց}}:$$

Եթե ժամանակամիջոցը նշանակենք  $t$  տառով, անցած ճանապարհը՝  $s$ , իսկ արագությունը՝  $v$ , կոնենանք արագության քանածնը՝

$$v = \frac{s}{t};$$

Ինչպես ամեն մի ֆիզիկական մեծություն, արագությունը նույնպես ունի իր միավորը: Միավորների միջազգային համակարգում ( $U\angle$ ) որպես արագության միավոր ընդունված է այն հավասարաշափ շարժման արագությունը, որի դեպքում մարմինը 1 վ-ում անցնում է 1 մ ճանապարհ: Այդ միավորը նշանակում են 1 մ/վ (կարդացվում է՝ մեկ մետր վայրկյանում):

Գործնականում հաճախ օգտագործում են նաև արագության այլ միավորներ: Եթե ճանապարհն արտահայտենք կիլոմետրերով, իսկ ժամանակը՝ ժամերով, ապա արագության միավորը կիմի 1 կմ/ժ: Պետք է կարողանալ արագությունն արտահայտել տարրեր միավորներով: Օրինակ՝ 54 կմ/ժ արագությունն արտահայտենք մ/վ-ով: Քանի որ  $1 \text{ км} = 1000 \text{ м}$ ,  $1 \text{ д} = 3600 \text{ վ}$ , ապա՝


$$54 \frac{\text{կմ}}{\text{ժ}} = 54 \cdot \frac{1000 \text{ м}}{3600 \text{ վ}} = 15 \frac{\text{մ}}{\text{վ}}:$$

Հավասարաշափ շարժվող մարմնի արագության բվային արժեքը չի փոխվում: Եթե, օրինակ, մարդու հավասարաշափ շարժման արագությունը 4 կմ/ժ է, ապա այն այդպիսին է մնում ամրող շարժման ընթացքում:

Միևնույն արագությամբ մարմինը կարող է շարժվել տարրեր ուղղություններով: Օրինակ՝ ուղղագիծ շարժման ժամանակ մարմինն ուղիղ գծով կարող է շարժվել դեպի աջ կամ ձախ, դեպի վերև կամ ներքև: Հետևաբար շարժման ուղղությունը նույնպես բնութագրում է շարժումը: Շարժման ուղղությունը նշելու համար արագությանը վերագրվում է ուղղություն, որը նշվում է վարպետ:

Նկ. 21-ում պատկերված պարբերությունը են տալիս տարրեր մարմինների արագությունների ուղղությունները: Այն մեծությունները, որոնք բայց բվային արժեքից ունեն նաև ուղղություն, կոչվում են վեկտորական մեծություններ:

Նկ. 21  
Սլաքներով  
նշված են  
մարմինների  
արագությունների  
ուղղությունները



կամ պարզապես վեկտորներ: Արագությունը վեկտորական մեծություն է, այսինքն՝ այն ոչ միայն ցույց է տալիս, թե ինչ արագությամբ է փոխվում մարմնի դիրքը հաշվակման մարմնի նկատմամբ, այլև՝ ինչ ուղղությամբ է շարժվում այն: Հետագայում կծանոթանանք այլ վեկտորական մեծությունների ևս:

Ֆիզիկայում օգտագործվում են նաև մեծություններ, որոնք չունեն ուղղություն և բնութագրվում են միայն քայլին արժեքով: Դրանք կոչվում են սկալյար մեծություններ կամ պարզապես սկալյարներ: Սկալյար մեծություններ են, օրինակ, ծավալը, ջերմաստիճանը, ճանապարհը և այլն:

Մեր շրջապատում հանդիպող տարրեր նարմինների արագությունների մասին պատկերացում կազմելու համար ծանոթացներ աղյուսակ 1-ում բերված տվյալներին:

#### Աղյուսակ 1

Ծարժվող մարմին	Ծարժմամ արագությունը (մ/վ)
Խլուսնջ	0,0014
Կրիա	0,05-0,15
Շնանձ	5
Մարդ՝ քայլելիս	1,3
Ծնածուկ	8,3
Նապաստակ	16,7
Հետպարդ	31
Ունակութիվ ինքնարին	200
Լուսինը՝ Երկրի շորջը պտտվելիս	1 000
Երկրի արեալատական արրանցք	8 000
Երկրը՝ Արեգակի շորջը պտտվելիս	30 000

Բնության մեջ հանդիպող ամենամեծ արագությունը լույսի տարածման արագությունն է դատարկ տարածության մեջ (վակուումում): Այն ընդունված է նշանակել ու տառով (լատիներեն «լուսիուս», արագ քանի): Վակուումում լույսը և վայրկյանում անցնում է 300 000 կմ: Ֆիզիկայում տարրեր նարմինների արագությունների մասին պատկերացում կազմելու համար դրանք հաճախ համեմատում են լույսի արագության հետ:  $\beta = \frac{v}{c}$  մեծությունը ցույց է տալիս, թե տվյալ արագությունը լույսի արագության որ մասն է:

Առօրյա կյանքում հանդիպող արագությունները շատ անզամ փոքր են լույսի արագությունից, հետևաբար դրանց համար  $\beta$ -ն մեկից շատ փոքր մեծություն է: Նույնիսկ

2000մ/վ արագությամբ շարժվող գերծայնային ինքնարիտի համար  $\beta = 0,000006$ : Դրա հետ մեկտեղ ներկայում ֆիզիկոսներին հաջողվում է նյութի փոքրագույն մասնիկներին էլեկտրոններին հաղորդել լույսի արագությանը մոտ արագություններ (այդ դեպքում  $\beta$ -ի արժեքը մոտ է մեկի):

Եթե հայտնի է հավասարաչափ շարժվող մարմնի արագությունը, ապա կարող ենք հաշվել նրա անցած ճանապարհը որևէ ժամանակամիջոցով: Արագության բանաձևից հետեւ վում է, որ

$$s = vt:$$

Այսպիսով՝ հավասարաչափ շարժման դեպքում մարմնի անցած ճանապարհը որոշելու համար արագությունը պետք է բազմապատկել շարժման ժամանակով:

Եթե հայտնի են արագությունն ու ճանապարհը, ապա շարժման ժամանակը՝

$$t = \frac{s}{v},$$

այսինքն՝ հավասարաչափ շարժման ժամանակը որոշելու համար պետք է մարմնի անցած ճանապարհը բաժանել նրա արագությանը:

## Հարցեր և առաջադրանքներ

1. Ո՞ր շարժումն են անվանում հավասարաչափ:
2. Կարենի՞ է արդյոք հավասարաչափ համարել. ա) ժամացույցի սլաքի ծայրակետի շարժումը, բ) թելից կախված գնդիկի տատանողական շարժումը, գ) ջրի շարժումը գետում, դրի հունը մեկ լայնանում է, մեկ՝ թեղանում, դ) մետրոյի շարժասանդուղքի շարժումը:
3. Ո՞ր մեծությունն է կոչվում հավասարաչափ շարժման արագություն:
4. Ի՞նչ միավորներով է չափվում արագությունը:
5. Ինչպես որոշել հավասարաչափ շարժվող մարմնի անցած ճանապարհը, եթե հայտնի են արագությունն ու շարժման ժամանակը:
6. Ինչպես որոշել հավասարաչափ շարժման ժամանակը, եթե հայտնի են մարմնի արագությունն ու անցած ճանապարհը:
7. Ո՞ր արագությունն է մեծ՝ 1կմ/ժ-ն, թե՝ 1մ/վ-ն, 20սմ/վ-ն, թե՝ 2մ/վ-ն, 54կմ/ժ-ն, թե՝ 15մ/վ-ն:
8. Ի՞նչ է վեկտորը. ի՞նչ է սկալյարը:
9. Սուրբ թերված արագություններն արտահայտեք մ/վով.

$$1\text{կմ/վ} = \text{մ/վ}, \quad 54\text{կմ/ժ} = \text{մ/վ},$$

$$36\text{կմ/ժ} = \text{մ/վ}, \quad 8\text{կմ/ժ} = \text{մ/վ}:$$

10. Ինչպե՞ս կարելի է որոշել, թե ինչ արագությամբ են աճում ձեր զվարքը: Փորձեց հաշվել այդ արագությունը:
11. Ըստքեր առվի կամ գետի հորիզոնական հարթ տեղամաս և չափեր ջրի արագությունը՝ օգտագործելով խցան կամ որևէ թերթ առարկա, մետր, վայրկենացույց սլաք ունեցող ժամացույց:
12. Պարզեց՝ կարո՞ղ է արդյոց հետիւնը կես ժամում հասնել նկարում պատկերված բնակավայրը, եթե նա ճանապարհային նշանից սկսի շարժվել 1,5 մ/վ արագությամբ:



## ՀԱԿԱՍԱՐԱՉԱՓ ՇԱՐԺՄԱՆ ԳՐԱՖԻԿԱԿԱՆ ՊԱՏԿԵՐՈՒՄԸ

**Տ10**

Տեսանք, որ հավասարաշափ շարժման դեպքում մարմնի անցած ճանապարհի կախումը ժամանակից տրվում է  $s = vt$  քանածով: Այդ մեծությունների կախումը կարելի է ներկայացնել նաև աղյուսակի տեսքով: Ենթադրենք՝ մարմնի շարժման արագությունը 10 մ/վ է: Այդ դեպքում կունենանք՝  $s = 10t$ : Ժամանակի տարրեր արժեքների համար հաշվելով անցած ճանապարհը՝ կազմենք հետևյալ աղյուսակը.

### Աղյուսակ 2


Շարժման ժամանակը, վ	0	1	2	3	4
Մարմնի անցած ճանապարհը, մ	0	10	20	30	40

Աղյուսակ 2-ից երևում է, որ քանի անգամ մեծացնում ենք ժամանակը, նույնամ անգամ մեծանում է անցած ճանապարհը: Մարենաստիկայում երկու մեծությունների այդպիսի կապը կոչվում է ուղիղ համեմատական կախում: Հետևաբար հավասարաշափ շարժման դեպքում մարմնի անցած ճանապարհն ուղիղ համեմատական է ժամանակին: Այս օրինաչափությունը բույր է տալիս հավասարաշափ շարժումը սահմանել նաև հետևյալ կերպ:

**Այժ շարժումը, որի դեպքում մարմնի անցած ճանապարհը ուղիղ համեմատական է շարժման ժամանակին, կոչվում է հավասարաշափ:**

Մի մեծության կախումը մյուսից կարելի է ներկայացնել ոչ միայն քանածելի կամ աղյուսակի տեսքով, այլ նաև զրաֆիկորեն: Դիտարկվող դեպքի համար կառուցենք մարմնի անցած ճանապարհի կախումը ժամանակից արտահայտող

Նկ.22  
ճանապարհի  
կախումը  
ժամանակից  
պատկերող  
գրաֆիկը





գրաֆիկը: Դրա համար ընտրենք ուղղանկյուն կոորդինատային համակարգ (նկ. 22): Հորիզոնական (արագություն) առանցքի վրա որոշակի մասշտաբով տեղադրենք ժամանակի արժեքները, իսկ ուղղաձիգ (օրինատների) առանցքի վրա՝ ճանապարհի արժեքները: Այսուակ 2-ի տվյալներով կառուցելով գրաֆիկը՝ կտևսնենք, որ այն ուղղի գիծ է: Այսպիսով՝ **հավասարաշափ շարժման ճանապարհի գրաֆիկն ուղղի գիծ է:**

Եթե այդ նույն առանցքների վրա կառուցնենք ճանապարհի գրաֆիկը մեկ այլ, օրինակ՝  $v = 20 \text{ м/վ}$  արագության դեպքում (նկ. 22), կտևսնենք, որ այն ավելի կտրուկ է վեր բարձրանում և ժամանակի առանցքի հետ ավելի մեծ անկյուն է կազմում: Որքան մեծ է հավասարաշափ շարժման արագությունը, այնքան ավելի կտրուկ է վեր բարձրանում նրա գրաֆիկը:

Շարժման գրաֆիկական պատկերումը ոչ միայն ակնառու է, այլև հճարավորություն է տալիս մանրամասն տեղեկություններ ստանալ շարժման մասին: Ճանապարհի գրաֆիկի օգնությամբ կարող ենք նաև լուծել մի շարք խնդիրներ: Օրինակ՝ ի՞նչ ճանապարհ կանցնի  $10 \text{ м/վ}$  արագությամբ շարժվող մարմինը  $3,5 \text{ վ-ում}$ , կամ որքա՞ն ժամանակում այդ մարմինը կանցնի  $25 \text{ մ}$  ճանապարհ և այլն: Նկ.22-ում պատկերված II գրաֆիկից հեշտ է որոշել, որ ժամանակի  $3,5 \text{ վ-ին}$  համապատասխանում է ճանապարհի  $35 \text{ մ}$  արժեքը, ինտևարար նշված ժամանակում մարմինն անցնում է  $35 \text{ մ}$  ճանապարհ: Նմանապես որոշում ենք, որ մարմինը  $25 \text{ մ}$  ճանապարհն անցնում է  $2,5 \text{ վ-ում}$ :

Այժմ կառուցնենք հավասարաշափ շարժման արագության կախումը ժամանակից արտահայտող գրաֆիկը: Քանի որ մարմնի արագությունը հաստատում մնանական է, ապա



Նկ.23

- ա) արագության կախումը ժամանակից պատկերող գրաֆիկը,
- բ) մարմնի անցած ճանապարհը բվացեսի հավասար է ներկված ողղանկյան մակերեսին

նրա գրաֆիկը ժամանակի առանցքին զուգահեռ ուղղող գիծ է:


Նկ. 23. ա-ում պատկերված է այդ գրաֆիկը  $v = 10$  մ/վ արագությամբ շարժվող մարմնի համար:

Արագության գրաֆիկի օգնությամբ կարելի է որոշել մարմնի անցած ճանապարհը կամայական ժամանակամիջոցում:

Նկ. 23. բ-ում ներկված ուղղանկյան կողմերից մեկը թվապես հավասար է ժամանակին ( $t = 3$  վ), իսկ մյուսը՝ արագությանը ( $v = 10$  մ/վ): Ուղղանկյան մակերեսը թվապես հավասար է այդ կողմերի արտադրյալին, որը միաժամանակ մարմնի անցած ճանապարհն է՝  $s = vt = 30$  մ:

Այսպիսով՝ հավասարաշափ շարժման ժամանակ մարմնի անցած ճանապարհը թվապես հավասար է արագության գրաֆիկով սահմանափակված ուղղանկյան մակերեսին:

Սովորաբար փորձարար ֆիզիկոսները նման գրաֆիկներ կառուցում են՝ ելնելով փորձի տվյալներից: Օրինակ՝ մարմնի անցած ճանապարհի կախումը ժամանակից արտահայտող գրաֆիկը կառուցելու համար պետք է ժամանակի տարրեր պահերին չափել մարմնի անցած ճանապարհները և կառուցել համապատասխան գրաֆիկը: Սակայն չափման ժամանակ միշտ բույշ են տրվում միավելու տեսքում (տես՝ գլ. I, § 4), ուստի գրաֆիկի վրա չափման արդյունքը նշվում է ոչ թե կե-



Նկ.24

- Փորձարարական տվյալների հիման վրա կառուցված գրաֆիկ

տով, այլ ուղղաձիգ հատվածով, որի միջնակետը համընկնում է չափման արդյունքին: Եթե ճանապարհի չափման սխալը, օրինակ, 0,5 մ է, ապա ուղղաձիգ հատվածի ծայրերը հատվածի կենտրոնից 0,5 մ վերև և ներքև են (նկ. 24): Գրաֆիկը գծելիս այն պետք է անցնի յուրաքանչյուր հատվածով սակայն պարտադիր չէ, որ անպայման անցնի հատվածի միջնակետով:

## Հարցեր և առաջադրանքներ

- Ի՞նչպե՞ս է կախված հավասարաշափ շարժում կատարող մարմնի անցած ճանապարհը ժամանակից:
- Ի՞նչ տեսք ունի հավասարաշափ շարժման ճանապարհի գրաֆիկը:
- Կառուցեք 40 կմ/ժ արագությամբ հավասարաշափ շարժուղղ մարմնի անցած ճանապարհի կախումը ժամանակից արտահայտող գրաֆիկը:
- Կառուցեք 10 սմ/վ արագությամբ հավասարաշափ շարժող մարմնի արագության կախումը ժամանակից արտահայտող գրաֆիկը:

## Խնդիրների լուծման օրինակներ

- Հավասարաշափ շարժուղղ տրակտորը առաջն 5 րոպեում անցավ 600 մ ճանապարհ: Ինչքա՞ն ճանապարհ կանցնի այն 0,5 ժամում՝ շարժվելով նույն արագությամբ:

$$\begin{array}{l} t_1 = 5 \text{ ր} \\ s_1 = 600 \text{ մ} \\ t_2 = 0,5 \text{ ժ} \\ s_2 = ? \end{array}$$

**Լուծում:**  $t_1$  ժամանակամիջոցում տրակտորի անցած ճանապարհը՝  $s_1 = v t_1$ , որտեղ  $v$ -ն տրակտորի արագությունն է: Այստեղից՝  $v = s_1 / t_1$ ;  $t_2$  ժամանակամիջոցում տրակտորի անցած ճանապարհը՝  $s_2 = v t_2$ : Այս հավասարման մեջ տեղադրելով  $v$ -ի արտահայտությունը, կստանանք՝  $s_2 = s_1 t_2 / t_1$ : Խթային արժեքները տեղադրելով առաջ ամերաժեշտ է  $t_1$  և  $t_2$  մեծությունները արտահայտել ժամանակի միևնույն միավորներով, օրինակ, բոլորներով.

$$t_2 = 0,5 \text{ ժ} = 30 \text{ ր}: \text{Այսիսով՝}$$

$$s_2 = \frac{600 \text{ մ} \cdot 30 \text{ ր}}{5 \text{ ր}} = 3600 \text{ մ}:$$

**Պատասխան՝** 3600 մ:

- Պայրեցումների ժամանակ օգտագործում են ոչ մեծ արագությամբ այրվող բիկֆորոյան բուղ: Ի՞նչ երկարությամբ բուղ պետք է վերցնել, որպեսզի հնարավոր լինի, մինչև դրա լրիվ այրվելը, 300 մ վագելով հեռանայ: Վազքի արագությունը 5 մ/վ է, իսկ բիկֆորոյան բուղով բոցը տարածվում է 0,8 սմ/վ արագությամբ:


$$\begin{array}{l} s = 300 \text{ մ} \\ v = 5 \text{ մ/վ} \\ v_2 = 0,8 \text{ սմ/վ} \\ l = ? \end{array}$$

**Լուծում:** Եթե բիկֆորոյան բուղի երկարությունը նշանակենք  $l$ -ով, նրա այրման ժամանակը՝  $t$ -ով, ապա՝  $l = v_2 t$ : Այս նույն ժամանակում վագորդն անցնում է  $s$  ճանապարհ, հետևաբար՝  $s = v_1 t$ : Այս երկու հավասարումներից ստանում ենք՝  $l = s v_2 / v_1$ : Քանի որ  $v_2 = 0,008 \text{ մ/վ}$ , ապա՝

$$l = \frac{300 \text{ մ} \cdot 0,008 \text{ մ/վ}}{5 \text{ մ/վ}} = 0,48 \text{ մ}:$$

**Պատասխան՝** 0,48 մ:

3. Նկարում պատկերված են հավասարաչափ շարժում կատարող երկու մարմինների անցած ճանապարհների՝ ժամանակից կախումն արտահայտող գրաֆիկները: Ի՞նչ միավորներով է չափված ճանապարհը: Ի՞նչ միավորներով է չափված ժամանակը: Ի՞նչ ճանապարհի է անցել I մարմինը 4 վայրկյանում: Որքա՞ն ժամանակում է II մարմինը անցել 30 մ ճանապարհը: Որքա՞ն են մարմինների արագությունները:



**Լուծում:** Գրաֆիկից հետևում է, որ ճանապարհը չափված է մետրնով, իսկ ժամանակը՝ վայրկյանում: 4 վ-ում I մարմնի անցած ճանապարհը 20 մ է: 30 մ ճանապարհը II մարմինն անցել է 2 վայրկյանում:

Հավասարաչափ շարժման արագությունը որոշելու համար որևէ ժամանակում մարմնի անցած ճանապարհը պետք է բաժանել այդ ժամանակին: Գրաֆիկից հետևում է, որ I մարմինը 6 վ-ում անցել է 30 մ ճանապարհ, հետևաբար նրա արագությունը՝  $v_I = 30 \text{ m/6 v} = 5 \text{ m/v}$ : II մարմինը 2 վ-ում անցել է 30 մ ճանապարհ, հետևաբար նրա արագությունը՝  $v_{II} = 30 \text{ m/2 v} = 15 \text{ m/v}$ :

## ԽԵՐԵՒԱՅԻ ԵՐԵՎՈՒՅԹԸ

**S11**

Դեռևս վաղ ժամանակներից մարդկանց հետաքրքրել է շարժման առաջացման պատճառը: Ե՞րբ է մարմինը դադարի վիճակում, և ե՞րբ է այն շարժվում: Առաջին հայացքից ամենօրյա մեր դիտումները կարծեն թե պատասխանում են այս հարցերին: Օրինակ՝ դադարի վիճակում գտնվող սայլակը կշարժվի, եթե այն քաշենք, իրենք կամ մեկ այլ ձևով նրա վրա ազդենք:

Սորոյա դիտումները ցույց են տալիս նաև, որ եթե շարժվող մարմնի վրա չափենք, ապա այն վաղ թե ուշ կանգ կառնի: Օրինակ՝ շարժիչն անջատելուց հետո ավտոմեքենան, որոշ ճանապարհ անցնելով, կանգ է առնում: Եթե դադարում ենք իրեկ սայլակը, այն կանգ է առնում, և որպեսզի շարունակի շարժվել, նրան պետք է անընդհատ իրել:

Նմանատիպ դատողությունների հիման վրա դեռևս մեր թվարկությունից առաջ IV դարում հույն գիտնական Արիստոտելը հաճգեց այն եզրակացության, որ շարժվող մարմնի կանգ առնելը նրա բնական հատկությունն է: Մարմինը շարժվում է այնքան ժամանակ, քանի դեռ ազդում ենք նրա վրա: Եթե դադարում է ազդեցությունը, դադարում է նաև շարժումը:


Արիստոտելի մեծ հեղինակության շնորհիվ շարժման վերաբերյալ այս պատկերացումներն իշխեցին գրեթե երկու

հազար տարի: Միայն XVI դարում իտալացի ֆիզիկոս Գալիլեյ էր Գալիլեյ փորձերի հիման վրա ցույց տվեց, որ Արխտատելի գաղափարները ճիշտ չեն: Գալիլեյն ապացուցեց, որ շարժվող մարմնի կանգ առնելը պայմանավորված է ոչ նրա բնական հատկությամբ, այլ արտաքին ազդեցություններով: Եթե մեզ հաջողվի վերացնել արտաքին ազդեցությունները, ապա շարժվող մարմինը երբեք կանգ չի առնի և հաստատուն արագությամբ կշարունակի շարժվել ուղիղ գծով: Որքան փոքր են արտաքին ազդեցությունները, այնքան ավելի երկար ժամանակ մարմինը կպահպանի իր շարժման վիճակը:

**Նշվածը** հաստատելու համար կատարենք հետևյալ փորձը (նկ. 25): Հորիզոնական սեղանի վրա տեղադրենք թեք ճողոք: Սեղանի վրա ավագ լցնենք և ճողի ծայրից բաց բռնենք մետաղե գնդիկ: Գնդիկը, հասնելով ավագին, կանցնի որոշակի ճանապարհ և արագ կանգ կառնի (նկ. 25, *a*): Դրա պատճառն ավագի դիմադրությունն է: Այժմ ավագի փոխարեն սեղանին փունք խավու կտոր և գնդիկը նորից բաց բռնենք ճողի նոյն կետից (նկ. 25, *b*): Այս դեպքում մինչև կանգ առնելը գնդիկը սեղանի վրա ավելի երկար ժամանակ կշարժվի և կանցնի ավելի երկար ճանապարհ: Եթե այժմ հեռացնենք կտորը և նոյն փորձը կատարենք սեղանի ողորկ մակերևույթի վրա (նկ. 25, *c*), ապա գնդիկի արագությունը գրեթե չի փոխվի, և այն կշարժվի մինչև սեղանից վայր ընկնելը:

Այսպիսով՝ նկարագրված փորձը ցույց է տալիս, որ որքան փոքր դիմադրության է հանդիպում գնդիկը ճանապարհին, այնքան երկար ժամանակ է այն պահպանում իր շարժումը: Եթե մեզ հաջողվի ընդհանրապես վերացնել դիմադրությունը, գնդիկը կշարժվի ուղղագիծ և հավասարաշափ՝ անսահմանափակ երկար ժամանակ:

Նկ. 25  
Գնդիկի շարժումը  
*a)* ավագի վրա,  
*b)* կտորի վրա,  
*c)* ողորկ  
մակերևույթի վրա



Նմանատիպ փորձերի հիման վրա Գալիլեյը ծնակերպեց հետևյալ օրենքը:


Եթե մարմնի վրա այլ մարմիններ չեն ազդում, ապա այն պահպանում է դադարի կամ ուղղագիծ հավասարաչափ շարժման վիճակը:

Այլ մարմինների ազդեցության բացակայության դեպքում մարմնի դադարի կամ ուղղագիծ հավասարաչափ շարժման վիճակը պահպանելու երևույթը կոչվում է իներցիա:


Իներցիայի երևույթին մենք ականատես ենք լինում բռնությունում այն դեպքերում, երբ փորձում ենք շարժման մեջ դնել որևէ մարմին, կանգնեցնել շարժվող մարմինը կամ փոխել նրա շարժման ուղղությունը: Օրինակ՝ երբ ավտորուսը կտրուկ շարժվում է տեղից, նրա մեջ կանգնած ուղևորի ուղերձը շփման ազդեցությամբ հատակի հետ առաջ են շարժվում, իսկ մարմինը շարունակում է պահպանել դադարի վիճակը: Դրա հետևանքով ուղևորը հետ է թերքում: Եվ հակառակը, երբ շարժվող ավտորուսը կտրուկ արգելակում է, շփման ազդեցությամբ ուղերձը հատակի հետ կանգ են առնում, իսկ նարմինը շարունակում է իներցիայով շարժվել նախկին ուղղությամբ: Դրա հետևանքով ուղևորը թերքում է առաջ: Երբ ավտորուսը կտրուկ թերքում է իր շարժման ուղղությունը (օրինակ՝ շրջադարձ է կատարում), ուղևորը թերքում է հակառակ ուղղությամբ:

## Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչպիսի՞ շարժում կկատարի մարմինը, եթե նրա վրա այլ մարմիններ չեն ազդում:
2. Ո՞ր երևույթն է կոչվում իներցիա:
3. Ինչո՞ւ կենդանիները ցնից դուրս գալիս թափահարում են իրենց:
4. Ինչո՞ւ է վտանգավոր ռոշել շարժվող ավտորուսից:
5. Բացատրե՛ ինչպես են նկարում պատկերված մուլդը հազցնում կորին:
6. Բացատրե՛ թափահարելիս ինչպես է հագուստին ազատվում փոշուց:
7. Բացատրե՛ ինչու է սնդիկի սյումն իջնում թերժաչափը թափահարելիս:
8. Ինչու աղվեսը, որին հետապնդում է շունչ, հաճախ կտրուկ փոխում է շարժման ուղղությունը:



9. Անշարժ սալլակը սկսեց շարժվել (նկ. ա):  
Օգուզելով նկարից՝ որոշեք սալլակի շարժման ուղղությունը:
10. Թղթի կտորը դռեք սեղանի եզրին: Նրա վրա դրեք շրով լցված բաժակը, ինչպես ցույց է տրված ը նկարում: Թղթի կախված ծայրը բռնեք մի ձեռքով, իսկ մյուս ձեռքով կտրուկ հարվածեք թղթին: Բացատրեք փորձի արդյունքը:



## §12

### ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՓՈԽԱՀՐԵՑՈՒԹՅՈՒՆԸ


Ինչպես տեսանք, եթե մարմնի վրա այլ մարմիններ չեն ազդում, այն դադարի վիճակում է կամ կատարում է ուղղագիծ հավասարաչափ շարժում: Իսկ ե՞թք է դադարի վիճակում գտնվող մարմինը սկսում շարժվել, կամ ե՞թք է մարմինը փոխում շարժման ուղղությունը:

Պատկերացրեք՝ զետնին տեսնում եք որևէ առարկա, ասենք՝ մնատաղըրամ, և եթե կուանում եք վերցնելու, այն համարձ սկսում է շարժվել: Դուք, անշուշտ, կմտածեք, որ ինչ-որ մեկը որոշել է կատակել ձեզ հետ և կսկսեք փոխութել մնատաղըրամի շարժման պատճառը: Դուք այդպես կվարվեք, որովհետև ձեր ամենօրյա փորձից գիտեք, որ դադարի վիճակում գտնվող մարմինը չի կարող շարժվել, քանի դեռ նրա վրա այլ մարմին չի ազդել: Դա, իրոք, այդպես է:

**Փորձը ցույց է տալիս, որ դադարի վիճակում գտնվող մարմինը սկսում է շարժվել, իսկ շարժվող մարմինն արագանում, դամդաղում կամ փոխում է իր շարժման ուղղությունը միայն այն դեպքում, եթե նրա վրա ազդում են այլ մարմիններ:**

Օրինակ՝ առագաստանակը սկսում է շարժվել, եթե առագաստի վրա ազդում է քամին, պատին հարվածող թենիսի գնդակը փոխում է իր շարժման ուղղությունը պատի ազդեցությամբ և այն:

Մարմինների՝ միմյանց վրա ազդելու առանձնահատկությունները պարզելու նպատակով դիտարկենք հետևյալ



Նկ. 26  
Թեղայի սայլակին  
չի շարժվում




Նկ. 27  
Թեղայի սայլին  
երկու սայլակներն էլ  
սկսում են շարժվել

փորձերը: Նկար 26-ում պատկերված սայլակին ամրացված է առաձգական թիթեղ (օրինակ՝ պողպատե քանոն): Թիթեղը ճկված է և կապված թեղով: Սայլակը գտնվում է դադարի վիճակում: Կշարժվի՝ արդյոք սայլակը, եթե թիթեղն ուղղվի: Այս հարցի պատասխանը կարող է տալ փորձը: Եթե թեղն այրենք, թիթեղը կտրուկ կուղղվի, սակայն սայլակը կմնա իր նախկին դիրքում:

Այժմ ճկված թիթեղի մյուս կողմում տեղադրենք նույնպիսի մի սայլակ և կրկնենք փորձը (նկ. 27): Կտսնենք, որ թեղն այրելիս երկու սայլակներն էլ շարժվում են հակառակ ուղղություններով: Այս փորձը ցույց է տալիս, որ սայլակին արագություն հաղորդելու համար անհրաժեշտ է մեկ այլ մարմին (երկրորդ սայլակը): Փորձից հետևում է, նաև, որ մի մարմնի (սահման սայլակի) ազդեցությունը մյուս մարմնի (երկրորդ սայլակի) վրա չի կարող միակողմանի լինել: Քանի որ թեղը կտրելիս երկու սայլակներն էլ շարժվում են, ապա երկուսն էլ ազդում են իրար վրա, այսինքն՝ փոխազդում են:

Դիտարկենք մեկ այլ օրինակ: Նկ. 28-ում պատկերված Ա գնդը, սեղանի վրա շարժվելով ու արագությամբ, հարվածում է անշարժ Բ գնդին ( $v_2 = 0$ ): Հարվածից հետո գնդերը ծեղոք են բերում  $v'$  և  $v'$  արագություններ: Բ անշարժ գնդը սկսում է շարժվել Ա գնդի ազդեցությամբ: Քանի որ հարվածի հետևանքով փոխվում են նաև Ա գնդի շարժման ուղղությունը և արագությունը, ապա Բ գնդն էլ իր երթին ազդում է Ա գնդի վրա: Նշանակում է՝ գնդերից յուրաքանչյուրն ազդում է մյուսի վրա, այսինքն՝ նրանք փոխազդում են:

Կարող է տապավորություն ստեղծվել, որ կենդանի արագությունները (մարդիկ, կենդանիները, բոչունները, ծկները) շար-



Նկ. 28  
Բախման  
ժամանակ գնդերի  
փոխազդում են

Ժումբ սկսում են առանց երկրորդ մարմնի մասնակյուրյան իրականում այդպես չեն: Մարդիկ և կենդանիները փոխագում են Երկրի մակերևույթի հետ, քոչունները՝ օդի, ձկները ջրի և այլն:

Մարմինների փոխագոյեցությանը հանդիպում ենք միշտ և ամենուր: **Փոխագոյեցությունը, ինչպես և շարժումը, մարմինների անրաժամելի հատկությունն է:** Տարանույթ փոխագոյեցությունների օրինաշափություններին կծանոթանար նաև ֆիզիկայի դասընթացի մյուս բաժիններում:

## Հարցեր և առաջադրանքներ

1. Կարո՞ղ է արդյոք շրջապատից մեկուսացված մարմինը փոխել իր արագությունը:
2. Բերեք մարմինների փոխագոյեցության օրինակներ:
3. Հրացանի կրակոցի ժամանակ ո՞ր մարմիններն են փոխագոյում: Ինչպե՞ս է այս արտահայտվում:

## Տ13

### ՄԱՐՄԻՆ ԶԱՆԳՎԱԾ

Դիտումները և փորձերը ցույց են տալիս, որ փոխագոյեցության շնորհիվ մարմինների արագությունները չեն կարող ակնրարրորեն աճել: Աստիճանաբար են աճում սարից իջնող դահուկորդի, շարժումը սկսող ավտոմեքենայի, գնացքի, ինքնարիոի արագությունները: Զեզանից շատերը հեռուստատեսությամբ դիտել են տիեզերանավի արձակման պահը և ուշադրություն դարձել, թե ինչպես է աստիճանաբար մեծանում նրա արագությունը:

Նմանապես ակնրարրորեն չի կարող կանգ առնել շարժվող մարմինը: Օրինակ՝ արգելակելիս ավտոմեքենայի արագությունը նվազում է աստիճանաբար, և մինչև կանգ առնելը այն մի որոշ ճանապարհ է անցնում: Դա միշտ պետք է հաշվի առնել ավտովրարներից խուսափելու համար: Ակնրարրորեն չի կարող փոխվել նաև մարմնի շարժման ուղղությունը:

**Այս և բազմահանի այլ օրինակներ ցույց են տալիս, որ բոլոր մարմիններն օժտված են այնպիսի հատկությամբ, որ նրանց արագությունն ակնրարրորեն չի կարելի փոխել: Դրա համար միշտ որոշ ժամանակ է անհրաժեշտ: Մարմնի այս հատկությունը կոչվում է **իներտություն:****

Տարրեր մարմինների իներտությունը տարրեր է: Երկու մարմիններից ավելի իներտ է այն մարմինը, որի արագությու-

նր փոխազդեցության հետևանքով ավելի քիչ է փոխվում, կամ նրա արագությունը որոշակի չափով փոխելու համար ավելի շատ ժամանակ է պահանջվում:

Օրինակ՝ կրակոյի ժամանակ հրանորն ավելի փոքր արագություն է ձեռք բերում, քան արկը: Հետևաբար հրանորն արկից ավելի իներտ է: Կամ բեռնված ավտոմեքենան որոշակի արագություն ձեռք է բերում ավելի երկար ժամանակամիջոցում, քան դատարկ ավտոմեքենան, հետևաբար այն ավելի իներտ է:

Եթե սառցադաշտում շմուշկների վրա կանգնած երեխան և պատամին ձեռքերով հրեն միմյանց (նկ. 29), ապա պատամին կշարժվի ավելի փոքր արագությամբ, քան երեխան, հետևաբար պատամին ավելի իներտ է:



Մարմնի իներտությունը քանակական քննորոշում է զանգված կոչվող մեծությունը:

**Զանգվածը մարմնի իներտության քանակական չափն է:**

Եթե վերը դիտարկված օրինակում միմյանց երեկու հետևանքով երեխան ձեռք է բերում 3 մ/վ արագություն, իսկ պատամին՝ 1 մ/վ արագություն, ապա նշանակում է, որ պատամու զանգվածը 3 անգամ մեծ է երեխայի զանգվածից:

Զանգվածը սովորաբար նշանակում են *m* տառով (կարդացվում է՝ Էմ): Զանգվածը սկալյար մեծություն է, այսինքն՝ բնորոշվում է միայն բարձրությունը և չափման միավորով:

Միավորների ՄՀ-ում որպես զանգվածի միավոր է ընտրվել պլատինի և իրիդիումի համաձուլվածքից պատրաստված այն զլանաձև չափանմուշի զանգվածը (նկ. 30), որը պահպան է Փարիզի մերձակա Սևր քաղաքում, Զավերի և կշիռների միջազգային բյուրոյում: Զանգվածի այդ միավորն անվանում են կիլոգրամ (1 կգ): Մեծ ճշտությամբ 1 կգ



**Նկ. 29**  
Պատամին  
իներտությունն  
ավելի մեծ է, քան  
երեխային

**Նկ. 30**  
Զանգվածի  
չափանմուշը

Է նաև  $4^{\circ}\text{C}$  ջերմաստիճանում 1 լ ծավալով թորած ջրի զանգվածը:

Գործնականում զանգվածի չափման համար կիրառվում են նաև այլ միավորներ, օրինակ, տոննա (տ), գրամ (գ), միլիգրամ (մգ) և այլն:

$$1 \text{ տ} = 1000 \text{ կգ} \quad 1 \text{ գ} = 0,001 \text{ կգ}$$

$$1 \text{ կգ} = 1000 \text{ գ} \quad 1 \text{ մգ} = 0,001 \text{ գ}$$

$$1 \text{ կգ} = 1\,000\,000 \text{ մգ} \quad 1 \text{ մգ} = 0,000001 \text{ կգ}$$

Թանկարժեք քարերի զանգվածն արտահայտում են կարատներով. 1 կարատը = 0,2 գ:

Չափել մարմնի զանգվածը՝ նշանակում է այն համեմատել չափման տրված միավորի հետ: Դրա համար անհայտ զանգվածով մարմինը պետք է փոխազդեցնի մեջ դնել զանգվածի չափանմուշի հետ և համեմատել փոխազդեցնի բանական հետևանքովդրանց արագությունների փոփոխությունները: Եթե փոխազդեցնի հետևանքով նրանց արագությունները փոփոխության նույն չափով, ապա մարմնի զանգվածը հափառար է չափանմուշի զանգվածին: Իսկ եթե, օրինակ, մարմնի արագության փոփոխությունը 2 անգամ փոքր է չափանմուշի արագության փոփոխությունից, ապա մարմնի զանգվածը 2 անգամ մեծ է չափանմուշի զանգվածից:

Գործնականում մարմնի զանգվածը չափում են կշեռքի օգնությամբ, որի կառուցվածքն և աշխատանքի սկզբունքն արդեն ծանոթ եք բնագիտության դասընթացից:

Եթե չափենք երկու մարմինների  $m_1$  և  $m_2$  զանգվածները, այնուհետև դրանք միացնենք իրար և չափենք միացյալ մարմնի  $m$  զանգվածը, ապա կհամոզվենք, որ  $m = m_1 + m_2$ : Ծիստ է նաև հակառակը. Եթե մարմինը բաժանենք առանձին մասերի, ապա այդ մասերի զանգվածների գումարը հափառար կլինի մինչ բաժանելը մարմնի ոնեցած զանգվածին: Այսուսակ 3-ում բերված են որոշ մարմինների մոտավոր զանգվածները:

### Աղյուսակ 3

Մարմին	Զանգվածը	Մարմին	Զանգվածը
Շամանի թն	0,05 մգ	1 լիար ջուր	1 կգ
Կողիբորի (փորբիկ քոչմակ)	1,7 գ	Երկրի առաջին արհեստական արրանյակ	83,6 կգ
Սեղանի թեմիսի գնդակ	2,5 գ	Փիղ	մինչև 4500 կգ
Խաղողի հատիկ	3 գ	Ելեկտրաքարշ	180 000 կգ

## Հարցեր և առաջադրանքներ

1. Սարմի ո՞ր հատկությունն է կոչվում իներտություն: Բերեք այդ հատկությունը լուսաբանող օրինակներ:
2. Ո՞ր մեծությունն են անվանում մարմնի զանգված:
3. Ինչպես կարելի է չափել մարմնի զանգվածը:
4. Ի՞նչ միավորներով է արտահայտվում զանգվածը:
5. Էրացրեք բաց բողած թվերը.  
1 կգ =      գ, 1 գ =      կգ, 1 մգ =      գ:
6. Ի՞նչ է զանգվածի չափանմուշը միավորների ՄԸ-ում:
7. Սարդը նավակից ցատկում է այս: Ո՞ր դեպքում նավակի և մարդու ձեռք բերած արագությունները կլինեն հավասար:



§14

## Աշխատանք 2


### Զանգվածի չափումը լծակավոր կշեռքով

Աշխատանքի նպատակը. կարողանալ լծակավոր կշեռքով չափել պինդ մարմնի և հեղուկի զանգվածը:

Անհրաժեշտ սարքեր և նյութեր. լծակավոր կշեռք, կշռաքարեր, տարրեր զանգվածներով ոչ մեծ մարմիններ, ամոր:

Աշխատանքի ընթացքը: Եթե կշեռքի երկու նժարմներին հավասար զանգվածով մարմիններ դրվեն, ապա կշեռքը կհավասարակշռվի: Սրա վրա է հիմնված լծակավոր կշեռքի աշխատանքը, ինչը հնարավորություն է տալիս հայտնի զանգվածներով կշռաքարերի օգնությամբ չափել մարմնի անհայտ զանգվածը:

1. Աշխատանքի սկզբում համոզվեք, որ կշեռքի երկու նժարմները հավասարակշռված են: Եթե այդպես չէ, ապա թորի կամ ստվարաբորի փոքր կտորներ ավելացնելով թերև նժարին՝ վերականգնեք հավասարակշռությունը:
2. Կշեռքի ձախ նժարին դրեք այն մարմինը, որի զանգվածը չափելու համար է բարեկարգ: Այն նժարին դրեք հայտնի զանգվածներով կշռաքարեր այնպես, որ նժարները հավասարակշռվեն:
3. Հաշվեք մարմինը հավասարակշռող կշռաքարերի ընդհանուր զանգվածը: Կշռող մարմինի զանգվածը հավասար կլինի այդ զանգվածին:
4. Նման նշանակով չափեք մի քանի պինդ մարմինների զանգվածները և արդյունքները գրանցեք տրված աղյուսակում:



N	Կշռող մարմին	Մարմինը հավասարակշռող կշռաքարերի զանգվածը	Մարմինի զանգվածը
1			
2			
3			

- Այժմ նույն եղանակով չափեք դատարկ անորի զանգվածը:
- Անորի մեջ լցրեք որոշ քանակությամբ ջուր և չափեք անորի և ջրի ընդհանուր զանգվածը:
- Ստացած երկու արդյունքների տարրերությամբ որոշեք ջրի զանգվածը: Արդյունքները գրանցեք աղյուսակում:

Դատարկ անորի զանգվածը ( $m_1$ )	Անորի և ջրի ընդհանուր զանգվածը ( $m_2$ )	Ջրի զանգվածը ( $m_g = m_2 - m_1$ )

## §15

### ՆՅՈՒԹԻ ԽՏՈՒԹՅՈՒՆ

Մարմնները կարող են պատրաստված լինել տարրեր նյութերից և ունենալ տարրեր ծավալներ: Եթե չափենք միևնույն նյութից պատրաստված, սակայն տարրեր ծավալներ ունեցող մարմնների զանգվածները, կհամոզվենք, որ դրանք տարրեր են: Օրինակ՝ 3 լիտր ծավալով ջրի զանգվածը երեք անգամ մեծ է 1 լիտր ծավալով ջրի զանգվածից: Մարմնի զանգվածը կախված է ոչ միայն ծավալից, այլ նաև նյութի տեսակից: Տարրեր նյութերից պատրաստված հավասար ծավալներով մարմններն ունեն տարրեր զանգվածներ: Օրինակ՝ 1  $\text{m}^3$  ջրի զանգվածը 1000 կգ է, 1  $\text{m}^3$  սառույցի զանգվածը՝ 900 կգ, 1  $\text{m}^3$  ուկունը՝ 19300 կգ և այլն:

Նշանակում է՝ յուրաքանչյուր նյութի միավոր ծավալով մարմնի զանգվածը կարող է բնութագրել տվյալ նյութը: Այդ բնութագիրը որոշելու համար տվյալ նյութից պատրաստված մարմնի զանգվածը պետք է բաժանել նրա ծավալին:

**Նյութի խտություն կոչվում է այն ֆիզիկական մեծությունը, որը հավասար է մարմնի զանգվածի և ծավալի հարաբերությանը.**

$$\text{Խտություն} = \frac{\text{Զանգված}}{\text{Ծավալ}};$$

Օրինակ՝ եթե 2  $\text{m}^3$  ծավալով նավի զանգվածը 1600 կգ է, ապա նրա խտությունը կլինի՝  $\frac{1600 \text{ կգ}}{2 \text{ մ}^3} = 800 \frac{\text{կգ}}{\text{մ}^3}$ :

Եթե մարմնի զանգվածը նշանակենք  $m$ -ով, ծավալը՝  $V$ -ով, իսկ խտությունը՝  $\rho$  (հունարեն տառ է, կարդացվում է՝

ոռ) տառով, ապա խտորյան համար կստանանք հետևյալ բանաձևը՝

$$\rho = \frac{m}{V}:$$

Նշենք, որ այս բանաձևով նյութի խտորյունը հաշվելիս ենթադրվում է, որ մարմինը հոծ է. չունի դատարկություններ: Եթե մարմինը հոծ չէ կամ կազմված է տարրեր նյութերից, ապա վերը բերված բանաձևով որոշվում է մարմնի միջին խտորյունը:

Նյութի խտորյունը հաստատում մեծորյուն է: Այս կախված չէ ոչ մարմնի զանգվածից, ոչ էլ ծավալից: Եթե, օրինակ, մարմնի ծավալը մեծացնենք երկու անգամ, ապա

#### Աղյուսակ 4. Որոշ պինդ մարմինների խտորյունները

Պինդ մարմին	$\rho, \text{կգ}/\text{մ}^3$	$\rho, \text{գ}/\text{սմ}^3$	Պինդ մարմին	$\rho, \text{կգ}/\text{մ}^3$	$\rho, \text{գ}/\text{սմ}^3$
Օսմիում	22 600	22,6	Մարմար	2 700	2,7
Իրիդիում	22 400	22,4	Ալպակի	2 500	2,5
Գլաուխին	21 500	21,5	Բնուոն	2 300	2,3
Ուսկի	19 300	19,3	Ալյուս	1 800	1,8
Կապար	11 300	11,3	Շաքար	1 600	1,6
Արծար	10 500	10,5	Պոլիէթիլեն	920	0,92
Պղինձ	8 900	8,9	Պարաֆին	900	0,90
Երկար	7 800	7,8	Սառույց	900	0,90
Անագ	7 300	7,3	Չորտոնի	400	0,40
Ալյումին	2 700	2,7	Խոցան	240	0,24

#### Աղյուսակ 5. Որոշ հեղուկների խտորյունները

Հեղուկ	$\rho, \text{կգ}/\text{մ}^3$	$\rho, \text{գ}/\text{սմ}^3$	Հեղուկ	$\rho, \text{կգ}/\text{մ}^3$	$\rho, \text{գ}/\text{սմ}^3$
Սնողիկ	13 600	13,6	Արևածաղկի ձեր	930	0,93
Մեղք	1 350	1,35	Կերոսին	800	0,80
Ջուր ծովային	1 030	1,03	Սալիկ	800	0,80
Կար անարատ	1 030	1,03	Նավք	800	0,80
Ջուր մաքուր	1 000	1,00	Բնագին	710	0,71

#### Աղյուսակ 6. Որոշ գազերի խտորյունները

(նորմալ մթնոլորտային ճնշման և  $20^\circ\text{C}$  ջերմաստիճանի պայմաններում)

Գազ	$\rho, \text{կգ}/\text{մ}^3$	$\rho, \text{գ}/\text{սմ}^3$	Գազ	$\rho, \text{կգ}/\text{մ}^3$	$\rho, \text{գ}/\text{սմ}^3$
Քլոր	3,21	0,00321	Օդ ( $0^\circ\text{C}$ -ոմ)	1,29	0,00129
Ածխարքու գազ	1,98	0,00198	Զրային զուրոքի ( $100^\circ\text{C}$ -ոմ)	0,59	0,00059
Թրվածին	1,43	0,00143	Զրածին	0,09	0,00009

նույնիքան անգամ կմնանա նրա զանգվածը, և զանգվածի ու ծավալի հարաբերությունը չի փոխվի:


Միավորների  $UZ$ -ում խտության միավորը  $1 \frac{\text{կգ}}{\text{մ}^3}$ -ն է կամ  $1 \text{կգ}/\text{մ}^3$ -ը (կարդացվում է՝ մեկ կիլոգրամ մետր խորանարդում): Դա այն նյութի խտությունն է, որի  $1 \text{մ}^3$  ծավալով մարմնի զանգվածը  $1 \text{կգ}$  է: Մոտավորապես այդպիսի խտությունն ունի օդը:

Խտությունն արտահայտում են նաև  $1 \text{գ}/\text{սմ}^3$  միավորով: Հաշվի առնելով, որ  $1 \text{կգ}=1000\text{գ}$ , իսկ  $1 \text{մ}^3=1000000\text{սմ}^3$ , կստանանք՝  $1 \text{կգ}/\text{մ}^3=0,001 \text{г}/\text{սմ}^3$ :

4-րդ, 5-րդ և 6-րդ աղյուսակներում տրված են մի շարք պինդ նյութերի, հեղուկների և գազերի խտությունները: Հեղուկների և պինդ մարմինների խտությունը մոտ 1000 անգամ մեծ է զագերի խտությունից: Ամենամեծ խտություն ունեցող մետաղներից են օսմիումը ( $22,6 \text{ г}/\text{սմ}^3$ ), իրիդիումը ( $22,4 \text{ г}/\text{սմ}^3$ ) պլատինը ( $21,5 \text{ г}/\text{սմ}^3$ ), ոսկին ( $19,3 \text{ г}/\text{սմ}^3$ ): Ամենաքերած մետաղը մագնեզիումն է ( $1,74 \text{ г}/\text{սմ}^3$ ): Հեղուկներից ամենամեծ խտությունն ունի սնդիկը՝  $13,6 \text{ г}/\text{սմ}^3$ , իսկ ամենափոքրը՝ հեղուկ ջրածինը, որը ստանում են շատ ցածր ջերմաստիճանում: Նրա  $1 \text{սմ}^3$ -ի զանգվածը մոտավորապես  $0,00009 \text{ г}$  է:

## Հարցեր և առաջադրանքներ

- Ո՞ր մեծությունն է կոչվում նյութի խտություն:
- Ինչպես է որոշվում նյութի խտությունը:
- Ի՞նչ միավորներով է արտահայտվում խտությունը:
- 1 ամորի մեջ լցոն են ջուր, իսկ II-ի մեջ՝ նույն զանգվածով անհայտ հեղուկ (տե՛ս նկարը): Դրանցից ո՞րն ունի ավելի մեծ խտություն:
- Կընո՞ւի մի նժարին դրված է կապարն չորսու, իսկ մյուսին՝ անագ (տե՛ս նկարը): Ո՞ր նժարին է դրված կապարն չորսուն:



## §16

### ՄԱՐՍԻ ԶԱՏԳՎԱԾԻ ԵՎ ՏԱԿԱԾԻ ՇԱՑԿՈՒՅԾ

Նյութի խտության բանաձևը կապ է հաստատում ֆիզիկական երեք մեծությունների՝ մարմնի զանգվածի, ծավալի և խտության միջև: Եթե հայտնի են նշված մեծություններից որևէ երկուսը, ապա կարելի է որոշել երրորդ անհայտ մեծությունը:

Խտությունը հաշվելու համար անհրաժեշտ է իմանալ մարմնի զանգվածը և ծավալը: Զանգվածը կարելի է որոշել կշեռքի միջոցով: Իսկ ինչպես որոշել ծավալը: Եթե մարմինը

կանոնավոր տեսք ունի, ապա նրա ծավալը կարող ենք հաշվել՝ օգտվելով երկրաչափական բանաձևերից: Օրինակ՝ ուղղանկյունանիստի ծև ունեցող մարմնի ծավալը կորոշվի  $V = abc$  բանաձևով, որտեղ  $a$ -ն,  $b$ -ն և  $c$ -ն նրա կողմերի երկարություններն են: Եթե մարմնի ծևն անկանոն է, նրա ծավալը կարելի է որոշել ծեզ արդեն ծանոր չափազանի օգնությամբ:

Հաստ դեպքերում ավելի հեշտ է չափել կամ հաշվել մարմնի ծավալը, քան զանգվածը: Ենթադրենք  $a=5\text{մ}$ ,  $b=3\text{մ}$  և  $c=2\text{մ}$  կողմերով ուղղանկյունանիստի ծև ունեցող մեծ քառը լիրը լցված է կերպուխնով: Ինչպես կարող ենք որոշել այդ կերպուխնի զանգվածը: Հասկանալի է, որ կշռելու միջոցով այն որոշելը շատ դժվար է: Ուրեմն ինչպես վարվել: Պարզվում է, որ դա կարելի է անել ընդհանուր բռի և գոյշ օգնությամբ՝ առանց ֆիզիկական ջանք գործադրելու: Իրոք, խսության  $\rho = \frac{m}{V}$  բանաձևից հետևում է, որ

$$m = \rho V,$$

այսինքն՝ մարմնի զանգվածը հավասար է նրա ծավալի և խսության արտադրյալին: Ալյուսակ 5-ից վերցնում ենք կերպուխնի խսության արժեքը՝  $800 \text{ կգ}/\text{մ}^3$ , իսկ ծավալի համար ստանում ենք  $V = abc = 30 \text{ մ}^3$ : Հետևաբար կերպուխնի զանգվածը՝

$$m = 800 \frac{\text{կգ}}{\text{մ}^3} \times 30 \text{ մ}^3 = 24000 \text{ կգ} = 24 \text{ տ:}$$

Երբեմն ավելի դժվար է չափել մարմնի ծավալը, քան զանգվածը: Եթե մարմինն ունի անկանոն ծև, չենք կարող նրա ծավալը հաշվել երկրաչափական բանաձևերով: Եթե, բայց այդ, մարմինը բավականաչափ մեծ է, ապա չենք կարող օգտվել նաև չափազանից: Նման դեպքերում դարձյալ կարող ենք օգտվել  $\rho = \frac{m}{V}$  բանաձևից, որտեղից հետևում է, որ

$$V = \frac{m}{\rho},$$

այսինքն՝ մարմնի ծավալը հավասար է նրա զանգվածի և խսության հարաբերությամբ:

Օրինակ՝ հաշվենք, թե որքա՞ն է  $m = 2,7$  տ զանգվածով սաղարեկորի ծավալը: Ալյուսակ 4-ից վերցնում ենք սառույցի խսության արժեքը՝  $\rho = 900 \text{ կգ}/\text{մ}^3$  և բանաձևով հաշվում՝  $V = \frac{2700 \text{ կգ}}{900 \text{ կգ}/\text{մ}^3} = 3 \text{ մ}^3$ :

## Հարցեր և առաջադրանքներ

- Ինչպես կարելի է հաշվել մարմնի զանգվածը, եթե հայտնի են նրա ծավալը և նյութի խտությունը:
- Ինչպես կարելի է հաշվել մարմնի ծավալը, եթե հայտնի են նրա զանգվածը և նյութի խտությունը:
- Հայտնի է, որ մետաղի կողը տաքացնելիս ընդարձակվում է: Այդ դեպքում նշված ո՞ր մեծությունը չի փոխվում. ա) ծավալ, բ) զանգված, գ) խտություն:
- Ի՞նչ եք կարծում, քանի կիլոգրամ ող է պարունակում ձեր դասասենյակը: Պատասխանը ստուգելու համար հաշվեք դասասենյակի ծավալը և, ողի խտությունը համարելով  $1,29 \text{ կգ}/\text{մ}^3$ , որոշեք ողի զանգվածը:
- Հաճարելով, որ ձեր մարմնի խտությունը մոտավորապես հավասար է ծովի ջրի խտությանը, հաշվեք ձեր մարմնի ծավալը:

## § 17

### ԼՍՐՈՒՄԾՈՐ ԱՇԽԱՏԱՆԵ 3

#### Պինդ մարմնի խտության որոշումը

Աշխատանքի նպատակը. կարողանալ որոշել պինդ մարմնի խտությունը:

Աներածեցած սարքեր և նյութեր. չափագան. լծակավոր կշեռք, կշռաքարեր, ուղղանկյունանիստ և կամայական ձևի ոչ մեծ պինդ մարմններ (որոնց խտությունը պետք է որոշվի), թել, միկրոնետրային բաժանումներով քանոն:

#### Աշխատանքի ընթացքը.

- Քանոնով չափեք ուղղանկյունանիստի տեսք ունեցող մարմնի  $a, b, c$  և  $c$  կողերի երկարությունները և նրա ծավալը  $h$ ՝  $V = abc$  բանաձևով:
- Կշեռքով չափեք ուղղանկյունանիստի ող զանգվածը:
- Ուղղանկյունանիստի խտությունը որոշեք  $\rho = \frac{m}{V}$  բանաձևով:
- Անկանոն տեսք ունեցող մարմնի խտությունը որոշելու համար չափագլանով չափեք նրա ծավալը (տես լարուատոր աշխատանք 2 (գլուխ 1, § 5)):
- Կշեռքով չափեք նրա զանգվածը:
- Մարմնի խտությունը որոշեք  $\rho = \frac{m}{V}$  բանաձևով:
- Չափումների և հաշվարկների արդյունքները գրանցեք այլուակում:

Մարմին	Մարմնի զանգվածը, $q$	Մարմնի ծավալը, $m^3$	Նյութի խտությունը	
			$q/\text{սմ}^3$	$\text{կգ}/\text{մ}^3$

## ԽՍՀԻՒՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՕՐԻՆԱԿԱՆԵՐ

1. Պղնձե կշռաքարի զանգվածը 0,5 կգ է: Ի՞նչ զանգված կունենա նույն չափերն ունեցող երկար կշռաքարը:

$$\begin{aligned} m_{\text{պ}} &= 0,5 \text{ կգ} \\ V_b &= V_{\text{պ}} = V \\ m_b &=? \end{aligned}$$

**Լուծում:** Պղնձե կշռաքարի ծավալը՝  $V = \frac{m_{\text{պ}}}{\rho_{\text{պ}}}$ , որտեղ  $m_{\text{պ}}$ -ն պղնձե կշռաքարի զանգվածն է,  $\rho_{\text{պ}}$ -ն՝ պղնձի խտությունը: Երկար կշռաքարի զանգվածը կլինի՝  $m_b = \rho_b V_b = \frac{\rho_b m_{\text{պ}}}{\rho_{\text{պ}}}$ : Աղյուսակից վերցնում ենք՝  $\rho_b = 7800 \text{ կգ}/\text{մ}^3$ , իսկ  $\rho_{\text{պ}} = 8900 \text{ կգ}/\text{մ}^3$ , հետևաբար՝

$$m_b = \frac{7800 \text{ կգ}/\text{մ}^3 \cdot 0,5 \text{ կգ}}{8900 \text{ կգ}/\text{մ}^3} = 0,4 \text{ կգ}: \quad \text{Պատասխան՝ } 0,4 \text{ կգ:}$$

2. Պահածոյի տուփերի պատրաստման համար օգտագործվող թիթեղը պատում են անագի քարակ շերտով. թիթեղի 200 սմ<sup>2</sup> մակերեսի համար ծախսվում է 0,45 գ անագ: Ի՞նչ հաստություն ունի անագի շերտը:

$$\begin{aligned} S &= 200 \text{ սմ}^2 \\ m &= 0,45 \text{ գ} \\ d &=? \end{aligned}$$

**Լուծում:** Եթե անագի շերտի հաստությունը նշանակենք  $d$ -ով, ապա նրա ծավալը՝  $V = dS$ : Անագի զանգվածը՝  $m = \rho V = \rho dS$ , որտեղից՝  $d = \frac{m}{\rho S}$ : Աղյուսակից վերցնելով անագի խտության արժեքը՝  $\rho = 7,3 \text{ գ}/\text{սմ}^3$ , կատանանք՝

$$d = \frac{0,45 \text{ գ}}{200 \text{ սմ}^2 \cdot 7,3 \text{ գ}/\text{սմ}^3} = 0,0003 \text{ սմ} = 0,003 \text{ մմ}: \quad \text{Պատասխան՝ } 0,003 \text{ մմ:}$$

3. Վերելակի բեռնատարողությունը 3 տ է: Քանի երկար թիթեղ կարելի է բարձրացնել վերելակով, եթե յուրաքանչյուր թիթեղի երկարությունը 3 մ է, լայնությունը՝ 60 սմ, իսկ հաստությունը՝ 4 մմ:

$$\begin{aligned} M &= 3 \text{ տ} \\ a &= 3 \text{ մ} \\ b &= 60 \text{ սմ} \\ c &= 4 \text{ մմ} \\ N &=? \end{aligned}$$

**Լուծում:** Թիթեղների բույլատրելի  $N$  թիվը հավասար է վերելակի բեռնատարողության հարաբերությանը մեկ թիթեղի  $m$  զանգվածին՝  $N = \frac{M}{m}$ : Թիթեղի զանգվածը հավասար է նրա ծավալի և խտության արտադրյալին՝  $m = \rho V$ , իսկ ծավալը՝  $V = abc$ , հետևաբար՝  $m = \rho abc$ : Այսպիսով՝  $N = \frac{M}{\rho abc}$ : Աղյուսակից վերցնում ենք երկարի խտության արժեքը՝  $\rho = 7800 \text{ կգ}/\text{մ}^3$ , հետևաբար՝

$$N = \frac{3000 \text{ կգ}}{3 \text{ մ} \cdot 0,6 \text{ մ} \cdot 0,004 \text{ մ} \cdot 7800 \text{ կգ}/\text{մ}^3} \approx 53,4: \quad \text{Պատասխան՝ } 53:$$

Սակայն թիթեղների թիվը չի կարող կոտորակային թիվ լինել, իսկ վերելակը չի նախատեսված 3 տոննայից ավելի բեռ բարձրացնելու համար, ուստի  $N = 53$ :

Պատասխան՝ 53:

Մարմինների հատկություններն ու ֆիզիկական երևոյթներն առավել խորությամբ ուսումնափրելու, դրանք քանակապես բնութագրելու համար ֆիզիկայում սահմանված են մի շարք մեծություններ: Մի քանի ֆիզիկական մեծությունների արդեն ծանոք եք: Օրինակ՝ արագությունը, որ մեխանիկական շարժման քանակական բնութագիրն է կամ զանգվածը, որ մարմնի իներտության քանակական չափն է և այլն: Այս պարագրաֆում կծանոթանանք ևս մեկ ֆիզիկական մեծության, որը կոչվում է ուժ:

Ուժի մասին մեր նախնական պատկերացումները կապված են այնպիսի իրավիճակների հետ, երբ հարկ է լինում լարել մկանները, օրինակ՝ ձգել պարանը, գետնից քարձրացնել թեղոր, հրեղ սալյակը և այլն: Սուրյա կյանքում հաճախ ենք օգտագործում «ուժ» բառը: Օրինակ՝ ասում ենք. «Այս աշխատանքն ինչ ուժից վեր է», «Նա ոժեղ տղանարդ է», «Համախմբելով մեր ոժերը մենք հաղթեցինք քշնամոն» և այլն:

Ի տարրերություն նշված դեպքերի՝ ֆիզիկայում «ուժ» հասկացությունն ունի խիստ որոշակի իմաստ: Ֆիզիկայում այն օգտագործում են տվյալ մարմնի վրա այլ մարմինների ազդեցությունը քանակապես բնութագրելու համար: Եթե մի մարմին ազդում է ճյուղի վրա, ապա ասում ենք, որ վերջինիս վրա ուժ է ազդում: Ըստ որում, այդ ազդեցության արդյունքը կարող է տարրեր լինել: Ուժերը կարելի է համեմատել իրար հետ: Օրինակ՝ հարվածներով գնդակին, մեծահաստակը կարող է նրան ավելի մեծ արագություն հաղորդել, քան երեխան, կամ մեծահաստակը ռեստինե ժապավենը կարող է ավելի շատ ձգել, քան երեխան: Այդ դեպքում ասում ենք, որ մեծահաստակն ավելի մեծ ուժով է ազդում գնդակի կամ ժապավենի վրա:

**Ուժ կոչվում է այն ֆիզիկական մեծությունը, որի միջոցով քանակապես նկարագրում են մարմինների փոխագեղցությունը:**

Այլ խոսքով՝ ուժը մարմինների փոխագեղցության քանակական չափն է: Սովորաբար ուժը նշանակում են լատինական այրութենիք F (կարդացվում է՝ էֆ) տառով, լատիններեն «Փորտիուս» ուժեղ բառից:

Իսկ ինչպես կարելի է չափել ուժը: Եթե մարմինը երկու փոխագեղցությունների հետևանքով նույն ժամանակամիջոցում իր արագությունը փոխում է միևնույն չափով, ապա

բնական է ենթադրել, որ երկու դեպքում էլ նրա վրա նույն ուժն է ազդել, իսկ եթե մի դեպքում նրա արագության փոփոխությունն ավելի մեծ է, ապա այդ դեպքում ազդող ուժն ավելի մեծ է: Այսպիսով՝ ուժը կարելի է չափել՝ ենթադրելով փոխազդեցության ժամանակ մարմնի արագության փոփոխության չափից: Եթե չափում ենք որևէ մեծություն, այն համեմատում ենք չափման միավորի հետ: Հետևաբար ուժը չափելու համար նախ պետք է սահմանենք նրա միավորը: Միավորների ՄՀ-ում որպես ուժի միավոր ընդունված է նյուտոնը (Ն):

**1 նյուտոնը այն ուժն է, որի ազդեցությամբ դադարի վիճակում գտնվող 1 կգ զանգվածով մարմինը 1 վայրկյանում իր արագությունը փոխում է 1 մ/վ-ով:**

Ուժի միավորն այդպես է կոչվում ի պատիվ անգլիացի ֆիզիկոս Բարի Նյուտոնի: Գործնականում օգտագործվում են նաև կիլոնյուտոն (1 կՆ), միլինյուտոն (մՆ) և այլ միավորներ. 1 կՆ = 1000 Ն, 1 մՆ = 0,001 Ն:


Ուժը, բայց բայց արժեքից (մոդուլից) և չափման միավորից, ունի ևս մեկ կարևոր բնութագիր: Ամեն անգամ, եթե ազդում ենք մարմնի վրա, այդ ազդեցությանը որոշակի ուղղվածություն ենք տալիս, որպեսզի հասնենք մեր ուսած արդյունքին: Օրինակ՝ ֆուտրովատը գնդակը շարժման մեջ դնելու համար նրա վրա ազդում է հորիզոնական ուղղությամբ, իսկ դեպի վեր շարժելու համար՝ այլ ուղղությամբ: Հետևաբար ուժը, ինչպես և արագությունը, ունի ուղղություն, այսինքն՝ այն վեկտորական մեծություն է: Ինչպես յուրաքանչյուր վեկտորական մեծություն, ուժը պատկերում են ծայրին սլաք ունեցող ուղղի հատվածով, որի սկզբնակետը տեղադրում են ուժի կիրառման կետում, այսինքն՝ այն կետում, որտեղ ազդում է ուժը: Սլաքի ուղղությունը համընկնում է ուժի ազդման ուղղության հետ, իսկ հատվածի երկարությունը որոշակի մասշտաբով համապատասխանում է ուժի բայցին արժեքին: Նշելու համար, որ ուժը վեկտորական մեծություն է,  $F$  տառի գլխին պատկերում են փոքրիկ սլաք՝  $\vec{F}$ :

Օրինակ՝ նկ. 31-ում պատկերված ուժի մոդուլը 8 Ն է, այն կիրառված է գնդի A կետում և ունի հորիզոնական ուղղություն: Հատվածի 1 սմ երկարությամբ համապատասխանում է 4 Ն:


Ուժի ազդեցությունը կախված է նաև ուժի կիրառման կետից: Օրինակ՝ նկ. 32-ում պատկերված ամրակալանի A կամ



Նկ. 31  
Գնդի վրա ազդող ուժի վեկտորը



Նկ. 32  
Ուժի ազդեցության արդյունքը կախված է կիրառման կետից



**Նկ. 33**  
Սագմիսը  
զնոյիկի վրա  
ազդում է հեռվից


Ե կետերում կիրառելիս  $\vec{F}$  ուժի ազդեցության արդյունքն էապես տարբեր է:

Առօրյա կյանքում համեյապում ենք տարարնույթ ուժեղի: Դուքը բայցեղու համար գործադրում ենք մկանային ուժ և հաղորահարում դրան ծխնիներում առկա շփման ուժերը, որոշ դեպքերում հաղորահարում ենք նաև դուքը փակ վիճակում պահող զապանակի առաձգականության ուժը: Մենք միշտ ականատեսն ենք այն ուժի ազդեցության հետևանքների, որով Երկիրը ձգում է տարբեր մարմինների:

Բոլոր ուժերը, անկախ փոխազդեցության բնույթից, լինում են երկու տեսակի՝ ուժեր, որոնք ազդում են մարմինների անմիջական հպման ժամանակ, և ուժեր, որոնք ազդում են, անկախ այն հանգանանքից, մարմինները հպվո՞ւմ են իրար, թե՞՛ ոչ: Վերջիններս կարող են ազդել նաև հեռվից: Օրինակ՝ նկ. 33-ում պատկերված մազմիսը երկարեն զնոյիկի վրա ազդում է հեռվից՝ առանց նրան հպվելու: Հեռազդող ուժի օրինակներ են նաև տիեզերական ձգողության ուժը և, որպես դրա դրսւորման մասնավոր դեպք, Երկիր ձգողության ուժը, որին կծանոթանար հաջորդ պարագրաֆում:

## Հարցեր և առաջադրանքներ

1. Ի՞նչ է բնութագրում ուժը:
2. Ո՞ր ուժն է կոչվում 1 Նյուտոն (1Ն):
3. Նշվածներից ո՞րն է ֆիզիկական մեծություն, որը՝ ֆիզիկական երևույթը՝  
 ա) փոխազդեցություն, բ) ուժ,  
 գ) զանգված, դ) հներցիա:
4. Ինչպիսի՞ մեծություն է ուժը:
5. Նշվածներից որո՞նք են վեկտորական մեծություններ, արագություն, զանգված, խոռոչություն, ուժ:
6. Բերեք օրինակներ, որոնք ապացուցում են, որ ուժի ազդեցության արդյունքը կախված է նրա ուղղությունից:
7. Բերեք օրինակներ, որոնք ապացուցում են, որ ուժի ազդեցության արդյունքը կախված է նրա կիրառման կետից:
8. Պատկերեք հորիզոնական դեպի աջ ուղղված ուժի վեկտորը, որի մոդուլը  $4\text{N}$  է (մասշտաբ՝  $0,5 \text{մ-ը } 1\text{N}$ ):
9. Պատկերեք մարմնի նույն կետում կիրառված իրար փոխուղղահայց  $4\text{N}$  և  $3\text{N}$  մոդուլներով ուժեր:
10. Օգտվելով մասշտաբից՝ որոշեք նկարում պատկերված մարմնի վրա ազդող  $\vec{F}_1$ ,  $\vec{F}_2$  և  $\vec{F}_3$  ուժերի մոդուլները:



Խճախս գիտենք, դեպի վեր նետած կամ ձեռքից բաց բողոք մարմինները վայր են ընկնում: Նշանակում է, որ նրանց վրա դեպի ներքև ուղղված ուժ է ազդում: Դա Երկրի ձգողության ուժն է: Երկիրը ձգում է բոլոր մարմինները՝ մարդկանց, ավտոմեքենաները, ծառերը, տները և այլն: Երկրի ձգողության շնորհիվ է, որ նրա մակերևույթին են գետերի, լճերի ծովերի և օվկիանոսների ջրերը: Երկրի ձգողության ուժն է պահում նաև մթնոլորտը:

Այն, որ Երկիրը ձգում է իր մակերևույթին կամ նրան մաս գտնվող մարմինները, ամենօրյա փորձից մարդիկ գիտեին շատ վաղուց և կարծում են, որ մարմիններին ձգելը բնորոշ է միայն Երկրին: Սակայն աստղագիտական դիտումները ցույց տվեցին, որ ձգելու հատկությամբ օժտված է ոչ միայն Երկիրը, այլև երկնային բոլոր մարմինները: Օրինակ՝ ոչ միայն Երկիրն է ձգում Լուսինը, որի շնորհիվ այն պտտվում է Երկրի շորջը, այլև Լուսինն իր հերթին ձգում է Երկիրը և նրա վրա գտնվող մարմինները: Վերջինիս շնորհիվ է, որ Երկրի վրա տեղի են ունենում մակընթացություններ և տեղատվություններ, որոնց ժամանակ ծովերի և օվկիանոսների ահօնի զանգվածով ջրերն օրվա ընթացքում Երկու անգամ մի քանի մետր բարձրանում և իջնում են:

Զեզ հայտնի է նաև, որ մոլորակներն Արեգակի ձգողության շնորհիվ են պտտվում նրա շորջը: Ձգողության ուժերը գործում են նաև աստղերի միջև: Դրանց շնորհիվ են տիեզերքում առաջանում աստղակույտեր, զալակտիկաներ:



Ակ. 34  
Աստղերի գնդաձև  
կուտակում

Նկ.34-ում պատկերված է աստղերի գնդածն կուտակում, որտեղ ձգողության հետևանքով խտացել են հարյուր հազարվոր աստղեր:

Եթե մի պահ վերանային ձգողության (գրավիտացիոն) ուժերը, Երկիրը և Արեգակնային համակարգի մյուս մոլորակները տարբեր ուղղություններով կիեռանային տիեզերական տարածության մեջ, կտրոհվեին գալակտիկաները, աստղային կուտակումները:

Ձգողության երևույթը հատուկ է տիեզերքում գտնվող բոլոր մարմիններին՝ անկախ դրանց չափերից: Դա է պատճառը, որ այդ ուժերն անվանում են տիեզերական ձգողության ուժեր:

Անգիտայի ֆիզիկոս Խասհակ Նյուտոնն առաջինն էր, որ հայտնաբերեց այն օրինաչափությունները, որոնք բնութագրում են տիեզերական ձգողության ուժերը: Երկու մարմինների ձգողության ուժերն այնքան անգամ մեծ են, որքան անգամ մեծ են մարմինների զանգվածները:

Այլ ուժերը կախված են նաև մարմինների միջև հեռավորությունից: Կախման բնույթը պարզելու համար Նյուտոնն օգտվեց այն ենթադրությունից, որ Լուսինը Երկրի շորջը պտտվում է այն նույն ուժի ազդեցությամբ, որը ստիպում է նաև Երկրի մակերևույթին մոտ գտնվող մարմիններին ընկնել նրա վրա: Առաջին դեպքում փոխվում է միայն իր ուղեծրով Լուսնի պտտման արագության ուղղությունը, իսկ Երկրորդ դեպքում աճում է մարմնի արագությունը: Համապատասխան հաշվարկներ կատարելով՝ Նյուտոնը ցույց տվեց, որ Երկու մարմինների հեռավորությունը մեծացնելիս նրանց միջև ձգողության ուժը փոքրանում է հեռավորության քառակուսին հակադարձ համեմատականորեն: Օրինակ՝ Եթե հեռավորությունը մեծացնում ենք 3 անգամ, ձգողության ուժը փոքրանում է 9 անգամ:

Մեզ համար առանձնահատուկ նշանակություն ունի Երկրի ձգողության ուժը:

**Այն ուժը, որով Երկիրը ձգում է մարմինները, կոչվում է ծանրության ուժ:**

Փորձը ցույց է տալիս, որ ծանրության ուժը կախված է մարմնի զանգվածից, ընդ որում, որքան մեծ է մարմնի զանգվածը, այնքան մեծ է նրա վրա ազդող ծանրության ուժը: Օրինակ՝ Եթե ող զանգվածով մարմնի վրա ազդում է  $F$  ուժ,


ապա  $2m$  զանգվածով մարմնի վրա կազդի ծանրության  $2F$  ուժ,  $3m$  զանգվածով մարմնի վրա կազդի ծանրության  $3F$  ուժ և այլն (նկ. 35), այսինքն՝ ծանրության ուժն ուղղի համեմատական է մարմնի զանգվածին: Մարենատիկորեն այդ կախումն արտահայտվում է հետևյալ բանաձևով՝  $F = mg$ , որտեղ  $g$ -ն բոլոր մարմնների համար միևնույն հաստատուն մեծությունն է: Վերջինիս արժեքը կարելի է որոշել փորձով: Փորձը ցույց է տալիս, որ Երկրի մակերևույթին մոտ գտնվող  $1 \text{ kg}$  զանգվածով մարմինը Երկիրը գգում է  $9,8 \text{ N}$  ուժով: Վերը բերված բանաձևից հետևում է, որ  $g = \frac{F}{m}$ : Տեղադրելով  $F = 9,8 \text{ N}$  և  $m = 1 \text{ kg}$ , կստանանք՝  $g = \frac{9,8 \text{ N}}{1 \text{ kg}} = 9,8 \text{ N/kg}$ :

Այսպիսով՝ կամայական զանգվածով մարմնի վրա ազդող ծանրության ուժը որոշվում է:

$$F_g = mg$$

բանաձևով, որտեղ  $g = 9,8 \text{ N/kg}$ : Նշենք, որ այս բանաձևով ծանրության ուժը որոշելիս մարմնի զանգվածը միշտ պետք է արտահայտել կիլոգրամներով: Պետք է հիշել նաև, որ  $g$ -ն հաստատուն  $9,8 \text{ N/kg}$  արժեքն ունի միայն Երկրի մակերևույթի մերձակայքում: Երկրի մակերևույթից մեծ քարձություններում  $g$ -ի արժեքը փորձանում է, այսինքն՝ Երկրից հեռանալիս մարմնի վրա ազդող ծանրության ուժը նվազում է:

$F_g = mg$  բանաձևով կարող ենք հաշվել ծանրության ուժի մոդուլը: Խսկ ի՞նչ ուղղություն ունի ծանրության ուժը: Մեծ ճշտությամբ այն ուղղված է դեպի Երկրի կենտրոն: Այդ ուղղությունը որոշելու համար օգտվում են ուղղական կոչվող սարքից: Ուղղակարը թելից կախված թել է (նկ. 36): Եթե թեոր դադարի վիճակում է, թելի ուղղությունը համընկնում է թելի վրա ազդող ծանրության ուժի ուղղությամբ: Այդ ուղղությունն անվանում են ուղղաձիգ ուղղություն, իսկ դրան ուղղահայաց հարթությունը՝ հորիզոնական հարթություն: Ուղղակարով ստուգում են տարբեր շինությունների, մարմինների դիրքերի ուղղաձիգությունը:



Նկ. 35  
Ծանրության  
ուժն ուղիղ  
համեմատական է  
մարմնի զանգվածին



Նկ. 36  
Ուղղակար

## Հարցեր և առաջադրանքներ

1. Ո՞ր մարմններն են փոխագուրմ տիեզերական ձգողության ուժերով:
2. Ի՞նչ՝ ո է կախված տիեզերական ձգողության ուժը:
3. Ո՞ր ուժն են անվանում ժամրության ուժ:
4. Ի՞նչպես է կախված ժամրության ուժը մարմնի զանգվածից:
5. Ի՞նչ բանաձևով է որոշվում ժամրության ուժը:
6. Ի՞նչո՞ւ է ցուրք հոսում վերևի դեպք ներքև և ոչ թե հակառակը:
7. Զուգահեռ են արդյոք Երևանում և Թեղինում կախված ուղղակարեց:
8. Մինմույն ծանրության ուժն է արդյոք ազդում երկու միատեսակ գնդերի վրա, եթե դրանցից մեկը քրում է, իսկ մյուսը՝ օդում:
9. Տանը կշեռքով որոշեք ձեր, գնդակի կամ մեկ այլ մարմնի զանգվածը և հաշվեք նրա վրա ազդող ծանրության ուժը:

### Ըստաքրիի է իմանալ

#### Նյուտոնը, տիեզերական ձգողությունը և... խնձորը

Անգլիա, 1665-1666 թվականներ: Երկրում մոլեկուլում էր ժամտախտի համաճակագր: 22-ամյա Նյուտոնը, որ արդեն Անգլիայի հմագույն՝ Շենքրիջի համալսարանի բակալավր էր, ստիպված վերադարձավ հայրենի գյուղ՝ Կոյսթրոֆ՝ իրենց տոհմական կալվածքը: Այդ տարիները, սակայն, նշանակալից էին Նյուտոնի համար: «Այդ ժամանակ ես նուախոր ուժերին ծաղկման շրջանում էի և մարենատիկայի ու փիլիսոփայության մասին մտածում էի ավելի շատ, քան երբեմն դրանից հետո», — զրում է Նյուտոնը շատ տարիներ անց:

Հենց այդ շրջանում Նյուտոնը հանգեց բնուրյան կարևորագույն օրինաբնիքի մեջ՝ տիեզերական ձգողության օրենքին: Հանրահայտ է, որ այդ օրենքը նա հայտնագործել է՝ դժուելով խնձորենուց պոկված խնձորի շարժումը: Մարմնների ամկումը տեսնում էին նաև ուրիշ գիտնականներ և ջանում էին բացատրել այդ երևոյթը: Սակայն մինչ Նյուտոնը ոչ մեկին այդպես էլ չհաջողվեց: «Ինչո՞ւ է խնձորը միշտ ուղղածից ներքև ընկնում, այլ ոչ թե մեկ ուրիշ կողմ»: — ինքն իրեն հարց է տալիս Նյուտոնը: Եվ նա սկսում է մտորել այդ խնդիրի շորջ: Իսկ մասրումների արդյունքն այժմ յորաքանչյուր դպրոցականի հայտնի տիեզերական ձգողության օրենքի հայտնագործումն էր:

### Խնդիրների լուծման օրինակներ

1. Մարմնի վրա ազդող ծանրության ուժը 1 Ն է: Որքա՞ն է այդ մարմնի զանգվածը:

$$F_d = 1 \text{ Ն} \\ m = ?$$

Լուծում: Մարմնի վրա ազդող ծանրության ուժը որոշվում է:  $F_d = mg$  բանաձևով, որտեղ  $m$ -ը մարմնի զանգվածն է, իսկ  $g = 9,8 \text{ Ն/կգ}$ : Այստեղից՝  
 $m = \frac{F_d}{g} = \frac{1 \text{ Ն}}{9,8 \text{ Ն/կգ}} = 0,102 \text{ կգ} = 102 \text{ գ}:$

Պատասխան՝ 102 գ:

## 2. Որքա՞ն է 10 լ ծավալով կերոսինի վրա ազդող ծանրության ուժը:

$$V=1\text{ l}$$

$$F_{\delta}=?$$

**Լուծում:** Կերոսինի զանգվածը որոշենք  $m = \rho V$  բանաձևով, որտեղ  $\rho$ -ն կերոսինի խտորդյունն է: Նրա վրա ազդող ծանրության ուժը՝  $F_{\delta} = mg$ , հետևաբար՝  $F_{\delta} = \rho g V$ : Աղյուսակ 5-ից վերցնելով կերոսինի խտորդյան արժեքը՝  $\rho = 800 \text{ կգ}/\text{մ}^3$  և հաշվի առնելով, որ նրա ծավալը՝  $V = 1 \text{ l} = 0,001 \text{ м}^3$ , կստանանք՝  $F_{\delta} = 800 \text{ կգ}/\text{մ}^3 \cdot 0,001 \text{ м}^3 \cdot 9,8 \text{ Ն}/\text{կգ} = 7,84 \text{ Ն}$

**Պատասխան՝** 7,84 Ն:

## 3. Նկարում պատկերված միևնույն չափերով երկու չորսութերից որի՞ վրա ազդող ծանրության ուժն է մեծ և քանի՞ անգամ:



**Լուծում:** Ալյումինի չորսուի վրա ազդող ծանրության ուժը՝  $F_w = m_w g$ : Քանի որ  $m_w = \rho_w V$ , որտեղ  $\rho_w = 2700 \text{ կգ}/\text{մ}^3$ -ն ալյումինի խտորդյունն է, ապա՝  $F_w = \rho_w V g$ : Նմանապես պարաֆինի չորսուի վրա ազդող ծանրության ուժի համար ստանում ենք՝  $F_w = \rho_w V g$ , որտեղ  $\rho_w = 900 \text{ կգ}/\text{մ}^3$ : Վերջին երկու հավասարությունները բաժանելով իրար՝ կստանանք  $\frac{F_w}{F_w} = \frac{\rho_w}{\rho_w} = 3$ :

**Պատասխան՝** ալյումինի չորսուի վրա ազդում է 3 անգամ ավելի մեծ ծանրության ուժ:


## ՄԻ ՈՒՂՂՈՎ ՈՒՂՂՎԱԾ ՈՒԺԵՐԻ ԳՈՒՄԱՐՈՒՄԸ

Եթե մեզ հետաքրքրող մարմինը որոշակի փոխազդեցության մեջ է միայն մի մարմնի հետ, ապա ասում ենք, որ նրա վրա ազդում է միայն մեկ ուժ: Օրինակ՝ յուրաքանչյուր մարմին փոխազդում է Երկրի հետ, այսինքն՝ նրա վրա միշտ ազդում է ձեզ արդեն ծանր ծանրության ուժը: Սակայն շատ դեպքերում մարմինը միաժամանակ փոխազդում է երկու կամ ավելի մարմինների հետ: Նման դեպքերում մարմնի վրա ազդում է երկու կամ ավելի ուժ: Օրինակ՝ որոշ բարձրությունից ընկնող բրդի վրա (նկ. 37), բայց ծանրության ուժից, ազդում է նաև օդի դիմադրության ուժը: Դեպի Լուսին բռչող տիեզերանավի վրա միաժամանակ ազդում են Երկրի, Լուսին և Արեգակի ձգողության ուժերը:

Փորձը ցույց է տալիս, որ եթե մարմնի վրա ազդում է մի քանի ուժ, ապա դրանք կարելի է փոխարինել մեկ այնպիսի ուժով, որը մարմնի վրա բողնում է նույն ազդեցությունը, ինչ այդ ուժերը միասին:

Այն ուժը, որը մարմնի վրա ունենում է նույն ազդեցությունը, ինչ մի քանի ուժեր միասին ազդելիս, կոչվում է այդ ուժերի համագոր:

520




Նկ.37

Ծոյրի վրա միաժամանակ ազդում են օդի դիմադրության ուժը և ծանրության ուժը



Նկ. 38  
Նույն ուղղությամբ  
ուղղված ուժերի  
գումարումը



Նկ. 39  
Հակառակ  
ուղղված ուժերի  
գումարումը

**Ուժերի համագորք գումարու գործողությունը կոչվում է ուժերի գումարում:** Ուժը վեկտորական մեծություն է, իսկ վեկտորների համար գործում են գումարման այլ կանոններ: Եթե ուժերն ուղղված են կամայական անկյան տակ, ապա դրանց գումարելը (համագորք գումարու բավականաշափ քարդ խնդիր է (այն կրնարկեք քարձը դասարաններում): Այժմ պարզենք, թե ինչպես են գումարվում մի ուղղով ուղղված երկու ուժերը, ընդ որում, դրանք կարող են ունենալ նույն ուղղությունը կամ ուղղված լինել իրար հակառակ: Նման դեպքերում գործում են ուժերի գումարման հետևյալ պարզ կանոնները:

Եթե մարմնի վրա ազդող  $\vec{F}_1$  և  $\vec{F}_2$  ուժերն ունեն նույն ուղղությունը (նկ. 38), ապա համագորք ուժն ուղղված է նույն ուղղությամբ, և նրա մոդուլը հավասար է այդ ուժերի մոդուլների գումարին:

$$F = F_1 + F_2;$$

Եթե մարմնի վրա ազդող ուժերն ուղղված են մի ուղղով և ունեն հակառակ ուղղություններ (նկ. 39), ապա դրանց համագորքն ունի մոդուլով ավելի մեծ ուժի ուղղությունը, և նրա մոդուլը հավասար է այդ ուժերի մոդուլների տարրերությանը: Եթե  $F_1 > F_2$ , ապա՝

$$F = F_1 - F_2;$$

Մասնավորապես եթե հակառակ ուղղված ուժերի մոդուլները հավասար են, ապա նրանց համագորքը զրո է: Այդ դեպքում ասում են, որ այդ ուժերը միջյանց **համակշռում են**: Այդպիսի ուժերի ազդեցությամբ մարմնի արագությունը չի փոխվում. այն միշտ պահպանում է իր դադարի կամ ուղղագիծ հավասարաչափ շարժման վիճակը:

## Հարցեր և առաջադրանքներ

1. Բերեք օրինակներ, երբ մարմնի վրա միաժամանակ ազդում է մի քանի ուժ:
2. Ո՞ր ուժը է կոչվում համագորք ուժ:
3. Ի՞նչպես է ուղղված մի ուղղով միևնույն կողմն ուղղված երկու ուժերի համագորք, և ի՞նչի՞ է հակառակ նրա մոդուլը:
4. Ի՞նչպես է ուղղված մի ուղղով հակառակ կողմեր ուղղված երկու ուժերի համագորք, և ի՞նչի՞ է հակառակ նրա մոդուլը:
5. Ի՞նչպես է շարժվում մարմններ մեջ մի կնտում կիրառված, մոդուլով հավասար և հակառակ ուղղված երկու ուժերի ազդեցությամբ:



- Ինչի՞ է հավասար  $A$  կետում կիրառված երկու ուժերի համագորի մոդուլը, և ինչպե՞ս է այն ուղղված:
- Ինչի՞ է հավասար  $A$  կետում կիրառված երեք ուժերի համագորի մոդուլը, և ինչպե՞ս է այն ուղղված:
- Մարմնի վրա նույն ուղղությամբ ազդում են  $2\text{N}$  և  $3\text{N}$  ուժեր: Պատկերեք այդ ուժերը, եթե դրանց համագորի մոդուլը հավասար է  $\alpha) 10\text{N}$ ,  $\beta) 50\text{N}$ :
- Որոշ բարձրությունից ընկնող մարմնի վրա ազդում են նրա ծանրության  $50\text{N}$  և ողի դիմագորության  $30\text{N}$  ուժերը: Ինչպե՞ս է ուղղված այդ ուժերի համագոր, և ինչի՞ է հավասար նրա մոդուլը:
- Միևնույն կետում կիրառված  $4\text{N}$  և  $3\text{N}$  ուժերի համագորի մոդուլը ո՞ր դեպքում հավասար կլինի՝  $\alpha) 1\text{N}$ ,  $\beta) 7\text{N}$ :
- Գումարեք  $7\text{N}$  և  $1\text{N}$  ուժերը, եթե նրանց կազմական մակարդակը՝  $\alpha) 0^\circ$  է,  $\beta) 180^\circ$  է:
- Մարմնի վրա ազդում են մի ուղղով ուղղված  $3\text{N}$ ,  $4\text{N}$  և  $5\text{N}$  ուժեր: Կարո՞ղ է արդյոք այդ ուժերի համագորի մոդուլը հավասար լինել  $1, 2, 3, 4, 6, 10, 12, 15\text{N}$ -ի:

## §21

### ԱՌԱՋԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒԺ: ՀՈՒԿԻ ՕՐԵՆՔԸ


Արդեն գիտենք, որ մարմինները փոխազդեցության հետևանքով փոխում են իրենց արագությունները: Սակայն երբ մարմինը գրկված է ամբողջական շարժում կատարելու հնարավորությունից, ապա ուժի ազդեցությամբ նրա առանձին մասերը տեղափոխվում են միմյանց նկատմամբ, որի հետևանքով մարմինը փոխում է իր ձևը ու չափերը:

Այսպես, օրինակ, երբ մասով գնդակը սեղմում ենք պատին (նկ. 40), ապա մատի և զնդակի, ինչպես նաև զնդակի ու պատի փոխազդեցության հետևանքով փոխվում են գնդակի և մատի ձևերը: Այդ դեպքում փոխվում է նաև պատի ձևը, սակայն այնքան չնշին, որ չենք նկատում: Մեկ այլ օրինակ: Եթե բեռը դնում ենք հենարանների վրա գտնվող տախտակին (նկ. 41), այն ճկվում է:



**Նկ.40**  
Փոխազդեցության  
հետևանքով  
փոխվում է  
մարմինների ձևը

**Նկ.41**  
Շկման դեֆորմացիա



**Ակ. 42.**  
Մեղմման (ա)  
և ծգման (բ)  
դեֆորմացիաներ

Փոխազդեցության հետևանքով կարող են փոխվել նաև մարմնի չափերը: Օրինակ՝ պողպատն զապանակը սեղմելիս այն կարճանում (նկ. 42. ա) է, իսկ ձգելիս՝ երկարում (նկ. 42. բ):

Նշված բոլոր դեպքերում ասում են, որ մարմինը դեֆորմացվում է:

Արտաքին ազդեցության հետևանքով մարմնի ձևի և չափերի փոփոխությունը կոչվում է դեֆորմացիա:

Եթե զապանակը սեղմենք և բայ թողնենք, ապա այն կվերականգնի իր նախկին ձևն ու չափերը: Իսկ եթե սեղմենք պլաստիլինե գունդը, այն չի վերականգնի իր ձևը: Այս փորձերը ցույց են տալիս, որ երբ դադարում է արտաքին ուժի ազդեցությունը, որոշ մարմիններ վերականգնում են իրենց նախնական ձևն ու չափերը, իսկ որոշ մարմիններ՝ ոչ:

**Եթե արտաքին ազդեցությունը վերացնելուց հետո մարմինը լրիվ վերականգնում է իր նախկին ձևն ու չափերը, դեֆորմացիան կոչվում է առաձգական, հակառակ դեպքում՝ պլաստիկ:**

Պլաստիկ դեֆորմացիայից հետո մարմինը մասամբ կամ լրիվ պահպանում է իր ստացած ձևը և փոփոխված չափերը:

Կամորթները, հեծանները, հաստոցների մասերը հաշվարկվում և պատրաստվում են այնպես, որ ուժի ազդեցությամբ ենթարկվեն առաձգական դեֆորմացիայի, ինչն ապահովում է դրանց երկարակեցությունն ու հուսալիությունը: Եվ հակառակը, մետաղների մշակման ժամանակ դրանց ենթարկում են պլաստիկ դեֆորմացիայի, որպեսզի պատրաստված դետալն ունենա անհրաժեշտ չափերն ու ձևը և դրամբ պահպանի դեֆորմացիան վերացնելուց հետո:

Առաձգական դեֆորմացիայի ժամանակ մարմնում առաջանում են ուժեր, որոնք խոչընդոտում են դեֆորմացիան և ծգուում են վերականգնել նրա նախկին ձևն ու չափերը:

Օրինակ՝ եթե զապանակի մի ծայրն ամրացնենք, իսկ ազատ ծայրը ծգենք որոշակի  $F$  ուժով, ապա այն որոշ չափով կերկարի և այլև չի ձգվի: Նշանակում է, որ ծգման շնորհիվ զապանակում առաջանում է ուժ, որը մոդուլով հավասար է այն ուժին, որով ազդում ենք և հակառակ է ուղղված դրան: Այդ ուժը կոչվում է առաձգականության ուժ:

Փորձերը ցույց են տալիս, որ առաձգական դեֆորմացիայի դեպքում առաձգականության ուժը կախված է դեֆոր-

մասին չափից: Փորձենք պարզել այդ կախման բնույթը և ստանալ այն արտահայտող բանաձևը:

Դրա համար կատարենք հետևյալ փորձը: Ամրակալանին ամրացնենք զապանակ և նշենք դրա ազատ ծայրի դիրքը (նկ. 43): Այնուհետև զապանակի ծայրից կախենք բեռ: Զապանակը կձգվի և կերպարի  $x$  չափով: Բեռի վրա ազդում են ծանրության ուժը և դրան հակառակ ուղղված զապանակի առաձգականության ուժը: Քանի որ բեռը դադարի վիճակում է, ապա առաձգականության ուժը մոդուլով հավասար է բեռի ծանրության ուժին: Եթե բեռը համենք, ապա զապանակի ծայրը կվերադառնա իր նախկին դիրքը, ինչը ցույց է տալիս, որ դեֆորմացիան առաձգական է: Այժմ զապանակի ծայրից կախենք երկու այդպիսի բեռ: Այս դեպքում ծանրության ուժը, հետևաբար նաև առաձգականության ուժը, կմեծանան երկու անգամ: Չափումները ցույց են տալիս, որ զապանակի երկարացումը նույնական մեծանում է երկու անգամ:

Նշանակում է՝ քանի անգամ մեծանում է զապանակի դեֆորմացիայի չափը, նույնքան անգամ մեծանում է առաձգականության ուժը, այսինքն՝ առաձգականության ուժն ուղիղ համեմատական է դեֆորմացիայի չափին (զապանակի երկարացմանը):

Ընթանրացնելով այս փաստերը՝ անզիհայի ֆիզիկոս Ռոբերտ Հուկը ձևակերպեց հետևյալ օրենքը, որը հայտնի է որպես *Հուկի օրենք*:

**Առաձգական դեֆորմացիայի ժամանակ մարմնում առաջացած առաձգականության ուժն ուղիղ համեմատական է դեֆորմացիայի չափին:**

Եթե առաձգականության ուժը նշանակենք  $F_{\text{առ}}$ -ով, իսկ դեֆորմացիայի չափը՝  $x$ -ով, ապա Հուկի օրենքը կարելի է ներկայացնել հետևյալ բանաձևով.


$$F_{\text{առ}} = kx:$$

Այս բանաձևում համեմատականության  $k$  գործակիցը կոչվում է կոշտություն: Կոշտությունը կախված է զապանակի նյութի տեսակից, չափերից և պատրաստման եղանակից: Տվյալ զապանակի համար այն հաստատում մեծություն է:


Քանի որ կոշտությունը՝  $k = F/x$ , և միավորների ՄՀ-ում ուժն արտահայտվում է նյուտոններով, իսկ երկարացում՝ մետրներով, ապա նրա միավորը կլինի  $1 \text{ N/m}$ -ը:



Ռոբերտ Հուկ  
1635-1703



Նկ. 43  
Առաձգականության ուժը ուղիղ համեմատական է դեֆորմացիայի չափին



**Ակ. 44**  
Հուկի օրենքը  
արտահայտող  
գրաֆիկը

Հուկի օրենքը միշտ է ոչ միայն մարմնի ձգման, այլև սեղմման դեպքում: Եթե զապանակը սեղմենք չ չափով, ապա նրանում առաջացած առաձգականության ուժը դարձյալ կորցվի նույն բանաձևով:

Նշենք, որ  $F = kx$  բանաձևով որոշվում է առաձգականության ուժի մոդուլը, իսկ նրա ուղղությունը միշտ հակառակ է ուղղված մարմնի դեֆորմացիայի ուղղությամբ:

Հուկի օրենքը կարելի է պատկերել նաև գրաֆիկորեն: Ջանի որ առաձգականության ուժն ուղղի համեմատական է դեֆորմացիայի չափին, ապա այդ կախումն արտահայտող գրաֆիկն ուղիղ գիծ է (Ակ. 44):

## Հարցեր և առաջադրություններ

- Ո՞ր երևոյթն է կոչվում դեֆորմացիա:
- Բերեք դեֆորմացիայի օրինակներ:
- Ո՞ր դեֆորմացիան է կոչվում առաձգական, որը՝ պլաստիկ: Բերեք օրինակներ:
- Ո՞ր ուժն են անվանում առաձգականության ուժ, և ինչպես է այն ուղղված:
- Ձևակերպեք Հուկի օրենքը:
- Գրեք Հուկի օրենքն արտահայտող բանաձևը:
- Ինչի՞ց է կախված զապանակի կոշտությունը:
- Ի՞նչ միավորով է արտահայտվում կոշտությունը միավորների ՄՇ-ում:
- Կառուցեք զապանակի երկարացումից առաձգականության ուժի կախման գրաֆիկը, եթե զապանակի կոշտությունը 20 Ն/մ է:


## Խնդիրների լուծման օրինակներ

- Նկարում պատկերված է զապանակի առաձգականության ուժի կախումը նրա երկարացումից արտահայտող գրաֆիկը: Որքա՞ն է զապանակի կոշտությունը:

**Լուծում:** Գրաֆիկից հետևում է, որ զապանակի  $x = 4$  մմ = 0,04 մ երկարացման դեպքում առաձգականության ուժը՝  $F_{\text{առ}} = 20 \text{ Ն}$ : Հուկի օրենքից հետևում է, որ զապանակի կոշտությունը՝

$$k = \frac{F_{\text{առ}}}{x} = \frac{20 \text{ Ն}}{0,04 \text{ մ}} = 500 \text{ Ն/մ:}$$

Նոյն արդյունքը կատարանք՝ օգտագործելով գրաֆիկի կամայական այլ կետի համապատասխանող  $x$ -ի և  $F_{\text{առ}}$ -ի արժեքները:



Պատասխան՝ 500 Ն/մ:

2. Զապահակը 5 սմ-ով ձգելու համար անհրաժեշտ է նրա վրա կիրառել 2 Ն ուժ: Ի՞նչ ուժ է անհրաժեշտ այն 30 սմ-ով ձգելու համար:

$$\begin{array}{l} x_1 = 5 \text{ սմ} \\ F_1 = 2 \text{ Ն} \\ x_2 = 30 \text{ սմ} \\ F_2 = ? \end{array}$$

**Լուծում:** Համաձայն Հովկի օրենքի՝  $F_1 = kx_1$ ,  $F_2 = kx_2$ , որտեղ  $k$ -ն զապահակի կոշտությունն է: Առաջին հավասարության գոմելով  $k = \frac{F_1}{x_1}$  մեծությունը և այն տեղադրելով երկրորդ հավասարման մեջ՝ կստանանք՝

$$F_2 = \frac{F_1 x_2}{x_1} = \frac{2 \text{ Ն} \cdot 30 \text{ սմ}}{5 \text{ սմ}} = 12 \text{ Ն:}$$

Պատասխան՝ 12 Ն:

3. Ինչի՞ է հավասար զապահակի առաձգականության ուժը, եթե նրանից կախված է 400 սմ<sup>3</sup> ծավալով երկարեց չորսու:

$$\begin{array}{l} V=400 \text{ սմ}^3 \\ \rho=7,8 \text{ գ/սմ}^3 \end{array}$$

$$F_{\text{սա}}=?$$

**Լուծում:** Չորսուի վրա ազդում են նրա ծանրության  $mg$  և զապահակի առաձգականության  $F_{\text{սա}}$  ուժերը: Քանի որ չորսուն դադարի վիճակում է, ապա դրանց համագոր ուժը հավասար է, գրոյն: Երկու հակառակ ուղղված ուժերի համագորը գրությամբ մոդուլները հավասար են, այսինքն՝  $F_{\text{սա}} = mg$ : Չորսուի զանգվածը որոշենք  $m = \rho V$  բանաձևով, որտեղ  $V$ -ն չորսուի ծավալն է, իսկ  $\rho$ -ն՝ երկարի խտությունը: Զապահակի առաձգականության ուժը՝

$$F_{\text{սա}} = \rho V g = 7,8 \frac{\text{գ}}{\text{սմ}^3} \cdot 400 \text{ սմ}^3 \cdot 9,8 \frac{\text{Ն}}{\text{կգ}} = 3,12 \text{ կգ} \cdot 9,8 \text{ Ն/կգ} = 30,6 \text{ Ն:}$$

Պատասխան՝ 30,6 Ն :



## ՈՒԺԱՉԱՓ

Ուժը մարմնի վրա թողնում է երկակի ազդեցություն: ուժի ազդեցությամբ մարմնը կարող է փոխել իր արագությունը կամ դեֆորմացվել: Փորձը ցույց է տալիս, որ ինչքան մեծ է մարմնի վրա ազդող ուժը, այնքան մեծ է նրա արագության փոփոխությունը կամ դեֆորմացիայի չափը: Այստեղից հետևում է, որ ուժը կարելի է չափել երկու եղանակով՝

- ա) չափելով նրա ազդեցությամբ մարմնի արագության փոփոխությունը,
- բ) չափելով նրա ազդեցությամբ մարմնի դեֆորմացիայի մեծությունը:

§ 12-ում ուժի միավորը սահմանեցինք՝ օգտվելով առաջին եղանակից: Սակայն գործնականում ավելի հեշտ է չափել մարմնի դեֆորմացիայի (երկարացման կամ սեղման) մեծությունը, քան արագության փոփոխությունը:

Ահա թե ինչու ուժը չափելու համար ավելի շատ օգտվում են ուժաչափ (դինամոմետր) կոչվող սարքից, որի աշխատանքի հիմքում Հովկի օրենքն է:

§ 22

Պարզագույն ուժաչափի (նկ. 45) հիմնական մասը զսպանակն է, որի ստորին ծայրը վերջանում է կեռիկով: Զսպանակին ամրացված է ցուցիչ: Զսպանակի կեռիկի վրա ուժ ազդելիս այն սահում է ուժաչափի հենքին ամրացված սանդղակի վրայով և ցույց տալիս ուժի համապատասխան արժեքը: Զափման ժամանակ զսպանակը ենթարկվում է միայն առաձգական դեֆորմացիայի, ուստի ուժի ազդեցությունը դադարելուց հետո ցույցիը վերադառնում է սկզբնական դիրքին:


Իսկ ինչպես են աստիճանավորում ուժաչափի սանդղակը:

Դրա համար ուժաչափի վրա՝ ցույցիի մոտ ամրանում են սալիսակ բրիջ շերտ և նրա վրա հորիզոնական գծիկով նշում ցույցի դիրքը, երբ զսպանակը դեֆորմացված չէ: Գծիկի կողքին գրում են 0 թվանշանը (նկ. 46. ա): Դրանից հետո կեռիկից կախում են 102 գ զանգվածով բեռ, որը զսպանակը ձգում է 1Ն ուժով: Ցույցի նոր դիրքը նշում են գծիկով և նրա կողքին գրում 1 թվանշանը (նկ. 46. բ): Այսուհետև կեռիկին ավելացնում են ևս մեկ նույնական բեռ, որի հետևանքով զսպանակը ձգող ուժը դառնում է 2Ն: 2 թվանշանով նշում են ցույցի նոր դիրքը և այսպես շարունակ: 1Ն-ի տասնորդական մասերը չափելու համար երկու հաջորդական թվերով նշված գծիկների միջև հեռավորությունները բաժանում են 10 հավասար մասի, որոնցից յուրաքանչյուրը 0,1Ն է:

Տեխնիկայում, սպորտում և առօրյա կյանքում օգտագործում են նաև այլ կառուցվածքի ուժաչափներ: Օրինակ՝ նկ. 47-ում պատկերված ուժաչափով չափում են ձեռքի մկանային ուժը: Շատ ավելի մեծ ուժեր, օրինակ՝ տրակտորի քարշի ուժը չափելու համար օգտագործում են նկ. 48-ում պատկերված քարշային ուժաչափը և այլն: Դրանք բոլորը, անկախ իրենց կառուցվածքից, ունեն առաձգական զսպանակ և չափիչ սանդղակ:




Նկ. 45  
Պարզագույն  
ուժաչափ




Նկ. 46  
Ուժաչափ  
աստիճանավորումը

Նկ. 47  
Ձեռք  
ուժաչափ



Նկ. 48  
Քարշային  
ուժաչափ



## Հարցեր և առաջադրանքներ

1. Ի՞նչ եղանակներով կարելի է չափել ուժը: Դրանցից ո՞րն է առավել կիրառելի:
2. Ի՞նչ կառուցվածք ունի պարզագույն ուժաչափը:
3. Ո՞ր օրենքի վրա է հիմնված ուժաչափի աշխատանքը:
4. Յուրաքանչյուր ուժաչափի վրա կա սահմանափակիչ, որը թույլ չի տալիս գազանակը որոշակի չափից ավելի ձգել: Ո՞րն է դրա դերը:
5. Ուժաչափների ի՞նչ տեսակներ գիտե՞ք:

§ 23

## ԱՐԵՐԱՏՈՐ ԱՇԽԱՏԱՆՔ 4

### Ուժաչափի աստիճանավորումը և ուժի չափումն ուժաչափով

**Աշխատանքի նպատակը.** աստիճանավորել գազանակավոր ուժաչափը և դրա միջոցով չափել ուժեր:

**Անհրաժեշտ սարքեր և հյուրեր.** ամրակալան, 102 գ զանգվածով բեռների հավաքածու, գազանակավոր ուժաչափ:

#### Աշխատանքի ընթացք.

1. Ուժաչափի սանդղակը ծածկեք սպիտակ թղթով:
2. Ուժաչափն ուղղաձիգ դիրքով ամրացրեք ամրակալանին: Սպիտակ թղթի վրա հորիզոնական գծիկով նշեք ուժաչափի ցուցիչի դիրքը և նրա կողքին գրեք «զրո» թվանշանը: Դա կինք սանդղակի գրոյական բաժանումը:
3. Ուժաչափի կեռիկից կախեք 102 գ զանգվածով բեռ: Ուժաչափի ցուցիչի նոր դիրքը նոյնականացնեք հորիզոնական գծիկով և նրա կողքին գրեք 1 թվանշանը: Այն կհամապատասխանի 1 Ն ուժին:
4. Այնուհետև կեռիկին ավելացրեք նոյն զանգվածով ևս մեկ բեռ և նոյն ձևով ցուցիչի նոր դիրքը նշեք 2 թվանշանով:
5. Կեռիկին հերքով ավելացնելով մեկական բեռ՝ թղթի վրա նշեք ցուցիչի դիրքերը՝ սանդղակի 3, 4, ... բաժանումները:
6. Այնուհետև չափեք երկու հարևան բաժանումների միջև հեռավորությունները: Հավասար են արդյոք դրանք:
7. Այդ հեռավորություններից յուրաքանչյուրը սանդղակի վրա բաժանեք 10 հավասար մասի: Դրանցից յուրաքանչյուրը կհամապատասխանի 0,1 Ն-ի: Այսպիսով՝ ձեր ուժաչափն աստիճանավորված է:
8. Այժմ որոշակի ուժով ձգելով կամ ուժաչափից որևէ բեռ կախելով՝ չափեք ուժաչափի վրա ազդող ուժի մեծությունը:
9. Ուժաչափից պոկելով ձեր սուպացած սանդղակը՝ այն համեմատեք ուժաչափի գործարանային սանդղակի հետ և գնահատեք ձեր թույլ տված սիսալը:

## ՄԱՐՄԻՆ ԿԵՐՈ

# §24

Այժմ ծանրթանանք ևս մեկ ուժի՝ մարմնի կշռին: Զեզ լավ հայտնի է, որ ծեռքից բայց բողած յուրաքանչյուր մարմնի (գիրքը, մետաղի գունդը) ծանրության ուժի ազդեցությամբ լինենում է ներքի: Իսկ ինչո՞ւ անշարժ հենարանին դրված մարմինը ներքի չի ընկնում: Նշանակում է, որ, բայց ծանրության ուժից, մարմնի վրա ազդում է ևս մեկ՝ ուղղաձիգ դեպի վեր ուղղված ուժ: Այդ ուժը հենարանի առաձգականության ուժն է, որն առաջանում է մարմնի ազդեցությամբ հենարանի դեֆորմացիայի հետևանքով: Վերջինս շատ դեպքերում աչքի հանար աննկատելի է, առաջան ակնառու է դառնում, եթե, օրինակ, ծանր մարմինը դնում ենք բազմոցին:

Ինչպես արդեն գիտեք, ազդեցությունը միակողմանի չի լինում: Եթե հենարանն ազդում է մարմնի վրա, ապա մարմինն էլ ազդում է հենարանի վրա: Փոխազդեցության հետևանքով դեֆորմացիում է ոչ միայն հենարանը, այլև մարմինը: Վերջինս ուղղաձիգ դեպի ներքի ներքի ուղղված առաձգականության ուժով ազդում է հենարանի վրա:

Եթե մարմինը կախված է, ապա դեֆորմացիում է ոչ միայն կախողը (թելը, զսպանակը), այլև մարմինը, որի հետևանքով էլ այն ազդում է կախողի վրա:

**Այն ուժը, որով մարմինը երկրի ձգողության հետևանքով ազդում է անշարժ հորիզոնական հենարանի կամ ուղղաձիգ կախողի վրա, կոչվում է մարմնի կշռ:**


Այսպիսով՝ մարմնի կշռը բնույթով առաձգականության ուժ է, որը կիրառված է հենարանի (նկ. 49) կամ կախողի (նկ. 50) վրա:

Կշռը սովորաբար նշանակում են  $P$  տառով: Երկրի նկատմամբ անշարժ վիճակում գտնվող մարմնի կշռը հավասար է ծանրության ուժին՝


$$P = mg:$$

Ինչպես ամեն մի ուժ, կշռը միավորների ՄՀ-ում չափվում է նյուտոնով:

Առօրյա կյանքում հաճախ կշռը շփոթում են մարմնի զանգվածի հետ: Օրինակ՝ կշռվելիս մեր կշռը մեզ հայտնում են կիլոգրամներով, խանութում կատարած գնումների կշռը որոշում են կիլոգրամներով կամ գրամներով: Բայց չէ՞ որ կիլոգրամը մարմնի զանգվածի միավորն է, իսկ կշռն ուժ



Նկ. 49  
Մարմնի  $\tilde{P}$  կշռը  
ազդում է  
հենարանի վրա



Նկ. 50  
Մարմնի  $\tilde{P}$  կշռը  
ազդում է  
կախողի վրա

է և չափում է նյուտոնվ: Նշված իրավիճակներում ճիշտ է ասել «մարդու զանգվածը», «գնացած ապրանքի զանգվածը» և ոչ թե կշիռը:

Այս շփորձունը պատահական չէ և ունի իր պատճառը: Բանն այն է, որ և զանգվածը, և կշիռը հաճախ որոշում են կշեռքով: Կշեռքն իրականում չափում է մարմնի կշիռը, սակայն եթե հավասար են մարմինների կշիռները, հավասար են նաև դրանց զանգվածները: Դա է պատճառը, որ մարդիկ հաճախ տարբերություն չեն տեսնում մարմնի զանգվածի և կշրի միջև: Ճիշտ չէ, եթե ասում են, որ, օրինակ, մարմնի կշիռը 10 կգ է: Դա նրա զանգվածն է, իսկ կշիռը՝  $P = mg = 10 \text{ կգ} \cdot 9,8 \frac{\text{Ն}}{\text{կգ}} = 98 \text{ Ն}$ :

## Հարցեր և առաջադրանքներ

- Ի՞նչն են անվանում մարմնի կշիռ:
- Ի՞նչ բնույթի ուժ է մարմնի կշիռը:
- Ինչպես է ուղղված մարմնի կշիռը և որտեղ է այն կիրառված:
- Ի՞նչ բանաձևով է որոշվում մարմնի կշիռը:
- Նշեք մարմնի կշրի և ծանրության ուժի տարբերությունները:
- Նշեք մարմնի զանգվածի և կշրի տարբերությունները:

## Խնդիրների լուծման օրինակներ

- Առաստաղից կախված ջահն առաստաղի վրա ազդում է 49 Ն ուժով: Որքա՞ն է ջահն զանգվածը:

$$P=49 \text{ Ն}$$

$$m=?$$

**Լուծում:** Ջահի կշիռը առաստաղի վրա ազդող ուժն է, հետևաբար  $P=49 \text{ Ն}$ : Մարմնի կշիռը որոշվում է  $P=mg$  բանաձևով, որտեղից՝

$$m = \frac{P}{g} = \frac{49 \text{ Ն}}{9,8 \frac{\text{Ն}}{\text{կգ}}} = 5 \text{ կգ:}$$

Պատասխան՝ 5 կգ:

- 1 կգ զանգվածով բիղոնի մեջ լցրին 5 լ ծավալով կերոսին: Որքա՞ն դարձավ բիղոնի կշիռը:  
 $m_1=1 \text{ կգ}$       **Լուծում:** Նախ՝ հաշվենք կերոսինի զանգվածը: Այն կորոշվի  $m_2 = \rho V$  բանաձևով, որտեղ  $\rho$ -ն կերոսինի խտությունն է,  $V$ -ն՝ ծավալը: Կերոսինով լցված բիղոնի ընդհանուր զանգվածը կլինի  $m_1 + m_2$ , հետևաբար նրա կշիռը՝  $P = (m_1 + m_2)g$  կամ  $P = (m_1 + \rho V)g$ : Քանի որ  $V=5 \text{ լ}=0,005 \text{ մ}^3$ , իսկ  $\rho = 800 \text{ կգ}/\text{մ}^3$ , ապա՝

$$P = (1 \text{ կգ} + 800 \text{ կգ}/\text{մ}^3 \cdot 0,005 \text{ մ}^3) \cdot 9,8 \frac{\text{Ն}}{\text{կգ}} = 49 \text{ Ն:}$$

Պատասխան՝ 49 Ն:

## ՃՓՄԱՆ ՈՒԾ

# §25

Հպառող մարմինների մակերևույթների միջև առաջացող և իրար նկատմամբ նրանց շարժումը խոչընդուռող ուժը կոչվում է շփման ուժ:

Փորձեք շարժել սեղանին դրված որևէ առարկա, ասենք՝ ծանր գիրքը՝ նրա վրա ազդելով հորիզոնական ուղղված ուժով: Կնիքատեք՝ քանի դեռ ազդող ուժը բավականաչափ փոքր է, գիրքը դադարի վիճակում է: Եվ սկսում է շարժվել միայն այն դեպքում, եթե ազդող ուժը հասնում է որոշակի արժեքի: Այս երևույթն առավել ցայտուն է դրսնորվում, եթե փորձում ենք տեղաշարժել սառնարանը, պահարանը կամ մեկ այլ ծանր իր:


Նշված օրինակներում մարմնի վրա հորիզոնական ուղղությամբ ուժ է ազդում, առկայն այն մնում է դադարի վիճակում: Նշանակում է, որ մարմնի վրա ազդում է ևս մեկ ուժ, որը **հակառակ է ուղղված կիրառված ուժին** և համակշռում է այն (նկ. 51): Այդ ուժը նարմնի և սեղանի մակերևույթների միջև առաջացած դադարի շփման ուժն է:

Եթե մարմնի վրա նրա հավասար մակերևույթին գուգահետ ուժ չի ազդում, ապա դադարի շփման ուժը հավասար է զրոյի: Այն առաջանում է միայն նշված ուժի առկայության դեպքում, և քանի դեռ մարմինը դադարի վիճակում է, ազդող ուժը մեծացնելիս մեծանում է նաև դադարի շփման ուժը: Աստիճանաբար մեծացնելով կիրառված ուժը՝ նրա որոշակի արժեքի դեպքում նարմնն սկսում է շարժվել: Հետևաբար դադարի շփման ուժը տվյալ պայմաններում կարող է փոխվել զրոյից մինչև որոշակի՝ առավելագույն արժեք:

Այսպիսով՝ դադարի շփման ուժը միշտ հավասար է հավասար մակերևույթներին գուգահետ ազդող ուժին և ուղղված է նրան հակառակ:

Եթե ազդող ուժը դառնում է դադարի շփման ուժի առավելագույն արժեքից փոքր-ինչ մեծ, մարմինը շարժվում է, և դադարի շփման ուժի փոխարեն հանդես է գալիս սահրի շփման ուժը:

Նկ. 51  
Դադարի շփման  
ուժը հավասար է  
բարշի ուժին



Սահրի շփումն առաջանում է մարմինների հպվող մակերսությաների միջև, եթե դրանք շարժվում են իրար նկատմամբ: Սահրի շփման ուժը մոտավորապես հավասար է դադարի շփման ուժի առավելագույն արժեքին:

Սահրի շփման շնորհիվ է, որ կանգ է առնում սարից իջնող սահնակը, սառցադաշտում սահող տափօղակը և այլն: **Սահրի շփման ուժն ուղղված է մարմնի շարժման ուղղությանը հակառակ:**

Ինչ ինչո՞վ է պայմանավորված շփման ուժը: Փորձը ցույց է տալիս, որ շփման ուժի մեծությունը կախված է շփվող մարմինների ողորկության աստիճանից և դրանց նյութի տեսակից:

Նույնիսկ այն մակերևույթները, որոնք մեզ ողորկ են թվում, իրականում ունեն անհարթություններ (նկ. 52): Այդ անհարթությունները կառչում են մեկը մյուսին, դեֆորմացվում և խոշորացվում մարմինների շարժումը: Այդ պատճառով շփումը փոքրացնելու համար պետք է հարթեցնել, հղկել հպվող մարմինների մակերևույթները: Սակայն դա չի նշանակում, որ այդ եղանակով կարելի է անընդհատ փոքրացնել շփման ուժը:

Բանն այն է, որ այն մասնիկները, որոնցից կազմված են մարմինները, միմյանց մոտենալիս փոխազդում են զգալի ծգողության ուժերով (դրանք կուսումնասիրեք գլուխ Խ-ում): Լավ հղկելիս մարմինների մակերևույթներն ավելի կիավ են հպվում իրար, որի հետևանքով ծգողության ուժը դառնում է էական, և շփման ուժը մեծանում է:

Շփման ուժի բնույթին էապես փոխվում է այն դեպքերում, եթե մարմիններու թեսահում, այլ գորվում է մեկ այլ մարմնի մակերևույթով: Այդ դեպքում գորվող մարմինը հաղթահարում է իր ճանապարհին հանդիպող մակերևությաին անհարթությունները՝ անցնելով դրանց վրայով: Դա շնորհիվ առաջացնող դիմադրության ուժը կոչվում է **գլորման շփման ուժ**, որի ուղղությունը հակառակ է մարմնի գլորման ուղղությանը:

Միևնույն պայմաններում գլորման շփման ուժը զգալիորեն փոքր է սահրի շփման ուժից: Դա մարդկությանը հայտնի է դեռևս շատ հին ժամանակներից. մարդիկ ծանր բեռներ տեղափոխելու համար դրանց տակ տեղադրում էին գերաններ կամ այլ գլորաններ: Դա է պատճառը, որ ներկայումս բոլոր փոխադրամիջոցները տեղակայվում են անիվների վրա: Անիվը մարդկության կարևորագույն հայտնագործություններից է:



Նկ. 52  
Մարմնի  
մակերևույթի  
անհարթությունները  
(ինստ  
ինչորացված)

## Հարցեր և առաջադրանքներ

1. Բերեք շփման առկայությունը հաստատող օրինակներ:
2. Ինչով է պայմանավորված շփումը:
3. Թվարկեք շփման տեսակները և բերեք օրինակներ:
4. Օրինակներով ցույց տվեք, որ միևնույն պայմաններում գլորման շփման ուժը փոքր է սահման ուժից:



S26

### ՇՓՄԱՆ ՈՒԺԻ ԴԵՐԸ ԲՆՈՒԹՅԱՆ ՄԵԶ, ՏԵԽՆԻԿԱՅՈՒՄ ԵՎ ԿԵՆՑԱՊՈՒՄ


Շփման երևույթը բնության մեջ և կենցաղում ունի բազմաթիվ դրսւորումներ: Շփումը որոշ դեաքերում օգտակար է, իսկ այլ դեպքերում՝ վնասակար:


Եթե շիներ շփումը, մարդիկ և կենդանիները շէին կառող քայլել կամ վազել: Դա կատարվում է ոսրերի և գետնի շփման շնորհիվ: Շփման շնորհիվ է, որ շարժվում են ավտոմեքենաները, գնացքները: Դուք լավ գիտեք, թե որքան դժվար է քայլել հարթ սառույցի վրայով, կամ տեսել եք, թե ինչպես են սառցակալած ճանապարհին տեղապույտ տալիս ավտոմեքենաների անիվները: Դրա պատճառն այն է, որ սառույցի վրա շփումը շատ ավելի փոքր է, քան գետնի վրա: Շփման շնորհիվ է, որ արգելակելիս մեքենաները կանգ են առնում, և խուսափում ենք տարրեր վթարներից:

Երբեմ մոտածե՞լ եք, թե ինչպես են բամբակի կարծ մազաթելերից ամբողջական երկար թել ստանում, թեն չեն օգտագործվում ոչ սոսինձ, ոչ էլ հանգույցներ: Պարզապես մանրաթելերը ոլորում և միահյուսում են իրար, և դրանց միջև շփումն ապահովում է սառցակալ թելի ամրությունը:

Շատ բույսեր և կենդանիներ ունեն բոնելու կամ փաքարվելու համար հարմար օրգաններ (նկ. 53): Դրանք բոլորն

Նկ. 53  
Շփման շնորհիվ  
կենդանիները և  
բույսերը կառում  
են տարրեր  
առարկաներից և  
տեղաշարժվում





Նկ. 54

Առանցքակալներ.  
ա. գմղկավոր,  
բ. զանային,  
գ. երկշար

ունեն խորդութորդ մակերևույթներ, ինչը մեծացնում է շփումը: Եթե չիներ շփումը, չինք կարող ոչ մի քանի ճեղքով պահել, և ամեն ինչ դուրս կահեր մեր ճեղքերից:

Չեզանից շատերը գիտեն, որ շփումը մեծացնելու համար ծանրամարտիկները ճեղքի ափերը և մարզակոչիկները պատում են թևեկնախտեժով, իսկ երաժշտներն այն քսում են լարային գործիքների (օրինակ՝ ջուրակի) աղեղին:

Շփումն ունի նաև վճասակար հետևանքներ: Շփման հետևանքով տաքանում և մաշվում են մեքենաների շարժվող մասերը: Շփման այս և ոչ ցանկալի այլ հետևանքներից խուսափելու համար կիրառվում են շփման փոքրացման տարրեր եղանակներ: Օրինակ՝ շփումը փոքրացնելու նպատակով հավկող մակերևույթները պատում են որևէ յուղով, քսուքով: Այդ դեպքում միմյանց հետ անմիջականորեն շփվում են ոչ թե այնդ մարմինների մակերևույթները, այլ դրանք պատող հեղուկի հարևան շերտերը: Քանի որ քսուքի շերտերի միջև շփումն էապէս փոքր է, շփման ուժը փոքրանում է:

Շփումը փոքրացնում են՝ օգտագործելով նաև տարրեր տիպի առանցքակալներ, որոնց միջոցով սահքի շփումը փոխարինվում է գլորման շփումով (նկ. 54), որն, ինչպես գիտենք, շատ ավելի փոքր է:

## Հերեք և առաջադրանքներ

1. Բերեք շփման դրսորման օգտակար օրինակներ:
2. Բերեք շփման դրսորման վճասակար օրինակներ:
3. Ինչպես կարելի է մեծացնել շփումը:
4. Ինչպես կարելի է փոքրացնել շփումը:
5. Ինչու՞ հաճախ սաղցակալած ճանապարհներին ավագ են շաղ տալիս:

## ԱԶԻՆԱՏԱՆՔ ԵՎ ՇՅՈՐՈՒԹՅՈՒՆ: ՊԱՐՉ ՄԵԽԱՆԻՉՄՆԵՐ

**§27**

### ՄԵԽԱՆԻԿԱԿԱՆ ԱԶԻՆԱՏԱՆՔ

«Աշխատանք» հասկացությունն օգտագործվում է մեր առօրյա կյանքի գրեթե բոլոր բնագավառներում և ունի տարրեր մեկնարանություններ: Այսպես, օրինակ, կարելի է լսել, որ գնդակով խաղալը, դասարանում նստելը, ուսումը և այլն աշխատանք են: Ըստ սովորողներ հավանաբար կհամաձայնեն, որ ուսումն աշխատանք է, բայց չեն հավատա, որ գնդակով խաղալը նույնպես կարելի է աշխատանք համարել:

Ենթադրություն կատարեն, որ նկ. 55-ում պատկերված տղաները՝ Նարեկը, Դավիթը և Արամեն, աշխատանք են կատարում: Նարեկը հենվել է պատին, Դավիթն իր զիսավերսում է պահում ծանրաձողը, իսկ Արամեն առաջ է հրում խոտինձիչ մեքենան: Բայց որիշները չեն հանաձայնի բոլոր այդ գործողություններն անվանել աշխատանք:

Ի՞նչ ընդհանուր բան կարելի է գտնել նկ. 55-ում պատկերված տղաների գործողություններում: Նրանցից յորպանչյուրն ուժ է գործադրում ինչ-որ ժամանակի ընթացքում:

Նկ. 55  
Տղաներից  
ո՞վ է կատարում  
մեխանիկական  
աշխատանք



Եթե համաձայնենք, որ նրանք բոլորն էլ աշխատանք են կատարում, ապա կարելի՞ է աշխատանքը սահմանել որպես ուժի և ժամանակի արտադրյալ:

Նշված նկարի հետագա ուսումնասիրությունը ցույց է տալիս աշխատանքի սահմանման այլ հնարավորություն:

Արամեն անում է այն, ինչ չեն անում Նարեկը և Դավիթը: Արամեն հնձում է պարտեզի խոտը: Նա ուժ է գործադրում որոշակի ճանապարհի վրա: Ինչքան խիտ է խոտը, այնքան մեծ ուժ է պահանջվում: Բայցի դրանից, ինչքան մեծ է ուժը և հնձիչի անցած ճանապարհը, այնքան շատ խոտ կհնձվի, և մեծ աշխատանք կկատարվի:

Ֆիզիկայում «աշխատանք» հասկացությունն ունի որոշակի իմաստ և օգտագործվում է միայն այն ժամանակ, երբ դիտարկվում է մարմնի շարժումը որևէ ուժի ազդեցությամբ: Նման դեպքում ասում են, որ կատարվում է մեխանիկական աշխատանք:

Օրինակ՝ վերամբարձ կռունկը բարձրացնում է բեռը, տրակտորը դաշտում քաշում է սերմնացանը, վառողի զազերը ստիպում են, որ զնդակը շաժվի հրայանի փողում: Բոլոր այս դեպքերում մարմինների վրա կիրառված են ուժեր, որոնց ազդեցությամբ դրանք շարժվում են:

Մեխանիկական աշխատանք կատարելիս հաղթահարվում են խոշոնդուներ, դիմադրություններ կամ տեղի է ունենում մարմնի արագության փոփոխություն: Հաղթահարել դիմադրությունը կամ փոփոխել շարժման արագությունը կարելի է միայն ուժ գործադրելով: Ուրեմն՝ մեխանիկական աշխատանք կատարվում է միայն ուժի առկայությամբ:

Եթե մարմնի վրա ազդում է ուժ, բայց մարմինը չի տեղափոխվում, ապա աշխատանք չի կատարվում: Օրինակ՝ նկ. 55-ում Նարեկն ու Դավիթը աշխատանք չեն կատարում: Թելից կախված զնդիկը, հենարանը ճնշող ծանրություն, բալոնում մեղմված օղը նույնպես մեխանիկական աշխատանք չեն կատարում:

Կարելի է նոտիվի պատկերացնել այնպիսի դեպք, երբ մարմինը շարժվում է առանց ուժի մասնակցության (իներցիայով): Այս դեպքում ևս աշխատանք չի կատարվում:

Այսպիսով՝ աշխատանք կատարվում է միայն այն դեպքում, երբ մարմնի վրա ուժ է ազդում, և այդ ուժի ազդեցությամբ մարմինը շարժվում է:

Իսկ ինչպես են հաշվում կատարված աշխատանքը:

Ենթադրենք՝ մի տղա հատակից բարձրացնում և սեղանին է դնում 1 կգ զանգվածով ծանրույր, իսկ մյուսը՝ 5 կգ զանգվածով ծանրույր: Ո՞վ է ավելի մեծ աշխատանք կատարում: Առաջին տղան ծանրույր հավասարաշափ բարձրացնելու համար գործադրում է  $F_1 = mg = 1 \text{ կգ} \cdot 9,8 \text{ Ն/կգ} = 9,8 \text{ Ն}$  ուժ, իսկ երկրորդը՝  $F_2 = 5 \text{ կգ} \cdot 9,8 \text{ Ն/կգ} = 49 \text{ Ն} = 5 F_1$  ուժ, որը նույն ճանապարհն անցնելիս երկրորդ տղան 5 անգամ ավելի մեծ ուժ է գործադրում, հետևաբար բնական է ենթադրել, որ կատարում է 5 անգամ մեծ աշխատանք:

Եթե երկու տղաներն էլ բարձրացնում են հավասար զանգվածով ծանրույրներ, մեկը՝ 0,2մ, իսկ մյուսը՝ 1մ, ապա երկուսն էլ գործադրում են հավասար ուժեր, բայց տարրեր ճանապարհներ անցնելիս: Այստեղից եզրակացնում ենք, որ մեխանիկական աշխատանքը կախված է մարմնի վրա ազդող ուժից և այդ ուժի ազդեցությամբ մարմնի անցած ճանապարհի արտադրյալին:

Ինչքան մեծ է մարմնի վրա ազդող ուժը, և ինչքան մեծ է այդ ուժի ազդեցությամբ մարմնի անցած ճանապարհը, այնքան մեծ աշխատանք է կատարվում:

**Մեխանիկական աշխատանք կոչվում է այն ֆիզիկական մեծությունը, որը հավասար է մարմնի վրա ազդող ուժի և նրա ուղղությամբ մարմնի անցած ճանապարհի արտադրյալին:**

$$\text{Աշխատանք} = \Omega \times \text{ճանապարհ},$$

կամ՝

$$A = FS,$$

որտեղ  $A$ -ն աշխատանքն է,  $F$ -ը՝ ուժը, իսկ  $S$ -ը՝ անցած ճանապարհը (նկ. 56):

Վերը բննարկված բոլոր օրինակներն էլ հաստատում են մեխանիկական աշխատանքի տրված սահմանումը: Այսպես՝  $A \neq 0$ , եթե  $F \neq 0$  և  $S \neq 0$ :

Եթե  $F = 0$ , բայց  $S \neq 0$ , ապա  $A = 0$  (իներսիայով շարժվելիս աշխատանք չի կատարվում, քանի որ շարժման հետագած երկայնքով մարմնի վրա ուժեր չեն ազդում):

**Նկ. 56**  
 $\vec{F}$  ուժի  
 ազդեցությամբ  
 մարմնն անցնում է  
 $S$  ճանապարհ



Եթե  $F \neq 0$ , բայց  $S = 0$ , ապա  $A = 0$  (օրինակ՝ հենարանը ճշգրտված է աշխատանք չի կատարում):

Աշխատանքը ֆիզիկական մեծություն է, և նրա չափման համար անհրաժեշտ է միավոր սահմանել:

**Միավորների ՄՀ-ում որպես աշխատանքի միավոր ընդունում են 1 Ն ուժի աշխատանքը՝ ուժի ուղղությամբ 1 մ ճանապարհին անցնելիս:**

Այդ միավորն անվանում են ջոռու ( $\Omega$ ) ի պատիվ անգլիացի գիտնական Ջեմս Ջոռլիի:

1 ջոռու = 1 նյուտոն  $\times$  1 մետր կամ 1  $\Omega = 1 \text{ N}\cdot\text{m}$ :

Օգտագործվում են նաև կիլոջոռու ( $k\Omega$ ), մեգաջոռու ( $M\Omega$ ), միլիջոռու ( $m\Omega$ ) միավորները.

1  $k\Omega = 1000 \Omega$ , 1  $M\Omega = 1000000 \Omega$ , 1  $m\Omega = 0,001 \Omega$ :

## Հարցեր և առաջադրանքներ

- Ֆիզիկայում ո՞ր աշխատանքն է ուսումնասիրվում:
- Ի՞նչ պայմաններ են անհրաժեշտ մեխանիկական աշխատանք կատարելու համար:
- Ի՞նչ մեծություններից է կախված մեխանիկական աշխատանքը:
- Ինչպես հաշվել աշխատանքը: Ո՞րն է աշխատանքի բանաձեռ:
- Ի՞նչ միավորով է արտահայտվում աշխատանքը միավորների ՄՀ-ում:
- Նշեք, թե ո՞ր դեպքում է կատարվում մեխանիկական աշխատանք.
  - ավագով պարկ դրված է գետնին, բ) գնդիկ գլորվում է հարք հորիզոնական մակերևույթով, գ) վերամբարձ կրունկը բարձրացնում է բեռք, դ) ձեռքից բաց թողնված մարմինն ընկնում է գետին, ե) մարդու աստիճաններով բարձրանում է,
  - գ) տրակտորը հերկում է հողը:
- Հաշվեք այն մեխանիկական աշխատանքը, որ կատարում եք դպրոցի շենքի առաջին հարկից երկրորդ հարկ հավասարաչափ բարձրանալիս: Բոլոր անհրաժեշտ տվյալներն ընտրեք ինքներ, արդյունքը գրանցեք տեստում:

828

## ՀՅՈՐՈՒԹՅՈՒՆ

Ինչպես տեսանք, մեխանիկական աշխատանքը կախված է մարմնի վրա ազդող ուժից և այդ ուժի ուղղությամբ մարմնի անցած ճանապարհից և որոշվում է:  $A = FS$  բանաձևով:

Սակայն չընարկեցինք, թե որքան ժամանակում է կատարվում այդ աշխատանքը: Մեքենայի տվյալ աշխատանքը կատարելու արդյունավետությունը բնութագրելու համար, պետք է գիտենանք, թե որոշակի ժամանակամիջոցում, օրի-

նակ, 1 վայրկյանում, ի՞նչ աշխատանք կարող է կատարել այդ մեքենան:

Ենթադրենք՝ մի մեքենայով ուղևորներ տեղափոխելիս կատարվել է 1000 Զ աշխատանք, իսկ մեկ որիշ մեքենայով տեղափոխելիս՝ 100 000 Զ: Կարո՞ղ ենք արդյոք պատասխանել այն հարցին, թե ո՞ր մեքենան է ավելի արդյունավետ:

**Այդ հարցին կարող ենք ճիշտ պատասխանել եթե իմանաք, թե ի՞նչ ժամանակամիջոցներում են կատարվել այդ աշխատանքները: Եթե առաջին մեքենան ճանապարհին եղել է 100 վ, իսկ երկրորդը՝ 1000 վ, ապա առաջին մեքենան 1 վ-ում կատարել է 10 Զ աշխատանք, իսկ երկրորդը՝ 100 Զ: Ուրեմն՝ կարող ենք ասել, որ երկրորդ մեքենայի շարժիչն ավելի հզոր է, քանի որ նրա զարգացրած քարշի ուժը 1 վ-ում կատարել է ավելի մեծ աշխատանք:**

Մեքենայի, մարդու, կենդանու աշխատանք կատարելու արագությունը բնուրագրելու համար ֆիզիկայում օգտագործվում է **հզորություն մեծությունը:**

**Հզորություն կոչվում է այն ֆիզիկական մեծությունը, որը հավասար է աշխատանքի հարաբերությանն այն ժամանակամիջոցին, որի ընթացքում կատարվել է այդ աշխատանքը:**

$$\text{Հզորություն} = \frac{\text{Աշխատանք}}{\text{Ժամանակամիջոց}},$$

կամ

$$N = \frac{A}{t},$$

որտեղ  $N$ -ը հզորությունն է,  $A$ -ն՝ աշխատանքը,  $t$ -ն՝ այդ աշխատանքը կատարելու ժամանակամիջոցը:

Հզորությունը ցույց է տալիս, թե ինչ աշխատանք է կատարում մեխանիզմը միավոր ժամանակամիջոցում (օրինակ՝ 1 վայրկյանում):

Միավորների ՄՀ-ում հզորության միավորը 1 վատուն է (1 Վտ):

**1 վատուր (Վ) այն հզորությունն է, որի դեպքում 1 վայրկյանում կատարվում է 1 ջոու (Ջ) աշխատանք՝**

$$1 \text{Վտ} = 1 \frac{\text{Ջ}}{\text{վ}};$$

Այս միավորն անվանել են անգլիացի գյուտարար Ջեմս Ուատուի անունով:

Տեխնիկայում հզրության համար օգտագործվում են նաև կիլովատ (կՎտ), մեգավատ (ՄՎտ) և միլիվատ (մՎտ) միավորները:

1ՄՎտ = 1 000 000 Վտ,

1կՎտ = 1 000 Վտ,

1մՎտ = 0,001 Վտ:

Յուրաքանչյուր շարժիչի հզրությունը նրա ամենակարևոր բնութագիրն է:

Կան տարրեր՝ մի քանի տասնյակ Վտ հզրությամբ շարժիչներից (էլեկտրական հովհար, էլեկտրական ածելի) մինչև մի քանի հազար ՄՎտ հզրությամբ շարժիչներ (տիեզերանավերի և միջմոլորակային ավտոմատ կայանների կրող հրթիռների շարժիչները):

Այն միջին հզրությունը, որը զարգացնում է մարդու սիրտը, մոտ 2,2 Վտ է: Աշխատանքի նորմալ պայմաններում մարդը զարգացնում է 70-80 Վտ հզրություն: Առանձին շարժումներ կատարելիս (տեղիս բռիչը, ծանր բեռի հրատ) մարդը կարող է զարգացնել մինչև 3 կՎտ հզրություն:

Իմանալով մեխանիզմի հզրությունը՝ կարելի է հաշվել որոշակի ժամանակում դրա կատարած աշխատանքը:

$$N = \frac{A}{t} \text{ քանածելից հետևում է, որ}$$

$$A = Nt:$$

Մեխանիզմի կատարած աշխատանքը հաշվելու համար պետք է նրա հզրությունը բազմապատկել այն ժամանակամիջոցով, որի ընթացքում կատարվել է այդ աշխատանքը:

## Շարցեր և առաջադրանքներ

1. Ինչո՞ւ է սահմանվում հզրություն մեծությունը:
2. Ի՞նչօ է կոչվում հզրություն:
3. Ինչպե՞ս հաշվել հզրությունը:  $\text{Ո՞րք է հզրության բանաձեռքը?}$
4. Ի՞նչ միավորով է չափվում հզրությունը միավորների ՄՀ-ում:
5. Ինչպե՞ս հաշվել աշխատանքը՝ իմանալով հզրությունը և աշխատանքը կատարելու ժամանակամիջոցը:
6. Շաշվեր այն հզրությունը, որը զարգացնում եք դպրոցի առաջին հարկից երկրորդ կամ երրորդ հարկ հավասարաշափ դանդաղ և արագ բարձրանալիս:  
Բոլոր անհրաժեշտ տվյալներն ընտրեք ինքները:
7. Պարզեր, թե ի՞նչ հզրության համար են նախատեսված ձեր տանն օգտագործվող կենցաղային սարքերի էլեկտրաշարժիչները և ձեզ ծանոթ (հայտնի մակնիշի) ավտոմեքնաները:

## ԽԱՌՋԻՐՄԵՐԻ ԼՈՒԺՄԱՆ ՕՐԻՆԱԿՄԵՐ

1.  $1^{\circ}\text{N}$  աշխատանք է կատարվում, եթե 2 կգ զանգվածով կշռաքարն ընկնում է 2 մ բարձրությունից:

$$m = 2 \text{ կգ}$$

$$S = 2 \text{ մ}$$

$$A = ?$$

**Լուծում:** Կշռաքարն ընկնում է  $F_d$  ծանրության ուժի ազդեցությամբ: Ուժի ուղղությունն ու կշռաքարի շարժման ուղղությունները նույն են, հետևաբար աշխատանքը կարող ենք հաշվել  $A = F_d / S$  բանաձևով: Ծանրության ուժը և մարմնի զանգվածը կապված են  $F_d = mg$  բանաձևով, որտեղ  $g = 9,8 \text{ Ն/կգ}$ : Հետևաբար կշռաքարի վրա ազդող ծանրության ուժի աշխատանքը՝  $A = mg/S$ ,

$$A = 2 \text{ կգ} \cdot 9,8 \text{ Ն/կգ} \cdot 2 \text{ մ} = 39,2 \text{ Նմ} = 39,2 \Omega:$$

**Պատասխան՝**  $39,2 \Omega$ :



2. Ամրարձիչը 1 ժամում  $30 \text{ մ}^3$  ծավալով ավազը բարձրացնում է 6 մետր:  $1^{\circ}\text{N}$  հզորություն ունի ամրարձիչի շարժիչը: Ավազի խոռոչունը  $1500 \text{ կգ/մ}^3$  է:

$$t = 1 \text{ ժ} = 3600 \text{ վ}$$

$$V = 30 \text{ մ}^3$$

$$S = 6 \text{ մ}$$

$$\rho = 1500 \text{ կգ/մ}^3$$

$$g = 9,8 \text{ Ն/կգ}$$

$$N = ?$$

**Լուծում:** Բարձրացնող ավազի զանգվածը՝  $m = \rho V$ , հետևաբար՝  $m = 1500 \text{ կգ/մ}^3 \cdot 30 \text{ մ}^3 = 45000 \text{ կգ}$ : Ավազի վրա ազդող ծանրության ուժը՝  $F_d = mg = 45000 \text{ կգ} \cdot 9,8 \text{ Ն/կգ} = 441000 \text{ Ն}$ , իսկ  $S$  ճանապարհին կատարած աշխատանքը՝  $A = FS = 441000 \text{ Ն} \cdot 6 \text{ մ} = 2646000 \Omega$ : Օգտվելով հզորության սահմանումից՝ կստանանք ամրարձիչի շարժիչի հզորությունը.

$$N = \frac{A}{t} = \frac{2646000 \Omega}{3600 \text{ վ}} = 735 \text{ Վտ} = 0,735 \text{ կՎտ}:$$

**Պատասխան՝**  $0,735 \text{ կՎտ}$ :

3. Որոշել  $20 \text{ րոպեում } 50 \text{ կՎտ}$  հզորություն զարգացնող շարժիչի կատարած աշխատանքը:

$$t = 20 \text{ ր} = 1200 \text{ վ}$$

$$N = 50 \text{ կՎտ} = 50000 \text{ Վտ}$$

$$A = ?$$

**Լուծում:** Համաձայն  $A = Nt$  բանաձևի՝

$$A = 50000 \text{ Վտ} \cdot 1200 \text{ վ} = 60000000 \Omega:$$

**Պատասխան՝**  $60 \text{ U}\Omega$ :

### Շետաքրքիր է ինձնալ

Քանի դեռ Ձեմ Ուստուր չել կատարելագործել շոգեմերենան, և քանի դեռ այս չեր դադարել պարզապես թանկարժեք խաղալիք լինելուց, հզորության միավորի սահմանանական անհրաժեշտություն չկար:

Այն ժամանակ լուրջ, մոռհեռող խնդիրներից էր համբառերից պոմպերով ջուրը հանելը: Ակզրնական շրջանում այդպիսի գործերի համար ձիեր օգտագործելն Անգլիայում բավական բանկ էր: Այդ պատճառով էր, որ շոգեմերենայի գյուտաքարը հետաքրքրվեց, թե քանի՞ ձիու կարող է փոխարինել մեկ մերենան և ինչպես արտահայ-

տեղ մեքենայի հզորությունը ծիռ հզորությամբ, այսինքն՝ այն աշխատանքով, որ ծիռ կարող է կատարել մեկ ժամում, մեկ րոպեում, մեկ վայրկյանում:

Ուստուք փորձնականորեն որոշեց, որ ծիռ 75 կգ զանգվածով բեռք 1 վայրկյանում կարող է բարձրացնել 1 մ: Այսինքն՝ վայրկյանում ծիռ կատարում է  $75 \text{ կգ} \times 9,8 \text{ Ն/կգ} \times 1 \text{ մ} = 735 \Omega$  աշխատանք: Զիռ զարգացրած միջին հզորությունն անվանեցին ծիռուժ (կրճատ ծ.ու.): Ուստուք հաշվեց, որ

$$1 \text{ ծ.ու. (ծիռուժ)} = \frac{735 \Omega}{1 \text{ վ}} = 735 \text{ Վոլտ:}$$

Համեմատելու համար նշենք, որ ժամանակակից ավտոմեքենաների շարժիչները զարգացնում են 60-ից մինչև 500 ծ.ու. հզորություն:

## ՊԱՐԶ ՄԵԽԱՆԻԿԱՆԵՐ:

### ԼԾԱԿ: ԼԾԱԿԻ ԿԱՆՈՆԸ

§29


Մեխանիկական աշխատանք կատարելու համար մարդիկ օգտագործում են զանազան հարմարանքներ:

Այն մեխանիկական սարքերը, որոնք ծառայում են ուժերի մոդուլները կամ ուղղությունները փոփոխելու համար, կոչվում են մեխանիզմներ:


Բարդ մեքենաների մեջ մասը կազմված է հետևյալ պարզ մեխանիզմներից՝ լծակ, ճախարակ, ոլորան, պտուտակ, թեր հարքություն և այլն: Ծանոթանալով պարզ մեխանիզմների գործողության ֆիզիկական սկզբունքներին՝ հեշտությամբ կհասկանանք բարդ մեքենաների կառուցվածքն ու աշխատանքը: Մեխանիզմներից շատերի գլխավոր դերն այն է, որ դրանք ստեղծում են պայմաններ՝ փոքր ուժերի միջոցով մեծ ծանրություններ տեղափոխելու, այսինքն՝ ուժի մեջ շահում ստանալու համար:

Այժմ ծանոթանանք լծակին, որն ամենատարածված պարզագույն մեխանիզմն է: Լծակը սովորաբար մի ծող է, որը կարող է պտուվել անշարժ հենարանի (առանցքի) շորջը:


Լծակի օրինակ է լինզը, որի միջոցով տեղաշարժում կամ բարձրացնում են ծանր բեռներ: Լինզի մի ծայրը մտցվում է



Ակ. 57  
Ծանր առարկայի  
բարձրացնելը  
լծակով



Ակ. 58  
Լծակ



Ակ. 59  
Լծակի սխեման

ծանր առարկայի տակ, իսկ լինգի տակ դրվում է հենարան (Ակ. 57. ա): Եթե լինգի ազատ ծայրն իշխնում են ներքև, ապա լինգի մյուս ծայրը, ազդելով ծանր բերի վրա, բարձրացնում է այն: Այս դեպքում լինգը պտտվում է հենարանի (Ա կետի) շորջը:

Ծանր առարկան կարելի է բարձրացնել նաև այլ կերպ: Լինգի մի ծայրը մտցվում է առարկայի տակ (Ակ. 57. բ): Լինգի ազատ ծայրը բարձրացնում են վեր, և լինգը, պտտվելով մյուս ծայրի (Բ կետի) շորջը, բարձրացնում է բեռը:

Այն  $F$  ուժը, որով ազդում են լինգի վրա, փոքր է բերի կշռից. այսինքն՝ փոքր ուժի միջոցով ստանում են մեծ ուժ կամ, ինչպես ընդունված է ասել, շահում են ուժի մեջ:

Ակ. 58-ում պատկերված է լծակ, որի պտտման Օ առանցքը ուժերի կիրառման Ա և Բ կետերի միջև է: Այդ լծակի սխեման պատկերված է Ակ. 59-ում: Լծակի վրա ազդող  $\vec{F}_1$  և  $\vec{F}_2$  ուժերն ուղղված են նոյն կողմը:

Հենման կետից մինչև ուժի ազդման գիծ հեռավորությունը կոչվում է ուժի բազուկ:

Ուժի բազուկը գտնելու համար պետք է հենման կետից ուղղահայա իշխնել ուժի ազդման գծին: Այդ ուղղահայա ի երկարությունն էլ կլինի տվյալ ուժի բազուկը: Ակ. 59-ում ցույց է տրված, որ  $OA$ -ն  $\vec{F}_1$  ուժի բազուկն է,  $OB$ -ն՝  $\vec{F}_2$  ուժինը: Լծակի վրա ազդող ուժերը կարող են այն պտտել առանցքի շորջը երկու ուղղություններով՝ ժամանակի պտտման ուղղությամբ կամ հակառակ ուղղությամբ: Այսպես՝  $\vec{F}_1$  ուժը (Ակ. 59) պտտում է լծակը ժամանակի պտտման ուղղությամբ, իսկ  $\vec{F}_2$  ուժը՝ հակառակ ուղղությամբ:

Ուժերի ազդեցությամբ լծակի հավասարակշռության պայմանը կարելի է ստանալ փորձով: Ընդ որում, պետք է հիշել, որ ուժի ազդեցության արդյունքը կախված է ոչ միայն նրա թվային արժեքից, այլ նաև այն բանից, թե մարմնի ո՞ր կետում է ուժը կիրառված և ինչպես է այն ուղղված:

Լծակի հենման կետից աջ և ձախ գտնվող Ա և Բ կետերից կախում են տարրեր բեռներ այնպես, որ լծակը լինի հավասարակշռության վիճակում: Լծակի վրա ազդող ուժերը հավասար են այդ բեռների կշիռներին: Ամեն անգամ շափում են ուժերի մոդուլները և ուժերի բազուկները:

Ակ. 59-ում պատկերված փորձում 2Ն ուժը հավասարակշռում է 4Ն ուժին: Այդ դեպքում, ինչպես երևում է նկարից, փոքր ուժի բազուկը 2 անգամ մեծ է մեծ ուժի բազուկից:

Այդպիսի փորձերի հիման վրա սահմանվել է լծակի հավասարակշռության պայմանը (լծակի կանոնը):

**Լծակը կատարվի հավասարակշռության մեջ, եթե նրա վրա ազդող ուժերի մոդուլները հակադարձ համեմատական են այդ ուժերի բազուկներին:**

Այս կանոնը կարելի է գրել բանաձևի տեսքով՝

$$\frac{F_1}{F_2} = \frac{l_2}{l_1},$$

որտեղ  $F_1$ -ը և  $F_2$ -ը լծակի վրա ազդող ուժերի մոդուլներն են,  $l_1$ -ը և  $l_2$ -ը՝ այդ ուժերի բազուկները (նկ. 59):

Լծակի կանոնը սահմանել է հույն գիտնական Արքիմեդը դեռևս մ.թ.ա. III դարում:

Այդ կանոնից հետևում է, որ լծակի օգնությամբ փոքր ուժով կարելի է հավասարակշռել մեծ ուժ:

## Հարցեր և առաջադրանքներ

1. Որո՞նք են պարզ մեխանիզմները:
2. Ի՞նչ նպատակով են օգտագործվում պարզ մեխանիզմները:
3. Ի՞նչ է լծակը:
4. Ի՞նչն են անվանում ուժի բազուկը:
5. Ինչպես գտնել ուժի բազուկը:
6. Ինչպիսի՞ ազդեցություն են գործում ուժերը լծակի վրա:
7. Ո՞րն է լծակի հավասարակշռության պայմանը:
8. Զափահան ու երեխան պետք է անցնեն գետակի վրայով. մեկը՝ աջ ափից ձախը, մյուսը՝ հակառակ ուղղությամբ: Երկու ափերին էլ կա մեկական տախտակ, որոնցից յուրաքանչյուրը մի փոքր կարճ է գետակի լայնությունից: Ինչպես կարող են անցնել գետակը չափահասը և երեխան:


## ՄՈՄԵՆՏԱՆԵՐԻ ԿԱՆՈՆԸ: ԼԾԱԿԻ ԿԻՐԱՈՌԻԹՅՈՒՆՆԵՐԸ

§ 30

Լծակի հավասարակշռությունն ուսումնասիրելիս պարզեցինք, որ պտտման առանցքը ունեցող մարմնի վրա ուժի պտտող ազդեցությունը կախված է ոչ միայն ուժի մոդուլից, այլ նաև ուժի բազուկից:

Օրինակ՝ փորձեք դուռը բացել՝ հրելով այն պտտման առանցքին մոտիկ: Կտեսնեք, որ անհրաժեշտ է մեծ ուժ գործադրել դրան վրա: Այնուհետև փորձեք դուռը բացել՝ սեղմելով այն բռնակին մոտ, այսինքն՝ պտտման առանցքից հեռու: Այս դեպքում դուռը բացելու համար անհրաժեշտ կլինի

**Ակտող գործիքներ.**  
ա) մկրատ,  
բ) մետաղաքեր  
կտրելու մկրատ,  
ց) կծաքցան



այն թերևակի հրել: Այսպիսով՝ դուրս բացելու համար տարրեր դեպքերում կիրառվում են տարրեր ուժեր: Այդ ուժերի բազուկները նույնական տարրեր են, բայց բոլոր դեպքերում ուժերի և նրանց բազուկների արտադրյալը նույնն է:

Ուժի և իր բազուկի արտադրյալն անվանում են ուժի մոմենտ՝

$$M = Fl,$$

որտեղ  $M$ -ն ուժի մոմենտն է,  $F$ -ը՝ ուժի մոդուլը,  $l$ -ը՝ այդ ուժի բազուկը:

Միավորների ՄՀ-ում ուժի մոմենտի միավորը 1 նյուտոն  $\times$  1 մետրն է (1 Նմ):

1 Նմ-ն 1 Ն ուժի մոմենտն է, որն ունի 1 մ բազուկ:


Լծակի կանոնի համաձայն՝  $F_1 l_1 = F_2 l_2$ : Բայց  $F_1 l_1 = M_1$  մեծությունը ուժի մոմենտն է, որը ձգուում է լծակը պտտել ժամանակի պտտման ուղղությամբ, իսկ  $F_2 l_2 = M_2$ -ը՝ ուժի մոմենտը, որը ձգուում է լծակը պտտել հակառակ ուղղությամբ, հետևաբար՝  $M_1 = M_2$ :

Այս բանաձևն արտահայտում է մոմենտների կանոնը:

**Լծակը (կամ անշարժ առանցքով որևէ պինդ մարմին)** կցունվի հավասարակշռության մեջ, եթե այն ժամանակի պտտման ուղղությամբ պտտող ուժի մոմենտը հավասար է հակառակ ուղղությամբ պտտող ուժի մոմենտին:

Լծակներն ունեն բազմապիսի կիրառություններ: Ծանրանանք դրանցից մի քանիսին:

Լծակի բնորոշ օրինակ է մկրատը: Այս լծակի հենման առանցքն այն պտուտակն է, որն իրար է միացնում մկրատի երկու կեսերը: Ուժերից մեկը մկրատը սեղմող մատների ուժն է, իսկ մյուսը՝ լծակի վրա կտրվող նյութի կողմից ազդող հակագդեցության (դիմադրության) ուժը: Տարրեր նյութեր կտրելու համար նախատեսված մկրատներն ունեն տարրեր կառուցվածք: Այսպես՝ բուրք կտրելու մկրատն ունի երկար սայրեր և գրեթե նույն երկարությամբ բռնակներ (նկ. 60. ա), որովհենտև բուրք կտրելու համար մեծ ուժ պետք չէ գործադրել:



**Ակտող գործիքներ**

Երկարաթերք կտրելու մկրատը (նկ. 60. թ) ունի ավելի երկար բռնակներ, քան սայրեր, որովհետու երկարի դիմադրության ուժն այնքան մեծ է, որ կարծ բռնակների դեպքում մարդու ուժը բավարար չի լինի թիթեղը կտրելու համար: Հատկապես մեծ է կտրող մասի և բռնակների բազուկների տարրերությունը երկարալար կտրող աքցաններում (նկ. 60. գ):

Լծակի սկզբունքի վրա է հիմնված բոլոր լծակավոր կշեռքների աշխատանքը (նկ. 61. ա, թ, զ):


Լծակներ կան նաև կենդանիների, միջատների, քոչունների և բույսերի կառուցվածքներում:

Մարդու մարմնում կա ավելի քան 200 տարրեր տեսակի ու կրային լծակ (ծունկ, արմունկ, թաթ, մատներ և այլն):


## Հարցեր և առաջադրանքներ



- Ի՞նչն է կոչվում ուժի մոմենտ: Գրել նրա բանաձևը:
- Ո՞րն է ուժի մոմենտի միավորը:
- Ձևակերպեք մոմենտների կամոնը:
- Ցույց տվեք  $\vec{F}$  ուժի բազուկը նկարում պատկերված ա, թ, զ, դ, ե դեպքերում: Նշեք մարմնի պտտման ուղղությունը յուրաքանչյուր դեպքում: Օ-ն մարմնի պտտման առանցքն է:




- Օգտվելով նկ. 60. ա-ից՝ բացատրեք մկրատի գործողությունը որպես լծակ:
- Բացատրեք, թե ինչու՞մ մետաղադրերը կտրելու մկրատը և արցանը (Ակարներ 60. թ և 60. զ) ուժի մեջ շահում են տալիս:
- Բնրեք կենցաղում, տեխնիկայում և բնույթյան մեջ լծակի կիրառման այլ օրինակներ:
- Նկարներում պատկերված լծակներում ցույց տվեք հենակետերն ու լծակների բազուկները:



- Ո՞ր դիրքում է ավելի քիչ ճնշում գործադրում ուսի վրա փայտը, որից կապոց է կախված:

### Լծակի հավասարակշռության պայմանի ուսումնասիրումը



Աշխատանքի նպատակը. փորձով ստուգել, թե ուժերի և նրանց բազուկների ի՞նչ հարաբերակցության դեպքում լծակը կլինի հավասարակշռության մեջ: Փորձով ստուգել մոմենտների կանոնը:

**Գործիքներ և նյութեր.** լարորատոր լծակ, ամրակալան, թեռների հավաքածու, չափարանն, ուժաչափ:

**Ցուցումներ՝ աշխատանքի վերաբերյալ.**

1. Լծակն ամրացնել ամրակալանին այնպէս, որ այն ազատ պտտվի ամրացված առանցքի շուրջը:
2. Լծակի ծայրերի մասնեկների պտտման միջոցով լծակը հավասարակշռեք հորիզոնական դիրքում:
3. Պտտման առանցքից որոշակի հեռավորությամբ լծակի ծախ բազուկից կախեք երկու ծանրու:
4. Փորձերի միջոցով լծակի աջ բազուկի վրա գտնեք այն տեղերը, որտեղից կախելով՝ (ա) մեկ ծանրու, (բ) երկու ծանրու, (գ) երեք ծանրու, ծախ կողմից երկու ծանրուի առկայությամբ լծակը կլինի հավասարակշռության մեջ: Չափեք այդ տեղերի և պտտման առանցքի հեռավորությունները:
5. Համարելով, որ յուրաքանչյուր ծանրու կշռում է 1 Ն, լրացրեք աղյուսակը:

Փորձի N	Ուժ $F_1$ Ն	Բազուկ $l_1$ , մ	Ուժ $F_2$ Ն	Բազուկ $l_2$ , մ	Ուժերի և բազուկների հարաբերությունը		$M_1$ , Նմ	$M_2$ , Նմ
					$F_1/F_2$	$l_2/l_1$		
1.								
2.								
3.								

6. Յուրաքանչյուր փորձի համար հաշվեք ուժերի հարաբերությունը, բազուկների հարաբերությունը և գրանցեք աղյուսակում:
  7. Հաշվեք ուժի մոմենտները և ստուգեք մոմենտների կանոնի ճշտույթունը:
- Հիշեք, որ ուժը կարող եք չափել նաև ուժաչափի միջոցով:

## ՃԱԽԱՐԱԿ: ՈԼՈՐԱՏ: ԹԵՇ ՀԱՐԹՈՒԹՅՈՒՆ

**Ճախարակ:** Պարանի օգնությամբ հատակից որևէ ճանրոց բարձրացնելու համար ամենակին կարիք չկա անպայման պարանը ձգել դեպի վեր: Կարող ենք պարանն անցկացնել վերևում դրված որևէ հենարանի վրայով և ձգել այն մեզ հարմար ուղղությամբ: Այդ դեպքում ծանրոցը կրաքարանա վեր՝ դեպի հենարանը:

Հենարանի վրայից անցկացրած պարանի շփումը դժվարացնում է բեռը բարձրացնելը: Դրա համար օգտագործում են շրջագծով փորակ ունեցող փոքրիկ անիվ, որը պտտվում է գոտեկապի մեջ ամրացված առանցքի շորջը և կոչվում է ճախարակ (նկ. 62): Նկ. 63-ում ցույց է տրված, թե ինչպես են բեռը բարձրացնում ճախարակի միջոցով:

Քեզոր բարձրացնելիս ճախարակի առանցքը մնում է անշարժ, դրա համար էլ այն կոչվում է անշարժ ճախարակ:


Չննարկենք անշարժ ճախարակի գործողությունը: Ենթադրենք, որ նրա առանցքը պտտվում է առանցքակալի մեջ առանց շփման:

Եթե փորակի միջով զցված պարանը ձգված է և չի սահում ճախարակի վրայով (նկ. 64), ապա ճախարակի վրա ազդում են միայն պարանի ձգման  $P$  և  $F$  ուժերը, որտեղ  $P$ -ն բերի կշիռն է,  $F$ -ը՝ պարանին կիրառված ուժը: Այդ ուժերի կիրառման կետեր կարելի է համարել ճախարակի շրջագծի  $A$  և  $B$  կետերը:


Անշարժ ճախարակի հավասարակշռության պայմանը, ինչպես լծակինը, որոշվում է կիրառված ուժերի մոմենտների հավասարությամբ՝  $M_1 = M_2$ :  $M_1 = P \cdot OA$ ,  $M_2 = F \cdot OB$  որտեղ  $OA = OB = R$  (նկ. 65): Հետևաբար՝  $P \cdot R = F \cdot R$ , այստեղից  $E = P = F$ :

Այսպիսով՝ անշարժ ճախարակը ուժի մեջ շահում չի տալիս ( $P = F$ ), բայց հենարավորություն է տալիս փոխել կիրառված ուժի ազդման ուղղությունը: Ավելի հարմար է ճախարակի փորակով զցված պարանը ձգել ներքև, քան պարանով բեռը քաշել դեպի վեր:


Եթե ճախարակի կեռիկից կախենք բեռը, իսկ նրա փորակով զցված պարանի մի ծայրը կապենք հեծանից և մյուս ծայրից պարանը ձգենք դեպի վեր, ապա բեռը նորից վեր





Նկ. 62  
Ճախարակ





Նկ. 63  
Ճախարակի  
օգտագործումը  
բեռ բարձրացնելու  
համար




Նկ. 64 Անշարժ ճախարակ  
Նկ. 65 Ազդող ուժերը և  
դրանց բազմությունը



Նկ. 66  
Չարժական ճախարակ  
Նկ. 67 Ազդող ուժերը և  
դրանց բազմությունը



Նկ. 68  
Անշարժ և  
չարժական  
ճախարակների  
համակարգ



Նկ. 69  
Բազմաճախարակ

**Կրարձրանա:** Բնորի շարժման ժամանակ նրա հետ միասին շարժվում է նաև ճախարակը, ուստի այն կոչվում է շարժական ճախարակ (նկարներ 66, 67):

Շարժական ճախարակի հավասարակշռության պայմանը նույնականացնելու պրոցեսը կիրառված ուժերի մոմենտների հավասարությամբ՝  $M_1 = M_2$ :

Կիրառելով  $F$  ուժը՝ ճախարակը պատում ենք  $O$  կետով անցնող առանցքի շուրջը: Այդ ուժի մոմենտը՝  $M_1 = F \cdot OB = F \cdot 2R$  ( $OB = 2R$ ), իսկ ճախարակին ամրացված թերթի  $P$  կշռով ստեղծում է  $M_2 = P \cdot OA = P \cdot R$  ( $OA = R$ ) մոմենտը: Հետևաբար՝  $F \cdot 2R = P \cdot R$ , որտեղից՝

$$F = \frac{P}{2}:$$



Այսպիսով՝ շարժական ճախարակ օգտագործելիս ուժի մեջ շահում ենք 2 անգամ:

Գործնականում սովորաբար անշարժ ճախարակն օգտագործում են շարժականի հետ (նկ. 68):

Ուժի մեջ ավելի մեծ շահում ստանալու համար օգտագործում են բազմաճախարակ, որն անշարժ և շարժական ճախարակների համակցություն է: Երեք անշարժ և երեք շարժական ճախարակներով բազմաճախարակը (նկ. 69) տալիս է վեցականիկ շահում ուժի մեջ:

**Ոլորան:** Ոլորանը կազմված է զլանից (բմբուկ) և նրան ամրացված բոնակից (նկ. 70), ուստի բոնակի մեջ պտույտի դեպքում բմբուկն էլ է կատարում մեկ պտույտ: Նկ. 71-ում պատկերված է ոլորանի պիտեման:

Ոլորանի բմբուկին կազմված է պարան, որը բմբուկի պտույտան ժամանակ փաթաթվում է նրա վրա՝ ջրհորից բարձր:



**Ակ. 70**  
Ոլորան

**Ակ. 71**  
Ազդող ուժերը և  
դրանց բազուկները

բացնելով իր մյուս ծայրից կախված դույլը: Թմբուկը պտտելու համար նրա առանցքին ամրացնում են բռնակ կամ մեծ անիվ, որի առանցքը համբնենում է թմբուկի առանցքի հետ:



Ոլորանի հավասարակշռության պայմանը որոշվում է նրա վրա կիրառված ուժերի մոմենտների հավասարությամբ՝  $M_1 = M_2$ , որտեղ  $M_1 = F \cdot OC = F \cdot R$ ,  $M_2 = P \cdot OB = P \cdot r$ ,  $P$ -ն շրով լցված դույլի կշիռն է,  $F$ -ը՝ դույլը բարձրացնող մարդու կիրառած ուժը,  $R$ -ը՝ մեծ անիվի շառավիղը,  $r$ -ը՝ թմբուկի շառավիղը: Քանի որ  $F \cdot R = P \cdot r$ , ապա՝

$$\frac{P}{F} = \frac{R}{r},$$

այսինքն՝ ոլորանն ուժի մեջ տալիս է  $R/r$  աճագամ շահում:

Դռան բռնակը, հեծանիվի տանող անիվը և ոլորանի օրինակներ են:

**Թեք հարթություն:** Բանվորը ծանր արկղը կամ տակառը միանգամից չի կարող դնել բեռնատար մեքենայի բարձր բափրին կամ այլ բարձր տեղ: Դրա համար գետնից դեպի բափրը դնում է տախտակներ՝ ստեղծելով թեք հարթություն և նրա վրայով բարձրացնում է բեռը (նկ. 72): Եթե հաշվի շանոնքը շփումը, ապա բանվորը կարող է բարձրացնել բե-



**Ակ. 72**  
Բանվորը բեռը  
բարձրացնում է  
թեք հարթությամբ

**Ակ. 73**  
Բեռը բարձրացնող  
 $\vec{F}$  ուժի մոդուլը  
փոքր է  $\vec{F}_d$   
ծանրության ուժի  
մոդուլից

որ՝ գործադրելով ավելի փոքր ուժ, քան բեռի ծանրության ուժն է (նկ. 73): Այսինքն՝ թեք հարթությունն ուժի մեջ շահում է տալիս:

Հին ժամանակներում շատ պարզ մեխանիզմներ օգտագործվել են ուղղական նպատակների համար: Եթե հոռմեական գորքերը պաշարում են հունական Սիրակուզա քաղաքը, 75-ամյա Արքիմենը դեկավարում է հայրենի քաղաքի պաշտպանությունը: Նա պարզ մեխանիզմներով պատրաստում է քարանետ մեքենաներ, որոնք խորտակում են քշնամունավերը, ոչնչացնում ուղղիկներին:

## Հարցեր և առաջադրանքներ

1. Ճախարակմերի հ՞նչ տեսակներ գիտեք:
2. Ո՞ր ճախարակն է կոչվում անշարժ:
3. Ո՞ր ճախարակն է կոչվում շարժական:
4. Ի՞նչ նպատակով է օգտագործվում անշարժ ճախարակը:
5. Ի՞նչ նպատակով է օգտագործվում շարժական ճախարակը: Ինչպիսի՞ շահում է այն տալիս ուժի մեջ:
6. Ի՞նչ է բազմաճախարակը: Ինչպիսի՞ շահում է այն տալիս ուժի մեջ:
7. Գծել անշարժ ճախարակի սխեման:
8. Գծել շարժական ճախարակի սխեման:
9. Ի՞նչ է ոլորանը:
10. Ինչպիսի՞ շահում է տալիս ոլորանը:
11. Ո՞ր դեպքերում և ի՞նչ նպատակով է օգտագործվում թեք հարթությունը:

## § 33

### ՄԵԽԱՆԻՉԱՆԻ ՕԳՏԱԿԱՐ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԻՑ

Մարդկությունն անհիշելի ժամանակներից մեծ ծանրություններ բարձրացնելու և տեղափոխելու համար օգտագործում է տարրեր մեխանիզմներ:

Գործնականում յուրաքանչյուր մեխանիզմում, յուրաքանչյուր մեքենայում գործում են շիման ուժեր, որոնց հաղթահարման համար անհրաժեշտ է կատարել լրացրացի աշխատանք: Հետևաբար այս կամ այն մեխանիզմն օգտագործելիս կատարվում է ավելի մեծ աշխատանք, քան անհրաժեշտ է տվյալ մարմինը տեղափոխելու համար:

Օրինակ՝ ամրաքայլի միջոցով ավտոմեքենան բարձրացնելիս կատարվում է նաև անօգուտ աշխատանք շիման

ուժերը հաղբահարելու համար: Այն աշխատանքը, որը կատարվում է միայն ավտոմեթենան բարձրացնելու համար, բնական է անվանել օգտակար աշխատանք: Ակներև է, որ ծախսված կամ լրիվ աշխատանքը ( $A_{\text{լր}}$ ) ավելի մեծ է, քան օգտակար ( $A_{\text{օգ}}$ ) աշխատանքը:

**Այն ֆիզիկական մեծությունը, որը ցույց է տալիս, թե օգտակար աշխատանքը լրիվ (ծախսված) աշխատանքի որ մասն է, կոչվում է մեխանիզմի օգտակար գործողության գործակից (կրճատ՝ **ՕԳԳ**):**

Մեխանիզմի **ՕԳԳ**-ն գտնելու համար պետք է օգտակար աշխատանքը բաժանել այն աշխատանքի վրա, որը ծախսվել է տվյալ մեխանիզմն օգտագործելիս.

$$\text{ՕԳԳ} = \frac{\text{Օգտակար աշխատանք}}{\text{Լրիվ աշխատանք}} :$$

Օգտակար գործողության գործակիցը հաճախ արտահայտում են տոկոսներով և նշանակում հունարեն  $\eta$  (կարդացվում է՝ էտա) տառով.

$$\eta = \frac{A_{\text{օգ}}}{A_{\text{լր}}} \cdot 100 \%:$$

Քանի որ  $A_{\text{օգ}}$ -ը միշտ փոքր է  $A_{\text{լր}}$ -ից, ապա **ՕԳԳ**-ն միշտ փոքր է 1-ից (կամ 100 %-ից):

Տարրեր մեխանիզմներ նախագծելիս ծգուում են մեծացնել դրանց **ՕԳԳ**-ն, այսինքն՝ հնարավորինս փոքրացնել շփման ուժերով և այլ գործոններով պայմանավորված կորուստները:

Այդ դեպքերում լրիվ աշխատանքը մոտավորապես հավասար է օգտակար աշխատանքին՝  $A_{\text{լր}} \approx A_{\text{օգ}}$ : Քանի որ աշխատանքները կարելի է արտահայտել համապատասխան ուժերի և անցած ճանապարհների արտադրյալներով, ապա  $A_{\text{լր}} \approx A_{\text{օգ}}$  հավասարությունը կարելի է ներկայացնել նաև  $F_1 S_1 \approx F_2 S_2$  տեսքով, որի համաձայն՝

---

**մեխանիզմի օգնությամբ քանի անգամ շահում ենք ուժի մեջ, այնքան անգամ կորցնում ենք ճանապարհի մեջ և հակառակը:**

Այս օրենքը կոչվում է մեխանիկայի «ռուկի կանոն», որի հեղինակը հույն գիտնական Հերոն Ալեքսանդրացին է, (մ.թ. 1 դար):

## Հարցեր և առաջադրանքներ

- Ո՞ր աշխատանքն է կոչվում օգտակար:
- Ո՞ր աշխատանքն է կոչվում լրիվ կամ ժախսված:
- Ինչո՞ւ լրիվ աշխատանքը միշտ մեծ է օգտակար աշխատանքից:
- Ո՞ր մեծությունն է կոչվում մեքենայի կամ մեխանիզմի օգտակար գործողության գործակից:
- Կառո՞ղ է արդյոք ՕԳԳ-ի հավասար կամ մեծ լինել **100 %**-ից:
- Զնակերպեք մեխանիկայի «ուսկի կանոնը»:
- Ձեր տրամադրության տակ ունեք թեր հարթություն և չափաբանոն: Որոշե՛ք, թե ուժի մեջ ինչպիսի շահում կարելի է ստանալ այդ թեր հարթության միջոցով:



## § 34

### Լարորատոր աշխատանք 6


#### Թեր հարթության ՕԳԳ-ի որոշումը

Աշխատանքի նպատակը՝ փորձով համոզվել, որ թեր հարթության օգնությամբ կատարված օգտակար աշխատանքը փոքր է լրիվ աշխատանքից:

**Գործիքներ և նյութեր.** ուժաչափ, տախտակ (լարորատոր տրիբոմետր), փայտե չորսու, չափաժապավեն կամ քանոն, թեուների հավաքածու, կցորդիչով և թարիկով ամրակալան:

**Ցուցումներ՝ աշխատանքի վերաբերյալ.**

- Ուժաչափի միջոցով որոշեք չորսուի և երկու թեուների կշիռը միասին ( $P$ ):
- Տախտակը տեղադրեք թեր դիրքով՝ վերին եզրն ամրացնելով ամրակալանի թարիկում:
- Չորսուն թեունափորեք երկու թեուով և, նրան ամրացնելով ուժաչափը, հավասարաչափ տեղափոխեք թեր հարթությամբ դեպի վեր: Հաշվեք ուժաչափի ցուցմունքը՝ քարշի ուժը ( $F$ ):
- Չափեք չորսուի ստորին եզրի անցած ճամապահիք ( $l$ ) և դրա բարձրությունը ( $h$ ) թեր հարթության հիմքից:
- Հաշվեք օգտակար և լրիվ աշխատանքները՝ ըստ  $A_{\text{լ}} = FL$  և  $A_{\text{օգ}} = Ph$  բանաձևերի:
- Չափումների և հաշվումների արդյունքները գրանցեք աղյուսակում:



Փորձի N	$P, \text{Ն}$	$h, \text{մ}$	$A_{\text{օգ}}, \text{մ}^2$	$F, \text{Ն}$	$l, \text{մ}$	$A_{\text{լ}}, \text{մ}^2$	$\eta, \%$	$\eta_{\text{գլ}}, \%$
1								
2								
3								

7. Որոշեք թեք հարքության OԳԳ-ն՝ օգտվելով

$$\eta = \frac{A_{\text{օգ}}}{A_{\text{լր}}} \cdot 100 \% \text{ բանաձևից:}$$

8. Մի քանի փոքր կատարեք զանազան բևեռներով՝ չփոխելով թեք հարքության երկարությունն ու բարձրությունը: Հաշվեք OԳԳ-ն և որոշեք դրա միջին արժեքը:

### Խնդիրների լուծման օրինակներ

1. Լծակի օգնությամբ բանվորը բարձրացնում է 150 կգ զանգվածով սալը: Ի՞նչ ուժ է նա կիրառում լծակի 1,8 մ երկարությամբ երկար բազուկին, եթե փոքր բազուկը 0,3 մ է:

$$m=150 \text{ կգ} \\ g=9,8 \text{ Ն/կգ}$$

$$l_1=1,8 \text{ մ}$$

$$l_2=0,3 \text{ մ}$$

$$F_1=?$$

**Լուծում:** Ըստ լծակի կանոնի՝  $\frac{F_1}{F_2} = \frac{l_2}{l_1}$ , որտեղից՝  $F_1 = F_2 \frac{l_2}{l_1}$ :  $F_2 = P$ -ն սալի կշիռն է, ուստի

$$F_2 = mg = 150 \text{ կգ} \cdot 9,8 \text{ Ն/կգ} \approx 1500 \text{ Ն},$$

$$F_1 = 1500 \text{ Ն} \cdot \frac{0,3 \text{ մ}}{1,8 \text{ մ}} = 250 \text{ Ն}:$$

Պատասխան՝ 250 Ն:

2. 4 կգ զանգվածով բեռը բարձրացնում են շարժական ճախարակի օգնությամբ՝ կատարելով է 19,6 Զ աշխատանք: Ի՞նչ ուժ էր կիրառվել ճոպանի ծայրին: Ի՞նչ է բարձրության է հասել բեռը: Շփումը, ինչպես նաև ճախարակի զանգվածն անտեսել:

$$m=4 \text{ կգ}$$

$$A=19,6 \text{ Զ}$$


$$g=9,8 \text{ Ն/կգ}$$

$$F=?$$

$$h=?$$

**Լուծում:** Բեռը որոնելի է բարձրությամբ բարձրացնելու համար անհրաժեշտ է ճոպանի ազատ ծայրը բարձրացնել  $2h$ -ով: Համաձայն մեխանիկայի «ոսկի կանոնի»՝  $A_1 = A_2$ , որտեղ  $A_1$ -ը ճոպանին կիրառված ուժի աշխատանքն է,  $A_2$ -ը՝ բնի վրա ազդող ծանրության ուժինը: Ուրեմն  $F \cdot 2h = F_d \cdot h$ , որտեղից՝

$$F = \frac{F_d}{2} = \frac{mg}{2}.$$



Տեղադրելով  $m$ -ի և  $g$ -ի արժեքները՝ ստանում ենք՝  $F = 19,6 \text{ Ն}$ : Կատարված աշխատանքը՝  $A = A_1 = F \cdot 2h$ , հետևապես՝  $h = A/2F = 0,5 \text{ մ}$ :

Պատասխան՝ 19,6 Ն, 0,5 մ:

3. Ջրով լցված դույլը ջրհորից բարձրացնում են ոլորանի միջոցով: Ոլորանի թմրուկի շառավիղը 20 սմ է, իսկ բռնակի երկարությունը՝ 60 սմ: Ի՞նչ ուժ պետք է գործադրել բռնակին՝ դույլը հալասարաշակի բարձրացնելու համար: Ջրով լցված դույլի կշիռը 90 Ն է:

$$r=20 \text{ սմ}$$

$$l=60 \text{ սմ}$$

$$P=90 \text{ Ն}$$


$$F=?$$

**Լուծում:** Ոլորանի տված շահումը ուժի մեջ  $l/r$ -է,

$$\frac{P}{F} = \frac{l}{r},$$

$$F = \frac{Pr}{l} = \frac{90 \text{ Ն} \cdot 20 \text{ սմ}}{60 \text{ սմ}} = 30 \text{ Ն}:$$

Պատասխան՝ 30 Ն:



4. 150 Ն կշռով բեռք հավասարաչափ վեր են բաշում որպես թեր հարթություն ծառայող տախտակի երկայնքով: Տախտակի երկարությունը 180 սմ է, մի ծայրի բարձրությունը գետնից՝ 30 սմ, իսկ բնակի կիրառված ուժը, որը գուգահեռ է թեր հարթությանը, 40 Ն: Հաշվեր թեր հարթության ՕԳԳ-ն:

$$P=150 \text{ Ն}$$

$$F=40 \text{ Ն}$$


$$l=180 \text{ սմ}$$

$$h=30 \text{ սմ}$$

$$\eta = ?$$

**Լուծում:** Որոնելի ՕԳԳ-ն որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$\eta = \frac{A_{\text{օգ}}}{A_{\text{լլ}}} \cdot 100 \%$$



Բանաձևում  $A_{\text{լլ}}$ -ը լրիվ կամ ծախսված աշխատանքն է, իսկ  $A_{\text{օգ}}$ -ը՝ օգտակար աշխատանքը, ընդ որում՝

$$A_{\text{լլ}} = Fl, \quad A_{\text{օգ}} = F_d h;$$

$F_d$ -ն բնի վրա ազդող ծանրության ուժն է, որը հավասար է բնի  $P$  կշռին: Ուստի  $A_{\text{օգ}} = Ph$  և

$$\eta = \frac{Ph}{Fl} \cdot 100 \% = \frac{150 \text{ Ն} \cdot 30 \text{ սմ}}{40 \text{ Ն} \cdot 180 \text{ սմ}} \cdot 100 \% = 62,5 \%$$

**Պատասխան՝** 62,5 Ն:

## ՆՅՈՒԹԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

**ՖԻԶԻԿԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ ԵՎ ՆՅՈՒԹ:**  
**ՆՅՈՒԹԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ**

**§35**

Ինչպես զիտենք, մեզ շրջապատող բազմաթիվ և տարատեսակ առարկաներն անվանում են ֆիզիկական մարմիններ:

Գիտենք նաև, որ ֆիզիկական մարմինները կազմված են մեկ կամ մի քանի նյութից, այսինքն՝ նյութն այն է, ինչից կազմված է ֆիզիկական մարմինը:

Իր գործունեության ընթացքում մարդն օգտագործում է ամենատարրեր նյութեր, որոնք օժտված են բազմապիսի հատկություններով: Այսպես՝ ինքնարիններ պատրաստելու համար օգտագործում են համեմատարար թերևն, բայց ամուր և ջերմադիմացկուն նյութեր, ճանապարհները ծածկում են քետոնով և ասֆալտով, որոնք չեն քայլքայվում անգամ ծանր ծերենաների անհվաների տակ: Հրշեցների համագետները կարում են իրակայուն գործվածքներից, որոնք չեն այրվում անգամ բոցերի մեջ՝ շատ բարձր ջերմաստիճանում: Չրահարածկոնները պատրաստում են այնպիսի նյութերից, որոնք արդյունավետորեն արգելակում են մեծ արագությամբ թռչող գնդակները՝ մարդուն պաշտպանելով իրազենից արծակված գնդակներից:

Բերված օրինակները վկայում են նյութերի կարևոր դերը մարդկանց կյանքում: Ներկայում մեծ աշխատանքներ են կատարվում՝ նախօրոք տրված հատկություններով նյութեր ստանալու համար: Այդ գործին մասնակցում են ֆիզիկոններ, քիմիկոսներ, նյութաբաններ, ճարտարագետներ և այլ գիտնականներ:

Նյութերն օգտագործելիս առաջին հերթին հաշվի ենք առնում, թե ինչ հատկություններով են դրանք օժտված:


Իսկ ինչո՞վ են պայմանավորված նյութերի տարրեր հատկությունները: Ինչո՞ւ պողպատն լարը գործնականորեն հնա-

**Ակ. 74**

Բնի ազդեցությամբ հեղուկը գործնականորեն չի փոխում իր ծավալը

**Ակ. 75**

Նույն բնի ազդեցությամբ գազի ծավալը փորրանում է մի քանի աճամ



բավոր չէ ձգել, մինչդեռ ուստինել լարը հեշտությամբ ծագում է, ինչո՞ւ զլանում ծանրոցի ազդեցությամբ հեղուկի սեղմվելն անզեն աչքով հնարավոր չէ տեսնել (Ակ. 74), իսկ նոյնպիսի զլանում գազի ծավալը նոյն բեռի ազդեցությամբ փորրանում է մի քանի աճամ (Ակ. 75): Ինչո՞ւ յածր ջերմաստիճաններում առածգական ուստինը դառնում է փլարուն, իսկ ձյութը՝ կարծր:

Այս և բազմաթիվ այլ հարցերի պատասխանելու համար անհրաժեշտ է իմանալ, թե ինչի՞ց և ինչպե՞ս է կազմված նյութը, այսինքն՝ իմանալ նյութի կառուցվածքը:


Նյութի կառուցվածքի իմացությունը հնարավորություն է տախու բացատրելու նյութի փոփոխությունները՝ ֆիզիկական պրոցեսները, դրանք արագացնել կամ դանդաղեցնել:


Նյութի կառուցվածքի մասին որոշակի տեղեկություններ, ինչպես միշտ, ֆիզիկայում կարելի է ստանալ փորձերի օգնությամբ:

Եթե սպիրտայրոցով տաքացնենք մոտ 50 սմ երկարությամբ արնձեն լարը, որի երկու ծայրերն ամրացված են ամրակալաններին, ապա կնկատենք, որ տաքացմանը զուգընթաց այն «կախ է ընկնում», կորանում է (Ակ. 76): Եթե հեռացնենք

**Ակ. 76**

Տաքացմելիս աղնձեն լարը «կախ է ընկնում», իսկ սպիրտայրոցը հեռացնելուց հետո ընկումն է իր մախմական ձևը





Նկ. 77

Տարացնելիս օդն ընդարձակվում է ավելի, քան նույն ծավալով ջուրը (Ս մյուսը չի բռնառվ, որ օդը դուրս գա անորից)

սպիրտայրոցը, ապա որոշ ժամանակ անց պղնձե լարը կընդունի իր նախնական տեսքը: Նշանակում է՝ պղնձե լարի երկարությունը, ինչպես և ծավալը, տաքացնելիս մեծանում է, իսկ սառչելիս՝ փոքրանում:

Եթե նույն ծավալով երկու անոքներ, որոնցից մեկը լցված է ջրով, իսկ մյուսը, որի մեջ միտոցի (Ս) տակ օդ կա, տաքացնենք, ապա կնկատենք, որ և՛ ջրի, և՛ օդի ծավալները մեծանում են, ընդ որում, օդինք՝ զգալիորեն շատ, քան ջրինք (Ակ. 77):

Այս փորձերից հետևում է, որ պինդ, հեղուկ մարմինների կամ զագի ծավալը կարելի է փոփոխել՝ տաքացնելով կամ սառեցնելով դրամք: Մարմնի ծավալը կարելի է փոփոխել, օրինակ, նաև սեղմելով կամ ձգելով:


Իսկ ինչո՞ւ է փոփոխվում մարմնի ծավալը: Այս հարցին պատասխանելու համար ենթադրենք՝ նյութը, որից պատրաստված է մարմինը, քաղկացած է առանձին մասնիկներից, որոնց միջև կան ազատ տարածություններ: Եթե մասնիկները հեռանում են իրարից, մարմնի ծավալը մեծանում

Նկ. 78

Աղը ջրում լուծվելիս ջուրը քածակից չի բափկում

Նկ. 79

1 լ ջրի և 1 լ սպիրտի լուծույթի ծավալը փոքր է 2 լուրից ( $1\text{ l}+1\text{ l} \neq 2\text{ l}$ )



է, իսկ երբ մոտենում են, ծավալը փոքրանում է: Նյութի՝ մասնիկներից կազմված լինելու ենթադրությունը (կամ ինչպես ընդունված է ասել՝ վարկածը) մտահղացել են իին հույն գիտնականները դեռևս 2500 տարի առաջ: Այն ստուգելու համար կատարենք հետևյալ փորձը:

Վերցնենք ջրով ըերներերան լցված բաժակ և աստիճանաբար, զգուշորեն նրա մեջ լցնենք կերակրի աղ (նկ. 78): Աղը ջրում լուծվում է: Ավելացնելով միջև մեկ թեյի գդալ աղ, կտեսնենք, որ ջուրը բաժակից չի բափվի:

Կատարենք մեկ փորձ ևս. իրար խառնենք մեկական լիտր ծավալով ջուր և սպիրտ: Կտեսնենք, որ լուծույթի ծավալը փոքր է 2 լիտրից (նկ. 79):

Այս փորձերից կարելի է եզրակացնել, որ ջրի մասնիկների միջև կան ազատ տարածություններ, որոնք զբաղեցնում են կերակրի աղի կամ սպիրտի մասնիկները:

Դատարկ տարածություններ կան նաև պինդ մարմիններում: Օրինակ՝ որոշ թունավոր զագեր կարող են «անցնել» երկար վառարանի շիկացած պատի միջով՝ պատճառ դառնալով մահացու դեպքերի:

Իսկ ինչո՞ւ նյութի մասնիկները չենք տեսնում նույնիսկ տասնյակ հազարավոր անգամ խոշորացնող մանրադիտակով: Բայն այն է, որ նյութի մասնիկներն ունեն չափազանց փոքր չափեր, որոնք, սակայն, կարելի է գնահատել ոչ բարդ փորձերով:

Նկարագրված փորձերը, ինչպես նաև բազմաթիվ այլ փորձեր հաստատում են, որ նյութը հոծ չէ, այն կազմված է առանձին մասնիկներից:

## Հարցեր և առաջադրանքներ

1. Թվարկե՞ք ձեր շրջապատի մի քանի առարկա:
2. Ինչի՞ց են կազմված ֆիզիկական մարմինները:
3. Ի՞նչ է նշանակում «իմանալ նյութի կառուցվածքը» արտահայտությունը:
4. Ի՞նչ փոփոխություն է կրում պղնձե լարց սպիրտայրոցով տաքացնելիս: Իսկ սաքելի՞ս:
5. Ի՞նչ փոփոխություն են կրում ջուրը և օղը տաքացնելիս:
6. Ինչո՞ւ է հնարավոր մարմինների ծավալի փոփոխությունը:
7. Օրինակներով ցույց տվեք, որ մարմնի մասնիկների միջև կան ազատ տարածություններ:
8. Ինչո՞ւ նյութի մասնիկները չենք տեսնում:
9. Ինչպիսի՞ կառուցվածք ունի նյութը:

Ինչպես են անվանում այն թվերը, որոնք գերազանցում են մեկ միլիոնը, ասենք, հազար, միլիոն և ավելի անգամ: Այլ կերպ ասած՝ ի՞նչ անվանուններ ունեն այն թվերը, որոնց տասնորդական գրառումն արտահայտվում է մեկով և դրան հաջորդող գրոներով: Ահա այդ մեծ թվերից մի քանիսը՝

միլիոն՝ 1 000 000,

միլիարդ կամ բիլիոն՝ 1 000 000 000,

տրիլիոն՝ 1 000 000 000 000,

քվադրիլիոն՝ 1 000 000 000 000 000 և այլն:

Սակայն մի շարք մասնագետներ՝ ֆիզիկոսներ, աստղագետներ և ուրիշներ, ովքեր գործ ունեն մեծ թվերի հետ, նախընտրում են թվերը գրառել ավելի սեղմ ձևով: Օրինակ՝ մեկ միլիոնը, որ ունի վեց զրո, ներկայացնում են  $10^6$  տեսքով և կարդում այսպես՝ տասի վեց աստիճան, քվադրիլիոնը (գրոների թիվը տասնինգն է)՝  $10^{15}$  տեսքով (տասի տասնինգ աստիճան):

Այսպիսով՝ երբ թիվը կազմված է մեկից և դրան հաջորդող գրոներից, ապա այն ներկայացնում են  $10^n$  տեսքով, որտեղ  $n$  բնական թիվը գրոների քանակն է: Հակառակը,  $10^n$  գրառումը կհասկանանք որպես թիվ, որը կազմված է մեկից և դրան հաջորդող  $n$  հաստ գրոյից:

Ընդհանրապես  $a^n$  տեսքի գրառումն անվանում են աստիճան (ա-ի են աստիճան).  $a$ -ն կոչվում է աստիճանի հիմք,  $n$ -ը՝ աստիճանի ցուցիչ կամ աստիճանացույց: Եթե աստիճանի ցուցիչը 1 է ( $n=1$ ), ապա այն չեն գրում՝  $a^1=a$ ,  $10^1=10$ :

Եթե թիվը կազմված է այլ թվանշաններից և դրան հաջորդող գրոներից, ապա այն ներկայացնում են արտադրյալի տեսքով, ընդ որում, արտադրիչներից մեկը՝ գրառված մեկով և գրոներով: Օրինակ՝  $520\,000\,000 = 5,2 \cdot 100\,000\,000 = 5,2 \cdot 10^8$  (կարդում են՝ հինգ ամբողջ երկու տասնորդական անգամ տասի ութ աստիճան):

Երբեմն հարկ է լինում թիվը նախապես կլորացնել՝ պահպանելով գրոյից տարրեր երկուսից երեք թվանշան: Օրինակ՝  $101\,325 \approx 101\,000 = 1,01 \cdot 100\,000 = 1,01 \cdot 10^5$ :

$\frac{1}{10^n}$  տեսքի կոտորակները 10-ի աստիճաններով ներկայացնելիս  $n$ -ը փոխարինում են  $(-n)$ -ով՝  $\frac{1}{10^n} = 10^{-n}$ : Օրի-

նակ՝  $\frac{1}{10} = \frac{1}{10^1} = 10^{-1}$ ,  $\frac{1}{10^3} = 10^{-3}$  և այլն: Եթե քիվը  $\frac{a}{10^n}$  տեսքի է, ապա կարող ենք գրել՝  $\frac{a}{10^n} = a \cdot 10^{-n}$ : Օրինակ՝  $\frac{2}{10^4} = 2 \cdot 10^{-4}$ ,  $\frac{18}{10^9} = 18 \cdot 10^{-9}$  և այլն: Հետևապես մեկից փոքր տասնորդական կոտորակները 10-ի աստիճանի տեսքով ներկայացնելու համար դրանք նախապես հարկավոր է գրառել  $\frac{a}{10^n}$  տեսքով: Օրինակ՝

$$0,1 = \frac{1}{10} = \frac{1}{10^1} = 10^{-1}, \quad 0,01 = \frac{1}{100} = \frac{1}{10^2} = 10^{-2},$$

$$0,00001 = \frac{1}{100000} = \frac{1}{10^5} = 10^{-5},$$

$$0,000\,000\,000\,053 = \frac{53}{1000\,000\,000\,000} = \frac{53}{10^{12}} = 53 \cdot 10^{-12}:$$

Այսպիսով՝ մեկից փոքր տասնորդական կոտորակը ներկայացվում է տասի՞քացական ցուցիչով աստիճանի տեսքով: Ցուցիչի բացարձակ արժեքը հավասար է սոորակետից հետո գրված թվանշանների քանակին:

Իսկ ինչպես են բազմապատկվում 10-ի աստիճանի տեսքով գրառված թվերը: Հետևյալ օրինակները մեզ կիուշեն, թե ինչպես կարելի է աստճանները բազմապատկել.

$$\blacksquare 10^2 \cdot 10^3 = 100 \cdot 1000 = 100\,000 = 10^5 = 10^{2+3},$$

$$\blacksquare 10^2 \cdot 10^{-3} = 100 \cdot 0,001 = 0,1 = 10^{-1} = 10^{2-3},$$

$$\blacksquare 10^{-2} \cdot 10^{-1} = 0,01 \cdot 0,1 = 0,001 = 10^{-3} = 10^{-2-1},$$

որեմ՝

$$10^m \cdot 10^n = 10^{m+n};$$

Հանգունորեն կարող ենք ստանալ նաև աստճանների բաժանման կանոնը: Օրինակ՝

$$\blacksquare 10^4 : 10^3 = 10000 : 1000 = 10 = 10^1 = 10^{4-3},$$

$$\blacksquare 10^2 : 10^{-3} = 100 : 0,001 = 100 : \frac{1}{1000} = 100000 = 10^5 = 10^{2-(-3)},$$

$$\blacksquare 10^{-4} : 10^{-2} = 0,0001 : 0,01 = 0,0001 : \frac{1}{100} = 0,0001 \cdot 100 = 0,01 = 10^{-2} = 10^{-4-(-2)},$$

որեմ՝

$$10^m : 10^n = 10^{m-n};$$

Թվերի աստիճանային ներկայացումը հարմար է նաև զումարման և հանման գործողություններ կատարելիս:

## Հարցեր և առաջադրանքներ

- Ի՞նչ է նշանակում  $10^n$  գրառումը. եթե ո-ը բնական թիվ է: Բերեք օրինակներ:
- Ի՞նչ է նշանակում  $10^n$  գրառումը, եթե ո-ը բացասական ամբողջ թիվ է: Բերեք օրինակներ:
- Շետևյալ թվերը ներկայացրեք  $\alpha \cdot 10^n$  տեսքով, որտեղ  $\alpha$ -ն տասնորդական կոտորակ է, ըստ որում,  $1 \leq \alpha < 10$ .

4200, 295 000 000, 0.0025, 0.000 000 125, 0.000 000 000 068:

- Շետևյալ թվերը ներկայացրեք տասնորդական տեսքով:  
 $2,5 \cdot 10^3, 1,42 \cdot 10^6, 5 \cdot 10^{-3}, 7,54 \cdot 10^{-6}$ :
- Սեկ տարին 31556925.9747 վայրկյան է: Կլորացրեք այս թիվը՝ պահելով երեք իմաստալից թվանշան. այնուհետև ներկայացրեք  $\alpha \cdot 10^n$  տեսքով ( $1 \leq \alpha < 10$ ):
- Երկրի միջին հեռավորությունը Արեգակից  $149\,597\,868$  կմ է: Այդ հեռավորությունը կոչվում է աստղագիտական միավոր (կրծան՝ ա.մ.): Աստղագիտական միավորը ներկայացրեք  $\alpha \cdot 10^n$  տեսքով! նախապես կլորացնելով այս թիվը՝ պահելով երեք իմաստալի թվանշան:
- Ծրատ մոլորակի հեռավորությունն Արեգակից  $1,52$  ա.մ է: Այդ հեռավորությունն արտահայտեք կիլոմետրերով և մետրերով:
- Լույսի արագությունը  $299\,792\,548$  մ/վ է: Կլորացրեք այդ թիվը՝ պահելով երեք իմաստալի թվանշան և ապա ներկայացրեք  $\alpha \cdot 10^n$  տեսքով:
- Զքածնի մոլեկուլի տրամագիծը  $0,000\,000\,023$  մ է: Ներկայացրեք այն  $\alpha \cdot 10^n$  տեսքով:

- Շետևյալ թվերը գրառեք  $\alpha \cdot 10^n$  տեսքով ( $1 \leq \alpha < 10$ )

0.002, 0.0025, 0.000325, 0.00000625:

- Կատարեք գործողությունները.

a. $10^6 \cdot 10^{12} \cdot 10^{-12}$	b. $\frac{10^5 \cdot 10}{10^3 \cdot 10^4}$	c. $2 \cdot 10^5 + 0,5 \cdot 10^6$
d. $10^{15} \cdot 10^{-2} \cdot 10^{-9}$	e. $\frac{10^{-9} \cdot 10^{15}}{10^3 \cdot 10^7}$	f. $0,4 \cdot 10^{10} - 0,4 \cdot 10^9$
g. $10^{-2} : 10^{-6}$	h. $\frac{3 \cdot 10^6 + 0,5 \cdot 10^6}{7 \cdot 10^3 + 0,35 \cdot 10^7}$	i. $3 \cdot 10^6 + 0,5 \cdot 10^6$
j. $10^2 \cdot 10^3 : 10^6$		

## ԱՏՈՄՆԵՐ ԵՎ ՍՈԼԵԿՈՒԼՆԵՐ

Նախորդ պարագրաֆում դիտարկված փորձերը հաստատում են այն ներադրությունը, որ նյութը բաղկացած է առանձին նասնիկներից, որոնց միջև կան ազատ տարածություններ: Այդ նասնիկները հին հույն գիտնական Դեմոկրիտեսն անվանել է ատոմներ (հունարեն «ատոմոս»՝ անբաժանելի բառից): Ըստ Դեմոկրիտեսի՝ նյութերի տարրերությունը հետևանք է այդ նյութերի ատոմների թվի, մեծորյան, ծևի և դասավորությունների տարրերության: Այսպիսվ՝ ատոմներն այն ամենափոքր «շինարարական

§37

տարրեր» կամ «այլուսիկներն» են, որոնցից կազմվում են բոլոր ֆիզիկական մարմնները: Ինչպես «Լեզոն» կոնստրուկտորական խաղի մի քանի տեսակի տարրերից կարելի է «հավաքել» տարրեր ձևեր և չափեր ունեցող առարկաներ (օրինակ՝ տեսակ, ավտոմեքենա, ծաղիկ և այլն), այնպես էլ տարրեր առողջության առաջանաւում են բնույթական մեջ հայտնի բոլոր մարմնները:

**Միևնույն տեսակի ատոմներից կազմված նյութն անվանում են տարր:** Տվյալ տարրի ատոմները միմյանցից ոչնչով չեն տարրերվում. նույնական են, տակայն տարրեր տարրերի ատոմներն իրարից տարրերվում են:


Օրինակ՝ նկ. 80-ում միևնատիկորեն պատկերված են ջրածնի (պայմանական նշանը՝ H), բրվածնի (O) և ածխածնի (C) ատոմները:

Ներկայում հայտնի է ավելի քան 110 տարր, որոնցից 90-ը հանդիպում է բնույթամ մեջ, մնացածները ստացվում են գիտահետազոտական լաբորատորիաներում:

Ատոմները, միավորվելով, կարող են կազմել կայուն բաղադրությամբ նոր մասնիկներ՝ բաղկացած երկու կամ ավելի ատոմնից: Այդ մասնիկներն անվանում են մոլեկուլներ (լատիներեն «մոլեկուլոս»՝ փոքրիկ զանգված բառերից): Մոլեկուլը կարող է կազմված լինել ինչպես միատեսակ, այնպես էլ տարրեր ատոմներից: Օրինակ՝ ջրածնի H<sub>2</sub> մոլեկուլը բաղկացած է ջրածնի երկու ատոմից, բրվածնի O<sub>2</sub> մոլեկուլը՝ բրվածնի երկու ատոմից, ջրի H<sub>2</sub>O մոլեկուլը՝ ջրածնի երկու և բրվածնի մեկ ատոմից, ածխաբրու զագի CO<sub>2</sub> մոլեկուլը՝ ածխածնի մեկ և բրվածնի երկու ատոմից (նկ. 81):


Մոլեկուլը նյութի այն փոքրագույն մասնիկն է, որն օժտված է նյութի քիմիական հատկություններով: Ինչպես ատոմները, միևնույն նյութի մոլեկուլները ոչնչով չեն տարրերվում իրարից. նույնական են:

Ատոմները և մոլեկուլներն ունեն չափազանց փոքր չափեր: Դրանց մասին պատկերացում կազմելու համար բնիքներ հետևյալ հայտնի համեմատությունը. Եթե խնձորը մեծացնենք այնքան անգամ, որ այն դառնա երկրագնդի չափ (գրեթե հարյուր միլիոն անգամ), ապա նոյնքան անգամ մեծացնելիս ատոմը կդառնա խնձորի չափ: Այսինքն՝ ատոմը խնձորից փոքր է մոտ հարյուր միլիոն անգամ: Եթե ընդունենք, որ խնձորի տրամագիծը մի քանի սանտիմետր է, ապա ատոմի տրամագիծը կլինի մոտ 1 մ : 100000000 = 10<sup>-8</sup> մ:



Նկ. 80

Ջրածնի, ածխածնի, և բրվածնի ատոմների սիմետրիկ պատկերները



Նկ. 81

Ջրածնի, բրվածնի, ջրի և ածխաբրու զագի մոլեկուլների սիմետրիկ պատկերները

Այս մեծությունն անվանում են անգստրեմ և նշանակում Ա տառով: Այսպիսով՝

$$1 \text{ Å} = 10^{-8} \text{ սմ} = 10^{-10} \text{ մ:}$$

Բոլոր ատոմների և մոլեկուլների չափերն անգստրեմների կարգի են: Օրինակ՝ ջրածնի մոլեկուլի տրամագիծը  $2,8 \text{ Å}$  է, բրվածնի մոլեկուլինը՝  $3,6 \text{ Å}$ , ջրինը՝  $3 \text{ Å}$ :

Փոքր չափերի պատճառով ատոմները և մոլեկուլները հնարավոր չեն տեսնել անգեն աշխարհ և անգամ սովորական մանրադիտակներով: Ներկայումս ստեղծված են հատուկ սարքեր՝ էլեկտրոնային և իոնային մանրադիտակներ, որոնց միջոցով ստացվում են բավականաչափ մեծ մոլեկուլների պատկերները:

Քանի որ ատոմների և մոլեկուլների չափերը շատ փոքր են, ապա անգամ շատ փոքր մարմնում դրանց թիվը հսկայական է: Օրինակ՝  $0,1 \text{ սմ}^3$  ծավալով ջրի կարիլը պարունակում է մոտ  $3 \cdot 10^{21}$  մոլեկուլ: Այս թվի մեծության մասին պատկերացում կազմելու համար ենթադրենք, որ այդ կարիլից յուրաքանչյուր վայրկանում հեռանում է 1 միլիարդ ( $10^9$ ) մոլեկուլ: Այս դեպքում կարիլը կազմավի  $3 \cdot 10^{21} : 10^9 \text{ Վ} = 3 \cdot 10^{12} \text{ Վ-ում}$  կամ մոտ հարյուր հազար ( $10^5$ ) տարվա ընթացքում:

Հասկանալի է, որ չափազանց փոքր մասնիկները չեն կարող ունենալ զգայի զանգվածներ, սակայն դրանց փորձության չափը դժվար է պատկերացնել: Իրոք, օրինակ, ջրածնի ատոմի զանգվածը  $1,67 \cdot 10^{-27}$  կգ է, ջրի մոլեկուլինը՝  $3 \cdot 10^{-26}$  կգ, բրվածնի ատոմինը՝  $2,7 \cdot 10^{-26}$  կգ: Մոլեկուլների զանգվածներն ընդունում են  $10^{-27}$ -ից մինչև  $10^{-25}$  կգ արժեքներ:

## Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչպե՞ս են անվանում նյութի մասնիկները:
2. Ո՞ր մասրը են անվանում տարր:
3. Ներկայումս քանի՞ տարր է հայտնի: Քանի՞ տարր կա բնության մեջ:
4. Ի՞նչ է մոլեկուլը:
5. Ինչպիսի՞ մոլեկուլներ են ձեզ հայտնի:
6. Ո՞ր մասնիկն է օժտված նյութի բոլոր հատկություններով:
7. Քանի՞ անգամ է ատոմը փոքր խնձորից:
8. Շաշվեր 1 լ ծավալով ջրում պարունակվող մոլեկուլների թիվը:
9. Շամարելով, որ ձեր բրամատը կազմված է  $5 \text{ Å}$  տրամագծով մասնիկներից, գնահատեք դրանց մոտավոր թիվը բրամատում:

Առօրյա կյանքում հանդիպում ենք բազմաթիվ երևոյթների, որոնք հաստատում են, որ նյութի մասնիկները՝ ատուները և մոլեկուլները, երբեք չդադարող շարժման մեջ են: Դ

Եթե սենյակում բացենք օծանելիքի սրվակը, ապա սենյակը որոշ ժամանակ անց կլցվի օծանելիքի բուրմոնքով: Այս փաստը կարելի է բացատրել, եթե ենթադրենք, որ օծանելիքը բաղկացած է մոլեկուլներից, որոնք շարժվում են:

Սրվակը բացելիս օծանելիքի մոլեկուլները դուրս են զալիս սրվակից և բախվում սենյակի օդի մոլեկուլներին: Այդ բախտմանը անկանոն են և պատահական բնույթի, որի հետևանքով օծանելիքի մոլեկուլներն անընդհատ փոխում են իրենց շարժման ուղղությունները՝ տարածվելով ամրող սենյակում: Այս է պատճառը, որ մի քանի րոպե անց օծանելիքի բուրմոնքը տարածվում է սենյակով մեկ:

Իսկ ինչո՞ւ է բուրմոնքը տարածվում սենյակում, եթե օծանելիքի մոլեկուլները շարժվում են անկանոն, բոլոր հնարավոր ուղղություններով, չե՞՞ս որ դրանք կարող են հայտնվել նաև այնտեղ, որտեղ օծանելիքով սրվակն է: Իհարկե, սենյակում կան մոլեկուլներ, որոնք շարժվում են դեպի սրվակը, սակայն սրվակի մոտակայքում օծանելիքի մոլեկուլների թիվը զգալիորեն գերազանցում է սրվակից հեռու գտնվող օծանելիքի մոլեկուլների թիվը: Ուստի նոյն ժամանակամիջոցում ավելի շատ մոլեկուլներ հեռանում են սրվակի շրջակայքից, քան վերադառնում այնտեղ: Ի վերջո օծանելիքի մոլեկուլներն ավելի ու ավելի են հեռանում սրվակից և, ի վերջո, լցում են ամրող սենյակը:

Այսպիսով՝ մոլեկուլների անկանոն, երբեք չդադարող շարժման հետևանքով օծանելիքի մոլեկուլները խառնվում են սենյակի օդին:


Կատարենք մի փորձ ևս: Զրով լցված անորի մեջ երկար ձագարով լցնենք ջրից մեծ խտություն ունեցող պղնձարջասախի կապտագույն լուծույթ (նկ. 82. ա): Քանի որ պղնձարջասալը ծանր է ջրից, ապա այն չի խառնվում ջրին: Չագարը զգուշորեն հեռացնելուց հետո կտեսնենք ջրի և պղնձարջասախի շերտերի միջև կտրուկ առ սահմանը (նկ. 82. բ): Մի քանի օր անց կտեսնենք, որ կտրուկ սահմանը չքացել է, պղնձարջասալը թափանցել է ջրի գրադերած տիրույթը՝ առաջանելով բաց կապույտ անցումային շերտ (նկ. 82. գ): Եվս մի

քանի օր անց անցումային շերտի շափերն ավելի կմեծանան (նկ. 82, դ), որը փաստում է ջրի վերին շերտերում պղնձարջասափի առկայությունը: Ի վերջո երկու երեք շարար անց կտևանենք, որ ամբողջ անորդ լցված է բացկապտագույն հեղուկով (նկ. 82, ե):

Այս փորձը ևս կարելի է բացատրելով, որ և ջուրը, և պղնձարջասափի լուծույթը բաղկացած են մոլեկուլներից, որոնք կատարում են անկանոն, պատահական շարժումներ: Պղնձարջասափի մոլեկուլները բափանցում են ջրի սյան ստորին շերտ, իսկ ջրի մոլեկուլները՝ պղնձարջասափի լուծույթի վերին շերտ, որի հետևանքով հեղուկների միջև սկզբնական կտրուկ սահմանը լրոցվում է: Քանի որ անորդ ստորին մասում պղնձարջասափի մոլեկուլների խտությունը միշտ ավելի մեծ է, քան վերին շերտերում, ապա ժամանակի ընթացքում ստորին շերտից ավելի շատ մոլեկուլներ են հեռանում, քան վերադառնում են հետ: Նոյն կերպ ջրի ավելի շատ մոլեկուլներ են անցնում պղնձարջասափի լուծույթի տիրույթ, քան այնտեղից վերադառնում: Ի վերջո տեղի է ունենում ջրի և պղնձարջասափի լուծույթի ինքնարերական խառնում:

### **Նյութերի ինքնարերական խառնման երևոյթը կոչվում է դիֆուզիա:**

Այսպիսով՝ դիֆուզիան մի նյութի մոլեկուլների ներքափանցումն է նյութ նյութի միջմոլեկուլային տարածությունները, որը տեղի է ունենում նյութերի մոլեկուլների անկանոն, պատահական շարժումների հետևանքով:




**Նկ. 82**

Պղնձարջասափի ջրային լուծույթի և ջրի դիֆուզիայի փորձի նախապարագումը (ա) և ընթացքը (բ. առ կտրուկ սահմանը, գ. անցումային շերտը, դ. անցումային շերտը երկու շարար անց, ե. փորձի վերջնական արդյունքը, անորդ լցված է համաստ լուծույթով)

Նկ.83

Դիֆուզիայի երևոյթը կապարի  
և ուլու միջև սենյակային  
շերմաստիճանում (ա. փորձի սկզբում,  
բ. 5 տարի անց): Անցումային շերտի  
լայնությունը մոտ 1 մմ է:



Փորձերից հայտնի է, որ գազերում դիֆուզիան ընթանում է շատ ավելի արագ, քան հեղուկներում: Դա հասկանալի է, քանի որ գազի մոլեկուլների միջև հեռավորությունները շատ ավելի մեծ են, քան հեղուկի մոլեկուլների միջև հեռավորությունները, ուստի գազերի փոխադարձ ներքափանցումն ավելի արագ է ընթանում, քան հեղուկներինը:

Դիֆուզիան ընթանում է նաև պինդ մարմիններում, սակայն շատ ավելի դանդաղ, քան հեղուկներում: Հայտնի փորձերից մեկում կապարի և ուլու լավ հոկված թիթեղները սենյակային ջերմաստիճանում ( $\approx 20^{\circ}\text{C}$ ) 5 տարվա ընթացքում մինչյանց մեջ են ներքափանցել 1 մմ (նկ. 83):

Ջերմաստիճանը բարձրացնելիս դիֆուզիայի երևոյթն ընթանում է ավելի արագ: Եթե պղնձարջասպի լուծույթի և ջրի դիֆուզիայի փորձը կատարենք ավելի բարձր ջերմաստիճանում, ապա կտևանենք, որ անորում հեղուկն ընդունում է նույն գույնը՝ արդեն մի քանի օրվա ընթացքում: Նույնպիսի վարք դիտվում է նաև պինդ մարմինների դիֆուզիայի արդյունում:

Դիֆուզիան կարևոր դեր է խաղում բնության մեջ: Դրա շնորհիվ են բույսերը հողից ստանում ջուր՝ նրանում լուծված սննդանութերով: Դիֆուզիայի շնորհիվ է մարդկանց և կենյանիների քոքերում քրվածինն օդից անցնում արյան մեջ և հասնում օրգաններին ու հյուսվածքներին:

Դիֆուզիայի երևոյթն օգտագործվում է նաև կենցաղում: Օրինակ՝ թթու դնելիս ջրում պարունակվող աղը և լուծված այլ նյութեր դիֆուզիայի հետևանքով ներքափանցում են քանչարեղենի (վարունգ, կաղամբ, լոլիկ և այլն) մեջ:

Դիֆուզիայի երևոյթն ունի նաև բազմապիսի կիրառություններ արտադրության մեջ:

## Հարցեր և առաջադրանքներ

1. Թվարկեք նյութի մասնիկների շարժումը հաստատող երևույթներ:
2. Ինչպե՞ս է բացատրվում օճանելիքի բուրմունքի տարածումը սենյակում:
3. Նկարագրեք ջրի և պղնձարջասափի ջրային լուծույթի միջև դիֆուզիայի փողքի ընթացքը:
4. Ինչպե՞ս է զննանում դիֆուզիան գագերում:
5. -Ինչպե՞ս է զննանում դիֆուզիան հեղուկներում և պինդ մարմիններում:
6. Ինչպե՞ս է չերմաստիճանի փոփոխությունն ազդում դիֆուզիայի արագության վրա:
8. Թվարկեք դիֆուզիայի երևույթի օրինակներ բնության մեջ և կենցաղում:



## Ետաքրքիր է իմանալ

### Դիֆուզիան օգնում է... կանխելու վտանգը

Բնական գազը, որ որպես վառելիք օգտագործվում է կենցաղում, չոնք ոչ ետք, ոչ գոյն: Այդ պատճեռով շատ դժվար է միանգամից «նկատել» կամ զգալ զագի արտահոսքը: Իսկ արտահոսքի ժամանակ դիֆուզիայի հետևանքով գազը տարածվում է ամբողջ բնակարանում: Գազի և օդի քանակների որոշակի հարաբերակցության դեպքում, երբ բնակարանը բռնը կողմերից փակ է (հատկապես ձռնանը), գոյանում է խառնորդ, որը կարող է պայթել, օրինակ՝ վառվող լուսից: Գազը կարող է առաջացնել նաև բռնավորում:

Գազի արտահոսքը բնակարանում «նկատելու» նպատակով զագաբաշխման կայաններում զազր նախապես խառնում են սուր, ահած հոտ ունեցող նյութերի հետ: Դրա շնորհիվ մարդուկ գազի հոտը կարող են զգալ նոյնական չնշն քանակի դեպքում: Այս նախազգուշական միջոցը հնարավորություն է տալիս անմիջապես զգալ զազի առկայությունը բնակարանում:

ՏՈԼԵԿՈՒԼՏԵՐԻ ՓՈԽԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

Ինչպես արդեն զիտենք, նյութի մասնիկները՝ ատոմները, մոլեկուլները, գտնվում են իրարից որոշակի հեռավորությունների վրա և, բացի այդ, կատարում են երեք չդադարող, անկանոն շարժում: Այս դեպքում հարց է ծագում՝ ինչո՞ւ պինդ մարմինները և հեղուկները չեն բաժանվում առանձին մասնիկների, ի՞նչն է ստիպում դրանց մնալ իրար մոտ:

Հենց միայն պինդ մարմինների և հեղուկների գոյության փաստից հետևում է, որ ատոմների, մոլեկուլների միջև գործում են ձգողության ուժեր: Այդ ուժերն են պահում երկարի

Տ39

ատոմներին երկարի կտորում, ջրի մոլեկուլներին՝ սառույցի կտորում կամ ջրի կարիլում:

Զգողության ուժերը մեծ են պինդ մարմիններում, որի շնորհիվ էլ պինդ մարմինն ունի որոշակի ձև և դիմադրում է դրա փոփոխմանը:


Ատոմների կամ մոլեկուլների միջև գործող ձգողության ուժերը շատ փոքր են, սակայն առօրյա լյաճքում հանդիպող մարմիններում դրանց թիվը հսկայական է, ուստի ձգողության ուժերը հասնում են շատ մեծ արժեքների:

Մասնիկների փոխադարձ ձգողության ուժերը կախված են մասնիկների տեսակից: Օրինակ՝ երկար լարը շատ ավելի դժվար է ձգելով կտրել, քան նույն հասուրությանը պղնձել լարը. նշանակում է՝ երկարի մասնիկներն իրար ձգում են ավելի ուժեր, քան պղնձի մասնիկները: Զգողության ուժերը զգալի են մասնիկների չափերին մոտ հեռավորությունների վրա և արագորեն նվազում են, եթե մասնիկները հեռանում են իրարից:

Կատարենք փորձ: Եթե իրար սեղմնենք կապարի երկու հարք կտոր և հետո դադարենք սեղմել, ապա կտեսնենք, որ կտորներն իրար չեն կպել (նկ. 84. a): Սակայն, եթե կապարի կտորները նախապես լավ հղկենք, հետո կիպ սեղմնենք իրար, ապա դրանք իրար հպված կմնան նաև սեղմումը դադարեցնելուց հետո (նկ. 84. p). Դեռ ավելին, եթե մի ոչ մեծ բեռ կախենք սոսրին կտորից, ապա այն չի պոկվի վերևի կտորից (նկ. 84. q): Այս փորձում լավ հղկման դերն այն է, որ կապարի տարրեր կտորների մակերևութային շերտերում գտնվող ավելի մեծ թվով ատոմներ են մոտենում իրար: Դրա հետևանքով կապարի կտորների միջև առաջանում է զգալի ձգողության ուժ (նկ. 84. r):

Նկ. 84.

Կապարի հղկմած կտորների միջև գործում են զգալի ձգողության ուժեր




Եթե մասնիկները միայն ծգեին իրար, ապա բոլոր մարմիններում մոլեկուլները պետք է ամուր կաշեին մեկը մյուսին և նրանց միջև արանքներ չեն լինի: Դա տեղի չի ունենում, քանի որ մոլեկուլների միջև գործում են նաև վանդուրյան ուժեր: Վանդուրյան ուժերն ընդունում են մեծ արժեքներ, երբ մոլեկուլների միջև հեռավորությունը փոքրանում է: Վանդուրյան ուժերի գոյությունն ապացուցում են առօրյա կյանքի հայտնի բազմաթիվ երևոյթներ: Օրինակ՝ ռետիններ գնդակը սեղմելու համար որոշակի ուժ ենք գործադրում՝ ստիպելով գնդակի մասնիկներին մոտենալ իրար, որի հետևանքով մասնիկները վանում են միմյանց: Ուստի եթե դադարենք ուժ գործադրել սեղմակած գնդակի վրա, ապա մասնիկների միջև գործող վանդուրյան ուժերի ազդեցությամբ այն կրնդունի իր նախկին ձևը:

Այսպիսով՝ կարող ենք եզրակացնել, որ նյութի մասնիկները փոխազդում են և ճգողության, և վանդուրյան ուժերով: Համեմատարար մեծ՝ մասնիկների չափերին մոտ հեռավորությունների վրա մասնիկներն իրար ծգում են, իսկ հեռավորության փոքրացմանը գուգճեաբայ՝ իրար վանում: Ասվածից հետևում է, որ նյութի մասնիկների միջև կան որոշակի հեռավորություններ, երբ մասնիկներն իրար ոչ ծգում են, ոչ վանում: Հենց այդ հեռավորություններով է որոշվում մարմնի ծավալը (հեղուկներում) և ձևը (պինդ մարմիններում):

Մոլեկուլների փոխադարձ ճգողության և վանդուրյան դրսորումներից մեկն էլ քրծման երևոյթն է:

Եթե մաքուր ապակե թիթեղի վրա մի կարիլ ջուր լցնենք, ապա այն կտարածվի ապակու մակերևույթին (նկ. 85. *a*), սակայն եթե ապակին նախօրոք պատենք յուղի բարակ շերտով, ապա ջրի կարիլը կրնդունի գրեթե գնդի ձև (նկ. 85. *p*):

Ինչո՞ւ է պայմանավորված դիտվող երևոյթը: Բանն այն է, որ ջրի մոլեկուլները փոխազդում են ինչպես միմյանց, այնպես էլ ապակու մոլեկուլների հետ: Ինչպես արդեն գիտենք, այդ ուժը կախված է փոխազդող մոլեկուլների տեսակից: Ջրի կարիլը տարածվում է մաքուր ապակու մակերևույթով, քանի որ ջրի մոլեկուլներն ավելի ուժեղ են ծգում ապակու մոլեկուլները, քան իրար: Յուղուված ապակու դեպքում ջրի մոլեկուլները միմյանց ծգում են ավելի մեծ ուժերով, քան յուղի մոլեկուլները, ուստի ջրի կարիլը ծգուում է ընդունել գնդի ձև (իհարկե, կարիլի ձևի վրա ազդում է նաև Երկրի ճգողությունը):




Նկ. 85

Զորք քրծում է մաքուր ապակին (*a*), սակայն չի քրծում յուղի բարակ շերտով պատված ապակած (*p*)

Ակ. 86

Չորս  
բարձրանում է  
ապակե  
մազանորում (ա),  
իսկ սնդիկն  
իջնում է (բ)



Առաջին դեպքում ընդունված է ասել, որ ջուրը թրցում է ապակին, իսկ երկրորդ դեպքում՝ այն չի թրցում յուղոտ ապակին: Թրջման և չթրջման երևույթները ընորոշ են բոլոր հեղուկներին: Եթե տվյալ հեղուկի և պինդ մարմնի մոլեկուլների փոխադարձ ձգողության ուժերը գերազանցում են այն ուժերը, որով իրար ձգում են միայն հեղուկի մոլեկուլները, ապա հեղուկը թրցում է պինդ մարմինը՝ բարակ շերտով (քաղանքով) պատերով այն: Օրինակ՝ սնդիկը թրցում է ոսկին և սինկը: Հակառակ դեպքում հեղուկը պինդ մարմնի մակերևույթին առաջանում է կարիլներ, ինչպես, օրինակ, սնդիկը ապակու կամ բուջի մակերևույթին:

Թրջման և չթրջման երևույթները շատ են տարածված բնության մեջ և կենցաղում: Այսպիս՝ ջրով թռչունների փետուրները պատվում են հասող գեղձի արտազատած յուղով: Փետուրները չեն թրցվում, և դրանց տակ գտնվող աղվամազը չոր է մնում, ուստի սառը ջրում թռչունը չի մրսում և լողում է ջրի մակերևույթին:

Թրջման երևույթով է բացատրվում սոսնձումը, մարմնի շորանակը սրբիչով՝ սրբելիս և այլն:

Թրջման և չթրջման երևույթների դրսւորումներից մեկն էլ մազականորթյան երևույթն է, որը դիտվում է բարակ և միջիմետրից պակաս տրամագծով խողովակներում՝ մազանորթներում կամ մազական խողովակներում:

Եթե ջրի մեջ իջեցնենք ապակե մազանոր, ապա կտևանենք, որ նրանում ջրի մակարդակն ավելի բարձր է, քան անորում, ընդ որում, որքան փոքր է մազանորի տրամագիծը, այնքան բարձր է նրանում ջրի մակարդակը (Ակ. 86. ա):

Ջրջող հեղուկի դեպքում մազանորում հեղուկի մակարդակն ավելի ցածր է, քան անորում: Օրինակ՝ եթե ջրի փոխարժեն անորում լցնենք սնդիկ, ապա նրա մեջ իջեցված ապակե մազանորում սնդիկի մակարդակը կիշճի (Ակ. 86. բ):

Մազականության երևոյթը շատ տարածված է բնության մեջ: Բույսերն օժտված են մազական խողովակներով, որոնցով ջուրը և նրանում լուծված սննդանութերը հասնում են բույսի բույրը մասերին: Մազականության շնորհիվ տափակացված հողում առաջացած մազական խողովակներով ջուրը բարձրանում է դեպի մակերևույթ և գոլորշիանում: Ուստի խոնավությունը հողում պահելու համար հողը վարում կամ փորում են՝ քայրայելով մազական խողովակների ցանցը:

## Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչո՞ւ հեղուկները և պինդ մարմինները չեն բաժանվում առանձին մասնիկների:
2. Ինչի՞ց է կախված մասնիկների միջև գործող ձգողության ուժը:
3. Ինչպե՞ս են փոփոխվում ձգողության ուժերը՝ կախված մասնիկների միջև հեռավորությունից:
4. Ի՞նչ փաստերից է հետևում մասնիկների միջև վանողության ուժերի գոյությունը:
5. Ինչպե՞ս են փոփոխվում վանողության ուժերը՝ կախված մասնիկների միջև հեռավորությունից:
6. Շնարավո՞ր է, որ նյութի մասնիկները չփոխազդեն միմյանց հետ (այսինքն՝ ոչ ձգեն, ոչ վանեն իրար):
7. Ո՞րն է բրծման կամ չբրծման երևոյթի բացատրությունը:
8. Թվարկեք բրծման երևոյթի մի քանի դրսնորում:
9. Ի՞նչ է մազականությունը:
10. Բերեք բնության մեջ մազականության դրսնորման որինակներ:

## ՍՈԼԵԿՈՒԼՍԵՐԻ

### ՔԱՂԱՔԱՅԻ ՏԱՐԺԱՆԱԿ ԱՐԱԳՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԱՐՄԻՆ ԶԵՐՄԱՍԻՑԱՆԸ

§ 40

Առօրյա կյանքից գիտենք, որ ջուրը հովացնելու համար նրան սառը ջուր են խառնում. ստացված խառնուրդն ավելի սառն է, քան տաք ջուրը, բայց ավելի տաք է, քան ավելացված սառը ջուրը: Այսինքն՝ տաք և սառը ջրերն իրար խառնելիս տաք ջուրը հովացնում է, իսկ սառը ջուրը՝ տաքանում: Կարող ենք կրկնել փորձը՝ տաք ջրի մեջ ցցելով սենյակում գտնվող պողպատե գնդիկը: Որոշ ժամանակ անց կհանովենք, որ անորի ջուրը հովացել է, իսկ պողպատե գնդիկն ավելի տաք է, քան մինչև ջրի մեջ ցցելը: Կատարենք մի փորձ ևս: Տաք օդով լցված, բարակ պատերով գնդակն իջեցնենք սառը ջրով լցված անորի մեջ: Որոշ ժամանակ անց կտեսնենք, որ գնդակը սմբել է, իսկ անորի ջուրը՝ փոքր-ինչ տաքացել:

Նշված փորձերից հետևում է, որ տաք և սառը մարմիններ (ջուրը՝ ջրի հետ, ջուրը՝ պողպատե գնդիկի հետ, ջուրը՝ տաք օդի հետ) միմյանց հակելիս տաք մարմինը միշտ հովանում է, իսկ սառը մարմինը՝ տաքանում:

Մարմինների տաքացվածության հատկությունը բնութագում ենք «Չերմաստիճան» կոչվող մեծությամբ: Որքան տաք է մարմինը, այնքան բարձր է նրա ջերմաստիճանը:

Քանի որ ջերմաստիճանը բնորոշում է մարմնի վիճակը, ապա այս պետք է կապված լինի մարմնի մասնիկների վարքի հետ: Որոնելի կապը գտնելու համար նորից դիմենք մեզ հայտնի որոշ դիտարկումների:

Գարնանն անձրևից հետո ջրափուտերում հավաքված ջուրը բավական երկար ժամանակ է մնում, իսկ ամռանը, երբ օդի ջերմաստիճանը բարձր է, ջրափուտերն արագ վերանում են: Ջրափուտերի չորանալը ջրի գոլորշիացման հետևանք է, այսինքն՝ ջրի մոլեկուլները ջրից անցնում են օդի մեջ: Չերմաստիճանը բարձրացնելիս ջրի ավելի արագ գոլորշիանալը կարելի է բացատրել, եթե ենթադրենք, որ ջերմաստիճանի բարձրացման հետ մեծանում է ջրի մոլեկուլների քառային շարժման արագությունը:

Դիֆուզիայի երևոյթի ուսումնասիրելիս պարզեցինք, որ ջերմաստիճանը բարձրացնելիս նյութերի ինքնարերական խառնվելն ավելի արագ է կատարվում և զագերում, և հեղուկներում, և այնու մարմիններում: Բայց նշվածներից կան բազմաթիվ այլ երևոյթներ ևս, որոնք ավելի արագ են ընթանում ջերմաստիճանը բարձրացնելիս:

Այդ բոլոր երևոյթները բացատրվում են, եթե ենթադրենք, որ ջերմաստիճանի բարձրացման հետ մեծանում են նյութի մասնիկների անկանոն, քառային շարժման արագությունները:

**Մարմնի մասնիկների՝ ատոմների, մոլեկուլների անկանոն, քառային շարժումներ** անկանում են ջերմային շարժում: Որքան բարձր է մարմնի ջերմաստիճանը, այնքան մեծ են մարմնի մասնիկների ջերմային շարժման արագությունները:

Ինչպիսի՞ մեծություններ ունեն մասնիկների ջերմային շարժման արագությունները: Օրինակ՝ սենյակային ջերմաստիճանում ջրածնի մոլեկուլների միջին արագությունը մոտ 2000 մ/վ է, թթվածնինը՝ մոտ 500 մ/վ: Քանի որ մոլեկուլների արագություններն այսքան մեծ են, ապա սենյակի մի ծայ-

թիս մյուսը հասնելու համար պահանջվում է մի քանի հարյուրորդական վայրկյան ժամանակ, այնինչ դիֆուզիան գագերում տևում է տասնյակ վայրկյաններ: Բանն այն է, որ մոլեկուլները շարժվում են ազատ, բախվում են միմյանց, և քանի որ նրանց թիվը հսկայական է, ապա որոշակի ուղղությամբ նրանք չնշին չափով են տեղափոխվում:

## Հարցեր և առաջադրանքներ

1. Ի՞նչ է կատարվում տաք և սառը մարմիններն իրար հպելիս:
2. Ո՞ր ֆիզիկական մեծությունն է բնորոշում մարմնի տաքացվածության աստիճանը:
3. Ի՞նչ կապ կա մոլեկուլների անկանոն շարժման արագությունների և մարմնի ջերմաստիճանի միջև:
4. Ի՞նչ է ջերմային շարժումը:
5. Ինչու՞ է գագերում դիֆուզիան տևում տասնյակ վայրկյաններ, եթե մոլեկուլների ջերմային շարժման արագությունները հարյուրավոր մ/վ կարգի մեծություններ են:
6. Զեր ընկերոց հետ կատարեք հետևյալ փորձը:

Կերցրեք վայրկենացույց լսարով ժամացույց, չափերից, օժանելիքի սրվակ և կանգնեք սենյակի տարրեր անկյուններում:

Զեր ընկերոց թող քացի սրվակը՝ միաժամանակ նշելով ժամանակը: Դուք նշեք այն ժամանակը, եթե զգաք օժանելիքի հորոց: Չափեք ձեր և ձեր ընկերոց հեռավորությունը և որոշեք դիֆուզիայի արագությունը: (Փորձը կրկնեք ոչ պակաս քան երեք անգամ և գտեք դիֆուզիայի միջին արագությունը:)

Դիֆուզիայի արագությունը համեմատեք գազի օրինակ՝ թթվածնի մոլեկուլների ջերմային շարժման միջին արագության հետ: Ինչպես կարող եք բացատրել արագությունների այդ տարբերությունը:

§41

## ԶԵՐՄԱՉԱՓ: ԶԵՐՄԱՍԻՑԱՆԱՅԻՆ ՍԱՆԴՈՎԱԿ

Զնուանք տաք սենյակից փողոց դուրս գալիս թվում է, թե փողոցում չուրտ չէ: Սակայն փողոցում համեմատարար երկար գտնվողին եղանակը չուրտ է թվում:

Եթե ձեռքը հպենք ծառին և նրա մոտ գտնվող մետաղեսյանը, ապա այն կրվա շատ ավելի սառը, քան ծառը, չնայած և ծառը, և մետաղը սյունը գտնվում են նույն ջերմաստիճանում (նույն պայմաններում): Այս, ինչպես նաև բազմաթիվ այլ օրինակներ համոզում են, որ մեր զգայարաններով ջերմաստիճանի գնահատումը շատ մոտավոր է:

Զերմաստիճանը, ինչպես և յուրաքանչյուր ֆիզիկական մեծություն, կարելի է որոշել չափումների միջոցով: Առավել տարածված հեղուկային ջերմաչափների գործողության հիմքում հեղուկների ջերմային ընդարձակման երևույթն է:



մազական  
խողովակ

պահեստարան

Նկ. 87

Հեղուկային ջերմաչափի հիմնական մասը՝ պահեստարանը և նրան միացած մազական խողովակը

Լարորատորիաներում և բժշկության մեջ հիմնականում օգտագործվում են սնդիկային ջերմաչափներ, կենցաղում օգտագործվող ջերմաչափներում որպես հեղուկ օգտագործում են գունավորված սպիրտ կամ այլ՝ առողջության համար անվտանգ հեղուկներ:

Հեղուկային ջերմաչափները կարող են աշխատել միայն ջերմաստիճանների որոշակի տիրույթում, քանի որ ցածր ջերմաստիճաններում հեղուկը պնդանում է, իսկ բարձր ջերմաստիճաններում՝ գոլորշիանում: Օրինակ՝ սնդիկային ջերմաչափի համար այդ տիրույթը՝  $-38^{\circ}\text{C}$ -ից  $260^{\circ}\text{C}$  ջերմաստիճանների միջև է: Սպիրտային ջերմաչափի համար աշխատաճրային տիրույթը ընդգրկում է  $-112^{\circ}\text{C}$ -ից  $78^{\circ}\text{C}$  ջերմաստիճանները, ուստի այն կարելի է օգտագործել Երկրի ցանկացած վայրում ջերմաստիճանը չափելու համար:

Հեղուկային ջերմաչափը բաղկացած է հեղուկով լցված ապակե պահեստարանից և նրան միացած մազական խողովակից (նկ. 87): Պահեստարանում հեղուկի ծավալի անզամ ոչ մեծ փոփոխությունը բերում է մազական խողովակում հեղուկի սյան բարձրության զգալի փոփոխության, ընդ որում, որքան բարձր է հեղուկի ջերմաստիճանը, այնքան բարձր է հեղուկի սյունը:

Ջերմաստիճանը չափելու համար կարող են օգտագործվել նաև մարմինների այլ հատկություններ, որոնք կախված են ջերմաստիճանից: Այսպես՝ ներկայումս ստեղծվել են ջերմաչափներ, որոնցում օգտագործվող հեղուկը բյուրեղների գույնը ջերմաստիճանից կախված փոփոխվում է: Հայտնի է, որ շիկացած մետաղի գույնը նույնպես կախված է ջերմաստիճանից: Կան հատուկ ջերմաչափներ՝ օպտիկական պիրումներեր, որոնց օգնությամբ որոշվում են շիկացած մետաղների ջերմաստիճանը: Արեգակի, ինչպես նաև շատ ավելի հեռավոր աստղերի ջերմաստիճանները կարելի են որոշել՝ ենթով այն փաստից, որ ինչքան պայծառ է աստղը, այնքան բարձր է նրա ջերմաստիճանը:

Ջերմաստիճանը չափելու համար ջերմաչափներն ունեն ջերմաստիճանային սանդղակ: Լայնորեն տարածված է Յելսիուսի սանդղակը: Այս սանդղակում որպես զրո աստիճան ( $0^{\circ}\text{C}$ ) ընդունված է հալվող սառույցի ջերմաստիճանը, իսկ որպես հարյուր աստիճան ( $100^{\circ}\text{C}$ )՝ եռացող ջրի ջերմաստիճանը: Որպես յելսիուսի սանդղակի մեկ աստիճան ( $1^{\circ}\text{C}$ ) ընտրված է նշված ջերմաստիճանային տիրույթի  $1/100$  մասը:

ԱՄՆ-ում, Անգլիայում և մի շարք այլ երկրներում տարածված ջերմաստիճանային սանդղակում, որը հայտնի է

Որպես Ֆարենհայտի սանդղակ, սառույցի հալմանը համապատասխանում է 32 աստիճանը ( $32^{\circ}\text{F}$ ), իսկ ջրի եռմանը՝ 212 աստիճանը ( $212^{\circ}\text{F}$ ): Որպես Ֆարենհայտի սանդղակի մեկ աստիճան ( $1^{\circ}\text{F}$ ) ընտրված է նշված ջերմաստիճանային տիրույթի  $1/180$  մասը (նկ. 88): Այսպիսով՝ Ցելսիուսի սանդղակի  $100^{\circ}\text{C}$ -ին համապատասխանում է  $180^{\circ}\text{F}$ , այսինքն՝

$$1^{\circ}\text{F} = \frac{100}{180}^{\circ}\text{C} = \frac{5}{9}^{\circ}\text{C}, \quad 1^{\circ}\text{C} = \frac{9}{5}^{\circ}\text{F}:$$


Նոյն մարմնի ջերմաստիճանը կարելի է չափել տարբեր սանդղակներ ունեցող ջերմաչափներով, ուստի հասկանալի է, որ դրանց պայմանները կաված են միմյանց հետ:

Ստանանք Ցելսիուսի և Ֆարենհայտի սանդղակների կապը: Դիցուք ջերմաստիճանը  $20^{\circ}\text{C}$  է: Քանի որ  $0^{\circ}\text{C}$  ջերմաստիճանը համապատասխանում է  $32^{\circ}\text{F}$ -ին, իսկ  $1^{\circ}\text{C} = (9/5)^{\circ}\text{F}$ , ապա՝

$$20^{\circ}\text{C} = 32^{\circ}\text{F} + 20 \cdot \frac{9}{5}^{\circ}\text{F} = 68^{\circ}\text{F},$$

Նկ. 88

Ցելսիուսի և  
Ֆարենհայտի  
սանդղակների  
համապատասխան



այսինքն՝ Ֆարենհայտի սանդղակով տրվող  $t_F$  ջերմաստիճանը կապված է Ցելսիուսի սանդղակով տրվող  $t_C$  ջերմաստիճանի հետ:

$$t_F = 32 + \frac{9}{5} t_C$$

բանաձևով: Այս բանաձևից  $t_C$ -ն կարելի է արտահայտել  $t_F$ -ի միջոցով՝

$$t_C = \frac{5}{9}(t_F - 32):$$

Դիտարկենք մեկ օրինակ: Հայտնի է, որ առողջ մարդու մարմնի ջերմաստիճանը  $36,6^{\circ}\text{C}$  է: Ըստ Ֆարենհայտի սանդղակի՝ այն հավասար կլինի՝

$$t_F = 32 + \frac{9}{5} \cdot 36,6 = 98^{\circ}\text{F}:$$

Գիտության մեջ տարածված է բացարձակ ջերմաստիճանային սանդղակը, որն առաջարկել է անզիայի գիտնական լորդ Կելվինը (ընդունված է նաև Կելվինի սանդղակ անվանումը): Ի տարրերություն Ցելսիուսի և Ֆարենհայտի ջերմաստիճանային սանդղակների, որոնք ներմուծվել են փորձերի հիման վրա, Կելվինի սանդղակը հիմնված է մոլեկուլների քատային շարժման մասին պատկերացումների վրա: Բացարձակ ջերմաստիճանային սանդղակին կծանոքանաք ավագ դպրոցի ֆիզիկայի դասընթացում:

## Հարցեր և առաջադրանքներ

1. Կարելի՞ է արդյոք մեր գգայարանների սգմությամբ միշտ գնահատել մարմնի ջերմաստիճանը:
2. Ինչպես է կոչվում մարմնի ջերմաստիճանը՝ չափող սարքը:
3. Ինչպիսի՞ ջերմաչափներ գիտեք:
4. Ի՞նչ ֆիզիկական երևույթի վրա է հիմնված սնդիկային ջերմաչափի գործողությունը:
5. Ինչպիսի՞ ջերմաչափով են չափում հալած պողպատի ջերմաստիճանը: Ի՞նչ ֆիզիկական երևույթի վրա է հիմնված այդ ջերմաչափի գործողությունը:
6. Ինչպես են չափում հեռավոր աստղերի ջերմաստիճանը:
7. Ի՞նչ ջերմաստիճանային սանդղակներ գիտեք:
8. Ո՞ր ջերմաստիճաններն են ընտրված որպես Ցելսիուսի սանդղակի  $0^{\circ}\text{C}$  և  $100^{\circ}\text{C}$ :
9. Որո՞նք են սառույցի հալման և ջրի եռման ջերմաստիճանները՝ ըստ Ֆարենհայտի սանդղակի:
10. Ի՞նչ կապ կա Ցելսիուսի և Ֆարենհայտի սանդղակների մեկ աստիճանների միջև:
11. Ինչո՞ք է Կելվինի սանդղակը տարրերովում Ցելսիուսի և Ֆարենհայտի սանդղակներից:

## Շնորհիր է իմանալ

### Բնության մեջ և տեխնիկայում հանդիպող ջերմաստիճաններ ( $^{\circ}\text{C}$ )

Արեգակի մակերևույթի ջերմաստիճանը	6000
Հրաբխից դուրս հռտադիր լավայի ջերմաստիճանը	1100-1200
Ներքին այրման շարժիչում այրման արզափթանքի ջերմաստիճանը	2100
Սպիրտայրոցի բոցի ջերմաստիճանը	1000
Արուսյակի միջին ջերմաստիճանը	470
3200 կմ/ժ արագությամբ բռչող ինքնարթիղ ֆյուզելյաժի (իրանի)	
մետաղական երեսվածքի ջերմաստիճանը	230-260
Երկրանդի վրա ամենարարձր ջերմաստիճանը (Հյուսիսային Աֆրիկա)	58
Հրամի միջին ջերմաստիճանը	-60
Երկրագնդի վրա ամենացածր ջերմաստիճանը (Անտարկտիդա)	-88
Հեղուկ ազոտի ջերմաստիճանը	-196

### Կարնասունների և բոչունների մարմնի ջերմաստիճանները ( $^{\circ}\text{C}$ )

Զի	38	Շագար	38,5-39
Կով	38,5-39,5	Շուն	38-39
Հորի	39-40	Հավ, հնդկահավ	41
Խող	38,5-40	Բաղ, սագ	41,5
Ոչխար	38-40	Աղավնի	41-42

### Խնդիրների լուծման օրինակներ

1. Հայտնի  $t$ , որ  $0,1 \text{ մ}^3$  ծավալով ջրում պարունակվում է  $3 \cdot 10^{21}$  մոլեկուլ: Ի՞նչ երկարություն կունենա  $1 \text{ L}$  ծավալով ջրում պարունակվող մոլեկուլներից կազմված շարքը: Ընդունեք, որ ջրի մոլեկուլը  $3 \text{ \AA}$  տրամագծով գունդ է:

$$\begin{aligned} V_1 &= 0,1 \text{ մ}^3 \\ N_1 &= 3 \cdot 10^{21} \\ V_2 &= 1 \text{ L} \\ D &= 3 \text{ \AA} \\ I &=? \end{aligned}$$

Լուծում:  $V_2$  ծավալով ջրում մոլեկուլների թիվը՝

$$N_2 = \frac{V_2}{V_1} N_1:$$

Այս մեծությունը բազմապատկերով մեկ մոլեկուլի տրամագծով՝ կատանանք  $N_2$  մոլեկուլներից կազմված շարքի երկարությունը՝

$$l = N_2 D = \frac{V_2}{V_1} N_1 D:$$

Նկատի ունենալով, որ  $V_1 = 0,1 \text{ մ}^3 = 10^{-1} \text{ մ}^3$ ,  $V_2 = 1 \text{ L} = 1000 \text{ մ}^3 = 10^3 \text{ մ}^3$  և  $D = 3 \text{ \AA} = 3 \cdot 10^{-8} \text{ մ}$ , կատանանք՝

$$l = \frac{10^3}{10^{-1}} 3 \cdot 10^{21} \cdot 3 \cdot 10^{-8} \text{ մ} = 9 \cdot 10^{17} \text{ մ} = 9 \cdot 10^{15} \text{ մ} = 9 \cdot 10^{12} \text{ կմ:}$$

Այս թվի մեծությունը պատկերացնելու համար նշենք, որ Երկիր-Արեգակ հեռավորությունը ընդամենը 150 միլիոն ( $1,5 \cdot 10^8$ ) կմ է, այսինքն՝ 60 000 անգամ փոքր է մոլեկուլների շարքի երկարությունից:

Պատասխան՝  $9 \cdot 10^{12} \text{ կմ:}$

2. Տեղի ժամանակ հիվանդի ջերմաստիճանը  $40^{\circ}\text{C}$  է: Արտահայտել այն ըստ Ֆարենհայտի սանդղակի:

$$\frac{t_{\text{C}} = 104^{\circ}\text{F}}{t_{\text{F}} = ?} \quad \begin{array}{l} \text{Լուծում: } \text{Համաձայն } 32^{\circ}\text{F} \text{ և } 0^{\circ}\text{C} \text{ փակագիծի } \\ \text{սանդղակների } \text{կապի՝ } t_{\text{F}} = 32 + \frac{9}{5} t_{\text{C}}, \text{ հետևաբար՝} \end{array}$$

$$t_{\text{F}} = \left(32 + \frac{9}{5} 40\right)^{\circ}\text{F} = 104^{\circ}\text{F}:$$

Պատասխան՝  $104^{\circ}\text{F}$ :

3.  $0^{\circ}\text{F}$  ջերմաստիճանն ունի նույն արժեքը և՝ Յելսիուսի, և՝ Ֆարենհայտի ջերմաստիճանային սանդղակներում:

**Լուծում:** Եթե ջերմաստիճանն ընդունում է նոյն թվային արժեքը՝  $t_{\text{F}} = x^{\circ}\text{F}$  և  $t_{\text{C}} = x^{\circ}\text{C}$ , ապա, օգտվելով Յելսիուսի և Ֆարենհայտի սանդղակների միջև կապից, կտանամբ հավասարում չ մեծորյան համար՝

$$x = \frac{5}{9}x - \frac{160}{9} \quad \text{կամ} \quad \frac{4}{9}x = - \frac{160}{9}, \quad x = - 40,$$

այսինքն՝  $t_{\text{F}} = -40^{\circ}\text{F}$ ,  $t_{\text{C}} = -40^{\circ}\text{C}$ :

Պատասխան՝  $t_{\text{F}} = t_{\text{C}} = 40^{\circ}$ :



## §42

### ՆՅՈՒԹԻ ԱԳՐԵԳԱՏԱՅԻՆ ՎԻՃԱԿՆԵՐԸ: ԳԱԶԵՐԻ, ՌԵԴՈՒԿՍԵՐԻ ԵՎ ՊԻՆԴ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Մեր շրջապատում հանդիպում ենք պինդ մարմինների (օրինակ՝ քար, ծառ, մերենան և այլն), հեղուկների (ջուր, յուղ, նավթ և այլն) և զագերի (օդ, որը տարրեր զագերի խառնուրդ է, ջրային գոլորշի և այլն): Նշանակում է՝ բնուրյան մեջ նյութերը լինում են պինդ, հեղուկ և գազային վիճակներում: Սակայն տարրեր վիճակներում կարող է գտնվել նաև նոյն նյութը: Օրինակ՝ ջուրը կարող է գտնվել պինդ վիճակում (սառույց), հեղուկ վիճակում (ջուր) և գազային վիճակում (ջրային գոլորշի): Երկարի կտորը սովորական պայմաններում պինդ վիճակում է, սակայն ծովարանում,  $1535^{\circ}\text{C}$ -ից բարձր ջերմաստիճանում, այն վերածվում է հեղուկի, որի մակերևույթից վեր անկանոն շարժվում են երկարի ատոմները, որոնք առաջանում են երկարի գոլորշին:

Սովորական պայմաններում ջրածինը գազային վիճակում է: Սակայն եթե ջրածինը սառեցնենք  $-253^{\circ}\text{C}$ -ից ցածր, այն կվերածվի հեղուկի, իսկ  $-259^{\circ}\text{C}$ -ից ցածր ջերմաստիճանում՝ պինդ մարմնի:

Այսպիսով՝ բոլոր նյութերը, կախված պայմաններից, կարող են գտնվել պինդ, հեղուկ և գազային վիճակներում, որոնք



ընդունված է անվանել ազրեգատային վիճակներ: Տարբեր ազրեգատային վիճակներում գտնվող նյութերն ունեն էապես տարրեր հատկություններ:

**Պինդ մարմինն** ունի որոշակի ձև և ծավալ: Պինդ մարմինի ձևը, ինչպես նաև ծավալը փոփոխելու համար զգալի ջանք պետք է գործադրել: Օրինակ՝ որքան էլ ուժեղ լինի մարդը, չի կարող ծովել երկարեւ ոնչը կամ սեղմելով փոքրացնել քարի կտորի ծավալը: Դա կարելի է անել հատուկ սարքերի՝ մասնակիությամբ:

**Հեղուկը** հեշտությամբ փոխում է իր ձևը՝ ընդունելով այն անորի ձևը, որի մեջ լցված է (նկ. 89): Դա տեղի է ունենում Երկրի ձգողության ազդեցությամբ: Եթե հեղուկի վրա արտաքին ուժեր չեն ազդում (ինչպես, օրինակ, ջրում գտնվող անիշտին կոշիկը հեղուկի կաթիլի վրա), ապա այն ընդունում է գնդի ձև (նկ. 90): **Հեղուկի**՝ իր ձևը փոփոխելու հատկությունը կոչվում է հոսելիություն: Սակայն եթե փորձենք փոփոխել հեղուկի ծավալը, ապա չափազանց կրծքարանանք (նկ. 74): Մեղմել հեղուկը գրեթե նույնանութեան դժվար է, որքան ավելի մարմինը: Այսպիսով՝ հեղուկը պահպանում է իր ծավալը, սակայն հեշտությամբ փոխում է ձևը. հոսում է:

**Գազը** չունի ոչ սեփական ծավալ, ոչ էլ ձև: Գազի ծավալ ասելով հասկանում ենք այն անորի տարրությունը, որի մեջ լցված է գազը: Գազի ծավալը կարելի է հեշտությամբ փոփոխել (նկ. 75):

Այժմ փորձենք բացատրել նյութի գազային, հեղուկ և այնու ազրեգատային վիճակների գոյությունը: Նույն նյութը երեք ազրեգատային վիճակներում էլ կազմված է նույն մոլեկուլներից կամ ատոմներից, ուստի այդ վիճակների տարրերությունը պետք է կախված լինի նյութի մասնիկների վարքից, այսինքն ինչպես՞ են դրանք շարժվում, ինչպես՞ են փոխազդում:


Գազի ծավալը հեշտությամբ կարելի է մի քանի անգամ փոքրացնել: Նշանակում է՝ գազի մասնիկների հեռավորություններն իրարից շատ մեծ են մասնիկների չափերի համեմա-

#### Նկ. 89

Հեղուկն ընդունում է այն անորի ձևը, որի մեջ լցված է

#### Նկ. 90

Զրում գտնվող անիշտի կաթիլ ընդունում է զնդի ձև, քանի որ նրա վրա ազրող արտաքին ուժերը համակշռված են (այսինքն՝ կաթիլի վրա կարծես ուժը չի ազդում)



Նկ. 91

Գազի մոլեկուլները, շերմային շարժման հնատանքով, բախվում են իջապես իրար, այնպես էլ անորի պատերին

տուրյամբ, նրանց միջև դատարկ տարածություններ են, ինչն էլ գազի հեշտությամբ սեղմվելու պատճառն է: Մեծ հեռավորությունների վրա գտնվող մասնիկներն իրար չափազանց քոյլ են ձգում, ուստի գազի մոլեկուլները շարժվում են իրարից անկախ՝ հաճախակի բախվելով միջանց կամ անորի պատերին (նկ. 91): Սա է պատճառը, որ գազի մոլեկուլները գրադեցնում են անորի ամրող ծավալը (նկ. 92):


Հեղուկների խտությունները շատ ավելի մեծ են, քան գազերի խտությունները: Օրինակ՝ հայտնի է, որ  $100^{\circ}\text{C}$ -ում ջրի խտությունը մոտ 1500 անգամ մեծ է նույն ջերմաստիճանում ջրային գոլորշու խտությունից: Այստեղից հետևում է, որ ջրում մոլեկուլներն իրար շատ ավելի մոտ են, քան գոլորշում: Հեղուկի մոլեկուլների միջև հեռավորությունները մոտավորապես հավասար են մոլեկուլների տրամագծին, ուստի նրանց փոխադարձ ձգողության ոժերը զգալի են: Այդ ուժերը մոլեկուլները «պահում» են իրար մոտ, քայլ այնքան զգալի չեն, որ «խանգարեն» հեղուկի ձևի փոփոխմանը: Հենց այս փաստով է պայմանավորված հեղուկների հոսելիությունը: Սակայն եթե փորձենք սեղմել հեղուկը, ապա նրա մոլեկուլները կմոտենան իրար և կսկսեն վանվել: Դա է պատճառը, որ հեղուկը դժվար է սեղմել:


Հեղուկում մոլեկուլների վարքը կարելի է նմանեցնել հոծքազմության մեջ առանձին մարդկանց շարժմանը. որոշակի ուղղությամբ շարժվելու համար մարդը փորձում է անցնել մյուս մարդկանց միջև առաջացնել և փակվող արանքներով:

Պինդ մարմինների և հեղուկների խտություններն իրար մոտ են: Օրինակ՝ սառույցի խտությունը  $0^{\circ}\text{C}$ -ում  $900 \text{ կգ}/\text{մ}^3$  է, որը մոտ է ջրի խտությանը ( $1000 \text{ կգ}/\text{մ}^3$ ): Նշանակում է՝ պինդ և հեղուկ վիճակներում մոլեկուլների հեռավորությունները մոտավորապես հավասար են: Սակայն պինդ մարմնում ձգողության ուժերն ավելի մեծ են, քան հեղուկներում, որի պատճառով էլ մասնիկները կարող են շարժվել միայն որոշակի կե-

Նկ. 92

Գազի գրադեցնում է անորի ամրող ծավալը





Նկ. 91

Գազի մոլեկուլները, ջերմային շարժման հետևանքով, բախվում են ինչպես իրար, այնպես էլ անորի պատերին

տուրյամբ, նրանց միջև դատարկ տարածություններ են, ինչն էլ գազի հեշտությամբ սեղմվելու պատճառն է: Մեծ հետավորությունների վրա գտնվող մասնիկներն իրար շափազանց թույլ են ծգում, ուստի գազի մոլեկուլները շարժվում են իրարից անկախ՝ հաճախակի բախվելով միմյանց կամ անորի պատերին (նկ. 91): Սա է պատճառը, որ գազի մոլեկուլները գրադարձնում են անորի ամրող ծավալը (նկ. 92):


Հեղուկների խտությունները շատ ավելի մեծ են, քան գազերի խտությունները: Օրինակ՝ հայտնի է, որ  $100^{\circ}\text{C}$ -ում ջրի խտությունը մոտ 1500 անգամ մեծ է նոյն ջերմաստիճանում ջրային գոլորշու խտությունից: Այստեղից հետևում է, որ ջրում մոլեկուլներն իրար շատ ավելի մոտ են, քան գոլորշում: Հեղուկի մոլեկուլների միջև հեռավորությունները մոտավորապես հավասար են մոլեկուլների տրամագծին, ուստի նրանց փոխադարձ ձգողության ուժերը զգալի են: Այդ ուժերը մոլեկուլները «պահում» են իրար մոտ, քայլ այնքան զգալի չեն, որ «խանգարեն» հեղուկի ծնի փոփոխմանը: Հենց այս փաստով է պայմանավորված հեղուկների հունվարությունը: Սակայն եթե փորձենք սեղմել հեղուկը, ապա նրա մոլեկուլները կմոտենան իրար և կսկսեն վանվել: Դա է պատճառը, որ հեղուկը դժվար է սեղմել:


Հեղուկում մոլեկուլների վարքը կարելի է նմանեցնել հոծ բազմության մեջ առանձին մարդկանց շարժմանը. որոշակի ուղղությամբ շարժվելու համար մարդը փորձում է անցնել մյուս մարդկանց միջև առաջացնել և փակվող արանքներով:

Պինդ մարմինների և հեղուկների խտություններն իրար մոտ են: Օրինակ՝ սառույցի խտությունը  $0^{\circ}\text{C}$ -ում  $900 \text{ կգ}/\text{մ}^3$  է, որը մոտ է ջրի խտությանը ( $1000 \text{ կգ}/\text{մ}^3$ ): Նշանակում է՝ պինդ և հեղուկ վիճակներում մոլեկուլների հեռավորությունները մոտավորապես հավասար են: Սակայն պինդ մարմնում ձգողության ուժերն ավելի մեծ են, քան հեղուկներում, որի պատճառով էլ մասնիկները կարող են շարժվել միայն որոշակի կե-


Նկ. 92

Գազի գրադարձնում և անորի ամրող ծավալը






w



p



q

**Ակ 93**

Առողջապահության  
շարժման  
պատկերը տարրեր  
ազթագացային  
վիճակներում

տերի շուրջը փոքր տիրույթներում: Որոշ պինդ մարմիններում այս կետերը, որոնց շուրջ տարտանվում են մասնիկները, տարածության մեջ դասավորված են կանոնավոր ձևով: Այդ մարմինները կոչվում են **բյուրեղներ**: Բյուրեղում մասնիկները տարտանվում են այդ կետերի շուրջը և միմյանց հետ ուժեղ փոխազդելու հետևանքով այդ կետերից շատ հեռանալ չեն կարող: Դա է պատճառը, որ պինդ մարմինն ունի սեփական ձև:

Պատկերները միևնույն նյութի, օրինակ՝ երկարի ատոմների դիրքերը տարածության մեջ գազային, հեղուկ և պինդ վիճակներում (նկ. 93. w, p, q): Հենց տարածության մեջ ատոմների (մոլեկուլների) տարրեր դասավորությամբ է պայմանավորված նյութի ազրեգատային վիճակների տարրերությունը:

Այսպիսով՝ ամփոփելով նյութի կառուցվածքի ուսումնասիրման բազմաթիվ փորձերի և դիտարկումների արդյունքները, գալիս ենք հետևյալ եզրակացության:

1. **Այուրը կազմված է փոքրագույն մասնիկներից՝ ատոմներից և մոլեկուլներից,**
2. **Այուրի մասնիկները անընդհատ և անկանոն շարժման մեջ են,**
3. **Այուրի մասնիկները փոխազդում են միմյանց հետ:**

Այս երեք պնդումները կոչվում են մոլեկուլային-կինետիկ տեսության հիմնական դրույթներ:

### Հարցեր և առաջադրանքներ

1. **Ի՞նչ վիճակներում կարող է գտնվել նյութը:**
2. **Որո՞նք են ջրի ազրեգատային վիճակները:**
3. **Ի՞նչն է բնորոշ պինդ մարմիններին:**
4. **Ի՞նչն է բնորոշ հեղուկներին:**
5. **Ի՞նչն է բնորոշ գազերին:**
6. **Ինչո՞ւ է գազը համեմատաբար հեշտ սեղմանում:**
7. **Ինչո՞ւ է հեղուկը հոսելի:**
8. **Ինչո՞ւ է պինդ մարմինը պահպանում իր ձևը:**



- Ինչու՞ են պինդ մարմինները և հեղուկները դժվար սեղմանում:
- Ինչո՞ւ է պայմանավորված նյութի ագրեգատային վիճակների տարրերությունը:
- Չեակերպեք մոլեկուլային-կիմիոտիկ տեսության հիմնական դրույթները:

## § 43

### ԱՐՈՐԱՏՈՐ ԱՇԽԱՏԱՆԵ 7

#### Փոքր մասնիկների չափերի որոշումը


**Աշխատանքի նպատակը.** սովորել չափել փոքր մարմինների չափերը:

**Սարքեր և նյութեր.** քանոն, փոքր գնդիկներ, լուցկու սրած հատիկ:

#### Փորձի կատարման ընթացքը.

- Քանոնի երկարությամբ** իրար կրողի շարեր 20-25 գնդիկ: Հարքում գնդիկները դասավորեք՝ օգտագործելով լուցկու սրբած հատիկը: (Լուցկու հատիկի փոխարեն չի կարող օգտագործել ասեղ, քանի որ գնդիկները կարող են կպչել ասեղին, ինչպես մազմիսին):
- Չափեք գնդիկների շարքի երկարությունը** և, այս քաժամնելով գնդիկների թվին, որոշեք 1 գնդիկի տրամագիծը:

Դրուեինի  
վիրուսի բյուրենի  
լուսանկարը  
(խոշորացումը՝  
100000 անգամ)



- Նկարում պատկերված է այրուեինի վիրուսի բյուրենի լուսանկարը** (խոշորացումը՝ 100 000 անգամ): Օգտելով լուսանկարից՝ որոշեք մեկ մասնիկի տրամագիծը:
- Փորձերի արդյունքները գրանցեք թերված աղյուսակում:**

Փորձի անվանումը	Ծարքում գնդիկների թիվը	Ծարքի երկարությունը (մմ)	Մեկ գնդիկի տրամագիծը (մմ)
1. Գնդիկի տրամագիծի որոշումը			
2. Լուսանկարի մասնիկների տրամագիծի որոշումը		Լուսանկարում Իրական չափը	

## ՃՆՇՈՒՄ

**ՃՆՇԱՍԱՆ ՈՒԺ ԵՎ ՃՆՇՈՒՄ:  
ՃՆՇԱՍԱՆ ՄԻԱՎՈՐԸ**

**S 44**


Մարմինների փոխազդեցության արդյունքը կախված է ոչ միայն փոխազդեցության ուժից: Դրանում համոզվելու համար դիմենք փորձի օգնությանը: Արկդի մեջ լցված չոր ավազի վրա դնենք շրջված սեղանիկը, իսկ նրա վրա՝ ծանր կշռաքար: Կտևանենք, որ սեղանիկը գրեթե չի խրվում ավազի մեջ (նկ. 94. ա):

Այժմ, եթե սեղանիկը դնենք ավազի վրա՝ ոտքերը դեպի ներքև և վրան դնենք դարձյալ նույն կշռաքարը, ապա այս կխրվի ավազի մեջ (նկ. 94. բ): Բայց առողջության փորձի արդյունքը ներք:

Առաջին դիրքում սեղանիկի և ավազի հպման մակերևույթն ունի շատ ավելի մեծ մակերես, քան երկրորդում: Բայց երկու դիրքում էլ սեղանիկը միևնույն ուժն է գործադրում ավազի վրա՝ նրա մակերևույթին ուղղահայաց ուղրությամբ: Այդ ուժը կոչվում է **ճնշման ուժ**: Ակներև է, որ ավազի վրա սեղանիկի գործադրած ճնշման ուժը հավասար է սեղանիկի և կշռաքարի կշիռների գումարին:

Ուրեմն սեղանիկի՝ ավազի մեջ խրվելը կամ չխրվելը միայն ճնշման ուժով չէ պայմանավորված: Նկարազրկած փորձում, եթե սեղանիկը երկրորդ դիրքում է (նկ. 94. բ), ավազի վրա սեղանիկի գործադրած ճնշման ուժի հարաբերությունը նրա և ավազի հպման մակերևույթի մակերեսին շատ ավելի մեծ է, քան առաջին դիրքում: Ուստի հաճախ հպման փոխազդեցությունը բնութագրում են հենց այդ հարաբերությամբ, որն անվանում են **ճնշում**: Այսպիսով՝

**ճնշումը բնութագրում է երկու հպվող մարմինների փոխազդեցությունը և հավասար է հպման մակերևույթին ուղղահայաց ազդող ուժի (ճնշման ուժի) հարաբերությամբ մարմինների հպման մակերևույթի մակերեսին:**



Նկ. 94

Սեղանիկն ավազի մեջ չի խրվում, եթե ոտքերն ուղղված են վեր (ա) և խրվում է ավազի մեջ, եթե ոտքերն ուղղված են մերքի (բ):

Եթե ճնշումը նշանակենք  $p$ -ով, հպման մակերևույթի մակերևուը՝  $S$ , իսկ ճնշման ուժը՝  $F$ , ապա, սահմանման համաձայն,

$$p = \frac{F}{S};$$

Այս բանաձևից հետևում է, որ ճնշումը բվապես հավասար է այն ճնշման ուժին, որն ազդում է հպման մակերևույթի յուրաքանչյոր միավոր մակերևուվ տեղամասի վրա:

Ճնշման բանաձևի միջոցով սահմանվում է ճնշման միավորը: Շնչման միավոր է համարվում այն ճնշումը, որը ստեղծվում է  $1\text{m}^2$  մակերևուվ մակերևույթի տեղամասի վրա  $1\text{N}$  ճնշման ուժ ազդելիս: Այդ միավորը, ի պատիվ ֆրանսիայի գիտնական Բելեգ Պասկալի, կոչվում է պասկալ (Պա): Այսպիսով՝ համաձայն ճնշման միավորի սահմանման՝

$$1\text{ Pa} = 1 \frac{\text{N}}{\text{m}^2};$$

Բայց պասկալից, կիրառվում են նաև կիլոպասկալ (կՊա) և մեգապասկալ (ՄՊա) միավորները՝

$$1\text{ kPa} = 1000\text{ Pa},$$

$$1\text{ MPa} = 1000000\text{ Pa}:$$

## Շետաքրքիր է իմանալ

### Ինչու՞ ծառերը չեն հասնում մինչև երկինք

Հայտնի է, որ ծառի բարձրությունը կախված է նրա տեսակից, տարիքից, հողի բնույթից, կլիմայական պայմաններից և այլն: Ամենաբարձր ծառերն էվկալիպտներն են, որոնց բարձրությունը հասնում է մինչև 100 մետրի: Բայց դրամից ավելի բարձր ոչ մի ծառ չի կարող ածել: Չափազանց բարձր ծառը չի դիմանա սեփական ծանրությանը:

Կատարենք այսպիսի հաշվարկ: Նախ հաշվենք, թե որքան է այն ճնշումը, որը գործադրում է, օրինակ,  $50\text{ m}$  բարձրությամբ ծառն իր բնի հիմքի վրա: Այդ ճնշումը կարող ենք հաշվել  $p = F/S$  բանաձևով, որտեղ  $S$ -ը ծառի բնի լայնական հաստույթի մակերեսն է բնի հիմքի մոտ, իսկ  $F$ -ը՝ ծառի կշիռը.  $F = mg$  ( $m$ -ը ծառի զանգվածն է,  $g$ -ն՝ միավոր զանգվածով մարմնի վրա ազդող ծանրության ուժը.  $g \approx 10\text{ N/kg}$ ): Հետևաբար ճնշման համար արտահայտության փոխարեն կարող ենք գույն՝  $p = mg/S$ : Մյուս կողմից՝ մարմնի նյութի խտության  $\rho = m/V$  բանաձևից  $m = \rho V$ , որտեղ  $V$ -ն ծառի ծավալն է: Ենթադրենք՝ ծառի բունը գլանաձև է և, բայց այդ, ծառի ամբողջ զանգվածը կենտրոնացված է նրա բնում: Այդ դեպքում  $V = Sh$ , որտեղ  $h$ -ը ծառի բարձրությունն է: Ուրեմն՝  $m = \rho Sh$ , և որոնելի ճնշումը հաշվարկելու համար կստանանք հետևյալ բանաձևը՝


$$p = \rho hg:$$

Եթե ծառի նյութի միջին խտության համար վերցնենք  $600 \text{ kg/m}^3$  արժեքը, կստանանք, որ  $p = 300000\text{ Pa} = 0.3\text{ MPa}$ : Այդպիսի ճնշում ստեղծում է  $30\text{ m}$  զանգ-

փառով առարկան գետնի վրա, եթե հենման մակերեսը  $1\text{m}^2$  է: 100 մ բարձրությամբ էվլափատի գործադրած ճնշումը կլինի  $0,6 \text{ UPI}$ : Նշանակում է՝ դրանից ավելի մեծ ճնշման դեպքում ծառը կտորվում է: «Երկնքին», այլ կերպ ասած՝ ամպերին հասնելու համար ծառը պետք է ունենա մի քանի կիլոմետր բարձրություն: Հետևաբար եթե ծառը բարձրությունը մեծանա, օրինակ, 10 անգամ (դառնա 1 կմ), ապա, ինչպես երևում է քանածկության ավելի մեծ, քան առավելագույն ճնշումն է: Հենց այդ պատճառով է, որ ծառերը չեն կարող ունենալ նույնիսկ մի քանի հարյուր մետր բարձրություն:

## Հարցեր և առաջադրանքներ

1. Նկարագրեք այն փորձը, որը մեզ համոզում է, որ մարմինների համամբ փոխազդեցությունը բնուրագություն է ոչ միայն ուժով: Պատրասխանեք նաև հետևյալ հարցերին:
    - Ո՞ր ֆիզիկական մեծությունն էր անփոփոխ փորձի ընթացքում: Ինչպե՞ս է կոչ վկա՞ այս ֆիզիկական մեծությունը:
    - Համեմատեք սեղանիկի երկու դիրքերը: Ո՞ր դիրքում է սեղանիկը ավագի միավոր մակերեսով տեղադասի վրա ավելի մեծ ուժ գործադրում: Ձեր ենթադրությունը հիմնավորեք դատողություններով:
  2. Ո՞ր ֆիզիկական մեծությունն է կոչվում ճնշում: Գրեք ճնշումը սահմանող բանաձևը:
  3. Ի՞նչ ֆիզիկական իմաստ ունի ճնշումը:
  4. Որո՞նք են ճնշման միավորները:
  5. Դուք ունեք քանոն, մրբատախտակի քառակուսաձև կտոր, պողպատե չորսու: Ինչպե՞ս կփոխվի չորսուի ձևումը սեղանին, եթե նրա տակ դնենք նրբատախտակի կտորը: Հարցին նախ պատրասխանեք տրամաբանական դատողություններով: Այնուհետև ձեր պատրասխանը հիմնավորեք փորձով:
  6. Տանը հաշվեք հենարանի վրա այնու մարմնի ճնշումը: Դրա համար անհրաժեշտ է ունենալ ուժաչափ, չափաքանոն և փայտե չորսու:
- Չափումներն արեք հետևյալ հաջորդականությամբ:
- Չափեք չորսուի ճնշման ուժը սեղանի վրա (որը հավասար է չորսուի կշռի):
  - Չափելով չորսուի երկարությունը, լայնությունը և բարձրությունը՝ հաշվեք չորսուի ամենամեծ և ամենափոք նիստերի մակերեսները:
  - Օգտվելով ճնշման բանաձևից՝ հաշվեք այն ճնշումը, որ գործադրում է չորսուն երեք տարրեր նիստերով:
  - Չափումների և հաշվարկների արդյունքները գրանցեք հետևյալ առյուտակում:



Երկարություն	Լայնություն	բարձրություն	ամենամեծ նիստի մակերեսը	ամենափոք նիստի մակերեսը	ճնշման ուժը	ճնշումը երեք տարրեր նիստերի վրա

Ո՞ր նիստով է չորսուի գործադրած ճնշումը ամենափոքը: Իսկ ամենամեծը:

## ԳԱԶԻ ՏՆՏՈՒՄԸ

**§ 45**

Արդեն գիտեք, որ բոլոր մարմինները կազմված են մասնագոյն մասնիկներից՝ մոլեկուլներից, առողջությունը՝ պահպանը և անընդհատ շարժվում են: Գազի մոլեկուլները, օրինակ, կատարում են անկանոն շարժումներ՝ շարունակ բախվելով իրար: Շարժման ընթացքում մոլեկուլները մեկնելու վրա գրեթե ոչ մի ներգործություն չեն ունենում: Այդ պատճառով է, որ գազի առանձին նաև դրույթամբ կարող են տեղաշարժվել իրար նկատմամբ:


Ընդհակառակը, եթե փորձում ենք գազը սեղմել, առաջանում են առաձգականության ուժեր, որոնք խոչընդոտում են սեղմումը: Նշանակում է՝ գազի ծավալը փոքրացնելու համար արդեն ճիգ է պահանջվում:

Սակայն արտաքին ազդեցությունների բացակայության ժամանակ գազը կարող է ինքն իրեն շարունակ ընդարձակվել: Ուրեմն գազի մոլեկուլներն ավելի շատ «հակված» են իրարից հեռանալու, այլ ոչ թե մոտենալու, քանի որ վերջին դեպքում հարկավոր է գազի վրա ճիգ գործադրել:

Քայլ եք գազը լցված է փակ անորի մեջ, ապա վերջինիս պատերը խոչընդոտում են գազի ընդարձակվելուն: Գազի մոլեկուլները, բայց իրար բախվելուց, «ստիպված» բախվում են նաև անորի պատերին (նկ. 95): Դրա հետևանքով գազը ճնշում է գործադրում անորի պատերին:

Համոզվելու համար քննարկենք հետևյալ փորձը: Օդահան պոմպի գանգի տակ կախված է ռեստին բարակ բաղանքով փուչիկ (նկ. 96. a): Փուչիկը պարունակում է փոքր բանակով օդ: Եթե գանգի տակից սկսնենք ոդը հանել, ապա կտևսնենք, որ փուչիկը սկսում է ուռչել՝ ի վերջո ընդունելով զնյի ձև (նկ. 96. p):

Կարելի է շատ պարզ բացատրել փորձում դիտված երևույթը: Օդահան գանգի տակից օդը հանելով, պոմպի փուչիկի բաղանքը, ուռչելով, ընդունում է զնյի ձև:




Նկ. 95

Գազի ճնշումն անորի պատերին

Նկ. 96

- ա. Օդահան գանգի տակ ըից օդը պարունակող փուչիկն ունի անկանոն ձև,
- բ. եթե օդահան գանցից օդը հանում ենք, փուչիկի բաղանքը, ուռչելով, ընդունում է զնյի ձև:



պատերին դրսից օդի մոլեկուլների հարվածների թիվը դարձնում ենք անհշան: Փուչիկում եղած մոլեկուլների հարվածների հետևանքով փուչիկն ընդարձակվում է: Ընդարձակումը դադարում է, եթե ռետինն քաղանքի առաջգականության ուժը հավասարվում է ներսից փուչիկի պատերին օդի մոլեկուլների հարվածներով ստեղծվող ճնշման ուժին:


Այսպիսով՝ զազի մոլեկուլների հարվածներն ամորի պատերի յուրաքանչյուր տեղամասում ստեղծում են ճնշման ուժ: Ճնշման ուժի հարաբերությունն այդ տեղամասի մակերեսույթի մակերեսին հավասար է հենց այդ տեղամասին զազի գործադրած ճնշմանը:

Մոլեկուլների թիվը հսկայական է և, բայց այդ, դրանց շարժումն անկանոն է: Նշանակում է՝ բոլոր ուղղություններով՝ միևնույն ժամանակամիջոցներում հավասար մակերեսներով տեղամասերի վրա մոլեկուլների հարվածների թիվը միջին հաշվով նույնը կլինի: Ուրեմն նոյնը կլինի փուչիկի քաղանքի վրա գործադրված ճնշումը բոլոր ուղղություններով:

Այսպիսով՝ կարելի է ասել, որ ամորի մեջ լցված զազը սեղմված է, եթե նույնիսկ անորը բաց է: Մեծացնելով ամորի տարրությունը՝ կարծես թուլացնում ենք զազի «լարված» վիճակը: Դրա հետևանքով զազի ճնշումն ընկնում է: Ընդհակառակը, փոքրացնելով ամորի տարրությունը, ավելի շատ ենք խոչընդոտում զազային մարմնի «ինքնակամ» ընդարձակումը: Այդ դեպքում զազի ճնշումը, բնականաբար, պետք է մեծանա: Ասվածը իմմնավորելու համար դիտարկենք հետևյալ փորձը:

Ասպակե խողովակը, որի մեջ կա մխոց, միացված է գլանածն անորին: Անորի հատակը բարակ ուստինե քաղանք է (նկ. 97): Մխոցից ներքև՝ խողովակում և ամորում օդի զանգվածն անփոփոխ է մնում: Մխոցը ներս մղելով՝ նկատում ենք, որ ուստինե հատակը փքվում է: Ուրեմն զազի ծավալը փոքրացնելիս նրա ճնշումը իրոք մեծանում է: Ընդհակառակը, մխոցը վեր բարձրացնելիս ուստինե քաղանքը ճկվում է դեպի ներս: Նշանակում է՝ զազի ծավալի մեծացման հետ զազի ճնշումը փոքրանում է:


Գազի (նաև՝ հեղուկի) ճնշումը չափում են հատուկ սարքերի՝ ճնշաչափների (մանումետր, հունարեն «մանո»՝ սակավ, ոչ խիտ և «մետրոն»՝ չափ բառերից) միջոցով: Ծանոթանանք պարզագույն՝ քաղանքավոր ճնշաչափի կառուցվածքին (նկ. 98):



Նկ. 97  
Եթե մխոցը ներս  
ներ մղում, զազի  
ուստինե հատակը  
ուղղում է

Ակ. 98

Թաղանքավոր  
ճնշաչափի  
կառուցվածքի  
սխեման



Թաղանքը, որ բարակ, ճկուն թիթել է, հերմետիկորեն փակում է դատարկ տուփը: Թաղանքին միացված է պարը, որը կարող է պոտովել առանցքի շուրջը: Գազի (կամ հեղուկի) ճնշման ոժերի ազդեցությամբ թաղանքը ճկում է: Այդ ճկվածքը փոխանցվում է պարին: Սլաքի յուրաքանչյուր դիրքին համապատասխանում է որոշակի ճկվածք, հետևաբար՝ նաև որոշակի ճնշման ոժ: Ճնշաչափը ճնշման միավորով աստիճանավորելու համար ճնշման ոժի փոխարեն բաժանումների դիմաց գրում են ճնշման ոժի և թաղանքի մակերեսի հարաբերությունները, այսինքն՝ ճնշման արժեքները:

## Շտացքիր է իմանալ

### 1. Խտացած օդի «աշխատում» է

Կան զյուտեր, որոնք մոռացվում և ապա «ծնվում» են երկրորդ անգամ: Դրանցից է, օրինակ, անվադողի զյուտը:

Սեղմված օդ պարունակող դրով անիվը հայտնագործել է անգլիացի ճարտարագետ Թոմասնը 1845 թվականին: Բայց նրա հայտնագործությունը շտատվ մոռացվում է: անվադողի զյուսպոր «պահանջատերը»՝ ավտոմեքենան, դեռ գոյություն չուներ:

Անցավ 48 տարի: Եվ ահա Թոմասնի գաղափարը կյանքի կոչեց մեկ որիշ զյուտարար՝ շտատանդացի անառնարոյժ Դենլուը, որը հայտնագործեց հեծանվագործը:

Սեղմված օդով լցված անվադողը տառացիորեն նվազեց ամրոց աշխարհը: Եվ դա այն պատճառով, որ ավելի ճկում անիվ գոյություն չտնի: Ոչ մի զապան կամ զապանակ «ի զորու» չէ մրցակցել անվադողի օդախցիկում լցված օդի հետ:

Զեզմից շատերը, հավանաբար, զիտեն, թե ինչ կազմություն ունի անվադողը: Այն կազմված է արտաքին մասից՝ դողածածկանից, և ներքին մասից՝ օդախցիկից: Դողածած-



Ավտոմեքենայի  
անվադող:  
1. մետաղե անվանեց,  
2. դողածածկան,  
3. պահպանաշերտ,  
4. օդախցիկի փական

Կանքը պատրաստվում է առանձնահատուկ ամրություն ունեցող գործվածքից՝ կորդից, որը ներծծված է ուստինով։ Դողաձածկամի արտաքին մասում կան եղանակներ, որոնք կազմում են անվագողի պահպանամշերտը։ Օդախցիկը բարակ քաղանք է՝ պատրաստված բարձրորակ ուստինով։ Օդախցիկն ոճի փական, որով նրա մեջ պոմպով օդ է ներմանվում։


Օդախցիկը, սեղմված օդի ճնշմամբ, սկսում է փրկել։ Սակայն դրան խանգարում են դողաձածկան և անվահեցը։ Ահա այսպես ստեղծվում է ճկում, առաձգական շերտ ճանապարհի և մերժմայի միջև։

## 2. Ինչպես է մարդը շնչում

Հայու կենսարանական երևոյթներում օգտագործվում են օդի ստագական հատկությունները։ Երբեմ մտածե՞լ եք, թե ինչպես եք շնչում։

Ներշնչելիս կրծքավանդակի մկանների օգնությամբ բարձրանում են կողովակը բերը, իսկ այլ մկանների միջոցով՝ իջնում ստոծաննեն։ Այդ ժամանակ մեծանում է այն ծավալը, որը կարող են գրադացնել բոքերը (և նրանցում եղած օդի մասնակիները)։ Ծավալի մեծացմանը զուգընթաց բոքերում օդի ճնշումը փոքրանում է։

Առաջանում է դրսի օդի և բոքերում եղած օդի ճնշումների տարբերություն։ Դրա հետևանքով դրսի օդը, ճգտելով ընդարձակվել, մտնում է բոքերի մեջ։



Մարդու բոքերը

## Հարցեր և առաջադրություններ

1. Ինչո՞վ է պայմանավորված գազի «ինքնակամ» ընդարձակումը։
2. Ինչո՞ւ են գագերը ճնշում գործադրում անորի պատերին։
3. Նկարագրեք նկ. 98-ում պատկերված փորձը և պատասխանեք հետևյալ հարցերին։  
Փորձի ո՞ր արդյունքն է մեզ համոզում, ո՞ր  
- գազի ճնշումն անորի պատերին ստեղծվում է պատերի վրա մոլեկուլների հարգածների շնորհիվ。  
- գազը միատեսակ ճնշում է գործադրում անորի պատերին։
4. Նկարագրեք քաղանքավոր մանոմետրի կառուցվածքը։ Ինչպես՞ է այն աշխատում։
5. Սրվակը, որի բերանն ամուր փակված է ուստինե խցանով, դրեք օդահան պոմպի գանգի տակ։ Զանգի ներսից օդը հանելիս խցանը դրւում է թռչում սրվակից։ Ինչո՞ւ։

Ինչպես գիտեք, հեղուկները հոսուն են: Գազերի նման հեղուկի առանձին մասերը կարող են շարժվել, «սահել» մեկը մյուսի նկատմամբ, և դրա հաճար որևէ ճիգ չի պահանջվում: Ծնորիկվ հոսունության՝ հեղուկի ծեր փոփոխելիս չեն ծագում առածգականության ուժեր: Պատկերավոր ասած՝ հեղուկն «անտարեր է» «ձևախախտման» հանդիպ: Դա է պատճառը, որ նույնիսկ թերևն քանուց ծովի մակերևույթն ալեկոծվում է:

Հեղուկների հոսունությամբ է բացարկվում հավասարակշռության մեջ գտնվող հեղուկի ազատ մակերևույթի (մքնուրուսի հետ հպվող մակերևույթը) միշտ հորիզոնական լինելը: Իսկապես, պատկերացնենք, թե անշարժ հեղուկի մակերևույթը հորիզոնի նկատմամբ թերված է որոշ անկյունով: Այդ դեպքում հեղուկի մասնիկները, ծանրության ուժի ազդեցությամբ, այդ թեր մակերևույթով կսահեին, ինչպես թեր հարթությամբ: Այդ շարժումը կշարունակվեր այնքան ժամանակ, մինչև հեղուկի մակերևույթը դառնար հորիզոնական:

Ամենօրյա փորձից գիտենք, որ հեղուկները որոշակի ուժերով ազդում են իրենց մեջ ընկդմված պինդ մարմինների վրա: Այդ ուժերի ուղղությունը միշտ ուղղահայա է հեղուկի և պինդ մարմնի հպման մակերևույթին: Իսկապես, ենքաղենք, թե այդպես չէ: Այդ ժամանակ պինդ մարմնի կողմից հեղուկի մակերևույթի վրա հակազդող ուժերը ևս ուղղահայա չեն լինի այդ մակերևույթին: Բայց այդ դեպքում, ինչպես տեսանք, հեղուկը չէր մնա հավասարակշռության մեջ: Նշանակում է՝ հեղուկի մեջ ընկդմված մարմինների, անորի պատերի վրա ազդող ուժերը հենց հեղուկի ճնշման ուժերն են:

Այդ ուժերի գոյությանը մեզ համոզում են նաև հետևյալ օրինակները:

- Եթե ջրի բաց ծորակը մատով փակենք, ապա կզգանք ջրի ճնշման ուժի ազդեցությունը մատի վրա:
- Լողորդմների ականջները ցավում են՝ մեծ խորությամբ սուզվելիս: Այդ ցավը հետևանք է ջրի ճնշման ուժի ներգործության:
- Ճնշման ուժերն ազդում են հեղուկով լցված անորի հատակին և պատերն:


- Եվ, վերջապես, հեղուկի առանձին մասերն իրար հետ նույնպես փոխազդում են ճնշման ուժերով: Նշանակում է, եթե հեռացնենք հեղուկի մի որևէ մասը, ապա մնացած հեղուկը հավասարակշռության մեջ պահելու համար անհրաժեշտ է առաջացած խոռոչի մակերևույթին կիրառել որոշակի ուժեր (նկ. 99): Այդ ուժերը հավասար են այն ճնշման ուժերին, որոնցով հեղուկի հեռացված մասն ազդում էր մնացած հեղուկի վրա:

Մարմինների՝ անմիջական հպմամբ պայմանավորված փոխազդեցության ժամանակ ծագող ուժերը հետևանք են այդ մարմինների դեֆորմացիայի: Հետևապես այդ ուժերն առաջականության ուժեր են:

Նշանակում է՝ հեղուկի ճնշման ուժերն առաջականության ուժեր են և չեն կարող լինել հեղուկի ձևի փոփոխման արդյունք: Այդ ուժերը ծագում են միայն հեղուկի սեղման հետևանքով: Ընդ որում, որքան շատ է սեղմված հեղուկը, այնքան մեծ են այդ սեղմամբ պայմանավորված ճնշման ուժերը: Ասկան հիմնավորենու համար դիմենք փորձի օգնությանը:


Ամուր պատերով գլանը, որը լցված է հեղուկով, պինդ փակված է մխոցով: Մխոցի վրա դնենք բեռ: Վերջինիս ազդեցությամբ մխոցը կիշնի ներքև՝ սեղմելով հեղուկը (նկ. 100): Սեղմվելիս հեղուկում ծագում են ճնշման ուժեր, որոնք, ազդելով մխոցի վրա, հավասարակշռում են բեռի կշիռը: Որքան ծանր է բեռը, այնքան ավելի շատ է սեղմում հեղուկը և այնքան ավելի մեծ են սեղմամբ պայմանավորված առաջականության ուժերը:

Սակայն, իտարբերություն գագերի, հեղուկների սեղմվածությունը, նույնիսկ շատ մեծ ճնշման ուժերով ներգործելիս,



Նկ. 99

Հայոցի որոշ մաս հեռացված է: Մնացած հեղուկը հավասարակշռությամ մեջ պահելու համար անհրաժեշտ են ուժեր, որոնք բաշխված են առաջացած խոռոչի անքող մակերևույթով



Նկ. 100

Որքան ծանր բեռ են դնում մխոցի վրա, այնքան ավելի շատ է հեղուկը սեղմվում (ակներևության համար նկարում հեղուկի սեղման շափու խիստ մեծացված է)

աննշան է: Այդ է պատճառը, որ հեղուկները գործնականում համարում են «անսեղմելի»: Հետևաբար կարող ենք նաև համարել, որ հեղուկի խտությունը կախված չէ ճնշումից: Միայն սաստիկ մեծ ճնշումների դեպքում է (օրինակ՝ օվկիանոսի խորքերում) հարկ լինում հաշվի առնել հեղուկի խտության փոփոխությունը (այդ մասին կխստենք § 48-ում):

Իսկ ինչպե՞ս են բաշխված հեղուկի ճնշման ուժերը հեղուկում ընկղզմական պինդ մարմնի՝ հեղուկի հետ հպվող ամրող մակերևույթով: Այդ մակերևույթի տարրեր տեղամասերի վրա ճնշման ուժերը կարող են լինել տարրեր: Իսկապես, չէ՞ որ ճնշման ուժերը հետևանք են հեղուկի սեղմվածության: Իսկ հեղուկի սեղմվածությունը նրա տարրեր մասերում տարբեր է:

*Հեղուկի ճնշումը հեղուկի հետ պինդ մարմնի հպման մակերևույթի (օրինակ՝ պատերի, հատակի) որևէ տեղամասի վրա ազդող ճնշման ուժի հարաբերությունն է այդ տեղամասի մակերևույթի մակերեսին: Այն ևս որոշվում է  $p = F/S$  բանաձևով, որտեղ  $S$ -ը տեղամասի մակերեսն է,  $F$ -ը՝ այդ տեղամասի վրա ազդող հեղուկի ճնշման ուժը:*

## Հարցեր և առաջադրանքներ


1. Ի՞նչ է նշանակում «հեղուկները հոսուն են» արտահայտությունը: Ո՞ր է հոսունության հետևանքը:
2. Բացարեթե, թե ինչո՞ւ է հավասարակշռության մեջ գտնվող հեղուկի ազատ մակերևույթը հորիզոնական:
3. Շեղուկի ճնշման ուժերը միշտ ուղղահայաց են պինդ մարմնի հետ հպման մակերևույթին: Ինչո՞ւ:
4. Քերեք հեղուկի ճնշման ուժերի դրսնորման մի քանի օրինակ:
5. Ինչպե՞ս կարող եք հիմնավորել, որ հեղուկի առանձին մասերն իրար հետ փոխազդում են ճնշման ուժերով:
6. Ի՞նչ բնույթ ունեն հեղուկի ճնշման ուժերը: Ինչո՞վ են պայմանավորված: Ինչպե՞ս են բաշխված ճնշման ուժերը հեղուկում:
7. Ինչո՞ւ են հեղուկներն անվանում «անսեղմելի»:
8. Ի՞նչ է հեղուկի ճնշումը: Գրեք հեղուկի ճնշման բանաձևը: Ի՞նչ միավորներով է արտահայտվում հեղուկի ճնշումը:

## ՃԱՇՄԱՆ ՇԱՐՈՐՈՒՄԸ ԵՎ ՊԱՍԿԱԼԻ ՕՐԵՆՔԸ


Նկ.100-ում պատկերված փորձից իմացաք, որ ինչքան շատ է սեղմված հեղուկը, այնքան ավելի մեծ է հեղուկի ճնշման ուժը: Այդ փորձը ծևափոխիչներ՝ հեղուկը փոխարինելով զապանակով (նկ.101):

Ինչպես հեղուկում, զապանակում նույնագեն սեղմելիս ծագում են առաջգականության ուժեր: Սակայն սեղմված զապանակն ազդում է միայն մխոցի և անորի հատակի վրա, մինչդեռ սեղմված հեղուկն ազդում է ինչպես մխոցի վրա, այնպես էլ հատակին և պատերին (նկ.102): Այս փորձում հեղուկի վերին մակերևույթին մխոցի գործադրած ճնշումը, կարծես, հաղորդվում է բոլոր ուղղություններով: Այս մխոցն առաջին անգամ առկայացեց Բլեգ Պասկալի գիտում: Միշտ շարք սրամիտ փորձերով Պասկալին հաջողվեց ցոյց տալ, որ այդ ենթադրությունը, իրոք, ճիշտ է: Այդ փորձերից մեկը հետևյալն է:

Պասկալը փայտե տակառն ամրողությամբ լցրեց ջրով: Տակառի կափարիչի վրա արված անցրով նա տակառին ուղղածից դիրքով ամրացրեց երկու կողմից բաց, երկար խողովակ: Խողովակի մեջ Պասկալը սկսեց ջոր լցնել՝ հետզինետե ավելացնելով վերջինիս քանակը: Եթե խողովակում ջրի մակարդակը հասավ որոշակի բարձրության, տա-



Նկ.101  
Սեղմված զապանակը (ա) հասանարակշռություն է մխոցն այնպես, ինչպես սեղմված հեղուկը (բ)



Նկ.102  
Հեղուկի ճնշման ուժերն ազդում են ոչ միայն անորի հատակի և մխոցի, այլ նաև պատերի վրա



Նկ.103  
Պասկալի փորձը:  
Եթե խողովակում ջրի մակարդակը հասնում է որոշակի բարձրության, տակառի կաղմանին պատերը ճարճրվում են, և ջուրն արտահոսում է տակառից



Բարեկ Պասկալ  
1623-1662

կառի կողմնային պատերը ճաքճեցին, և ջուրը բացված ճեղքերից սկսեց դուրս ցայտել (նկ. 103):

Փորձի բացատրությունը հետևյալն է: Խողովակի մեջ լցված ջուրը տակադի ներսում ստեղծում է հավելյալ ճնշում: Համաձայն ճնշման սահմանման՝  $p = F/S$ , որտեղ  $S$ -ը խողովակի լայնական հատույթի մակերեսն է, իսկ  $F$ -ը՝ խողովակում լցված ջրի կշիռը: Այդ հավելյալ ճնշումն առաջ է բերում տակադի ջրի լրացույց սեղմում: Դրա հետևանքով տակադի ներսի բոլոր մասերում ջրի ճնշումն ավելանում է հավելյալ ճնշման չափով: Տակադի ջուրը հավելյալ ճնշումը հաղորդում է բոլոր ուղղություններով: Այդ ճնշումը մեծ մակերեսով տեղամասերի վրա առաջացնում է զգալի ճնշման ուժեր: Հենց այդ ճնշման ուժերն ել, ազդելով պատերին, առաջացնում են ճեղքեր, որոնցից ել դուրս է ցայտում ջուրը:

Գագերը, հեղուկների նման, նույնպես բոլոր ուղղություններով հաղորդում են իրենց վրա գործադրված ճնշումը: Համոզվելու համար դիտարկենք հետևյալ փորձը: Տարրեր մասերում նեղ անցքեր ունեցող սնամեջ գնդին (**Պասկալի գունդ**) խողովակ է միացված, իսկ վերջինիս մեջ դրված է միսոյ: Գունդը լցնենք ծխով: Մխոցը խողովակի ներսը մղելիս գնդի բոլոր անցքերից դուրս են գալիս ծխի շիթեր (նկ. 104):


Ինչպես վերը դիտարկված, այնպես էլ որիշ համոզիչ փորձերի հիման վրա **Պասկալը** ձևակերպեց հետևյալ օրենքը:

**Հեղուկի (գազի) վրա գործադրված ճնշումը հեղուկով (գազով) հաղորդվում է բոլոր ուղղություններով՝ առանց փոփոխության:**

Այս օրենքը, ի պատիվ **Պասկալի**, անվանում են **Պասկալի օրենք**:

Պասկալի օրենքից մասնավորապես հետևում է, որ հեղուկի մակերևույթին կիրառված արտաքին ուժերը հեղուկի բոլոր մասերում ստեղծում են միևնույն հավելյալ ճնշումը: Այդպիսի արտաքին ուժեր են, օրինակ, հեղուկին հպվող պինդ մարմինների մակերևույթների կողմից ազդող ուժերը: Օրինակ՝ եթե ծեր մատու իշեցնեք բաժակում լցված ջրի մեջ, ապա ջրի ամեն մի մասում ճնշումը կազմի միևնույն չափով:

Չնենարկենք **Պասկալի** օրենքը լուսաբանող մեկ փորձ ևս: Զամբացված հատակով ապակե խողովակը մտցնենք ջրով լցված անորի մեջ: Ճնշումն անորի բացվածքի մակարդակում ստեղծվում է դրանից վեր գտնվող ջրի կշռով, որի



Նկ. 104


Մխոցը ներս մղելով ստեղծում են հավելյալ ճնշում, որն առանց փոփոխության հաղորդվում է սնամեջ գնդի ներքին մակերևույթի բոլոր տեղանակներին: Դրա հետևանքով գնդի բոլոր անցքերից դուրս են գալիս ծխի շիթեր:

հետևանքով էլ հատակը սեղմակում է խողովակին: Սեղմողը ջրի ճնշման ուժն է, որն ուղղված է ներքևից վերև (նկ. 105. a): Խողովակի մեջ սկսենք ջուր լցնել: Հենց որ խողովակում ջրի մակարդակը հավասարվում է անորում ջրի մակարդակին, հատակը պոկվում է խողովակից (նկ. 105. p):

Խողովակում ջուր լցնելիս հատակին, բայց անորում եղած ջրից, ճնշում է գործադրում նաև խողովակում լցվող ջուրը: Այդ ճնշման ուժն ուղղված է վերևից ներքև: Քանի դեռ խողովակի հատակին վերևից ներքև ուղղված ճնշման ուժն ավելի փոքր է, բան անորի ջրի կողմից ազդող՝ ներքևից վերև ուղղված ճնշման ուժը, հատակը մնում է խողովակին սեղմակած:


Հենց որ խողովակում և անորում ջրի մակարդակները հավասարվում են, հավասարվում են նաև հատակին վերևից ներքև և ներքևից վերև հաղորդվող ճնշումները: Այդ պահին հատակը խողովակից պոկվում է նրա վրա ազդող ծանրության ուժի ազդեցության հետևանքով: Ուրեմն նույն խորության վրա և՛ վերևից ներքև, և՛ ներքևից վերև գործադրվող ճնշումները միատեսակ են:

Այժմ նման փորձ կատարենք ուղղանկյունաձև ծոված խողովակով: Խողովակի բաց ծայրերից մեկը փակենք ուստի բարակ բաղանքով և խողովակն իջեցնենք ջրով լցված անորի մեջ (նկ. 106. a): Կտեսնենք, որ ուստի բաղանքը, ջրի ճնշման ուժերի ազդեցությամբ, ճկվում է դեպի ներս: Խողովակի մեջ դանաղորեն ջուր լցնենք: Կնկատենք, թե ինչպես է ուստի բաղանքի ճկվածությունն աստիճանաբար նվազում: Երբ ջրի



Նկ. 105

ա. Ներքևից ջրի ճնշման ազդեցությամբ հատակն անոր սեղմակում է խողովակին,  
թիւ խողովակում ջրի մակարդակը հավասարվում է անորում ջրի մակարդակին,  
հատակը պոկվում է խողովակից



Նկ. 106

ա. Ուստի բաղանքը ջրի ճնշմանը ներս է ճկվում,  
թ. ուստի բաղանքը ուղղվում է, երբ  
խողովակում և անորում ջրի մակարդակները հավասարվում են


մակարդակները խողովակում և անորոտ հավասարվում են, թաղանքն ուղղվում է (նկ. 106.р): Նշանակում է՝ թաղանքի վրա ազդող ջրի ճնշման ուժերը երկու կողմերից նույնն են:

Այս փորձն էլ հուշում է, որ միևնույն մակարդակի վրա, իրար հակադիր՝ հորիզոնական ուղղություններով գործադրվող ճնշումները հավասար են:

Այսպիսով՝ նկարագրված փորձերը իմբ են տալիս եզրակացնելու, որ հեղուկի ճնշում ճնշում գոյություն ունի:  
Այդ ճնշումը նույն մակարդակում, բոլոր ուղղություններով նույնն է:

## Հարցեր և առաջադրանքներ

1. Ի՞նչ մամուլյուն կա սեղմակած հեղուկի (կամ գազի) և սեղմակած զսպանակի միջև: Իսկ ինչո՞վ են դրանք տարենքում:
2. Ո՞ր փորձով Պասկալը համոզվեց, որ հեղուկում ճնշումը հաղորդվում է բոլոր ուղղություններով: Նկարագրեք Պասկալի փորձը:
3. Բացատրեք Պասկալի փորձը:
4. Ի՞նչ փորձով կարող եք ցույց տալ, որ գազերում ևս ճնշումը հաղորդվում է բոլոր ուղղություններով:
5. Զնակերպեք Պասկալի օրենքը:
6. Նկարագրեք փորձ, որից հետևում է, որ հեղուկի միևնույն մակարդակի վրա ճնշումը բոլոր ուղղություններով նույնն է:
7. Վերցրեք երկու ապակե փորձանոր: Դրանք փակեք ռետինե խցաններով, որոնց միջով անցկացված են ապակե խողովակներ: I խողովակը համարյա համում է մինչև փորձանորների հատակը, իսկ II խողովակը միացվում է օդահան պոմպին: Մինչև փորձը սկսելը ձախ փորձանորի մեջ կիսով չափ ներկած ջուր լցուեք: Աջ փորձանորից ողք դուրս մղեք: Կփոփոխվի՝ արդյոք ջրի մակարդակը ձախ փորձանորում: Բացատրեք դիտվող երևույթը:



## ՇՐՋՈՒՏԱՏԻԿ ՃՆՇՈՒՄ: ԵԵՂՈՒԿԻ ՃՆՇՈՒՄ ԱՆՈԹԻ ՀԱՏԱԿԻՆ ԵՎ ՊԱՏԵՐԻՆ

Երկրային պայմաններում բոլոր մարմինների վրա, այդ թվում՝ հեղուկների, ազդում է ծանրության ուժը: Եթե անորի մեջ լցված հեղուկը մտովի բաժանենք հորիզոնական բարակ շերտերի, ապա յուրաքանչյուր շերտի վրա իրենց կշռով ճնշում են ստեղծում դրանից վեր գտնվող շերտերը (նկ. 107): Այդ ճնշումն անվանում են հիդրոստատիկ ճնշում:

Նկ. 105-ում պատկերված փորձից եզրակացրինք, որ նոյն շերտում բոլոր ուղղություններով ճնշումը նույնն է: Ճնշումը նույնն է նաև դիտարկվող շերտի տարրեր տեղամասերում: Ճնշումը փոփոխվում է միայն ուղղաձիգով՝ մի շերտից մյուսն անցնելիս: Ընդ որում, դեպի ներքև ճնշումն աճում է: Իրոք, որքան ներքև է ընկած շերտը, այնքան շատ է սեղնված: Զկ՞որ այդ դեպքում շատանում են այն շերտերը, որոնք հիդրոստատիկ ճնշում են ստեղծում:

Այս եզրակացությունները կարող ենք ստուգել նաև շափումների օգնությամբ: Դրա համար բավականաչափ փորձ թաղանքով ճնշաչափը խորացնենք հեղուկի մեջ: Չփոխելով խորությունը՝ ճնշաչափը շրջենք տարրեր անկյուններով: Կտևնենք, որ նրա ցուցմունքը չի փոխվում:

Ճնշաչափը տվյալ դիրքով տեղաշարժենք հորիզոնական հարթության մեջ: Այս դեպքում նոյնական նրա ցուցմունքը կմնա նույնը:

Ճնշաչափի ցուցմունքը կփոխվի, եթե այն տեղաշարժենք ուղղաձիգով:


Դիտարկենք նաև հետևյալ փորձը: Ուետինե հատակով գլանածն անորի մեջ լցնենք ջուր (Նկ. 108): Ջրի կշռի ազդեցությամբ ռետինն հատակը ծլվում է: Որքան բարձր է ջրի սյունը, այնքան շատ է ծլվում ռետինն հատակը: Դարձայլ հանգում ենք նոյն եզրակացությանը.

**անորի մեջ լցրած հեղուկն իր կշռով ճնշում է ստեղծում, որը կոչվում է հիդրոստատիկ ճնշում, ըստ որում, խորանակում գործընթաց հիդրոստատիկ ճնշումն աճում է:**

Եթե նկարագրված փորձերը կրկնենք, երբ հեղուկը լցված է տարրեր ծնի անորների մեջ, ապա կհամոզվենք, որ մեր եզրակացությունները դրանից չեն փոխվում: Անորի հատակին (կամ կամայական հորիզոնական շերտի վրա) հեղուկի գործադրած ճնշումը հաշվարկելու համար դիտարկենք հետևյալ պարզ խնդիրը:


**Ուղղանկյունանիստի ծն ունեցող բաքն ամբողջությամբ լցված է ջուրով: Բաքի բարձրությունը 5 մ է: Ի՞նչ ճնշում է գործադրում ջուրը բաքի հատակին:**

Ճնշումը որոշվում է  $P = F/S$  բանաձևով, որտեղ  $F$ -ը ջրի գործադրած ճնշման ուժն է հատակին: Ճնշման ուժը հավասար է ջրի կշռին, որը հավասար է ջրի վրա ազդող ծանրության ուժին, հետևաբար՝  $F = mg$  ( $m$ -ը ջրի զանգվածն է,  $g$ -ն՝ 1 կգ զանգվածով մարմնի վրա ազդող ծանրության ուժը>):



Նկ. 107

Ընդգծված մոտ հորիզոնական շերտի բոլոր մասերում ճնշումը նույն է: Ճնշումը փոխվում է միայն ուղղաձիգով՝ մի շերտից մյուսն անցնելիս, ըստ որում, դեպի ներքև ճնշումն աճում է:



Նկ. 108

Որքան բարձր է ջրի սյունը, այնքան շատ է ծլվում ռետինն հատակը

Զրի ծավալը հավասար է բարի տարողությանը՝  $V = Sh$ , ուստի զրի զանգվածը՝

$$m = \rho V = \rho Sh,$$

որտեղ  $\rho$ -ն զրի խտությունն է: Բարի հատակին զրի գործադրած ճնշման համար կստանանք հետևյալ արտահայտությունը՝

$$p = \frac{mg}{S} = \frac{\rho Sgh}{S} = \rho gh:$$

Տեղադրելով  $\rho = 1000 \text{ կգ/մ}^3$ ,  $h = 5 \text{ մ}$ ,  $g = 9,8 \text{ Ն/կգ}$ , կստանանք, որ որոնելի ճնշումը՝  $p = 49000 \text{ Պա} = 49 \text{ կՊա}$ :

Այսպիսով՝ անորի հատակին անշարժ հեղուկի (կամ հիդրոստատիկ) ճնշումը որոշվում է

$$p = \rho gh$$


բանաձևով, որտեղ  $\rho$ -ն հեղուկի խտությունն է,  $h$ -ը՝ հեղուկի շերտի հաստությունը: Բանաձևից նկատում ենք, որ զրի ճնշումը բարի հատակին բոլորովին կախված չէ հատակի մակերեսից: Բանաձևը ճիշտ է միայն, եթե հաշվի չենք առնում արտաքին մարմինների, օրինակ, մխոցի ճնշումը հեղուկի ազատ մակերեսության: Եթե հաշվի առնենք արտաքին ճնշումը, որը կնշանակնենք  $p_0$ -ով, ապա  $p = \rho gh$  բանաձևի փոխարեն կունենանք՝

$$p = p_0 + \rho gh:$$

Ստացված բանաձևերից երևում է, որ հեղուկի ճնշումն անորի հատակին կախված է միայն հեղուկի խտությունից և հեղուկի այսն բարձրությունից:

Արդեն տեսանք, որ հեղուկի կամայական հորիզոնական մակարդակում ստեղծված ճնշումը բոլոր ուղղություններով նույնն է: Հետևաբար որևէ մակարդակում անորի պատին ուղղահայաց ուղղությամբ հեղուկի ճնշումն էլ կլինի այն ճնշումը, որը հեղուկը գործադրում է պատին: Ուստի անորի պատի որևէ փոքր տեղամասի վրա հեղուկի ճնշումը նույնականացնենք հաշվել վերը բերված բանաձևերով: Բայց պետք է հաշվի առնել, որ  $h$ -ը պատի դիտարկվող փոքր տեղամասի խորությունն է՝ հաշվված հեղուկի ազատ մակերեսության:

Նկ. 109-ում պատկերված I անորում լցված է 200 գ զանգվածով զուր, II-ում՝ 100 գ, իսկ III-ում՝ 300 գ: Զրի մակարդակի բարձրությունը բոլոր անորներում 10 սմ է, յուրաքանչյուր



Ակ.109

Անորի հատակի մակերեսը՝  $20 \text{ սմ}^2$ : Ծննդան բանաձևից հետևում է, որ յուրաքանչյուր անորի հատակին հիդրոստատիկ ճնշումը նույնն է և հավասար՝

$$p = \rho_{\text{ջող}}gh = 1000 \text{ կգ}/\text{մ}^3 \cdot 9,8 \text{ Ն}/\text{կգ} \cdot 0,1 \text{ մ} = 980 \text{ Պա:}$$

Իմանալով ճնշումը՝ կարող ենք որոշել զրի ճնշման ուժը յուրաքանչյուր անորի հատակին՝

$$F = pS = 980 \text{ Պա} \cdot 0,002 \text{ մ}^2 = 1,96 \text{ Ն:}$$


$P = mg$  բանաձևով հաշվենք անորներում զրի կշիռները: Առաջին անորի զրի կշիռը՝  $P_1 = 1,96 \text{ Ն}$ , երրորդ անորինը՝  $P_2 = 1,225 \text{ Ն}$ , իսկ երրորդինը՝  $P_3 = 2,94 \text{ Ն}$ : Զարմանալի բան. Միայն առաջին անորի հատակին զրի գործադրած ճնշման ուժն է հավասար զրի կշռին: Երկրորդ անորում, օրինակ,  $1,225 \text{ Ն}$  կշռով ջուրը հատակին գործադրում է իր կշռից  $1,6$  անգամ ավելի մեծ ճնշման ուժ: Երրորդ անորում, հակառակը,  $2,94 \text{ Ն}$  կշռով ջուրը հատակին ստեղծում է կշռից  $1,5$  անգամ փոքր ճնշման ուժ:

Ստացված արդյունքը կարծես հակասում է առողջ տրամարանությանը, և հայտնի է «հիդրոստատիկ պարադոքս» անվամբ:

Ինչպես բացատրել, որ հեղուկի ճնշման ուժն անորի հատակին, կախված անորի ձևից, մեծ է կամ փոքր հեղուկի կշռից: Չե՞ որ անորի կողմից հեղուկի վրա ազդող ուժը պետք է հավասարակշռի հեղուկի կշռը: Բայց պետք է նկատի ունենանք, որ հեղուկի վրա ազդում են նաև անորի պատերը: Երրորդ անորում, օրինակ, պատերի ազդեցությունը նաև անորի պատերը ուղղված է դեպի վեր, ուստի այդ անորի հատակին ճնշման ուժը փոքր է զրի կշռից: Երկրորդ անորում, ընդհակառակը, պատերի ազդեցությունը մասսամբ ուղղված դեպի ներքև, և այդ պատճառով ճնշման ուժը գերազանցում է զրի կշռից: Միայն առաջին անորում է, որ հատակին զրի ճնշման ուժը հավասար է զրի կշռին:

## Հարցեր և առաջադրանքներ

1. Ի՞նչ է հիդրոստատիկ ճնշումը:
2. Ինչո՞ւ է հեղուկի հիդրոստատիկ ճնշումը փոփոխվում միայն ուղղաձիգով: Անո՞ւ՞մ, թե՞ նվազում է հեղուկի ճնշումն ուղղաձիգով դեպի ներք ուղղությամբ: Ինչո՞ւ:
3. Քերեք օրինակներ՝ ցույց տալու համար, որ հեղուկում խորանալուն զուգընթաց հիդրոստատիկ ճնշումն անում է:
4. Կախված է արդյոք անորի հատակին հեղուկի ճնշումն անորի ձևից:
5. Գրեք բաց անորի հատակին անշարժ հեղուկի ճնշման բանաձևը: Ինչո՞վ է տարրեր վում այդ ճնշումը հիդրոստատիկ ճնշումից:
6. Գրեք հեղուկի ազատ ճակերնույթից ի խորության վրա անորի պատին գործադրվող հիդրոստատիկ ճնշման բանաձևը:
7. Ի՞նչ է հիդրոստատիկ պարադոքսը: Ինչպես է այն բացատրվում:
8. Կոնվենտ իմացեք ձեր զամգվածը և մոտավորապես որոշեք ձեր մարմնի ծավալը: Շաշվի առեք, որ մարդու մարմնի միջին խորությունը հավասար է ջրի խորությունը:
9. Ո՞ր մեծություններից է կախված ջրի ճնշումը: Կախված է արդյոք ջրի ճնշումն անորի հատակի ճակերնախը: Իսկ ճնշման ու՞ժը:
10. Վերցրեք խոր անոր: Նրա կողմնային պատերին՝ հատակից տարրեր բարձրությամբ, բացեք երեք փոքրիկ անցք: Անցքերը փակեք (օրինակ՝ լուցկու հատիկով) և անորը լիբր ջուր լցրեք: Բացեք անցքերը և հետևեք արտահոսող ջրի շիերին (տես նկարը): Ինչո՞ւ է ջուրն արտահոսում անցքերից: Ինչի՞ց է հետևում, որ խորանալուն զուգընթաց ջրի ճնշումը մեծանում է:



## ՃՆՇՈՒՄԸ ԵՐԿԵՐԻ ԵՎ ՕՎԿԻԱՆՈՍԵՐԻ ՇԱՏԱԿԻՆ: ԵՐԿԱՅԻՆ ԽՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄԸ

§49

Մարդն իր զարգացման ընթացքում հարմարվել է իրեն շրջապատող արտաքին պայմաններին: Ծրագալիքած լինելով զագային (օդային) բաղանքով՝ ենթարկվում ենք այդ բաղանքի գործադրած ճնշմանը: Չափումները ցույց են տվել, որ օդային բաղանքի ստեղծած ճնշումը երկրի մակերևույթին մոտավորապես  $0,1 \text{ UՊա}$  է: Դա մեզ համար սովորական դարձած ճնշում է: Մեր օրգանիզմի համար վտանգավոր են  $0,1 \text{ UՊա}$ -ից մեծ կամ փոքր ճնշումները:

Հաշվումները ցույց են տալիս, որ ծովում, յուրաքանչյուր 10 մ խորանալիս ճնշումը մեծանում է մոտավորապես  $0,1 \text{ UՊա}$ : Իրոք,  $p = \rho gh$  բանաձևում տեղադրելով  $\rho = 1000 \text{ կգ}/\text{մ}^3$ ,  $g \approx 10 \text{ Ն}/\text{կգ}$ ,  $h = 10 \text{ մ}$ , կստանանք՝  $p \approx 1000 \text{ կգ}/\text{մ}^3 \cdot 10 \text{ Ն}/\text{կգ} \cdot 10 \text{ մ} = 100000 \text{ Պա} = 0,1 \text{ UՊա}$ : Օրինակ՝ 100 մ խորությունում սուզանավը ենթարկվում է մոտավորապես  $1 \text{ UՊա}$  ճնշման:

ճնշաչափի միջոցով չափելով սուզանավից դորս ջրի ճնշումը,  $p = \rho gh$  բանաձևով կարելի է որոշել սուզանավի ընկղղման խորությունը՝  $h = p/\rho g$ :


Ավագածից պարզ է, որ ստորջրյա աշխարհն ուսումնասիրել առանց հասուլ հարմարանքների հնարավոր չէ: Եվ սկաֆանդրի (հունարեն «սկաֆե»՝ մակույկ և «անդրո»՝ մարդ բառերից) հայտնագործումը XIX դարավերջին առաջընթաց քայլ էր այդ աշխարհը հետազոտելու ճանապարհին: Սկաֆանդրն անջրանցիկ անհատական հերմետիկ հանդերձանք է՝ բաղկացած պատյանից, սաղավարտից, ձեռնոցներից և ճորակոշիկներից: Սկաֆանդրի մեջ ջրասուզակը շնչում է ծովի մակերևույթից փողորակով մատուցվող սեղմված օդով: Ջրասուզակային սկաֆանդրները հնարավորություն տվեցին ջրաշխարհը հետազոտողներին ազատորեն աշխատել ջրի տակ՝ ընկմվելով մինչև 200 մ:

Անցյալ դարի 40-ական թվականներին ֆրանսիացի հայտնի գիտնական-օվկիանոսագետ Ժակ Բվ Կուստոն (1910-1997) ստեղծեց ջրի տակ շնչելու մեխանիկական սարք՝ **աքվալանգը** (լատիներեն «աքվա»՝ ջուր և անգլերեն «լանգ»՝ թոք բառերից): Այն բաղկացած է սեղմված օդով լի բալոնից, դիմակից և դրանք միացնող առաձգական խողովակից (նկ. 110): Աքվալանգի շնորհիվ կարելի է ընկղղմվել մինչև 40 մ և ջրում մնալ մինչև մեկ ժամ և ավելի:


Հատ մեծ խորություններում, սեղմնամբ պայմանավորված, ջրի ճնշումը զգալիորեն գերազանցում է 0,1 ՄՊա-ը, ուստի ծովային խորքերը հետազոտելու համար օգտագործում են հասուլ սարքեր՝ բարիսֆերաներ և բարիսկաֆներ:

**Բարիսֆերան** (հունարեն «բարիս»՝ խոր և «սֆերա»՝ գունդ բառերից) գնդի ձև ունեցող խցիկ է, որի ներսում տեղակայված են ծովային մեծ խորությունները (մինչև 1 կմ) դիտելու համար նախատեսված սարքեր (նկ. 111): Բարիսֆերայի պատերն անուր պողպատից են և կարող են դիմանալ ջրի մեծ ճնշումներին: Բարիսֆերան ջուրն է իջեցվում նավից, պողպատե ճոպաններով:

**Բարիսկաֆը** (հունարեն «բարիս»՝ խոր և «սկաֆե»՝ մակույկ բառերից) ինքնազնաց սարք է՝ նախատեսված ծովերի և օվկիանոսների խորքերն ուսումնասիրելու համար: Կազմված է բարիսֆերայից, որն ամրացված է մեծ պողպատե ցիստեննի հատակին (նկ. 112): Ցիստենը լցված է բենզինով: Բանի որ բենզինը ջրից քերև է, ապա այդախիք




Նկ. 110  
Աքվալանգ  
ա. Օդով  
տարրություններ,  
բ. ջրասուզակ  
ավտոմատ սարք,  
գ. մերժնշման և  
դ. արտաշնչման  
փողորակներ,  
ե. դիմակ,  
գ. գոտիներ



Նկ. 111  
Բարիսֆերա

Նկ. 112  
Բարիսկաֆ



բարիսկաֆը ծովի խորքերում կարող է լողալ, ինչպես օդապարիկը՝ օդում: Բարիսկաֆը հայտնագործել է շվեյցարացի գիտնական Օգյուստ Պիկարը անցյալ դարի 40-ական թվականներին: 1953 թվականին Օ. Պիկարը և նրա որդին՝ ժակ Պիկարը, «Տրիեստ» բարիսկաֆով խորացան մինչև 3160 մ: 1960 թվականին ժ. Պիկարը և ամերիկացի Դուռ Ուոլշը նույն բարիսկաֆով, որը, սակայն, ավելի էին կատարելազործել, «նվաճեցին» Մարիանյան իջվածքը (Խաղաղ օվկիանոսում), որի խորությունը 11022 մ է: Գիտնականները պարզեցին, որ, չնայած ահուելի ճնշմանը, օվկիանոսի հատակում կենդանի օրգանիզմներ են ապրում: Բայց օվկիանոսի յորացումն անհնար է պատկերացնել առանց գիտահետազոտական սուզանավերի: Սուզանավերն ավելի շարժունակ են և հագեցած են ժամանակակից սարքավորումներով:

Ներկայում ստեղծվում են անիվավոր ստորջրյա ապարատներ՝ ծովի հատակով տեղաշարժվելու համար:

Զրի տակ, մեծ ճնշումների պայմաններում երկարատև մնալու հետևանքով մեծ քանակությամբ օդ է լուծվում ջրասուզակի արյան մեջ: Եթե ջրասուզակն արագ բարձրանա վեր՝ ջրի մակերևույթ, ապա մեծ ճնշման պայմաններում արյան մեջ լուծված օդը կալսի անջատվել արյունից պղպջակների տեսքով: Անջատվող պղպջակները ցավ են առաջացնում ողջ մարմնում: Կարող են նույնիսկ առաջ բերել ծանր հիվանդություն, այսպես կոչված՝ կետնային հիվանդություն (ֆրանսերեն «կետն»՝ արկղ բառից): Ուստի ջրի տակ երկար մնացած ջրասուզակին հարկավոր է վեր բարձրացնել դանդաղորեն, որպեսզի լուծված գազերն արտազատվեն աստիճանաբար՝ առանց պղպջակներ առաջացնելու:

## Հարցեր և առաջադրանքներ

- Որքա՞ն է  $0,1 \text{ UPa}$  ճնշում գործադրող մնդիկի սյան բարձրությունը: Ի՞նչ բարձրություն պետք է ունենա ջրի սյունը, որպեսզի ստեղծի  $0,1 \text{ UPa}$  ճնշում:
- Ծովում ի՞նչ խորությամբ սուզվելիս ճնշումը կլինի  $0,2 \text{ UPa}$ ,  $1 \text{ UPa}$ ,  $10 \text{ UPa}$ :
- Ի՞նչ է սկաֆանդրը: Ե՞րբ են այն հայտնագործել: Որքա՞ն կարելի է խորասուզել սկաֆանդրով:
- Ո՞վ է ստեղծել առաջին արվալանգը: Ի՞նչ մասերից է բաղկացած այն:
- Ի՞նչ է բարիսֆերան: Ինչքա՞ն խորը կարելի է իշեցնել բարիսֆերան:
- Ո՞վ և ե՞րբ է հայտնագործել բարիսկաֆը: Որքա՞ն կարելի է խորասուզել բարիսկաֆով:
- Ինչպե՞ս պետք է վեր բարձրացնեն ջրասուզակին ծովի հատակից: Ինչու՞:



## ՀԱՂՈՐԴԱԿԻՑ ԱՆՈԹԵՐ:

### ՀԱՂՈՐԴԱԿԻՑ ԱՆՈԹԵՐՈՒՄ ՇԵՂՈՒԿԻ ՀԱՎԱՍԱՐԱԿԵՐՊԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Տ50

Ստորևն մասերով միմյանց միացած անորմերն անվանում են հաղորդակից անորմեր: Նկ. 113-ում պատկերված ապակե հաղորդակից անորմերը միացված են ռետինե խողովակով: Խողովակը մեջանդից սեղմենք սեղմակով: Անորմերից մեկի (օրինակ՝ ձախի) մեջ ջուր լցնենք: Սեղմակը հանելուց հետո ջուրը ձախ անորմի կիոսի աջի մեջ այնպահ ժամանակ, մինչև երկու անորմերում էլ ջրի ազատ մակերևույթների մակարդակները հավասարվեն:

Կատարենք հետևյալ փորձը: Նկ. 113-ում պատկերված հաղորդակից անորմերից աջը հերթականորեն փոխենք նախ՝ բարակ (նկ. 114. a), ապա՝ ձագարածն վերջավորություն ունեցող (նկ. 114. p), այնուհետև՝ ծոված խողովակնե-



Նկ. 113  
Հաղորդակից  
անորմեր

Նկ. 114  
Հաղորդակից  
անորմերում  
հեղուկի  
մակարդակը  
նույնն է՝ անկախ  
անորմերի ծեփի և  
շափերից

րով (նկ. 114. զ): Դարձյալ ձախ անորի մեջ ջուր լցնենք: Կտեսնենք, որ, անկախ աջ անորի ծնից և հաստությունից, հավասարակշռություն հաստատվելու հետո ջուրը յուրաքանչյուր դեպքում երկու անորում էլ կանգնում է նույն մակարդակում:

**Կանայական ձևի և չափերի հաղորդակից անորներում հավասարակշռության վիճակում հեղուկի ազատ մակերևույթներն ունեն նույն մակարդակը:**


Այս պնդումն անվանում են **հաղորդակից անորների օրենք:**

Հաղորդակից անորների օրենքի բացատրությունը հետևյալն է: Հաղորդակից անորներից յուրաքանչյուրում հեղուկի ազատ մակերևույթն արտաքին ճնշումը նույնն է: Հետևաբար հեղուկը կզունվի հավասարակշռության մեջ, եթե հավասար լինեն նաև հեղուկի ճնշումները կամայական հորիզոնական մակարդակում:  $p = p_0 + \rho gh$  բանաձևից հետևում է, որ այդ ճնշումները կլինեն նույնը, եթե անորներում հեղուկի ազատ մակերևույթների բարձրությունները դիտարկվող մակարդակից հավասար լինեն:


Հաղորդակից անորների օրենքի հիման վրա են ստեղծված բարի մեջ ջրի մակարդակը որոշող ջրաչափական խողովակները (նկ. 115): Այդպիսի խողովակներ են միացված, օրինակ, զնացրներում տեղադրված՝ լվացվելու ջրով լցված բաքերին: Դրանք բաց ապակե խողովակներ են, որոնցում ջրի մակարդակը միշտ նույնն է, ինչ որ բարում:

Նկ. 116-ում պատկերված հաղորդակից անորներից ծախը սովորական ապակե խողովակ է, իսկ աջը՝ կաթոսիկի ծայրով, որի երկարությունը փոքր է խողովակի երկարությունից: Անորները միացնող ռետիններ խողովակը մեջտեղում ամրացված է սեղմակով: Զախ անորի մեջ ջուր լցնենք: Եթե ջրի ազատ մակերևույթն ավելի բարձր է, քան ծայրով, ապա սեղմակը հանելուց հետո կտեսնենք, որ ծայրույց շատրված է խփում:

Նկ. 117-ում աջ խողովակն ունի անցքեր, որոնք փակված են ծորակներով: Եթեկու խողովակն էլ լցնենք ջրով: Եթե ծորակները բացենք, ապա ջուրը կիոսի այնքան ժամանակ, քանի դեռ ձախ խողովակում ջրի մակարդակն ավելի բարձր է, քան ծորակների մակարդակը: Այս սկզբունքով է կառուցված և գործում յուրաքանչյուր ջրմուտ:



Նկ. 115  
Ջրաչափական  
խողովակում ջրի  
ազատ մակերևույթն  
ունի նույն  
բարձրությունը,  
ինչ բարում




Նկ. 116  
Շատրված  
գործույրական  
սկզբունքը


Զրմուղի կառուցվածքը պատկերված է նկ. 118-ում: Աշտարակի վրա տեղադրված է ջրով լցված բաքը (ջրաճնշիչ բաք): Բարից դուրս եկող խողովակներն ունեն մի շարք ճյուղավորումներ: Դրանք ել հենց մտնում են շենքեր, բնակարաններ: Ճյուղավորումներն ունեն անցքեր, որոնք փակվում են ծորակներով: Ծորակի մակարդակում ջրի ճնշումը համեմատական է բաքում ջրի ազատ մակերևույթի բարձրությանը՝ հաշված այդ մակարդակից: Այդ ճնշումը, սովորաբար, հավասար է մի բանի տասնորդական մեջապասկալի, որի շնորհիվ էլ ծորակը բացելիս ջուրը ծորակից մեծ արագությամբ շիրով դուրս է հոսում:

Եթե հաղորդակից անորներում լցված են տարբեր խոտությամբ հեղուկներ, ապա հավասարակշռության ժամանակ այդ հեղուկների մակարդակներն արդեն նույնը չեն լինի: Դրանում համոզվելու համար U-աձև խողովակի տեսքով հաղորդակից անորներում լցնենք որևէ հեղուկ, օրինակ՝ ջուր, որի խոտությունը  $\rho_1$  է: Եթեկո անորում էլ ջրի ազատ մակերևույթի մակարդակը կլինի նույնը:


Այժմ հաղորդակից անորներից մեկում, օրինակ ձախում, զգուշորեն լցնենք ջրի հետ չխառնվող այլ հեղուկ, օրինակ, կերոսին, որի խոտությունը  $\rho_2$  է: Հեղուկի մակարդակը յուրաքանչյուր անորում կրաքարանա, բայց արդեն ոչ նույն չափով: Կերոսին լցնելու ընթացքում հեղուկների բաժանման սահմանը կիշնի: Նկ. 119-ում այդ բաժանման սահմանն աB-ն է: Այդուհանդերձ, հավասարակշռություն հաստատվելուց հետո, նույն հեղուկում երկու անորում էլ միևնույն հորիզոննական մակարդակում (օրինակ՝ AB), ճնշումները պետք է հավասար լինեն՝  $p_1 = p_2$ : Հեղուկների սյան բարձրություններն այդ մակարդակից վերև նշանակենք  $h_1$ -ով և  $h_2$ -ով:



Նկ. 117  
Զրմուղի  
գործողության  
սկզբունքը



Նկ. 118  
Զրմուղի  
կառուցվածքի  
սխեման:  
Զուրք պոմպով  
մղվում է ջրաճնշիչ  
բաքի մեջ,  
որտեղից էլ արդեն  
ինքնակու ծևով  
«մտնում» է  
շենքերը



Նկ.119

Տարբեր խոտարյան հեղուկների մակարդակները հաղորդակից անորոշերում տարրեր են

Ենթադրենք՝ ամեն մի հաղորդակից անորում հեղուկի ազատ մակերևույթի վրա  $p_0$  արտաքին ճնշումը նույնն է: Այդ դեպքում, հավասարակշռության վիճակում աջ և ձախ անորոշերում AB մակարդակում հեղուկների ճնշումները կլինեն՝

$$p_1 = p_0 + \rho_1 gh_1, \quad p_2 = p_0 + \rho_2 gh_2;$$

Հավասարեցնելով  $p_1$ -ը և  $p_2$ -ը, կստանանք՝

$$p_0 + \rho_1 gh_1 = p_0 + \rho_2 gh_2,$$

որտեղից՝

$$\frac{h_1}{h_2} = \frac{\rho_2}{\rho_1};$$

Ստացված բանաձևից եզրակացնում ենք, որ հավասարակշռության վիճակում **տարրեր հեղուկներով լցված հաղորդակից անորոշերում հեղուկների սյան բարձրությունները՝ հաշված բաժանման մակարդակից, հակադարձ համեմատական են հեղուկների խոտարյուններին:** Ուրեմն որքան մեծ է հեղուկի խոտարյունը, այնքան փոքր է այդ հեղուկի սյան բարձրությունը հաղորդակից անորում հաշված հեղուկների բաժանման սահմանից: Մեր դիտարկած օրինակում  $\rho_1 > \rho_2$ , հետևաբար՝  $h_1 < h_2$ :

## Հարցեր և առաջադրանքներ

- Ո՞ր անորուն են անվանում հաղորդակից անորներ:
- Ո՞նք է հաղորդակից անորունի օրենքը: Ինչպես կարող եք բացատրել այդ օրենքը:
- Ի՞նչ է ջրաչափական խողովակը: Ո՞ր օրենքի վրա է հիմնված նրա գործողությունը:
- Նկարագրեք շատրվանի գործողության սկզբունքը:
- Ի՞նչ սկզբունքը է գործում ջրմուղը:
- Օգտվելով  $h_1 : h_2 = \rho_2 : \rho_1$  բանաձևից՝ պացուցեք հաղորդակից անորունի օրենքը նույն հեղուկի համար:

## §51

### ԶՐԱԲԱՑԽԱԿԱՆ ՄԱՍԻՆ

Պասկալի օրենքից հետևում է, որ հեղուկի ճնշման ուժն անորի պատերին և հատակին կարելի է մեծացնել՝ փոքր ուժով սեղմելով հեղուկը: Իրոք, քանի որ հեղուկն իր վրա գործադրած ճնշումը առանց փոփոխության հաղորդում է բոլոր ուղղություններով, ապա անօգան փոքր ճնշումը մեծ մակերեսով տեղանասի վրա կարող է առաջացնել մեծ ճնշման ուժ:

Հեղուկների այդ հատկության մասին գիտեին դեռևս իին ժամանակներում: Բուկ արդեն XVIII դարավերջից տեխնի-

կայում և կենցաղում սկսեցին կիրառել տարրեր մեքենաներ և սարքեր, որոնց գործողությունը հիմնված է հեղուկների հավասարակշռության և շարժման օրենքների վրա: Այդպիսի մեքենաներն անվանում են հիդրավիլիկ (հունարեն «հիդրո»՝ ջուր և «ավլու»՝ խողովակ բառերից): Դրանցից պարզագույնը ջրարաշխական մամլիչն է, որի գործողության հիմքում Պասկալի օրենքն է:


Ջրարաշխական մամլիչի պարզեցված կառուցվածքը պատկերված է նկ. 120-ում: Այն բաղկացած է զգալիորեն տարրեր հատույքի մակերեսներով երկու հաղորդակցվող գլաններից, որոնք լցված են հեղուկով (սովորաբար՝ յուղով): Հեղուկի վրա ճնշում գործադրվում է  $S_1$  և  $S_2$  մակերեսներ ունեցող միտոցների օգնությամբ, որոնք կիակ հպված են գլանների պատերին և կարող են շարժվել ազատ:

Եթեադրենք  $S_1$  մակերեսով փոքր միտոց սեղմել ենք միտոցին ուղղահայաց  $F_1$  ուժով, իսկ  $S_2$  մակերեսով մեծ միտոց՝  $\vec{F}_2$  ուժով: Փոքր միտոցի կողմից հեղուկի վրա գործադրած ճնշումը՝  $p_1 = F_1/S_1$ , իսկ մեծ միտոցի կողմից գործադրած ճնշումը՝  $p_2 = F_2/S_2$ : Պասկալի օրենքի համաձայն՝ այդ ճնշումներն իրար հավասար են՝  $p_1 = p_2$ , այսինքն՝

$$\frac{F_1}{S_1} = \frac{F_2}{S_2} \quad \text{կամ} \quad \frac{F_2}{F_1} = \frac{S_2}{S_1};$$

**Այսպիսով՝ երկրորդ միտոցի վրա ազդող ուժն այնքան անգամ մեծ է առաջին միտոցի վրա ազդող ուժից, որքան անգամ երկրորդ միտոցի մակերեսը մեծ է առաջին միտոցի մակերեսից:**

Եթե միտոցները հավասարակշռության վիճակում են, ապա նրանց վրա ազդող արտաքին  $\vec{F}_1$  և  $\vec{F}_2$  ուժերը հավասարակշռվում են միտոցների վրա հեղուկի վրա ազդող, մողուլով



Նկ. 120  
Ջրարաշխական  
մամլիչի սխեման

$\vec{F}_1$ -ին և  $\vec{F}_2$ -ին հավասար ու հակուղղված ուժերով: Այսինքն՝ մեծ մխոցը դեպի վեր իրող ուժը  $S_2/S_1$  անգամ գերազանցում է. փոքր մխոցը դեպի ներք ազդող ուժից: Այսպիսով՝ ջրաբաշխական մամլիչի միջոցով ուժի մեջ շահում ենք  $F_2/F_1$  անգամ: Եթե, օրինակ, փոքր մխոցի մակերեսը՝  $S_1 = 2 \text{ սմ}^2$ , իսկ մեծինը՝  $S_2 = 200 \text{ սմ}^2$ , ապա շահումը ուժի մեջ՝

$$\frac{F_2}{F_1} = \frac{S_2}{S_1} = \frac{200 \text{ սմ}^2}{2 \text{ սմ}^2} \quad \text{կամ} \quad F_2 = 100F_1;$$


Այսինքն՝ օգտագործելով ջրաբաշխական մամլիչ, կարելի է փոքր  $F_1$  ուժով հավասարակշռել զգալիորեն մեծ ուժ: Ջրաբաշխական մամլիչում հեղուկը կարծես ծառայում է որպես «ուժեղաբար»:

Իհարկե, ուժի մեջ շահելով, նույնքան անգամ էլ կորցնում ենք ճանապարհի մեջ հակառակ դեպքում կխախտվեր մեխանիկայի «ոսկի կանոնը»: Այսպես՝ ենթադրենք, թե մեծ մխոցն անհրաժեշտ է բարձրացնել  $h_2 = 1 \text{ սմ}$ , եթե փոքր ուժը՝  $F_1 = 10 \text{ Ն}$ : Եթե ուժի մեջ շահում ենք 100 անգամ, այն է՝  $F_2 = 100F_1 = 1000 \text{ Ն}$ , ապա փոքր մխոցը հարկավոր է ներքի շարժել  $h_1 = 100 \text{ սմ}$ : Այդ դեպքում փոքր ուժի աշխատանքը՝  $A_1 = F_1 h_1 = 10 \text{ Ն} \cdot 1 \text{ մ} = 10 \Omega$ , իսկ մեծ ուժի աշխատանքը՝  $A_2 = F_2 h_2 = 1000 \text{ Ն} \cdot 0,01 \text{ մ} = 10 \Omega$ : Ինչպես տեսնում ենք,  $A_1 = A_2$ , այսինքն՝ աշխատանքի մեջ շահում չունենք:

Ջրաբաշխական մամլիչն օգտագործում են, օրինակ, մետաղներ կուլու, դրոշմելու, նրբատախտակ, ստվարաբուղը մամլելու, խաղող և այլ մրգեր ճգնելու, ձիթհաններում սերմերից ծեր քամելու, ծանր առարկաներ (օրինակ՝ ավտոմեքենա) բարձրացնելու և այլ գործողորշյուններ կատարելու համար:

Նկ. 121-ում պատկերված է ավտոմեքենաներում լայնորեն կիրառվող հիդրավիկ արգելակի կառուցվածքը:

Նկ. 121  
Ավտոմեքենայի  
հիդրավիկ  
արգելակի  
կառուցվածքը




Ավտոմեքենայի արգելակման Ա ուսնակը սեղմելիս ազանում ստեղծված ճնշումը հաղորդվում է բ գլանի հետուին, որի ճնշման ուժերի ազդեցությամբ էլ գ մխոցներն ազդում են արգելակային դ կադապարների վրա՝ դրանք սեղմելով անվահեցին և արգելակելով անիվի պտույտը: Եթե ուսնակը չսեղմենք, ապա է զապանակի ազդեցությամբ դ կադապարներն այլևս չեն սեղմի անվահեցը, և անիվն ազատ կպտտվի:

## Հարցեր և առաջադրանքներ

- Ի՞նչ է ջրաբաշխական մամլիչը:
  - Ո՞ր օրենքի հիման վրա է գործում ջրաբաշխական մամլիչը:
  - Որք՞ում է ուժի չափում ջրաբաշխական մամլիչում. եթե շփում չկա:

Խախտվո՞ւմ է արդյոք մեխանիկայի «ուսկի կանոնը» ջրաբաշխական մալիչում:

Ինչո՞ւ:
- Սկարում պատկերված սարքի A մխոցի վրա ճնշում է գործադրում մեկ մարդ: Քանի՞ մարդ է անհրաժեշտ Բ մխոց պահելու համար. եթե A մխոցի մակերեսը 1 մմ<sup>2</sup> է, իսկ B մխոցինը՝ 1 մ<sup>2</sup>:



## Խնդրի լուծման օրինակներ

- Հաշվեր հիդրոստատիկ ճնշման ուժը, որով հեղուկն ազդում է անորի պատերին: Շեղուկի ազատ մակերևույթի բարձրությունը անորի հատակից H է, հեղուկի խտությունը՝ ρ: Անորի պատերն ուղղաձիգ են, պատերի ընդհանուր մակերեսը S է:

$$H, \rho, S \quad | \quad \text{Լուծում:} \quad \text{Հարկավոր է նկատի ունենալ, որ հեղուկի հիդրոստատիկ ճնշումն անորի պատերին ածում է խորանալուն զուգընթաց՝ } p = \rho gh: \text{ Ազատ մակերևույթին } (h = 0) \text{ այդ ճնշումը գրություն է, իսկ հատակին } (h = H) \text{ այն ամենամեծն է: } p_H = \rho gH: \text{ Պատերին հեղուկի ստեղծած միջին հիդրոստատիկ ճնշումը հավասար է } p_0 \text{ և } p_H \text{ ճնշումների թվաքանակական միջինին:}$$

$$p_{\text{սիր}} = \frac{p_0 + p_H}{2} = \frac{1}{2} \rho gH:$$

Պատերին հեղուկի գործադրած F ճնշման ուժը գտնելու համար հարկավոր է միջին ճնշումը բազմապատկել պատերի ընդհանուր մակերեսով: Հետևաբար՝

$$F = p_{\text{սիր}} S = \frac{1}{2} \rho gHS:$$

$$\text{Պատասխան՝ } F = \frac{1}{2} \rho gHS:$$

2. Զրաբաշխական մամլիչի փոքր մխոցի մակերեսը  $5 \text{ սմ}^2$  է, իսկ այդ մխոցին ազդող ճնշման ուժը՝  $500\text{Ն}$ : Մեծ մխոցի մակերեսը  $600 \text{ սմ}^2$  է: Ինչպիսի՞ն է մեծ մխոցի վրա ազդող ճնշման ուժը: Որքա՞ն է յուրաքանչյուր մխոցին գործադրված ճնշումը: Ուժի մեջ ի՞նչ շահում է տալիս ջրաբաշխական մամլիչը:

$$S_1 = 5 \text{ սմ}^2$$

$$S_2 = 600 \text{ սմ}^2$$

$$F_1 = 500 \text{ Ն}$$

$$F_2, p_1, p_2, ?$$

$$F_2/F_1 = ?$$

**Լուծում:** Համաձայն ջրաբաշխական մամլիչի օրենքի՝  $F_2/F_1 = S_2/S_1$ , որտեղից՝  $F_2 = F_1 \frac{S_2}{S_1}$ ,  $F_2 = 500 \cdot \frac{600}{5} = 60000 \text{ Ն} = 60 \text{ ԿՆ}$ : Յուրաքանչյուր մխոցի վրա ճնշումը հաշվարկելու համար անհրաժեշտ է մխոցների մակերեսներն արտահայտել  $\text{մ}^2$  միավորով՝  $5 \text{ սմ}^2 = 5 \cdot (10^{-2} \text{ մ})^2 = 5 \cdot 10^{-4} \text{ մ}^2$ ,  $600 \text{ սմ}^2 = 600 \cdot (10^{-2} \text{ մ}) = 600 \cdot 10^{-4} \text{ մ}^2 = 0,06 \text{ մ}^2$ : Հետևաբար՝

$$p_1 = \frac{F_1}{S_1} = \frac{500}{5 \cdot 10^{-4}} \text{ Պա} = 100 \cdot 10^4 \text{ Պա} = 10^6 \text{ Պա} = 1 \text{ ՄՊա},$$

$$p_2 = \frac{F_2}{S_2} = \frac{60000}{0,06} \text{ Պա} = 10^6 \text{ Պա} = 1 \text{ ՄՊա}: \quad$$

$$\text{Այսպիսով՝ համոզվում ենք, որ } p_1 = p_2: \text{ Ուժի մեջ շահումը } \frac{F_2}{F_1} = \frac{S_2}{S_1} = \frac{600 \text{ սմ}^2}{5 \text{ սմ}^2} = 120:$$

**Պատասխան՝**  $60 \text{ ԿՆ}, 1 \text{ ՄՊա}, 120:$

2. **64 կգ զանգվածով մարդը կանգնած է ջրաբաշխական մամլիչի քառակուսաձև մեծ մխոցին, որի կողմը  $8 \text{ սմ}$  է: Ի՞նչ բարձրություն պետք է ունենա ջուրը փոքր մխոցով անորում, որ հավասարակշռ մարդու:**

$$m_2 = 64 \text{ կգ}$$

$$a = 8 \text{ սմ}$$

$$h = ?$$

**Լուծում:** Մարդուն հավասարակշռելու համար փոքր մխոցով անորում ջրի սյունը պետք է ունենա այնպիսի հ բարձրություն, որ այդ սյան  $p_1$  ճնշումը հավասար լինի մարդու կշռով պայմանավորված  $p_2$  ճնշմանը (մխոցների զանգվածները հաշվի չենք առնում), այսինքն՝  $p_1 = p_2$ : Որեմն՝  $\rho gh = \frac{mg}{S_2}$ ,

որտեղից՝  $h = \frac{m}{\rho S_2}$ : Տեղադրելով  $m = 64 \text{ կգ}, \rho = 1000 \text{ կգ}/\text{մ}^3, S_2 = 8 \cdot 8 \text{ սմ}^2 = 64 \text{ սմ}^2$ , ստանում ենք՝  $h = 10 \text{ մ}$ :

**Պատասխան՝**  $10 \text{ մ}$ :

## §52

### ՍԹԱՌԼՈՐՏԱՅԻՆ ՃՆՇՈՒՄ

Մեր շրջապատում կան մարմիններ, որոնք անտեսանելի են: Դրանց գոյության մասին դատում ենք՝ ելնելով մեր ամենօրյա փորձից: Օրինակ՝ եթե արագ սլայող ավտոմեքենայի պատուհանից դուրս հանենք ծեռքը, ապա կզգանք ավտոմեքենայի շարժմանը հակառակ ուղղված ազդեցություն, որը հետ է հրում ծեռքը: Դա շրջապատի օդի ազդեցությունն է ծեռքի վրա:

**Մենք շրջապատված ենք օդով և ապրում ենք՝ շնչելով այս:**

**Երկրագունդը շրջապատող օդային քաղանքն անվանում են մթնոլորտ:**

Այն գազերի մեխանիկական խառնուրդ է, որի հիմնական քաղաքամասերն են ազոտը (78 %) և քրվածինը (21 %): Արեգակի ճառագայթման ազդեցությամբ մթնոլորտը տարանում է, նրա մասնիկները կատարում են երեք շղադարդ շերմային շարժում և գրադեցնում երկրամերձ տարածությունը: Եթե Երկիրը չգգեր մթնոլորտի մասնիկները, ապա անընդհատ շարժման հետևանքով այդ մասնիկները կհեռանային Երկրից՝ ըստելով տիեզերական տարածության մեջ: Մյուս կողմից՝ եթե Արեգակը չշերմացներ մթնոլորտը, ապա վերջինիս մասնիկները, Երկրի ծգողության ազդեցությամբ, ի վերջո կիավաքվեին Երկրի մակերևույթին: Այսպիսով՝ մթնոլորտի գոյությունը, հետևաբար նաև կյանքը Երկրի վրա, հետևանք է Արեգակի ճառագայթման և Երկրի ծգողության:


Մեզ շրջապատող օդն անտեսանելի է, ուստի դրա ազդեցությունները հաճախ պարզապես չենք նկատում: Սակայն մթնոլորտի բոլոր մարմինները կրում են օդի ազդեցությունը: Ի՞նչ բնույթի է այդ ազդեցությունը, և ո՞րն է դրա պատճառը: Այս հարցերին պատասխանելու համար կատարենք փորձեր:

Եթե բաժակը բերանքիվայր իջեցնենք ջրով լի անորի մեջ, ապա կտեսնենք, որ բաժակի մեջ ջուր գրեթե չի լցվում (նկ. 122): Սակայն եթե բաժակը ջրում շրջենք, նրանից մեծ պղպջակ դուրս կգա, և բաժակը կլցվի ջրով: Այս փորձից հետևում է, որ օդը որոշակի ծավալ է գրադեցնում:

Օդը ձգվում է Երկրի կողմից, հետևաբար այն ունի զանգված և կշիռ, ինչում կարող ենք համոզվել՝ կշռելով սկզբում օդով լցված, իսկ հետո պոմպով օդից ազատված ապակե անորը: Կշեռքի ցուցմունքների տարրերությունն էլ ցույց կտա անորում եղած օդի զանգվածը: Ինձնալով անորի ծավալը՝ կարող ենք որոշել օդի խտությունը:  $0^{\circ}\text{C}$  ջերմաստիճանում այն  $1,29 \text{ կգ}/\text{մ}^3$  է: Օդը, ձգվելով Երկրի կողմից, ճնշում է գործադրում շրջապատի մարմինների վրա:

**Մթնոլորտի կողմից Երկրի մակերևույթի և մթնոլորտում գտնվող բոլոր մարմինների վրա գործադրված ճնշումն անվանում են մթնոլորտային ճնշում:**

Դիտարկենք մթնոլորտային ճնշման գոյությունն ապացույող մի քանի փորձ:



Նկ. 122  
Բաժակի մեջ ջուր չի լցվում



Նկ. 123  
Թղթով փակված բաժակից ջուրը չլինական է:

Չը պարզ լինական է առաջնային դրույթը և ձեռքով պահելով թուղթը՝ բաժակը շրջանաբաշխ է (Նկ. 123): Եթե ձեռքը հեռացնենք, ապա ջուրը բաժակից չի բափվի: Ինչո՞ւ է թուղթը մնում կազմակերպ բաժակին, չե՞ղ որ նրա ազդում է բաժակում եղած ջուրն իր կշռով, ինչպես նաև Երկրի գնդության ուժը: Ուրեմն թղթի վրա ազդում է նաև դեպի վեր ուղղված ուժ, որը գերազանցում է նշանակած ուժերի ազդեցությունը և խոչընդունում է բաժակից թղթի պոկվելուն: Այն թղթի վրա շրջապատի օդի ազդեցության հետևանք է:


Ոչ պակաս տպապորիչ է նաև հետևյալ փորձը (Նկ. 124): Մետաղաքիթեղից պատրաստված ամուր տուփի մեջ որոշ քամակարգությամբ ջուր լցնենք, այն ուժենք ջեռուսից վրա և տաքացնենք մինչև գոլորշի դորս գալը (Նկ. 124. a): Այնուհետև տուփին ամուր փակենք և ջեռուսից հեռացնենք (Նկ. 124. b): Որոշ ժամանակ անց կտևնենք, որ ամուր մետաղատուփը... ճգմվում է (Նկ. 124. c): Ի՞նչ կատարվելու:

Քանի այն է, որ տաքացնելիս ջրային գոլորշու հետ տուփից նաև օդ է դուրս գալիս: Ամուր փակված տուփում մնացած օդի քամակը չի փոխվում: Ջեռուսից հեռացնելուց հետո տուփի պարունակությունը գովանում է, ջրային գոլորշին վերածվում է ջրի: Տուփում մնացած օդի և գոլորշիների ազդեցությունը պատերին բոլանում է, ուստի մքնոլորտի ազդեցությամբ տուփը սեղմվում է և ճգմվում:

Այսպիսով՝ դիտարկված, ինչպես նաև բազմաթիվ այլ փորձեր հաստատում են մքնոլորտային ճնշման գոյությունը և նրա զարդի ազդեցությունները մքնոլորտում գտնվող բոլոր մարմինների վրա:

Մքնոլորտային ճնշումն ազդում է նաև մարդկանց և կենդանիների վրա: Այդ ճնշումը սովորաբար չենք զգում, քանի

Նկ. 124  
Մքնոլորտային ճնշման ուժերը ճգմում են ամուր մետաղատուփը




որ մեր օրգանիզմում արյունը և այլ հեղուկներ, ինչպես նաև զագերը սեղմված են նոյն ճնշմանը:

Նման երևոյթը դիտվում է նաև ձկների մեջ, որոնք ապրում են օվկիանոսի խորքերում, որտեղ ճնշումը հասնում է շատ մեծ արժեքների: Դրանց հյուսվածքները պարունակում են հեղուկներ և զագեր, որոնք սեղմված են և գործադրում են արտաքին ճնշմանը հավասար ճնշում: Զրից հանված այդպիսի խորաքնակ ձկան ներքին օրգանները պատառութված են լինում, քանի որ ջրի վերին շերտերում ճնշումը զգալի փոքր է, և ներքին մեծ ճնշումը բերում է նշված հետևանքներին:

Առօրյա կյանքում մթնոլորտային ճնշման դրսնորումներից մեկն էլ խմելու գործողությունն է: Զրով լի բաժակը մոտեցնելով բերանին՝ ներքաշում ենք նրա պարունակությունը՝ լայնացնելով կրծքավանդակը և դրանով խև փոքրացնելով ճնշումը բերանի խոռոչում: Մթնոլորտային օդի ճնշման ազդեցությամբ ջուրը շարժվում է դեպի բերանի խոռոչ, որտեղ ճնշումն ավելի փոքր է:

## Հարցեր և առաջադրություններ

1. Ինչպես կարելի է ապացուցել մեր շրջապատում օդի առկայությունը:
2. Ի՞նչ է մթնոլորտը:
3. Ի՞նչ զագերից է հիմնականում բաղկացած մթնոլորտը:
4. Ինչու՞ մթնոլորտի մասնիկները չեն հեռանում Երկրից դեպի տիեզերը:
5. Ինչու՞ մթնոլորտի մասնիկները չեն կուտակվում Երկրի մակերևույթին:
6. Ինչու՞ է օդը ճնշում գործադրում մարմինների վրա:
7. Ի՞նչ են անվանում մթնոլորտային ճնշում:
8. Բացատրեք ձողիկով հյութ խմելու երևույթը:
9. Ինչպես կարելի է բաժակից ջուր վերցնել ապակե խողովակով:
10. Ինչու՞ առօրյա կյանքում չենք օգում մթնոլորտային ճնշման ազդեցությունը:
11. Ի՞նչ կկատարվի, եթե վառվող մոմք փակենք բաժակով:  
Բացատրեք:
12. Բաժակն իջեցրեք ջրի մեջ, այնուհետև շրջեք այն հատակով դեպի վեր և ջրից դուրս հանեք այնքան, որ բաժակի պառևները մնա ջրում: Բացատրեք դիտվող երևույթը:



## Շետաքրքիր է իմանալ


Կատարելու հետևյալ ուսանելի և տպավորիչ փորձը:

Մեծ, հարք համակով ափսեի մեջ դրեք մետաղադրամ և ջուր լցրեք այնքան, որ մետաղադրամը ծածկվի ջրով: Առաջարկեք ձեր ընկերոջը վերցնել մետաղադրամը՝ առանց բրջելու մատները (նկ. ա):

Առաջին հայացքից անլուծելի թվայող այս խնդիրը կարելի է հեշտությամբ լուծել բաժակի և թղթի կտորի օգնությամբ: Վառեք թուղթը, մտցրեք բաժակի մեջ և այն, արագ շրջելով, դրեք ափսեի մեջ այնպես, որ մետաղադրամը մնա դրսում (նկ. թ): Կտեսներ, որ թուղթը հանգչում է, բաժակը լցվում ծխով, իսկ նրա տակ՝ բաժակում «ինըն իրեն» հավաքվում է ափսեի ջուրը (նկ. զ): Մի քանի բովք անց, երբ մետաղադրամը չորացած լինի, այն կարելի է վերցնել առանց բրջելու մատները:

Ինչո՞ւ ջուրը լցվու բաժակի մեջ: Դրանում «մեղավոր» է մքնուրուտային ճնշումը: Իրոք, վառվող թուղթը տաքացնում է բաժակի օդը, որի մի մասը, ընդարձակվելով, դուրս է գալիս բաժակից: Թուղթն այրվելուց հետո բաժակի օդը սառչում է, բաժակում ճնշումը փոքրանում է, և մքնուրուտային ճնշման ազդեցությամբ ափսեի ջուրը լցվում է բաժակի մեջ:

Փորձը կարելի է էլեկտրեն՝ թիրք փոխարեն օգտագործելով սպիրտով բրջած բամբակ կամ վառվոյ: Գում մի քանի հատիկ:



## §53

### ՄԹԱՆՈՒՐՏԱՅԻՆ ՃՆՇԱՆ ՉԱՓՈՒՄԸ: ՏՈՐԻՉԵԼԻԻ ՓՈՐՁԸ

Փորձերի օգնությամբ կարելի է ապացույել ոչ միայն մքնուրուտային ճնշման գոյությունը, այլ նաև չափել այն:

Ջրով լի անորի մեջ իջեցնենք մի ապակե խողովակ, որի մեջ կարող է ազատ շարժվել պատերին կիալ հավլող միտոյք: Մխոցն իջեցնենք մինչև ջրի մակերևույթին հավելը այնպես, որ մխոցի և ջրի միջև օդ չմնա (նկ. 125. ա): Այժմ եթե մխոցը վեր բաշենք, կտեսնենք, որ ջուրը բարձրանում է մխոցի հետևից՝ չքողնելով ազատ տեղ (նկ. 126. թ): Դա տեղի է ունենում այն պատճառով, որ մխոցի ազատած ծավալը մքնուրուտային հնաման հետևանքով խսկույն լցվում է ջրով: Այս փաստը դեռ

Արխտութելի ժամանակներից ընդունված էր «բացատրել»՝ ասելով, որ «բնությունը վախենում է դատարկությունից», որը կառաջանար, եթե ջուրը չլցներ մխոցի ազատած ծավալը:

Դեռ հնուց ջրհորներ փորող վարպետներին և հանրափորներին հայտնի էր, որ մխոցավոր խողովակով ջուրը կարելի է բարձրացնել մինչև 10,3 մ, որից հետո ջուրն այլևս չի լցնում մխոցի ազատած ծավալը: Զրի մակերևույթի և մխոցի միջև առաջանում է անօդ տարածություն: Այսինքն՝ 10,3 մ բարձրությունից հետո բնությունը դադարում է «վախենալ» դատարկությունից (նկ. 125. զ):


Վերջնականապես պարզելու համար, թե ի՞նչն է ջրի բարձրանալու պատճառը՝ օդի ճնշումը, թե՛ բնության «վախը» դատարկությունից, կատարենք որոշիչ փորձ:

Խցանով կիպ փակվող անորը լցնենք ջրով այնպես, որ ջրի և խցանի միջև ող չմնա: Խցանի վրա արված անցքի մեջ մտցնենք բարակ խողովակ և փորձենք անորից դուրս քաշել ջուրը (նկ. 126. ա): Կիամոզվենք, որ ջուրը չի բարձրանում խողովակով: Այժմ խցանի վրա ևս մեկ անգք բացենք, որպեսզի օդը հասնի ջրի մակերևույթին (նկ. 126. բ): Այս դեպքում ջուրը հեշտությամբ կրաքար է խողովակով: Այսինքն՝ ջրի բարձրանալը հետևանք է օդի կողմից ջրի մակերևույթին զործադրած ճնշման:


Մթնոլորտային ճնշման գոյությունը համոզիչ ապացույթել և այդ ճնշումն առաջին անգամ շափել է Եվանջելիստա Տորիչելին 1642 թ.: Նա վերցրել է մոտ 1 մ երկարությամբ և մի ծայրը փակ ապակե խողովակ և լիքը լցրել սնդիկով: Մատով փակելով խողովակի բաց ծայրը՝ այն շրջել է, իշեցրել սնդիկով լցված անորի մեջ և մատը հեռացրել (նկ. 127): Նա տեսել է, որ խողովակում սնդիկի մակարդակն իջնում է, սնդիկի մի մասը խողովակից լցվում է անորի մեջ, և խողովակում



Եվանջելիստա  
Տորիչելի  
1608-1647




Նկ. 125  
Ջուրը մխոցի  
հետևից  
բարձրանում է  
մինչև մոտ 10,3 մ



Նկ. 126  
Ջուրը խողովակով  
բարձրանում է  
մթնոլորտային  
ճնշման  
ազդեցությամբ

**Ակ. 127**  
Խողովակում սնդիկի  
մակարդակն  
իջնում է, և սնդիկի  
սյան բարձրությունը  
հավասարվում է  
76 սմ-ի

**Ակ. 128**  
Խողովակում և  
անորում սնդիկի  
մակարդակների  
տարրերությունը  
կախված չէ  
ոչ խողովակի  
բարձրությունից, ոչ  
և խողովակի ծնկից



սնդիկից վեր առաջանում է դատարկ տարածություն՝ վակուում կամ, այսպես կոչված, «տորիչելյան դատարկություն»։ Սնդիկի սյան բարձրությունը խողովակում 76 սմ էր։ Տորիչելյան պարզեց նաև, որ խողովակում և անորում սնդիկի մակարդակների տարրերությունը կախված չէ խողովակի թեքությունից, տրամագծից և խողովակի ծնկից (Ակ. 128)։

Տորիչելիի փորձը բացատրվում է հետևյալ կերպ։ Մթնոլորտը ճնշում է գործադրում անորի մեջ եղած սնդիկի մակերևույթին։ Համաձայն Պասկալի օրենքի՝ այն հաղորդվում է հեղուկում բոլոր ուղղություններով՝ առանց փոփոխության։ Հավասարակշռության վիճակում ճնշումը խողովակում, առ մակարդակում (Ակ. 127) հավասար է մթնոլորտային ճնշմանը։ Սակայն խողովակում առ մակարդակում ճնշումը ստեղծվում է նրանից վեր գտնվող սնդիկի սյան կշռով (սնդիկի սյան վրա ոդ չկա)։ Հետևաբար սնդիկի սյան ստեղծած ճնշումը հավասար է մթնոլորտային ճնշմանը։ Այսպիսով՝ չափելով սնդիկի սյան բարձրությունը խողովակում՝ կարելի է որոշել մթնոլորտային ճնշումը։

Եթե մթնոլորտային ճնշումը մեծանա, ապա անորից սնդիկի մի մասը կմտնի խողովակի մեջ, այնքան, մինչև սնդիկի սյան ստեղծած ճնշումը հավասարվի մթնոլորտային ճնշմանը։ Իսկ եթե մթնոլորտային ճնշումը նվազի, ապա այն այլևս չի կարող «պահել» տվյալ բարձրությամբ սյունը, և սնդիկի մի մասը խողովակից կլցվի անոր՝ փոքրացնելով սյան բարձրությունը։ Այսպիսով՝ մթնոլորտային ճնշումը կարելի է չափել սնդիկի սյան բարձրությամբ՝ սնդիկի սյան միջնութերով (մմ սնդ. սյան) կամ սանդիմետրերով (սմ սնդ. սյան)։

Ստանանք կապ ճնշման 1 մմ սնդ. սյան միավորի և պասկալի միջև: Համաձայն հիդրոստատիկ ճնշման  $p = \rho gh$  բանաձևի, որտեղ տվյալ դեպքում  $\rho$ -ն սնդիկի խոռոչունն է,  $\rho = 13600$  կգ/մ<sup>3</sup>, 1 մմ բարձրությամբ սնդիկի սյան ստեղծած ճնշումը՝

$$1 \text{ մմ սնդ. սյան} = 13600 \frac{\text{կգ}}{\text{մ}^3} \cdot 9,8 \frac{\text{Ն}}{\text{կգ}} \cdot 0,001 \text{ մ} \approx 133,3 \text{ Պա:}$$

Համաշխարհային օվկիանոսի մակարդակի վրա, որին համապատասխանում է  $h = 0$  բացարձակ բարձրություն,  $0^\circ\text{C}$  ջերմաստիճանում մքնուղորժի ճնշումն անվանում են **նորմալ մքնուղորտային ճնշում**: Այն հավասար է 760 մմ սնդ. սյան, որը հավասար է  $760 \cdot 133,3 \text{ Պա} = 101325 \text{ Պա}$ :

Այժմ կարող ենք բացատրել, թե ինչու՞ միտոցով խողովակում ջուրը չի կարող բարձրանալ 10,3 մետրից վեր (նկ. 125. գ): Զանի որ սնդիկի խոռոչունը 13,6 անգամ մեծ է ջրի խոռոչունից, ապա նորմալ մքնուղորտային ճնշման դեպքում ջրի սյան բարձրությունը 13,6 անգամ մեծ կլինի սնդիկի սյան բարձրությունից, այսինքն՝ կլինի  $13,6 \cdot 760 \text{ մմ} = 10,33 \text{ մ}$ : Եթե փորձենք ջուրը բարձրացնել 10,3 մետրից ավելի, ապա միտոցը կշարժվի վեր, իսկ ջուրը չի հետևի նրան, և միտոցի ու ջրի միջև կառաջանա դատարկություն (իրականում միտոցի և ջրի միջև կիավաքվի ջրի գուղորշի):

Հետևելով սնդիկի սյան բարձրությանը՝ Տորիչելին հայտնաբերեց, որ տվյալ վայրում օրվա ընթացքում այն փոփոխվում է՝ կարող է մեծանալ կամ փոքրանալ, և որ կապ կամ մքնուղորտային ճնշման փոփոխության և եղանակի միջև:

## Հարցեր և առաջադրանքներ

- Ինչու՞ է ջուրը խողովակում բարձրանում միտոցի հետևից (նկ. 125):
- Ինչպես է ին բացատրում խողովակով ջրի բարձրանալը միտոցի հետևից մինչև Տորիչելիի փորձերը:
- Ինչու՞ Տորիչելլի փորձում սնդիկն ապակե խողովակից մասամբ էր թափվում:
- Ինչպես կփոխվի սնդիկի սյան բարձրությունն ապակե խողովակում, եթե մքնուղորտային ճնշումը մեծանա: Բացատրել:
- Ինչպես ս կփոխվի սնդիկի սյան բարձրությունն ապակե խողովակում, եթե մքնուղորտային ճնշումը փոքրանա: Բացատրել:
- Ի՞նչ կա կա «սնդիկի սյան 1 մմ» միավորի և պասկալի միջև:
- Մքնուղորտային ճնշման ուժն ազդում է անոթում սնդիկի ազատ մակերևույթին՝ վերից վար ուղղությամբ: Այդ դեպքում ինչու՞ է սնդիկը խողովակում վեր բարձրանում:
- Ի՞նչ է նշանակում «մքնուղորտային ճնշումը հավասար է 660 մմ սնդ. սյան» գրառումը:
- Կփոխվի՞ արյուր սնդիկի սյան երկարությունը խողովակում, եթե այն թերենք:

10. Որքա՞ն է նորմալ մթնոլորտային ճնշումը պասկալներով:
11. Որտե՞ղ է ավելի հեշտ խմել հյութը ձողիկով՝ խոր հանցահորում, թե՞ բարձր սարի գագաթին:
12. Ինչպե՞ս կփոխվեն հեղուկի մակարդակները հաղորդակից անոթներում, եթե մի ժնիվ վրա ողի ճնշումը փոխվի:
13. Բացատրեք Տորիչելիի փորձը:

## Շետաքրքիր է իմանալ

Մթնոլորտային ճնշման գոյությունն ապացուցող փորձեր է կատարել նաև գերմանացի ֆիզիկոս Օտտոն Ֆոն Գերիկեն իր հայտնագործած և կատարելագործած օդահան պոմպով: 1654 թ., երբ Մագդեբուրգ քաղաքի քաղաքավոլում էր, նա բազմարիվ ականատեսների ներկայությամբ ցուցադրել է մթնոլորտային ճնշման գոյությունը նշանակոր մագդեբուրգյան կիսագնդերով: Գերիկեն իր պատրաստած օդահան պոմպով ողի հանեց իրար կիալ կպած, բայց միմյանց չամրացված կիսագնդերից: Մթնոլորտային ճնշումը կիսագնդերն այնքան ուժեղ էր սեղմել, որ դրանք միջյանցից քածանել չէին կարող անգամ հակառակ ուղղությամբ գործ 4-ական զոյց ձիերը:

Նկարում պատկերված է Գերիկեի՝ մագդեբուրգյան կիսագնդերով կատարված մեկ այլ փորձ: Աև Յ կիսագնդերից օդրհանելուց հետո դրանք իրարից հնարավոր չեն քածանել անգամ ծանր բնաների ազդեցությամբ: (Նկարը Օ. Գերիկեի «Նոր մագդեբուրգյան փորձեր» գրքից է, որը լույս է տեսել 1672 թ.):



Գերիկեն է պատրաստել առաջին ջրային ծանրաշափը և դրա օգնությամբ կանխատեսել երանակը, հայտնագործել է օդային ջերմաշափը, ճնշաշափը և այլ սարքեր: Նա հայտնագործություններ է կատարել ֆիզիկայի տարրեր բնագավառներում:

## §54


### ԵԱՆՐԱՉԱՓ: ԱՆՇԵՂՈՒԿ ԵԱՆՐԱՉԱՓ ՄԽՈՑԱՎՈՐ ՃԵՂՈՒԿ ՊՈՄԴ

Տորիչելիի փորձում տվյալ վայրում մթնոլորտային ճնշմանը համապատասխանում էր սնդիկի ուղղածից սյան որոշակի բարձրություն, որը ճնշման փոփոխման հետ փոփոխվում էր: Ուրեմն եթե չափենք սնդիկի սյան բարձրությունը խողովակում, ապա որոշած կլինենք մթնոլորտային ճնշումը: Դրա համար բավական է ապակե խողովակին ամրացնել մի սանդղակ՝ քանոն, որով չափվում է սնդիկի սյան երկարությունը խողովակում: Նկատի ունենալով սնդ-


կի սյան բարձրության և ճնշման միջև կապը՝  $p = \rho_{\text{սյ}}gh$  բանաձևը, սանդղակը կարելի է աստիճանավորել ճնշման «սնդիկի սյան մմ» միավորով (նկ. 129): Ստացված սարքը, որի միջոցով կարող ենք չափել նրանորտային ճնշումը, կոչվում է **ծանրաչափ** կամ բարոմետր (հունարեն «բարոս»՝ ծանրություն և «մետρեո»՝ չափում եմ բառերից): Չափումների ճշությունն ապահովելու համար պետք է նկատի ունենալ, որ սանդղակի «զրո» նիշը պետք է համընկնի անորուս սնդիկի մակերևույթի մակարդակին (նկ. 130): Անհրաժեշտ է նաև ծանրաչափի ցուցմունքներում մտցնել ուղղում՝ կախված ջերմաստիճանից, եթե այն  $0^{\circ}\text{C}$  չէ, քանի որ սնդիկի սյան բարձրությունը ջերմաստիճանից կախված փոփոխվում է (նկ. 129-ում ծանրաչափին կցված է ջերմաչափ, իսկ սանդղակի գրու համընկեցվում է անորուս սնդիկի մակարդակին  $\vartheta$  պլոտուակի միջոցով):

Սնդիկային ծանրաչափը շատ ճշգրիտ սարք է, սակայն դրա օգտագործումը կապված է որոշակի անհարմարությունների հետ. այն բավական մեծ է, խողովակը պետք է միշտ պահել ուղղաձիգ դիրքում, այն հարմար չէ տեղափոխելու համար:


Գործնականում ավելի հաճախ օգտագործում են **անհեղուկ ծանրաչափ** (բարոմետր-աներոիդ) կոչվող սարքը, որը հեղուկ (մասնավորապես՝ սնդիկ) չի պարունակում (հունարեն «աներոիդ»՝ անհեղուկ բառից): Անհեղուկ ծանրաչափի արտաքին տեսքը պատկերված է նկ. 131. ա-ում: Սարքի հիմնական մասը մետաղի առածգական ծուփիկն է, որից ուր





Նկ. 129  
Սնդիկային  
ծանրաչափ



Նկ. 130  
Սանդղակի  
Օ նիշը պետք է  
համընկեցնել  
բայ անորուս  
սնդիկի  
մակերևույթի  
մակարդակին



**Ակ. 131**  
Անհեռուկ  
ծանրաշափ.  
ա. արտաքին տեսքը  
և կորպածքը,  
բ. կառուցվածքը  
(մինական մասերը)



հանված է (Ակ. 131. բ): Մթնոլորտային ճնշման տակ, որպեսզի առաջական տուփիկը չգմվի, կափարիչը պահպում է զսպանակով: Մթնոլորտային ճնշումը մեծանալիս տուփիկը սեղմփում է, իսկ փոքրանալիս՝ ուղղում: Տուփիկի կափարիչի տեղաշարժը հաղորդվում է պարին, որն էլ համապատասխան սանդղակի վրա ցույց է տալիս մթնոլորտային ճնշման արժեքը սնդիկի այան միլիմետրերով կամ պակալմերով:


Մթնոլորտային ճնշման փոփոխությունը կապված է եղանակի փոփոխության հետ, ուստի դրա չափումները շատ կարևոր են եղանակի կանխագուշակման համար: Օդերևութարանական դիտումներում օգտագործում են նաև **ծանրագիր** (բարոգրաֆ) կոչվող սարքը, որը գծում է ճնշման կախումը ժամանակից պատկերող կորն ամրող օրվա ընթացքում:

Նկ. 126-ում պատկերված մխոցավոր խողովակը մխոցավոր հեղուկային արոմայի պարզեցված տարատեսակ է, որի օգնությամբ ջուրը կարելի է բարձրացնել մոտ 10 մ: Ներկայումս օգտագործվող մխոցավոր հեղուկային պոմպի սխեման պատկերված է նկ. 132-ում:

Այն բաղկացած է գլանից, որի մեջ պատերին կիս սեղմփած կարող է շարժվել Մ մխոցը: Խողովակի ստորին մասում և մխոցի մեջ դրված են ա և բ կափույրները, որոնք բացվում են դեպի վեր:

Եթե մխոցը շարժվում է դեպի վեր, բ կափույրը փակվում է, իսկ ա-ն՝ բացվում: Դրա հետևանքով ճնշումը մխոցի տակ փոքրանում է, և մթնոլորտային ճնշման ազդեցությամբ ջուրը լցնում է ա կափույրից վերև գտնվող տարածությունը:

Մխոցն իջեցնելիս նրա տակ գտնվող ջուրը ճնշում և փակում է ա կափույրը և ջուրը, բայելով բ կափույրը, լցնում է Մ մխոցից վերև գտնվող տարածությունը: Հետագա բարձրացնանք գուգընթաց մխոցի հետ բարձրանում է նրանից վեր գտնվող ջուրը և բացվում գ խողովակից: Միաժամա-



**Ակ. 132**  
Մխոցավոր  
հեղուկային պոմպ

նակ բարձրացող Մ մխոցի հետևից ջրի նոր քանակ է մտնում զլանի մեջ, որը մխոցն իջնելիս հայտնվում է մխոցից վերև և ամեն ինչ կրկնվում է:

## Հարցեր և առաջադրանքներ

1. Ի՞նչ կառուցվածք ունի սնդիկային ծանրաչափը:
2. Ի՞նչ կառուցվածք ունի անհեղուկ ծանրաչափը:
3. Ինչպես է աստիճանավորված անհեղուկ ծանրաչափը:
4. Ինչու՞ չի կարելի անհեղուկ ծանրաչափի տուփիկը պատրաստել հաստ պատերով, ամուր ճետաղից:
5. Ինչու՞ է շրջապատի ջերմաստիճանն ազդում սնդիկային ծանրաչափի ցուցմունքների վրա:
6. Ձեզ հայտնի ուրիշ ի՞նչ սարքով կարելի է չափել մբնոլորտային ճնշումը:
7. Որքա՞ն վլինի մխոցավոր հեղուկային պոմպում սնդիկի սյան առավելագույն բարձրությունը նորմայի մբնոլորտային ճնշման դեպքում:
8. Նկարագրեք մխոցավոր հեղուկային պոմպի կառուցվածքը:
9. Նկարագրեք մխոցավոր հեղուկային պոմպի աշխատանքը:

## ՄԹՍՈԼՈՐՏԱՅԻՆ ՃՆՇԱԱՆ ԿԱԽՈՒՄԸ ԲԱՐՁՐՈՒԹՅՈՒՆԻՑԻՑ

§ 55

Մբնոլորտային ճնշման ուսումնասիրությամբ գրադիվել է նաև Բլեգ Պասկալը: Նա, համեմատելով սարի ստորոտում և գագաթին ծանրաչափի ցուցմունքները, պարզել է, որ վեր բարձրանալիս մբնոլորտային ճնշումը նվազում է: Նշանակում է՝ մբնոլորտային ճնշման արժեքը տվյալ վայրում կախված է այդ վայրի բարձրությունից: Օրինակ՝ Երևանի Հանրապետության հրապարակում, որի բարձրությունը ծովի մակերևույթից մոտ 950 մ է, մբնոլորտային ճնշումը հավասար է սնդիկի սյան 665 մմ-ի, իսկ Արարատի գագաթին, որի բարձրությունը 5165 մ է, այն հավասար է սնդիկի սյան 400 մմ-ի:

Այժմ պարզենք, թե ինչո՞վ է պայմանավորված մբնոլորտային ճնշման կախումը տվյալ վայրի բարձրությունից:

Ինչպես գիտենք Երկիրը ձգում է մբնոլորտի բաղադրության մեջ մտնող գագերը: Մբնոլորտի վերին շերտերը սեղմում են իրենցից ներքև գտնվող շերտերը, ուստի ստորին շերտերն ավելի խիտ են, քան վերին շերտերը: Երկրի մակերևույթից հեռանալիս մբնոլորտն ավելի ու ավելի է նոսրանում և աստիճանաբար անցնում է տիեզերական տարածության:

Երկրի մակերևույթին մքնոլորտային ճնշումն ամենամեծն է, քանի որ այն ստեղծվում է մքնոլորտային օդի ամբողջ շերտի ազդեցությամբ: Երկրի մակերևույթից վեր բարձրանալիս օդային շերտի հաստությունը նվազում է, և նրա գործադրած ճնշումը փոքրանում է:

Մեզ արդեն հայտնի է, որ ճնշումը հեղուկում նոյնպես կախված է տվյալ մակարդակից վեր գտնվող հեղուկի սյան շերտի հաստությունից. որքան հաստ է շերտը, այնքան մեծ է հեղուկի գործադրած ճնշումը: Այն, համաձայն հիդրոստատիկ ճնշման բանաձևի, ուղիղ համեմատական է ընկդման խորությանը և առավելագույնն է անորի հատակին:

Սակայն, ի տարրերություն հեղուկի, մքնոլորտում վեր բարձրանալիս, օդի շերտի հաստության նվազմանը գուգքներաց փոքրանում է նաև օդի խտությունը, ուստի մքնոլորտային ճնշումը նվազում է ավելի արագ, քան հեղուկում: Նշենք նաև, որ մքնոլորտային ճնշման հաշվարկման համար չենք կարող օգտվել հիդրոստատիկ ճնշման բանաձևից, քանի որ բարձրությունից կախված փոփոխվում է նաև օդի խտությունը:

Ինչպես ցույց են տալիս չափումները, 5,5-ից 6 կմ բարձրանալիս օդի ճնշումը և խտությունը մոտ 2 անգամ փոքրանում են Երկրի մակերևույթին ունեցած իրենց արժեքներից:

Մքնոլորտային ճնշման և խտության՝ բարձրությունից կախված արագ նվազման մյուս պատճառն էլ ջերմաստիճանի նվազումն է:

Մքնոլորտի ստորին շերտերում (մինչև մի քանի կմ) յուրաքանչյուր 11 մ բարձրանալիս ճնշումը նվազում է սնդուկի սյան 1մմ-ի չափով: Իմանալով այս կապը, կարելի է անհեղուկ ծանրաչափի սանդղակն աստիճանավորել այնպես, որ այն ցույց տա վերելքի բարձրությունը: Այդ սարքը հայտնի է որպես բարձրաչափ (ալտիմետր՝ լատիներեն «ալտիու»՝ բարձր բառից): Բարձրաչափից օգտվում են ինքնարիոնների, ուղղարիոնների և օդապարիկների օդաչուները, ալպինիստները և ճանապարհորդները:

## Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչպես է փոփոխվում մքնոլորտային ճնշումը Երկրի մակերևույթից վեր բարձրանալիս:
2. Ի՞նչո՞ւ է մքնոլորտային ճնշման արժեքը կախված տվյալ վայրի բարձրությունից:
3. Ի՞նչ նմանություն կա հեղուկի սյան և մքնոլորտային օդի սյան ստեղծած ճնշումների միջև:
4. Մքնոլորտային ճնշումը կարելի՞ է հաշվել հիդրոստատիկ ճնշման բանաձևով: Ի՞նչո՞ւ:
5. Ի՞նչ սարք է բարձրաչափը: Ինչպես է աստիճանավորված դրա սանդղակը:

## Խնդրի լուծման օրինակներ

1. Որոշեք գազի ճնշումը բաղնուում նորմալ արտաքին ճնշման դեպքում, եթե սնդիկի մակարդակների տարրերությունը 100 մմ է:

$$\begin{aligned} p_0 &= 760 \text{ մմ սնդ. սյուն} \\ h &= 100 \text{ մմ} \\ \rho_{\text{սնդ}} &= 13600 \frac{\text{կգ}}{\text{մ}^3} \\ p &=? \end{aligned}$$

**Լուծում:** Նույն հորիզոնական մակարդակում A և B կետերում կետերում ճնշումն ունի նույն արժեքը՝  $p_A = p_B$ ,  $p_A$ -ն ճնշումն է, անորում ( $p_A = p$ ), իսկ B կետում ճնշումը մթնոլորտային ճնշման և  $h = 100$  մմ բարձրությամբ սնդիկի սյան հիդրոստատիկ ճնշման

գումարն է: Հետևաբար՝  $p = p_0 + \rho_{\text{սնդ}}gh = \rho_{\text{սնդ}}gH + \rho_{\text{սնդ}}gh = \rho_{\text{սնդ}}g(H + h)$ , որտեղ  $H = 760$  մմ: Տեղադրելով մեծությունների արժեքները՝ կստանանք՝

$$p = 13600 \frac{\text{կգ}}{\text{մ}^3} \cdot 9,8 \frac{\text{Ն}}{\text{կգ}} \cdot 0,86 \text{ մ} = 114621 \text{ Պա:}$$

Պատասխան՝ 114621 Պա:

2. Օդի ճնշումը մագնիտուրոյան կիսագնիերում սնդիկի սյան 10 մմ է. կիսագնիերի հատույքի մակերեսը՝  $0,2 \text{ մ}^2$ : Ինչպիսի՞ զանգվածով թե՛ռ պետք է կախել ստորին կիսագնից այն վերին կիսագնից պոկելու համար: Արտաքին ճնշումը 760 մմ սնդ. սյուն է:

$$\begin{aligned} h &= 10 \text{ մմ} \\ H &= 760 \text{ մմ} \\ S &= 0,2 \text{ մ}^2 \\ m &=? \end{aligned}$$

**Լուծում:** Յուրաքանչյուր կիսագնիյի վրա ազդող ուժը հավասար է արտաքին և ներքին ճնշման ուժերի տարրերությանը, հետևաբար՝  $F = S(p_w - p_b)$ , որտեղ  $S$ -ը կիսագնիերի հատույքի մակերեսն է,  $p_w = \rho_{\text{սնդ}}gh$ -ն արտաքին ճնշումն է,  $p_b = \rho_{\text{սնդ}}gh$ -ը՝ ներքին ճնշումը: Ուժի արտահայտությունը հավասարեցնելով  $F_d = mg$  ծանրության ուժին՝ անհայտ զանգվածի համար կստանանք՝

$$\begin{aligned} m &= \frac{F_d}{g} = \frac{S(p_w - p_b)}{g} = S\rho_{\text{սնդ}}(H - h) = \\ &= 0,2 \text{ մ}^2 \cdot 13600 \frac{\text{կգ}}{\text{մ}^3} \cdot 0,75 \text{ մ} = 2040 \text{ կգ:} \end{aligned}$$



Պատասխան՝ 2040 կգ:

3. Ծանրաչափն օդապարիկում ցույց է տալիս 360 մմ սնդ. սյան ճնշում: Ինչքա՞ն է ծովի մակերեսույթից օդապարիկի բարձրությունը: Ընդունեք, որ յուրաքանչյուր 11 մ բարձրանալիս ճնշումը նվազում է սնդ. սյան 1 մմ-ով:

$$\begin{aligned} p_0 &= 760 \text{ մմ սնդ. սյուն} \\ h &=? \end{aligned}$$

**Լուծում:** Ծովի մակերեսույթին ճնշումը հավասար է նորմալ մթնոլորտային ճնշմանը՝  $p_0 = 760$  մմ սնդ. սյան: Որոնենի բարձրությունում վրա այն հավասարվել է 360 մմ սնդ. սյան՝ նվազելով սնդ. սյան 400 մմ-ով, հետևաբար՝

$$h = \frac{400 \text{ մմ}}{1 \text{ մմ}} \cdot 11 \text{ մ} = 4400 \text{ մ:}$$

Պատասխան՝ 4400 մ:

Հեղուկներն ազդում են իրենց մեջ ընկղմված մարմինների վրա: Այդ ազդեցությունն ամեն անգամ զգում ենք, եթե լուսում ենք ջրում:

Եթե գետնից բարձրացնենք մի ծանր քար և այն աստիճանաբար ընկղմենք ջրի մեջ, կզգանք, թե ինչպէս է փոքրանում մեր մկանային ուժը, որով քարը պահում էինք օդում:


Ջրի ազդեցությունն առավել ակնառու դարձնելու համար կատարենք հետևյալ փորձը: Ամրակալանին ամրացնենք ուժաշափ, նրանից կախենք թե՛ռ և չափենք զսպանակում առաջացած առաձգականության ուժը (նկ. 133. ա), որը հավասար է թե՛ռի կշռին: Այժմ թե՛ռի տակ դրված անորր լցնենք ջրով այնքան, մինչև թե՛ռը լրիվ խորասուզվի ջրի մեջ (նկ. 133. բ): Եթե նորից չափենք զսպանակի առաձգականության ուժը, կտեսնենք, որ այն փոքր է նախորդ արժեքից:


Իսկ ի՞նչն է պատճառը: Չե՞ որ պարզ է, որ ոչ թե՛ռի զանգվածը և, հետևաբար, ոչ էլ նրա վրա Երկրի ծգողության ուժը չին կարող փոխվել: Պատճառը մեկն է՝ ջուրը թե՛ռի վրա ազդում է դեսպի վեր ուղղված ուժով, որը փոքրացնում է թե՛ռի կշռիը: Այդ ուժն անվանում են արքիմեդյան ուժ՝ ի պատիվ Արքիմեդի, որը մեր բվարկությունից մոտ 250 տարի առաջ հայտնաբերել է այդ ուժի հաշվարկման բանաձևը:

Հեղուկներում արքիմեդյան ուժն ազդում է նաև մարմնի մասնակի խորասուզման դեպքում: Նրանուն կարող ենք համոզվել, եթե վերևում նկարագրված փորձում անորդ մեջ այնքան ջուր լցնենք, որ թե՛ռն ընկղմված լինի մասսամբ:

Նկ. 133

ա. Հավասարապատճերյան փիճակում առաձգականության ուժը հավասար է թե՛ռի վրա ազդող ծանրության ուժին,  
բ. առաձգականության ուժի սրժերը փոքրացնել է





### Ակ. 134

Չանգի տակից  
ողը հանելուց հետո  
ա փոչիկի վրա  
արքմելյան ուժն  
արդեն չի ազդում,  
և կշեռքի  
հավասարա-  
կշառյանը  
խախտվում է:

Արքմելյան ուժ ազդում է ոչ միայն հեղուկի, այլ նաև գազի մեջ ընկղմված մարմնի վրա: Գազերում այդ ուժը ոչ միշտ է զգալի, քանի որ, սովորաբար, շատ փոքր է մարմնի վրա ազդող ծանրության ուժից: Սակայն այն միշտ գոյություն ունի և կարելի է գրանցել, օրինակ, կատարելով հետևյալ փորձը:

Կշեռքի լծակի մի ծայրին կախվենք ա փոչիկը և այն հավասարակշռենք ի կշռաքարով (Ակ. 134): Այժմ կշեռքը տեղադրենք օդահան զանգի տակ և պոմպով օղը նրանից արտամղենք: Կնկատենք, որ կշեռքի հավասարակշռությունը խախտվում է: Փոչիկը ներքև է իջնում: Նրա պատճառն այն է, որ մինչև օղը հանելի այն փոչիկի վրա ազդում էր դեպի վեր ուղղված ուժով: Օղը հանելուց հետո այդ ուժը դադարում է գործել, որի պատճառով կշեռքի հավասարակշռությունը խախտվում է:


Այս փորձերը ցույց են տալիս, որ հեղուկներն ու զագերն իրենց մեջ ընկղմված մարմինների վրա ազդում են դեպի վեր ուղղված արքմելյան ուժով:

### Հարցեր և առաջադրանքներ

1. Ո՞ր ուժն է կոչվում արքմելյան ուժ:
2. Ինչպես է ուղղված արքմելյան ուժը:
3. Ինչու՞ շունը ջրում հեշտությամբ դուրս է քաշում խեղդվող մարդուն, սակայն հանելով ափ, չի կարողանում մարդուն տեղից շարժել:
4. Պատկերեք Ակ. 132. բ-ում դիտարկվող բնօի վրա ազդող ուժերը:
5. Ինչպես կարելի է համոզվել, որ հեղուկի մեջ ընկղմված մարմնի վրա հեղուկն ազդում է դուրս մղող ուժով:
6. Նկարագրեք փորձ, որն ապացուցում է արքմելյան ուժի գոյությունը գազերում:

# 857

## ԱՐԵՒՄԵԴԻ ՕՐԵՆՔԸ



Ակ. 135

Արքիմեդյան ուժը հեղուկի կողմից մարմնի վրա ազդող ճնշման ուժերի համազորն է:

Ակ. 136


Ուղղանկյունաձիստի վրա ազդող արքիմեդյան ուժը հաշվարկը

Այժմ փորձենք պարզել արքիմեդյան ուժի առաջացման պատճառը և ստանանք այն հաշվարկելու բանաձևը:

Դիտարկենք ջրի ներսում մոռվի առանձնացված կամայական ծավալ (Ակ. 135): Այդ ծավալով ջրի վրա ազդում է նրա ծանրության ուժը, սակայն այն դեպքի հատակ չի իջնում: Ինչո՞ւ: Պատճառը պարզ է՝ դրան խոչընդոտում են շրջապատող ջրի հիդրոստատիկ ճնշման ուժերը: Առանձնացված տեղամասի վրա ազդող ճնշման ուժերի համագորը, որն ուղղված է ուղղաձիգ դեպքի վեր, հենայ արքիմեդյան ուժն է: Հասկանալի է, որ եթե դիտարկվող ծավալով հեղուկի փոխարեն տեղադրենք նոյն ծավալով այնու մարմին, ապա արքիմեդյան ուժը չի փոխավի:

Այժմ դիտարկենք  $\rho_h$  նստությամբ հեղուկի մեջ լրիվ լնկղմված ուղղանկյունաձիստի ծև ունեցող մարմին (Ակ. 136), որի բարձրությունը  $H$  է, իսկ հիմքի մակերեսը՝  $S$ : Դիցոր վերին նիստի խորությունը հեղուկի ազատ մակերևույթից  $h_1$  է, իսկ ստորին նիստինը՝  $h_2$ :

Հեղուկն ազդում է մարմնի բոլոր նիստերի վրա դրանց ուղղահայց ուժերով: Տվյալ նիստի վրա հեղուկի ազդեցության ուժը կախված է հեղուկի հիդրոստատիկ ճնշման արժեքից: Մարմնի երկու՝ իրար հանդիպակաց կողմնային նիստերին ազդող ուժերը նորույն հավասար են: Քանի որ դրանք իրար հակառակ են ուղղված, ապա հավասարակշռում են միմյանց: Այդ ուժերի ազդեցությամբ մարմինը միայն սեղմվում է: Իսկ ստորին նիստի վրա ազդող  $F_1$  ուժը, քանի որ  $h_2$  մակարդակում ճնշումն ավելի մեծ է, քան  $h_1$  մակարդակում: Պետք է հաշվի առնել, որ, համաձայն Պասկալի օրենքի,  $h_2$  բարձրությամբ



հեղուկի այսն ճնշումը հաղորդվում է բոլոր ուղղություններով, և այդ պատճառով ստորին նիստի վրա ճնշման ուժն ուղղված է դեպի վեր:

Այժմ որոշենք այդ ուժերը և դրանց համագորը: Մարմնի վերին մակերևույթին հեղուկի հիդրոստատիկ ճնշումը կլինի՝  $p_1 = \rho_h gh_1$ , իսկ նրա վրա ազդող ճնշման ուժը՝  $F_1 = p_1 S = \rho_h gh_1 S$ : Մարմնի ստորին մակերևույթին ճնշումը՝  $p_2 = \rho_h gh_2$ , իսկ ճնշման ուժը՝  $F_2 = p_2 S = \rho_h gh_2 S$ : Այսպիսով՝ այդ ուժերի համագորը, որը հենց արքիմեդյան ուժն է, ուղղված կլինի ուղղաձիգ դեպի վեր, իսկ նրա արժեքը՝

$$F_u = F_2 - F_1 = \rho_h gh_2 S - \rho_h gh_1 S = \rho_h g(h_2 - h_1)S = \rho_h gHS:$$

Հաշվի առնելով, որ  $V_d = HS$ -ը հեղուկի մեջ ընկղմված մարմնի ծավալն է, արքիմեդյան ուժի համար վերջնականապես կստանանք հետևյալ բանաձևը՝


$$F_u = \rho_h gV_d:$$

Արքիմեդյան ուժն առաջանում է հեղուկի և մարմնի փոխազդեցության հետևանքով, ուստի նրա հաշվարկման բանաձևը պետք է ներառի ինչպես հեղուկը, այնպես էլ մարմինը բնութագրող ֆիզիկական մեծությունները: Ստացված բանաձևում հեղուկը բնութագրող մեծությունը նրա  $\rho_h$  խոռոչունն է, իսկ մարմինը բնութագրող մեծությունը՝ նրա  $V_d$  ծավալը:

Այս բանաձևը ստացանք այն դեպքի համար, եթե մարմինն ամբողջությամբ ընկղմված է հեղուկում: Եթե մարմինը մասամբ է ընկղմված հեղուկի մեջ, բանաձևում մարմնի  $V_d$  ծավալի փոխարեն պետք է վերցնել նրա խորասուզված մասի ծավալը:

Հեղուկի  $\rho_h$  խոռոչյան և մարմնի  $V_d$  ծավալի  $\rho_h V_d$  արտադրյալը մարմնի արտամղած հեղուկի զանգվածն է, իսկ  $\rho_h V_d$ -ը՝ արտամղած հեղուկի կշիռը, այսինքն՝ արքիմեդյան ուժը հավասար է մարմնի ծավալով արտամղված հեղուկի կշռին: Այս պնդումը ճիշտ է ոչ միայն հեղուկների, այլ նաև զագերի համար: Ընդհանրացնելով ստացված արդյունքները՝ կարող ենք ծնակերպել Արքիմեդի օրենքը:

**Հեղուկը (գազը)** իր մեջ ընկղմված մարմնի վրա ազդում է ուղղաձիգ դեպի վեր ուղղված ուժով, որը հավասար է մարմնի արտամղած հեղուկի (գազի) կշռին:




Նկ. 137  
Արքիմեդի օրենքի ստուգումը փորձով

Արքիմեդի օրենքը կարելի է ստուգել հետևյալ փորձով: Ամրակալանին ամրացված ա ուժաչափից կախվենք բ ճարմինը (նկ. 137) և գրանցենք ուժաչափի ցուցմունքը: Այսուհետև դ անորը մինչև և ջրափակի խողովակի մակարդակը լցնենք ջրով և զ վերամրարձ սեղանի օգնությամբ աստիճանարար վեր բարձրացնենք: Մարմնի խորասուզմանը գուգընթաց նրա արտամդած հեղուկը կլցվի ջրափակի խողովակի տակ տեղադրված զ չափանորի մեջ: Եթե մարմինը լրիվ խորասուզվի ջրի մեջ, նորից գրանցենք ուժաչափի ցուցմունքը: Եթե կու ցուցմունքների տարրերությունը հավասար է արքիմեդյան ուժին: Այժմ, եթե չափենք չափանորում հավաքված ջրի ծավալը և հաշվենք այդ ջրի կշիռը, կհամոզվենք, որ այն հավասար է արքիմեդյան ուժին:

## Հարցեր և առաջադրանքներ

- Ո՞րն է հեղուկում արքիմեդյան ուժի առաջացման պատճառը:
- Ի՞նչ մեծություններից է կախված արքիմեդյան ուժը:
- Զնակերպեք Արքիմեդի օրենքը:
- Նկարագրեք Արքիմեդի օրենքը ստուգող փորձ:
- Կիսախտվի՞ արդյոք նկարում պատկերված կշեռի հավասարակշռությունը, եթե երկու բեռն ել անընդ ցուվին ընկղմենք հեղուկների մեջ:



## ԼԱԲՈՐԱՏՈՐ ԱՇԽԱՏԱՆՔ 8

### Արքիմեդի օրենքի փորձնական ստուգումը

Աշխատանքի նպատակը. հաշվել ջրում ընկղմված մարմնի վրա ազդող արքիմեդյան ուժը և փորձով ստուգել ստացված արդյունքը:

Անհրաժեշտ սարքեր և նյութեր. ամրակալան կցորդիչով, տարրեր ծավալներով երկու մարմին, ուժաչափ, չափազան, ջրով լցված անոր:

#### Աշխատանքի ընթացքը.

- Չափազանի միջոցով որոշեք մարմնի  $V_1$  ծավալը և  $F_U = \rho_g g V_1$  բանաձևով հաշվեք ջրում մարմնի վրա ազդող արքիմեդյան ուժի արժեքը:
- Ուժաչափն ամրացրեք ամրակալանին: Ուժաչափից բելով կախեք մարմինը: Նշեք և աղյուսակում գրանցեք ուժաչափի ցուցմունքը: Դա կլինի մարմնի կշիռն օդում:
- Ջրով լցված բաժակը տեղադրեք մարմնի տակ և կցորդիչն իջեցրեք այնքան, որ մարմնը լրիվ խորասուզվի ջրի մեջ:

Նշեք և աղյուսակում գրանցեք ուժաչափի ցուցմունքն այս դեպքում: Դա կլինի մարմնի կշիռը ջրում:

4. Ստացված տվյալներով հաշվեք ջրում մարմնի վրա ազդող արքիմեդյան ուժը և ստացված արդյունքը գրանցեք աղյուսակում:
5. 1-4 կետերում նշված գործողությունները կատարեք երկու տարրեր մարմինների համար:
6. Համեմատեք արքիմեդյան ուժի հաշվարկային և փորձով ստացված տվյալները: Մեկնարաններ արդյունքները:

Աղյուսակ


Մարմին	Մարմնի կշիռն օդում, $P_0$ , Ն	Մարմնի կշիռը ջրում, $P_1$ , Ն	Արքիմեդյան ուժը $F_U = P_0 - P_1$ , Ն
1.			
2.			

## ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԼՈՂԱԿԸ

859

Ինչո՞ւ որոշ մարմիններ խորասուզվում են հեղուկում, այլ մարմիններ դուրս են մղվում դեպի ջրի երես, իսկ որոշ մարմիններ, օրինակ, ձկները, սուզանավերը, կարող են լողալ հեղուկի ներսում: Հարցին պատասխանելու համար պետք է պարզենք, թե նշված դիմուրում ուղղաձիգ ուղղությամբ ի՞նչ ուժեր են ազդում մարմնի վրա և ինչպիսի՞ն է դրանց հարաբերակցությունը:

Հեղուկում մարմնի վրա ազդում է երկու ուժ՝ մարմնի ծանրության ուժը, որն ուղղված է ուղղաձիգ դեպի ներքև և ստիպում է մարմնին խորասուզվել ու դեպի վեր ուղղված արքիմեդյան ուժը, որը ձգուում է մարմննը դուրս մղել հեղուկից: Կախված այդ ուժերի հարաբերակցությունից՝ հնարավոր է երեք դեպք:



Նկ. 138

Հեղուկում մարմնի  
վրա ազդող ուժերը

- Եթե ծանրության ուժը մեծ է արքիմեդյան ուժից՝  $F_d > F_u$  (նկ. 138. *a*), ապա մարմինը խորասուզվում է մինչև անորի հատակը,
- Եթե ծանրության ուժը հավասար է արքիմեդյան ուժին՝  $F_d = F_u$  (նկ. 138. *p*), ապա մարմինը հավասարակշռության մեջ է հեղուկում,
- Եթե ծանրության ուժը փոքր է արքիմեդյան ուժից՝  $F_d < F_u$  (նկ. 138. *q*), ապա մարմինը հեղուկում վեր է բարձրանում:


Առավել մանրամասն քննարկենք այս դեպքը: Քանի դեռ մարմինն ամրողովին հեղուկի մեջ է (նկ. 139. *a*), որտեղ նրա վրա ազդող արքիմեդյան ուժը մեծ է ծանրության ուժից, մարմինը շարժվում է դեպի հեղուկի մակերևույթ: Հասնելով մակերևույթին՝ այն աստիճանաբար դուրս է նովում հեղուկից, որի հետևանքով արքիմեդյան ուժը սկսում է փոքրանալ (նկ. 139. *p*): Մարմինն այնքան է դուրս գալիս հեղուկից, մինչև արքիմեդյան ուժը հավասարվում է ծանրության ուժին (նկ. 139. *q*): Դրանից հետո այն լողում է հեղուկի մակերևույթին՝ մնալով նրա մեջ մասամբ խորասուզված:

Մարմնի վրա ազդող ծանրության և արքիմեդյան ուժերի հարաբերակցությունը կարելի է ներկայացնել նաև հեղուկի և մարմնի խտութունների միջոցով:

Ծանրության ուժը ներկայացնենք  $F_d = m_d g = \rho_d V_d g$  տեսքով, որտեղ  $\rho_d$ -ը մարմնի խտությունն է, իսկ  $V_d$ -ը՝ ծավալը: Այն դեպքերում, եթե մարմինը կազմված է տարրեր նյութերից կամ նրա մեջ առկա են դատարկ տարածություններ, ապա բերված բանաձևում  $\rho_d$ -ն մարմնի միջին խտությունն է: Վերջինս կարող է եավես փոքր լինել մարմնի բաղադրության մեջ մտնող նյութերի խտությունից: Օրինակ՝ չնայած ժամանակակից նավերը հիմնականում կառուցվում են պողպա-

Նկ. 139

Վեր բարձրանալիս մարմնի վրա ազդող արքիմեդյան ուժն աստիճանաբար նվազում է և հավասարվում ծանրության ուժին



տից, սակայն նրանց միջին խտությունը շատ ավելի փոքր է, քան պղղատի խտությունը:

Հաշվի առնելով, որ  $F_u = \rho_h g V_d$  և օգտվելով վերև բերված բանաձևից,  $F_d > F_u$  պայմանից կստանանք  $\rho_d > \rho_h$ , այսինքն՝ եթե մարմնի խտությունը մեծ է հեղուկի խտությունից, մարմինը հեղուկում խորասուզվում է:

Հանգունորեն  $F_d = F_u$  պայմանից կստանանք  $\rho_d = \rho_h$ , այսինքն՝ եթե մարմնի խտությունը հավասար է հեղուկի խտությունից, մարմինը լողում է հեղուկի մերսում:

Եվ, վերջապես,  $F_d < F_u$  պայմանից կստանանք  $\rho_d < \rho_h$ , այսինքն՝ եթե մարմնի խտությունը փոքր է հեղուկի խտությունից, մարմինը, մասսամբ սուզվելով հեղուկի մեջ, լողում է նրա մակերևույթին:

Եթե այս դեպքում մարմնի ընկդմված մասի ծավալը նշանակենք  $V_1$ -ով, իսկ լրիվ ծավալը՝  $V_0$ -ով, ապա մարմնի վրա ազդող արքիմեդյան ուժը՝  $F_u = \rho_h g V_1$ , իսկ ծանրության ուժը՝  $F_d = m_d g = \rho_d V_0 g$ : Հավասարակշռության  $F_d = F_u$  պայմանից կստանաք  $\rho_d V_0 g = \rho_h V_1 g$ , որտեղից՝

$$\frac{V_1}{V_0} = \frac{\rho_d}{\rho_h},$$

այսինքն՝ մարմնի ընկդմված մասի ծավալի հարաբերությունը ամբողջ ծավալին հավասար է մարմնի և հեղուկի խտությունների հարաբերությանը:


Նշված բոլոր երեք դեպքերը կարելի է դիտել հետևյալ պարզ փորձով: Եթե հավի ծուն իջեցնենք մաքուր ջրով լցված անորի մեջ, այն կխորասուզվի և կհասնի անորի հատակին: Պատճառն այն է, որ ձվի խտությունը մեծ է մաքուր ջրի խտությունից: Եթե այժմ ջրի մեջ աղ լուծենք և աստիճանաբար լուծված աղի քանակությունն ավելացնենք, ապա կնկատենք, որ ծուն պոկվում է հատակից և լողում է աղաջրում: Նշանակում է, որ աղաջրի խտությունը հավասարվել է ձվի խտությանը: Եթե շարունակենք ավելացնել լուծված աղի քանակությունը, ապա ծուն կբարձրանա վեր, նրա մի մասը դուրս կգա ջրից, և այդ վիճակում ծուն կլողա հեղուկի մակերևույթին: Այս դեպքում աղաջրի խտությունը մեծ է ձվի խտությունից:

## Հարցեր և առաջադրանքներ

- Ո՞ր դեպքում է մարմինը. ա) խորասուզվում հեղուկում, բ) լողում նրա ներսում, գ) լողում նրա մակերևույթին:
- Ինչո՞ւ մետաղադրամը խորասուզվում է ջրում, սակայն լողում է սնդիկի մակերևույթին:
- Ի՞նչ տեղի կունենա, եթե 950 կգ/մ<sup>3</sup> խոտությամբ մարմինը գցենք կերոսինի մեջ, որի մեջ:
- Օգովելով խոտության աղյուսակից՝ որոշեք, թե ո՞ր մետաղներից պատրաստված հոն առարկաները կխորասուզվեն սնդիկի մեջ, և որո՞նք կլողան նրա մակերևույթին:
- Նկարում պատկերված է միևնույն մարմնի դիրքը երկու տարբեր հեղուկներում: Ո՞ր հեղուկի խոտությունն է ավելի մեծ:
- Ի՞նչ հերթականությամբ կդասավորվեն անօրում իրար շխառնվող երեք հեղուկները՝ ջուր, կերոսին, սնդիկ: Պատկերեք և բացատրեք այս:
- Ինչո՞ւ հնարավոր չէ հանգստել այրվող կերոսինը՝ նրա վրա ջուր լցնելով:
- Ինչպիսի՞ դիրք կգրավի պողպատե գնդիկը ջուր, կերոսին և սնդիկ պարունակող անօրում: Պատկերեք և բացատրեք այս:
- Որքա՞ն երկար կայրվի նկարում պատկերված մոմը:

## § 60

### ԿԵՆՂԱՆԻՆԵՐԻ ԵՎ ՍԱՐԴՈՒ ԼՈՂԱԾԸ



Նկ. 140

Լողափամփուշի օգնությամբ ձուկը կարգավորում է իր խորասուզման մակարդակը

Զրում ապրող կենղանիների մարմնի միջին խոտությունը թիվ է տարբերվում ջրի խոտությունից, որը հնարավորություն է տալիս նրանց լողալու ջրի խորքերում կամ նրա մակերևույթին: Փոփոխելով մարմնի ծավալը՝ ջրային կենղանիները կարողանում են կարգավորել ջրում իրենց վրա ազդող արքինելյան ուժը:

Զկները դա անում են մարմնի ներսում գտնվող լողափամփուշի օգնությամբ, որի ծավալը հեշտությամբ փոփոխվում է (նկ. 140):

Պոչը բափահարելով՝ ձուկը կարող է տեղաշարժվել և հայտնվել տարբեր խորություններում: Մեծ խորություններում, որտեղ ջրի ճնշումը մեծ է, լողափամփուշը սեղմվում է, ձկան մարմնի ծավալը փորբանում և այն չի բարձրանում, այլ լողում է տվյալ խորությունում:

Վեր բարձրանալիս ձկան լողափամփուշն ու մարմնի ծավալը մեծանում են, և նա լողում է փոքր խորություններում: Սատկած ձուկը միշտ լողում է ջրի երեսին, քանի որ այդ դեպքում ձկան մկաններն ամբողջովին քուլացած են և լողափամփուշն առավելագույնս փրփած վիճակում է:

Կետերը ջրում իրենց խորասուզման մակարդակը կարգավորում են՝ մեծացնելով կամ փոքրացնելով քոքերի ծավալը:


Մարդու մարմնի միջին խտությունը ևս մոտ է ջրի խտությանը: Դա է պատճառը, որ երբ մարդը լրիվ սուզվում է ծովի ջրում, միայն դրսում թողնելով քիչն ու քերանը, չի խորասուզվում: Այս դեպքում նրա վրա ազդող ծանրության ուժը հավասարակշռվում է արքիմեդյան ուժով: Սակայն այդպիսի վիճակն անկայում է. երբ մարդը ջրից դուրս է հանում ձեռքը կամ գլուխը, նրա վրա ազդող արքիմեդյան ուժը փոքրանում է, և նա սկսում է խորասուզվել:

Ջրի մակերևույթին մնալը կամ խորասուզվելը կախված են նաև ջրի աղիության աստիճանից: Քաղցրահամ ջրում, որի խտությունը փոքր է մարդու մարմնի միջին խտությունից, լողալ չինացող մարդը սուզվում է, իսկ բավականաշափ աղի ջրում, որի խտությունը փոքր չէ մարդու մարմնի միջին խտությունից, նա կարող է պառկած մնալ ջրի մակերևույթին:

Ասվածը լուսաբանենք հետևյալ օրինակով: Դիցուք նկ. 141-ում պատկերված տղաներն ունեն միևնույթ՝ 55 դմ<sup>3</sup> ծավալը, սակայն նրանց զանգվածները տարբեր են: Քաղցրահամ ջրում 56 կգ զանգվածով տղան կխորասուզվի, իսկ 54 կգ զանգվածով տղան կլողալ ջրի մակերևույթին: Ծովի ջրում, որի խտությունը նրա մեջ լուծված աղի շնորհիվ ավելի մեծ է, երկու տղաներն էլ կարող են լողալ ջրի մակերևույթին:

Աղի պարունակությունը մեծացնելիս մեծանում է ջրի խտությունը և, հետևաբար, նրա մեջ ընկղմված մարմնի վրա ավելի մեծ արտամղող ուժ է ազդում: Այդպիսի ջրում լողալը շատ ավելի հեշտ է: Երկրի վրա գոյություն ունի մի լիճ, որի ջուրն այնքան աղի է, որ մարդը չի խորասուզվում: Այդ լիճը Մեռյալ ծովն է: Ահա թե ինչպես է նկարագրում ամերիկացի հայտնի գրող Մարկ Տվենն այն անսովոր զգացումները, որ ունեցել են ինքն ու իր ուղեկիցները Մեռյալ ծովում լողալիս.

«Դա մի զգարձալի լող էր: Մենք չեինք կարողանում սուզվել: Այստեղ կարելի է ջրի վրա ձգվել, պառկել մեջքի վրա և



Նկ. 141  
Ծովի ջրում լողալը  
ավելի հեշտ է, քան  
քաղցրահամ ջրում


ձեռքերը ծալել կրծքին: Ընդ որում, մարմնի մեծ մասը կմնա ջրից դուրս... Դոք կարող եք շատ հարմար պառկել մեջքի վրա՝ ծնկները ծալելով, հասցնելով ծնոտին և ձեռքերով գրկելով: Բայց շուտով կշրջվեք, քանի որ ձեր գլուխն ավելի ծանր է: Դոք կարող եք զիվի վրա կանգնել, և կրծքի մեջտեղից մինչև ոտքերի ծայրը կմնար ջրից դուրս: Բայց չեք կարող երկար ժամանակ մնալ այս դիրքում: Դոք չեք կարող մեջքի վրա լողալով նկատելիորեն շարժվել, քանի որ ձեր ոտքերը դուրս են ցցված ջրից, և դոք ստիպված եք լողում, ապա ոչ թե առաջ եք շարժվում, այլ՝ հետ»:

### Հարցեր և առաջադրություններ

1. Ինչպե՞ս է ձուկը կարողանում լողալ տարբեր խորություններում:
2. Ինչո՞ւ են սատկած ձկները բարձրանում ջրի երես:
3. Ինչո՞ւ մարդու համար ավելի հեշտ է լողալ ծովի ջրում, քան ջաղցրահամ ջրում:
4. Բացատրեք, թե ինչպե՞ս է փրկարար օդակն օգնում մարդուն մնալ ջրի մակերևույթին:
5. Կատարելով հաճապատասխան հաշվարկներ՝ ցույց տվեք, որ նկ. 140-ում պատկերված 56 կգ զանգվածով տղան կտուզվի ջաղցրահամ ջրում, սակայն կմնա ծովի ջրի մակերևույթին:

## § 61

### ՆԱԿԵՐԻ ԼՈՂԱԸՑ: ՕՐԱԳՆԱՅՈՒԹՅՈՒՆ



Նկ. 142

Մետաղարիելից պատրաստված նավակը լողում է ջրի երեսին

Եթե բարակ, ոչ մեծ չափերով մետաղի թիթեղը դնենք ջրով լցված անորի մեջ, ապա այն կխորասուզվի և կիջնի անորի հատակը: Ինչո՞ւ: Բանն այն է, որ մետաղի (աղինձ, երկար, ալյումին) խտությունը մեծ է ջրի խտությունից: Սակայն եթե նույն թիթեղից նավակ պատրաստենք և իջեցնենք ջրի մեջ, ապա այն կլողա ջրի մակերևույթին: Մենք կարող ենք նույնիսկ այն բեռնավորել (նկ. 142):

Դիտվող երևույթի բացատրությունը հետևյալն է: Նավակն ավելի մեծ ծավալով ջուր է արտանդում, քան հարք թիթեղը, հետևաբար նրա վրա ազդող արքիմեդյան ուժը կարողանում է հաճակշռել նավակի և բեռների ծանրության ուժը:

Ներկայումս տարբեր տիպի բեռնատար և մարդատար նավերը կառուցվում են այնպիսի նյութերից, որոնց խտությունները զգայինը մեծ են ծովի ջրի խտությունից, սակայն դա չի խանգարում նավերին լողալ ջրի երեսին: Բանն

այն է, որ նավերում առկա են բազմաթիվ դատարկ տարածքներ, նավասենյակներ, ուստի նավի միջին խտությունը փոքր է զրի խտությունից: Այդ պատճառով էլ նավի արտամղած զրի կշիռը, այսինքն՝ նրա վրա ազդող արքիմեդյան ուժը, հավասարվում է նավի և բեռների ծանրության ուժին:

Սովորաբար նավերի խորասուզման բույլատրելի խորությունը նավի իրանի վրա նշվում է որոշակի գծով, որը կոչվում է զրագիծ: Նավը շափից ավելի բեռնավորելը, այն է զրագծից ավելի շատ նրա խորասուզվելը վտանգավոր է, քանի որ ջուրը կարող է լցվել նավի դատարկ տարածքները և խորտակել այն: Եվ հակառակը, եթե նավը բավականաշափ չի բեռնավորված, այսինքն՝ զրագիծը զրի մակարդակից բավականաշափ բարձր է, ապա նավի դիրքը կայուն չէ. ալիքները կարող են տառանել և շրջել այն:

Նավերը բնութագրվում են զրատարողություն կոչվող մեծությամբ: Այն հավասար է մինչև զրագիծը խորասուզված նավի վրա ազդող արքիմեդյան ուժին: Լողալու պայմանի համաձայն զրատարողությունը հավասար է նաև նավի և բեռների ծանրությունը համապատասխան զրագիծի վերաբերյալ: Ըստ հաճախ զրատարողություն ասելով հասկանում են նաև մինչև զրագիծը խորասուզված նավի և բեռների ընդհանուր զանգվածը՝ արտահայտված տոննաներով: Օրինակ՝ ամերիկայի գյուտարար Ֆոլտոնի կառուցած առաջին շոգենավի զրատարողությունը 160 000 Ն էր կամ 16,3 տոննա: Ժամանակակից բեռնատար հսկա նավերի զրատարողությունը մինչև 5 000 000 կՆ է կամ մոտավորապես 500 000 տոննա:


Ի տարրերություն նավերի՝ սուզանավերը լողում են ինչպես զրի մակերևույթին, այնպես էլ նրա խորքերում: Սուզանավերն ունեն հասուլ մեկուսախցեր, որոնք լցվում են զրով: Այդ դեպքում սուզանավի ծանրության ուժը գերազանցում է արքիմեդյան ուժը, և այն խորասուզվում է: Զրի մակերևույթը դուրս գալու համար հզոր պոմպերով ջուրը դուրս է մղվում մեկուսախցերից, սուզանավի ծանրության ուժը փոքրանում է արքիմեդյան ուժից, և այն լողում է դեպի վեր:

Մարդու միշտ ձգտել է ստեղծել սարքեր, որ հնարավորություն տան տեղափոխվել ոչ միայն ջրում, այլ նաև օդում: Դրա համար նա նախագծել և կառուցել է տարրեր տեսակի բռչող սարքեր, որոնք կոչվում են աերոստատներ (հունարեն «աեր» ող և «ստոսո» կայուն բառերից): Դրանց գործողությունը պայմանավորված է Արքիմեդի օրենքով:

Նկ. 143  
Օդապարիկ



Նկ. 144  
Հիրիժարլ



Չեղավարվող, ազատ թռչող աերոստատները կոչվում են **օդապարիկներ**: Թոփշրի համար նախատեսված օդապարիկը պատկերված է նկ. 143-ում: Այն կազմված է մեծ չափեր ունեցող թաղանքից և նրանից կախված զամբյուղից, որտեղ կարող են տեղափորվել մարդիկ և գանազան բեռներ:

Օդապարիկի թաղանքը լցվում է տար օդով, ջրածնով կամ հելիումով, այսինքն՝ այնպիսի գազով, որի խտությունը փոքր է շրջապատող օդի խտությունից:

Օդապարիկի թաղանքի վրա ազդում է արքիմեդյան  $F_u$  ուժը, որը հավասար է օդապարիկի արտամղած օդի կշռին և ուղղված է ուղաձիգ դեպի վեր: Օդապարիկը դեպի ներք է ձգում թաղանքի և նրա մեջ լցված զագի ծանրության  $mg$  ուժը: Եթե արքիմեդյան ուժը մեծ է ծանրության ուժից, ապա օդապարիկը բարձրանում է վեր: Այդ ուժերի  $F_u = F_d - mg$  տարրերությունը կոչվում է **վերամբարձ ուժ**:

Վերամբարձ ուժը կարգավորելու, հետևաբար օդապարիկը բարձրացնելու կամ իջեցնելու համար օդագնացները կիրառում են տարբեր հնարներ: Վեր բարձրանալու համար նրանք դուրս են զցում օդապարիկում նախօրոք տեղադրված բեռները, իսկ ներքև իջելու համար թաղանքից զագի մի մասը դուրս են թողնում:

Նախկինում օդային թոփշրների համար կիրառվում էին այնպիսի աերոստատներ, որոնց վրա տեղակայված էր պտուտակով շարժիչ, որը հնարավորություն էր տալիս կառավարել աերոստատի շարժումը: Այնպիսի աերոստատները (նկ. 144) անվանում էին **դիրիժարլներ** (ֆրանսերեն «դիրիժարլե»՝ դեկավարվող բառից):

Դիրիժարլները ժամանակի ընթացքում չդիմացան ինքնարինների մրցակցությանը, քանի որ հարմար չէին դեկավարման համար և դանդաղ էին շարժվում: Դիրիժարլներն օգտագործվում են մեծ բեռներ տեղափոխելու, տարբեր տեսակի տեղակայման աշխատանքներ կատարելու ժամանակ:

## Շետաքրքիր է իմանալ

### Առաջին օդագնացները

Ավելի քան երկու հարյուր տարի առաջ, 1783 թվականի հունիսի 5-ին, ֆրանսիական փոքրիկ Անոնն քաղաքը հանկարծ հայտնի դարձավ ամբողջ աշխարհում: Ժողեք և Էտյեն Մոնգոլֆիի եղբայրներն առաջին անգամ օդ բարձրացրին իրենց կառուցած օդապարիկը:

Քաղաքի հրապարակում մարդկանց հոծ բազմութուն էր հավաքվել: Բոլորն ուզում էին տեսնել օդապարիկ կոչվող այդ «հրաշքը», որը շուրջ 15 մ տրամագծով քարան գունդ էր՝ լցված տաք ծխով: Արտաքինից սոսնձված էր թռով: Ստորին մասում անյր էր բացված, որի անմիջապես տակը կախված էր «կրակարան»: «Կրակարանի» մեջ եղբայրները դրել էին շիկացած ածխի կտորներ՝ տաքացնելու համար օդապարիկի ներսի օդը, որը, ընդարձակվելով, մասսամբ դրւում էր զայխ՝ թերևացնելով օդապարիկը: Երբ կտրեցին պարանը, որով օդապարիկը կապված էր սյունից, այն վեր բարձրացավ և շուտով ծածկվեց ամպերի հետևում:

Մոնգոլֆիի եղբայրները հավաքվածներին բոշել օդապարիկով: Բայց բոշել յանձնագործներ այդպես էլ չեղան:

Մոնգոլֆիներն, այսուհանդերձ, չհուսահատվեցին: Օդապարիկին կապված զամբյուղում նրանք տեղափորել էին ոչխար, աքլոր և բադ: Դրանք էլ հենաց աշխարհում առաջին «օդագնացներն» էին: Եվ բարեհաջող վերադարձան Երկիր:

### Հարցեր և առաջադրանքներ

1. Եթե ափսեն ջրի մեջ իջնենենք կողքով, ապա այն կտրատուզի, իսկ եթե այն ջրի վրա դնենք հատակը դեպի ներքև, կլողա: Ի՞նչո՞ւ:
2. Ինչո՞ւ ծանր նավը լողում է ջրի երեսին, իսկ ջրի մեջ ընկած երկար փոքր պտուտակը սուզվում է:
3. Ինչպե՞ս է սուզանավը խորատուզում և բարձրանում ջրի մակերնույթ:
4. Ի՞նչ է ցույց տալիս նավի ջրատարողությունը:
5. Տանը պատրաստե՞ք «լաստ»՝ ՅՆ ջրատարողությամբ: Կարող եք օգտագործել փայտե տախտակի կտոր կամ փայտե չորսու: Կաշվարկեք, թե ինչ չափեր պետք է ուժենա այդ «լաստը», որպեսզի հնարավոր լինի այն բեռնավորել ՅՆ թերով (բնականարար «լաստը» չպետք է ջրատուզի):
6. Ինչո՞ւ ջրածնով լցված փուչիկը վեր է բարձրանում, իսկ օդով լցված փուչիկն իջնում է ներքև:

## ԽՆԴԻՐՄԵՐԻ ԼՈՒԺՄԱՆ ՕՐԻՆԱԿԱՆԵՐ

1. Որոշեք  $4\text{մ} \times 0,3\text{մ} \times 0,25\text{մ}$  չափերով երկաթբետոն սալի վրա ազդող արքիմեդյան ուժը, եթե այն լրիվ ընկցված է ջրում:

$$a = 4 \text{ м}$$

$$b = 0,3 \text{ м}$$

$$c = 0,25 \text{ м}$$

$$F_{\text{U}} = ?$$

**Լուծում:** Ջրում սալի վրա ազդող արքիմեդյան ուժը որոշվում է  $F_{\text{U}} = \rho_{\text{ж}} g V$  բանաձևով, որտեղ  $V$ -ն սալի ծավալն է, իսկ  $\rho_{\text{ж}}$ -ը՝ ջրի խտությունը: Հաշվի առնելով, որ  $V = abc$ , իսկ  $\rho_{\text{ж}} = 1000 \text{ кգ/մ}^3$ , խտանաբեր՝  $F_{\text{U}} = \rho_{\text{ж}} gabc = 2940 \text{ Н}$ :

**Պատասխան՝**  $2940 \text{ Н}$ :

2. Ուժաչափից կախված է  $2,5 \text{ դմ}^3$  ծավալով պղնձե մարմին: Ի՞նչ ցույց կտա ուժաչափը, եթե մարմինն իր ծավալի կիսով չափ խորասուցենք ջրի մեջ:

$$V = 0,0025 \text{ м}^3$$

$$V_1 = V/2$$

$$F = ?$$

**Լուծում:** Ուժաչափի ցույցունքն օդում հավասար է մարմնի կշռին (օդում արքիմեդյան ուժն անտեսում ենք): Մարմինը կիսով չափ ջրում խորասուցելիս ուժաչափի ցույցունքը կպակասի ջրում մարմնի վրա ազդող արքիմեդյան ուժի չափով՝  $F = mg - F_{\text{U}} = \rho_{\text{ж}} g V_1$ , որտեղ  $\rho_{\text{ж}} = 1000 \text{ кգ/մ}^3$  ջրի խտությունն է, իսկ  $V_1 = V/2$ -ը՝ մարմնի խորասուցված մասի ծավալը,  $m = \rho_{\text{ж}} V$ , որտեղ  $\rho_{\text{ж}} = 8900 \text{ кգ/մ}^3$  պղնձի խտությունն է, ուստի՝

$$F = gV(\rho_{\text{ж}} - \rho_{\text{ж}}/2) = 9,8 \text{ Н}/\text{կգ} \cdot 0,0025 \text{ м}^3(8900 \text{ кգ/մ}^3 - 500 \text{ кգ/մ}^3) = 205,8 \text{ Н}:$$

**Պատասխան՝**  $205,8 \text{ Н}$ :

3. Օդապարիկի ծավալը  $1700 \text{ дм}^3$  է, իսկ նրա թաղանթի և զամբյուղի զանգվածը՝  $1000 \text{ կգ}$ : Ի՞նչ զանգվածով բեռ կարող է բարձրացնել օդապարիկը, եթե նրա թաղանթը լցված է հելիումով: Ենիւումի խտությունը  $0,18 \text{ կգ/մ}^3$  է, իսկ օդինը՝  $1,29 \text{ կգ/մ}^3$ :

$$V = 1700 \text{ дм}^3$$

$$m_1 = 1000 \text{ տ}$$

$$\rho_{\text{հել}} = 0,78 \text{ կգ/մ}^3$$

$$\rho_{\text{օդ}} = 1,29 \text{ կգ/մ}^3$$

$$m_2 = ?$$

**Լուծում:** Օդապարիկի վերամբարձ ուժը որոշվում է  $F_{\text{q}} = F_{\text{U}} - mg$  բանաձևով, որտեղ արքիմեդյան ուժը՝  $F_{\text{U}} = \rho_{\text{օդ}} g V$ , իսկ օդապարիկի զանգվածը՝  $m = m_1 + m_{\text{հել}}$ : Ենիւումի զանգվածը՝  $m_{\text{հել}} = \rho_{\text{հել}} V$ , ուստի  $F_{\text{q}} = ((\rho_{\text{օդ}} - \rho_{\text{հել}}) V - m_1) g$ : Օդապարիկը կարող է բարձրացնել այնպիսի զանգվածով բեռ, որի ծանրության ուժը չի գերազանցում վերամբարձ ուժը, հետևաբար որոնելի զանգվածը՝


$$m_2 = \frac{F_{\text{q}}}{g} = (\rho_{\text{օդ}} - \rho_{\text{հել}}) V - m_1:$$

Տեղադրելով թվային արժեքները՝ խտանաբեր՝  $m_2 = 890 \text{ կգ}$ :

**Պատասխան՝**  $890 \text{ կգ}$ :

## ԽՍԴԻՐՆԵՐ

### ԳԼՈՒԽ II. ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԱՐԺՈՒՄԸ ԵՎ ՓՈԽԱԶԴԵՑՈՒԹՈՒՄԸ






- Ի՞նչ հետազիծ ունի շարժվող ավտոմեքենայի անիվի կենտրոնը ուղղագիծ հորիզոնական ճանապարհի նկատմամբ:
- Նո՞յն ճանապարհն են անցնում արդյոք ավտոմեքենայի աջ և ձախ անիվները շրջադարձի ժամանակ: Ինչո՞ւ:
- Ա կետից ուղղաձիգ վեր նետված մարմինն ընկավ հանքահորի մեջ (տես նկարը): Որքա՞ն է նրա անցած ճանապարհը, եթե  $AB = 15 \text{ մ}$ ,  $BC = 25 \text{ մ}$ :
- 5 մ բարձրությունից բաց բողած գնդակը, բախվելով գետնին, բարձրացավ 3 մ: Որքա՞ն է գնդակի անցած ճանապարհը:
- Ինքնարիոն ուղիղ գծով քառակ 400 կմ, ապա իր շարժման ուղղությունը փոխեց  $90^\circ$ -ով և անցավ ևս 300 կմ: Գծել ինքնարիոի շարժման հետազիծը և որոշել նրա անցած ճանապարհը:
- Տրամվայը շարժվում է  $36 \text{ կմ/ժ}$  արագությամբ: Այդ արագությունն արտահայտեք մետր-վայրկյաններով (մ/վ):
- Ճանճը քչում է  $18 \text{ կմ/ժ}$  արագությամբ: Այդ արագությունն արտահայտեք սանտիմետր-վայրկյաններով (սմ/վ), մետր-վայրկյաններով (մ/վ):
- Նապաստակի արագությունը  $15 \text{ մ/վ}$  է, իսկ դելֆինինը՝  $72 \text{ կմ/ժ}$ : Որի՞ արագությունն է ավելի մեծ:
- Գայլը  $20 \text{ կմ}$  ճանապարհն անցնում է  $30 \text{ րոպեում}$ : Որքա՞ն է գայլի արագությունը:
- Որքա՞ն է մարզիկի արագությունը, եթե նա 100 մ հեռավորությունը վագում է  $10 \text{ վ-ում}$ : Այդ արագությունն արտահայտեք կմ/ժ-ով:
- Ռեակտիվ ինքնարիոը  $100 \text{ կմ}$  ճանապարհն անցավ  $2,5$  րոպեում: Որքա՞ն է ինքնարիոի արագությունը՝ արտահայտված կմ/ժ-ով, մ/վ-ով:
- Որքա՞ն ճանապարհ կանցնի ավտոմեքենան  $1$  րոպեում՝ շարժվելով  $72 \text{ կմ/ժ}$  արագությամբ:
- Բամբուկն աճում է  $2 \text{ սմ/ժ}$  արագությամբ: Որքա՞ն կլինի նրա բարձրությունը մեկ շաբաթ անց:
- Ի՞նչ ճանապարհ է անցնում Երկիրը  $1$  տարում՝ պտտվելով Արեգակի շորջը  $30 \text{ կմ/ժ}$  արագությամբ:
- Կրիայի արագությունը  $0,3 \text{ կմ/ժ}$  է, փողինը՝  $40 \text{ կմ/ժ}$ , կենգուրուինը՝  $60 \text{ կմ/ժ}$ , իսկ վագրակատվինը՝  $120 \text{ կմ/ժ}$ : Նրանցից յուրաքանչյուրը որքա՞ն ժամանակում կանցնի  $100 \text{ մ}$  հեռավորությունը:
- Երկրի միջին հետավորությունը Արեգակից  $150$  միլիոն կիլոմետր է: Որքա՞ն ժամանակում է լույս Արեգակից հասնում Երկիր, եթե նրա արագությունը  $300000 \text{ կմ/վ}$  է:
- Ավտոմեքենան շարժվում է  $160 \text{ կմ/ժ}$  արագությամբ, իսկ աղավնին՝  $16 \text{ մ/վ}$ : Կարո՞ղ է արդյոք աղավնին հասնել ավտոմեքենային:
- Հետիոտնի արագությունը  $5 \text{ կմ/ժ}$  է, իսկ հավասարաչափ շարժվող լողորդը  $100 \text{ մ}$  հեռավորությունն անցնում է  $53 \text{ վ-ում}$ : Ու՞մ արագությունն է ավելի մեծ:

19. Աղյուսակի տվյալներով կազմեք խնդիրներ և լուծեք:

N	Մարմինը	Արագությունը	Ժամանակը	Շահապարհը
1	Ավտոմեքենան	60 կմ/ժ	30 ր	—
2	—	—	3 ժ	18 կմ
3	—	600 կմ/ժ	—	10 կմ


20. Հեծանվորդը 2 ժամում անցավ որոշակի ճանապարհ՝ շարժվելով 2 մ/վ արագությամբ: Որքա՞ն ժամանակում նա կանցնի այդ հեռավորությունը՝ շարժվելով 3 մ/վ արագությամբ:
21. Հավասարաչափ շարժվող ավտոմեքենան 6 ժամում անցավ 240 կմ ճանապարհ: Որքա՞ն է նրա արագությունը: Շարժվելով նույն արագությամբ՝ ի՞նչ ճանապարհ կանցնի այն 10 ժամում:
22. 300 մ երկարությամբ ավտոշարասյունը շարժվում է 600 մ երկարությամբ կամքջով: Ինչքա՞ն ժամանակում ավտոշարասյունը կանցնի կամքջը՝ շարժվելով 36 կմ/ժ արագությամբ:
23. 2,5 կմ հեռավորությամբ բնակավայրերից միաժամանակ միևնույն ուղղությամբ շարժվում են ավտոմեքենան և մոտոցիկլը: Ավտոմեքենայի արագությունը 20 կմ/ժ է, իսկ մոտոցիկլինը՝ 10 կմ/ժ: Որքա՞ն ժամանակից ավտոմեքենան կհասնի մոտոցիկլին:
24. Երկու քաղաքներից, որոնց հեռավորությունը 324 կմ է, միաժամանակ իրար ընդառաջ շարժվում են երկու ավտոմեքենան, մեկը 90 կմ/ժ, իսկ մյուսը՝ 72 կմ/ժ արագությամբ: Ինչքա՞ն ժամանակից հետո նրանք կհանդիպեն: Յուրաքանչյուր քաղաքից որքա՞ն է հեռու հանդիպման կետը:
25. Երկու ավտոմեքենա միաժամանակ շարժվեցին լցակայանից հակադիր ուղղություններով: Դրանցից մեկը շարժվում էր 60 կմ/ժ արագությամբ, իսկ մյուսը՝ 90 կմ/ժ արագությամբ: Որոշեք ավտոմեքենաների հեռավորությունը շարժումը սկսելուց 30 րոպե անց:
26. Նկարում պատկերված են հավասարաչափ շարժվող երկու մարմինների անցած ճանապարհների կախումը ժամանակից արտահայտող գրաֆիկները: Ի՞նչ ճանապարհ է անցել առաջին մարմինը 2 վ-ում, իսկ երկրորդ մարմինը՝ 1 վ-ում: Որքա՞ն են մարմինների արագությունները:
27. Նկարում պատկերված է հավասարաչափ շարժում կատարող մարմնի անցած ճանապարհի կախումը ժամանակից արտահայտող գրաֆիկը: Կառուցեք նրա արագության կախումը ժամանակից արտահայտող գրաֆիկը:



28. Նկարում պատկերված է մարմնի աճյած ճանապարհի կախումը ժամանակից արտահայտող գրաֆիկը: Ի՞նչպիսի՞ շարժում է կատարել մարմնը 0-ից 1 վ և 1 վ-ից 6 վ ժամանակահատվածներում: Ի՞նչ արագությամբ է շարժվել մարմնն այդ ժամանակահատվածներում: Ի՞նչ ճանապարհ է անցել 4 վ-ում:
29. Ժամը 12:00-ին խփունջը սկսում է սողալ ուղղագիծ ճանապարհով: Յուրաքանչյուր ժամի առաջին 45 րոպեն այն շարժվում է 1 սմ/ր արագությամբ, այնուհետև հանգստանում է 10 րոպե և ապա 5 րոպե ստորև հետև՝ 1 սմ/ր արագությամբ: Ժամը քանի 2 մ-ով:
30. Փոխվո՞ն է արդյոր մարմնի զանգվածը Երկրից Լուսին տեղափոխելիս:
31. Երկու գնդիկ կախված են միևնույն երկարության թելերից այնպես, որ հպվում են իրար: Զօգուպելով որևէ սարքից՝ ինչպե՞ս որոշել, թե որանցից որի՞ զանգվածն է ավելի մեծ:
32. 54 կգ զանգվածով մարմարե սալիկն ունի  $0,02 \text{ m}^3$  ծավալ: Հաշվեք մարմարի խտությունը և այն համեմատեք աղյուսակ 4-ում տրված տվյալի հետ:
33. Որքա՞ն է հեղուկ ջրածնի խտությունը, եթե  $0,5 \text{ L}$  ծավալով ջրածնի զանգվածը  $35 \text{ q}$  է:
34. Ի՞նչ հեղուկ է լցված  $60 \text{ l}$  տարողությամբ անորում, եթե հեղուկի զանգվածը  $42,6 \text{ kg}$  է:
35.  $0,2 \text{ m}^3$  ծավալով նյութի զանգվածը  $3,86 \text{ q}$  է: Ի՞նչ նյութ է դա:
36. Շաքարի ուղղանկյունանիտան կտորի շափերն են՝  $2,5 \text{ mm}$ ,  $1 \text{ mm}$ ,  $0,5 \text{ mm}$ , իսկ նրա զանգվածը  $2 \text{ g}$  է: Որոշեք շաքարի խտությունը:
37. Որքա՞ն է  $1 \text{ L}$  ծավալով մեղրի զանգվածը:
38. Ծանր մետաղներից են օսմիումը, պլատինը, ոսկին: Ի՞նչ զանգված ունի դրանցից յուրաքանչյուրի  $1 \text{ dm}^3$  ծավալով կտորը:
39. Ի՞նչ զանգվածով ջուր կարելի է լցնել ուղղանկյունանիտի ձև ունեցող ամանի մեջ, որի երկարությունը  $20 \text{ mm}$  է, լայնությունը՝  $5 \text{ mm}$ , իսկ բարձրությունը՝  $10 \text{ mm}$ :
40. Սառույցի համար նախատեսված արկղն ունի  $45 \text{ mm}$  երկարություն,  $36 \text{ mm}$  լայնություն և  $30 \text{ mm}$  բարձրություն: Ի՞նչ զանգվածով սառույց կարող է տեղավորվել արկղում, եթե սառույցի խտությունը ջրի խտության  $0,92$  մասն է:
41. Երկու միատեսակ արկղեր լցված են մանրազնեակով. մեկը՝ համեմատարար խոշոր, մյուսը՝ ավելի մանր: Ո՞ր արկղի զանգվածն է ավելի մեծ:
42. Որքա՞ն է  $272 \text{ q}$  զանգվածով սնդիկի ծավալը:
43. Որոշեք անորի տարողությունը, եթե նրա մեջ տեղավորվում է  $2,48 \text{ kg}$  զանգվածով կերոսին:
44. Կտեղավորվի՞ արդյոք մեկ լիտր տարողությամբ անորում  $1 \text{ kg}$  զանգվածով ջուր: Բայց  $1 \text{ kg}$  կա՞թ,  $1 \text{ kg}$  զանգվածով սպի՞րուտ:
45. Ծիշը տեղավորում է  $0,5 \text{ kg}$  զանգվածով սալիրո: Կտեղավորի՞ արդյոք այն  $0,5 \text{ kg}$  զանգվածով բենզին,  $0,5 \text{ kg}$  զանգվածով նավթ:
46. Որքանո՞վ է  $100 \text{ l}$  լիտր ծավալով ծովի ջրի զանգվածը մեծ  $100 \text{ l}$  լիտր ծավալով մաքրու ջրի զանգվածից:

47. Քանի՞ կես լիտր տարողությամբ շիշ է հարկավոր, որ նրանց մեջ լցնենք 10 կգ զանգվածով սնողիկ, 10 կգ զանգվածով սպիրո:
48. Աղյուսակի տվյալներով կազմեք խնդիրներ և լուծեք:

N	Նյութը	Խտությունը	Ծավալը	Զանգվածը
1	Պղինձ	—	—	89 կգ
2	—	—	100 լ	80 կգ
3	Կար	—	100 մմ <sup>3</sup>	—

49. Ալյումինե առարկայի զանգվածը 300 գ է, իսկ ծավալը՝ 150 սմ<sup>3</sup>. Կա՞ն արդյոք խոռոչներ առարկայի ներսում:
50. Պղնձե զունդն ունի 890 գ զանգված և 150 սմ<sup>3</sup> ծավալ. Գտնել նրա խոռոչի ծավալը:
51. Քանի՞ ուղերք պետք է կատարի 3 տ բեռնատարողությամբ բեռնատար ավտոմեքենան 20 մ<sup>3</sup> ծավալով ցեմենտ տեղափոխելու համար. Ցեմենտի խոռոչունը 2800 կգ/մ<sup>3</sup> է:
52. Անորի զանգվածը 15 գ է. Զրով լիքը լցնելիս նրա զանգվածը 40 գ է, իսկ աղաջրով լցնելիս՝ 45 գ. Գտնել աղաջրի խտությունը:
53. Որրանո՞վ կիրորանա նկարում պատկերված երկարե անկյունարդի զանգվածը, եթե այն պատրաստենք ալյումինից: Անյունարդի հաստությունը 5 մմ է, իսկ մնացած չափերը նշված են նկարում:
- 
- Խնդիր 53
54. Բարի մեջ մեկ րոպեում լցվում է 20 կգ զանգվածով կերոսին: Ինչքա՞ն ժամանակ կպահանջվի բարը լրիվ լցնելու համար, եթե դրա երկարությունը 2 մ է, լայնությունը՝ 150 սմ, իսկ բարձրությունը՝ 1800 մմ:
55. Որքա՞ն է 2 տ զանգվածով վիդի վրա ազդող ծանրության ուժը:
56. Որքա՞ն է 0,5 կգ զանգվածով գնդակի վրա ազդող ծանրության ուժը:
57. Պղնձե և փայտե գնդերն ունեն միևնույն զանգվածը: Համեմատել դրանց վրա ազդող ծանրության ուժերը:
58. Կվոլսվի՞ արդյոք պղնձե գնդի վրա ազդող ծանրության ուժը, եթե այն խորասուցենք ջրի մեջ:
59. Հաշվեք ջրի զանգվածը, եթե նրա վրա ազդող ծանրության ուժը 90 Ն է:
60. Շնոպանը դիմանում է 2500 Ն ուժի: Կվորվի՞ արդյոք այն, եթե նրանից կախենք 0,3 տ զանգվածով բեռ:
61. Որքա՞ն է 10 լրմ<sup>3</sup> ծավալով կերոսինի վրա ազդող ծանրության ուժը:
62. Որոշեք 50 Ն և 30 Ն ուժերի համագորը, եթե նրանց կազմած անկյունը 180° է:
63. Ուղածիկ դեպի վեր շարժվող հրթիա քարշի ուժը 300 կՆ է, իսկ ծանրության ուժը՝ 100 կՆ: Որոշեք այդ ուժերի համագորը: Ինչպե՞ս է այն ուղղված:




64. Որքա՞ն է նկարում պատկերված ուժերի համագորք: Պատկերեք այն:
65. Հաշվեք զսպանակի կոշտությունը, եթե 4Ն ուժի ազդեցությամբ այն երկարում է 2 սմ-ով:
66. Քանի՞ սանտիմետրով կերկարի 105Ն/մ կոշտությամբ զսպանակը, եթե այն ձգենք 21Ն ուժով:
67. 160Ն ուժի ազդեցությամբ զսպանակը սեղմվեց 4,5 մմ-ով: Ի՞նչքա՞ն կսեղմվի այն 800Ն ուժի ազդեցությամբ:
68. Ի՞նչ զանգվածով բեռ պետք է կախել 600Ն/մ կոշտությամբ զսպանակից, որպեսզի այն ձգվի 4 սմ-ով:
69. Զսպանակի երկարությունը 3,5 սմ-ով փոքրացնելիս նրանում առաջանում է 1,4 կՆ ուժ: Ինչպիսի՞ն կլինի առաձգականության ուժը նրա երկարությունը 2,1 սմ-ով փոքրացնելիս:
70. 100Ն ուժով ձգելիս զսպանակի երկարությունը դարձավ 0,82 մ, իսկ 300Ն-ի դեպքում՝ 0,86 մ: Գտեք զսպանակի սկզբնական երկարությունը:
71. Որքա՞ն է 80 կգ զանգվածով մարդու կշիռը:
72. Որքանո՞վ փոքրացավ ջրատար մեքենայի կշիռը, եթե ծառերը ջրելու համար օգտագործվեց 200 լ ծավալով ջուր:
73. 80 կգ զանգվածով մարդն ուսին պահում է 10 կգ զանգվածով պարկը: Ի՞նչ ուժով է նա ճնշում գետինը:
74. Աղջիկը գնեց 0,75 լ ծավալով արևածաղկի ձեր: Որքա՞ն է այդ ձերի կշիռը:
75. Հաշվեք աշխարհում ամենամեծ թշնի՝ աֆրիկական ջայլամի կշիռը, եթե նրա զանգվածը 90 կգ է: Այն համենատեք ամենափոքր՝ կոլիտրի թշնի կշոփի հետ, եթե վերջինիս զանգվածը մոտ 2 գ է:
76. Ի՞նչ տեսակի շփման ուժ է առաջանում՝ ա) քայլելիս, բ) փայտի կտորը գետնից վերցնելիս, գ) սահնակով սարից իջնելիս, դ) անխվը գետնին գլորվելիս:
77. Սեղանի փրա հորիզոնական ուղղությամբ 10Ն ուժ ազդելիս այն տեղից չի շարժվում: Որքա՞ն է այդ դեպքում սեղանի և հատակի շփման ուժը:
78. Ինչո՞ւ կավիճը գրատախտակին հետք է բռնում:
79. Ի՞նչ ամենափոքր ուժ պետք է գործադրել 1 կգ զանգվածով փայտե չորսուն հորիզոնական սեղանի վրայով շարժելու համար, եթե դադարի շփման ուժի առավելագույն արժեքը չորսուի կշոփի 0,5 մասն է:


### **ԳԼՈՒԽ III. ԱՇԽԱՏԱՆՔ ԵՎ ՇՅՈՐՈՒԹՅՈՒՆ: ՊԱՐՀ ՄԵԽԱՆԻՉԱՆԵՐ**

80. Հաշվեք 20Ն ուժի աշխատանքը 5 մ ճանապարհ անցնելիս:
81. Ի՞նչ ճանապարհ անցնելիս 8Ն ուժի աշխատանքը հավասար կլինի 32 Ձ-ի:
82. 5 մ խորությամբ ջրհորից հավասարաշափ բարձրացրին 10 կգ զանգվածով ջրով լցված դույլը: Հաշվեք կատարված աշխատանքը:

83.  $0,25 \text{ m}^3$  ծավալով թետոննե սալը հավասարաշափ քարձրացրին 6 մ: Ի՞նչ աշխատանք կատարվել է այդ դեպքում: Թետոնի խորությունը 2000 կգ/ $\text{m}^3$  է:
84. Ավտոմեքենայի շարժիք քարշի ուժը 2000 Ն է: Ավտոմեքենան շարժվում է հավասարաշափ՝  $72 \text{ km/h}$  արագությամբ: Ի՞նչ աշխատանք է կատարում շարժիքը 10 վ-ում:
85. Ինչպիսի՞ արագությամբ կարող է ծին հավասարաշափ քաշել սայլը՝ գործադրելով 600 Ն ուժ, եթե մեկ րոպեում նա կատարում է  $36000 \Omega$  աշխատանք:
86.  $50 \text{ kg}$  զանգվածով տղան 1 րոպեում աստիճաններով քարձրանում է  $30 \text{ m}$ : Որոշեք տղանի զարգացրած հզորությունը:
87. Չերմաքարշը, զարգացնելով  $600 \text{ kgf}$  հզորություն և շարժվելով հավասարաշափ,  $20 \text{ v-ում}$  անցնում է  $200 \text{ m}$  ճանապարհ: Որոշեք Չերմաքարշի քարշի ուժը:
88. Վերամբարձ կոռոնկը հավասարաշափ քարձրացնում է  $5000 \text{ kg}$  զանգվածով թերոք: Որոշեք Վերամբարձ կոռոնկի շարժիքի հզորությունը, եթե 5 վայրկյանում թերոք քարձրացնում է  $20 \text{ m}$ :
89. Ինչպես կարելի է հաշվել հզորությունը, եթե հայտնի են մարմնի վրա ազդող ուժը և մարմնի հավասարաշափ շարժման արագությունը:
90.  $22 \text{ m}$  քարձրությամբ ջրարգելակից  $10 \text{ kg}$  զանգվածով քարզի ազդեցությունը է  $500 \text{ N}$  և զանգվածով ջուրը: Ի՞նչ հզորություն է զարգացվում այդ դեպքում:
91. Նկարմերում պատկերված են լծակների սխեմաներ: Ցույց տվեք ուժերի կիրառման կետերը, լծակների հենան կետերը և ուժերի պազուկները:




92. Հաշվեք այն  $F$  ուժը, որը լծակի օգնությամբ  $P$  թերոք պահում է հավասարակշռության մեջ նկարում պատկերված ալիք դիրքերում:




93. Հաշվեք այն  $F$  ուժը, որի միջոցով կարելի է հավասարակշռել նկարում պատկերված լծակի մի ծայրից կախված  $m = 1 \text{ kg}$  զանգվածով գնդի վրա ազդող ծանրության ուժը:



94. Որտե՞ղ պետք է դնել հենարանը, որպեսզի նկարում պատկերված լծակը գտնվի հավասարակշռության մեջ:




95. Օ հենման կետով լծակի վրա ազդում են  $F_1 = 40\text{ N}$  և  $F_2 = 10\text{ N}$  ուժերը, որոնց բազուկները համապատասխանաբար հավասար են՝  $l_1 = 0,2\text{ m}$  և  $l_2 = 0,8\text{ m}$ :




Որքա՞ն են այդ ուժերի մոմենտները: Կգտնվի՞ արդյոք լծակը հավասարակշռության մեջ:

96. Ի՞նչ ուժ պետք է կիրառել մեխանիզմ մուրճի բռնակին՝ մեխը հանելու համար, եթե մեխի դիմադրության ուժը՝  $F_{\eta} = 160\text{ N}$ : Բռնակի երկարությունը՝  $l_1 = 0,2\text{ m}$ : Մուրճի ծայրի և մեխի հեռավորությունը՝  $l_2 = 0,8\text{ m}$  (տե՛ս նկարը):
97. Ի՞նչ ուժ պետք է գործադրել  $m = 2\text{ kg}$  զանգվածով բեռն անշարժ ճախսարակով հավասարաշափ բարձրացնելիս: Ո՞ր դեպքում կիրառված ուժը կլինի ավելի մեծ: Ըստում անտեսել (տե՛ս նկարը):
98. Ի՞նչ ուժ պետք է գործադրել պարանի ծայրին՝  $m = 20\text{ kg}$  զանգվածով բեռն շարժական ճախսարակով հավասարաշափ բարձրացնելու համար (տե՛ս նկարը):
99. Որքա՞ն կտեղափոխվի  $P$  բեռը սեղանի մակերևույթով, եթե ճոպանի ազատ ծայրն իջնի  $0,4\text{ m}$ -ով (տե՛ս նկարը):



100. Քանի՞ անգամ կարելի է շահել ուժի մեջ՝ կիրառելով այն պարանի  $A$  կետում, եթե լծակի Ե կետից կախված է ու զանգվածով բեռ (տե՛ս նկարը):

101. Լծակն օգտագործվում է  $1000\text{ kg}$  զանգվածով բետոնե սալը  $5\text{ m}$ -ով բարձրացնելու համար: Լծակի մյուս ծայրը 3000 $\text{ N}$  ուժի ազդեցությամբ անցնում է  $20\text{ m}$ : Որոշեք լծակի ՕԳ գ-ն:



102. 150 կգ զանգվածով ունեցող բեռը լծակի միջոցով բարձրացրին 0,2 մ: Բեռը բարձրացնելիս լծակի երկար բազուկի վրա գործադրվեց 600Ն ոժ, որի ազդեցությամբ լծակի այդ ծայրն իջավ 0,6 մ: Հաշվեք լծակի OԳԳ-ն:
103. Որոշեք  $m=5$  կգ զանգվածով բեռը  $h=0,5$  մ բարձրացնելիս կատարված օգտակար աշխատանքը: Ի՞նչ լրիվ աշխատանք կատարվեց, եթե ուժաչափը ցույց էր տալիս 35Ն: Հաշվեք սարքի OԳԳ-ն (տե՛ս նկարը):
104. 4,5մ երկարությամբ և 1,5մ բարձրությամբ բեր հարթությամբ հավասարաչափ բարձրացնում են 30 կգ զանգվածով արկղ: Թեր հարթության և արկղի շփման ոժը 20Ն է: Հաշվեք օգտակար ու լրիվ աշխատանքները և բեր հարթության OԳԳ-ն:
105. Որոշեք այն աշխատանքը, որը կատարում է 80% OԳԳ ունեցող մեխանիզմը, եթե օգտակար աշխատանքը 1,2 կԶ է:
106. Ծարժական ճախսարակի OԳԳ-ն 70% է: Ի՞նչ զանգվածով բեռ կարելի է բարձրացնել այդ ճախսարակի օգնությամբ՝ ճոպանի ազատ ծայրի նկատմամբ կիրառելով 400Ն հաստատում ուժ:


#### **ԳԼՈՒԽ IV. ՆՅՈՒԹԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ**

107. Նշված բառերից ո՞րն է վերաբերում «ֆիզիկական մարմին» և որը՝ «նյութ» հասկացություններին. ավտոմեքենա, երկար, թրվածին, ակնոց, գիրք, նավք, բաժակ, աղյուս, կավ:
108. Ի՞նչ նյութերից են բաղկացած հետևյալ մարմինները՝ ակնոց, բաժակ, մատիտ, ռետին, գրալ:
109. Թվարկեք տարրեր նյութերից պատրաստված մի քանի առարկա:
110. Պողպատե գլանում մեծ ճնշման տակ գտնվող յուղի մասնիկները հայտնվում են զլանի արտարին պատերին: Ինչպես կրացատրեք այս փաստը:
111. Լուսանկարում մի նյութի մոլեկուլի տեսանելի տրամագիծը 0,5 մմ է: Որքա՞ն է այդ նյութի մոլեկուլի իրական տրամագիծը, եթե լուսանկարի խոշորացումը 200 000 անգամ է:
112. 0,3 մ<sup>3</sup> ծավալով յուղի կարիք բարակ շերտով տարածվել է ջրի մակերևույթին և գրանցվել 0,3 մ<sup>2</sup> մակերես: Ենթադրելով, որ շերտի հաստությունը հավասար է յուղի մոլեկուլի տրամագիծին, որոշեք այն:
113. Թվարկեք մի քանի տարր:
114. Թվարկեք մի քանի նյութ, որոնք բաղկացած են տարրեր տարրերի ատոմներից:
115. Նույն ծավալը և կառուցվածքը ունեն արդյոք տարրեր նյութերի մոլեկուլները: Բերեք օրինակներ:
116. Ինչո՞ւ է տաքացնելիս պղնձե լարը երկարում:
117. Նույն ծավալը և կառուցվածքը ունեն արդյոք տաք և սառը ջրի մոլեկուլները:
118. Ինչո՞վ է բացատրվում օդում նյութերի (օդանելիք, բնազին և այլն) հոտերի տարածվելը:
119. Օդից ծանր ածխաթթու գազով լցված անորը հավասարակշռած է կշեռին: Անորի բերանը բացելուց որոշ ժամանակ անց կշեռի հավասարակշռությունը խախտվում է: Ինչո՞ւ: Ո՞ր կողմն է թեքվում կշեռը:

120. Զրածնով լցված անորդ հավասարակշռվում է կշեռքին: Անորի թերանը բացելոց որոշ ժամանակ անց կշեռքի հավասարակշռությունը խախտվում է: Ի՞նչո՞ւ: Ո՞ր կողմն է թերքում կշեռք:

121. Զրածնով լցված փուչիկը մի քանի ժամկա ընթացքում սմբում է: Ի՞նչո՞ւ:

122. Շաքարի միանման կտորները միաժամանակ զցեցին ջրով լցված բաժակների մեջ: Զրի սկզբնական ջերմաստիճանը ո՞ր բաժակում էր ավելի բարձր:



123. Ի՞նչո՞ւ խորհուրդ չի տրվում մուգ գույնի թաց կտորը երկար ժամանակ հպված թողմել սպիտակ կտորին:

124. Որտե՞ղ ավելի լավ կպահպանվի ջրածնով լցված փուչիկը՝ յու՞րօք, թե՞ տաք սենյակում:

125. Ի՞նչպես կարելի է արագացնել դիֆուզիան պինդ մարմիններում:

126. Ի՞նչո՞ւ կոտրված բաժակի կտորները չեն կպչում, եթե դրանք սեղմում ենք իրար:

127. Ի՞նչո՞ւ բորի բրջված թերթերն իրարից անջատելու համար շատ ավելի մեծ ճիգ է պահանջվում, քան չոր գիրքը թերթելու համար:

128. Ո՞ր նյութի (կապար, մոմ, պողպատ) միջմասնիկային փոխազդեցություններն են ամենամեծը, ամենափոքը:

129. Մետաղամասերը կարելի է իրար կպցնել նաև առանց եռակցելու՝ սառը եղանակով, եթե դրանք միացնելով շատ ուժեղ սեղմենք: Ի՞նչ պայմանի դեպքում դա տեղի կունենա:

130. Ի՞նչո՞ւ ջրի մակերևույթին դրված ապակե թիթեղը ոետինե լարով վեր բարձրացնելիս լարը ձգվում է:

131. Պի՞նդ, թե՞ հեղուկ վիճակում է կապարի ատոմների ձգողությունն ավելի ուժեղ:

132. Ի՞նչն է ընդհանուրը թթվերի սոսնձման և մետաղի իրերի գողման միջև:

133. Ի՞նչո՞ւ է ջուրը բարձրանում ապակե մազանորով:

134. Ի՞նչո՞ւ է պղնձի մակերևույթին լցված սնդիկը տարածվում մակերևույթով:

135. Ի՞նչո՞ւ են շինությունների ստորին հարկերի պատերը խոնավանում:

136. Օրինակներով հաստատեք, որ պինդ մարմինների ատոմների միջև փոխարձ ձգողություն գոյություն ունի միայն շատ փոքր հեռավորությունների վրա:

137. Ի՞նչ կարգի մեծություններ են մոլեկուլների ջերմային շարժման արագությունները:

138. Ի՞նչո՞ւ դիֆուզիան ավելի արագ է ընթանում ջերմաստիճանը բարձրացնելիս:

139. Ի՞նչո՞վ է պայմանավորված մարմնի ջերմաստիճանը:

140. Ի՞նչպես կազմի ջերմաշափի մազանորի տրամագծի մեծացումը և աստիճանին համապատասխանող սնդիկի սյան երկարության վրա:

141. Ինչպիսի՞ ջրում պետք է լվանալ բժշկական ջերմաչափները՝ տա՞ք, թե՞ սառը:
142. Ի՞նչ տեղի կունենա ջերմաչափը տաք ջրի մեջ դնելիս, եթե ապակին ավելի շատ ընդարձակվի, քան սնդիլը:
143. Արեգակի կենտրոնական մասում ջերմաստիճանը  $25\,000\,000^{\circ}\text{C}$  է: Որքա՞ն է այս ջերմաստիճանը՝ ըստ Ֆարենհայտի սանդղակի: Էակա՞ն է արդյոք  $32^{\circ}\text{F}$ -ը մի սանդղակից մյուսին անցնելու բանաձևերում՝ այդպիսի ջերմաստիճաններում:
144. Քամի՞ աստիճանն է  $0^{\circ}\text{F}$  ջերմաստիճանը՝ ըստ Յելփուսի սանդղակի:
145. Որքա՞ն է ձեր բնակարանում ծորակից հոսող ջրի ջերմաստիճանը՝ ըստ Ֆարենհայտի սանդղակի:
146. Կարելի՞ է արդյոք գազով լցնել բաց անորի տարրողության կեսը:
147. Փակ շիշը կիսով չափ լցված է սնդիկով: Կարելի՞ է պնդել, որ շիշի վերին մասում սնդիկը բացակայում է:
148. Թթվածինը և ազուրը կարող են գտնվել հեղուկ վիճակում: Իսկ պի՞նդ:
149. Կարո՞ղ է արդյոք երկարը գտնվել գազային վիճակում: Իսկ հեղու՞կ:
150. Եթե, նոյնիսկ խնամքով լվանալուց հետո, նավքի ամանի մեջ ջուր լցներ, ապա, այսումենայնիվ, կզաք նավքի հոտը: Ինչո՞ւ:
151. Անազի կտորը տաքացնելով՝ վերածեցին հեղուկի: Ինչպե՞ս փոփոխվեց անազի մասնիկների շարժումը: Ինչպե՞ս փոխվեցին անազի մասնիկների փոխադարձ դիրքերը:

## ԳԼՈՒԽ V. ՃՆՇՈՒՄ


152. Ի՞նչ ճնշում է գործադրում հատակին կանգնած մարդը, եթե նրա զանգվածը  $75\,\text{կգ}$  է, իսկ կոշիկների ներքանների ընդհանուր մակերեսը  $0,035\,\text{մ}^2$  է:
153. Որքա՞ն է 5 տ զանգվածով բրուրավոր տրակտորի ճնշումը գետնին, եթե երկու բրուրների ընդհանուր մակերեսը  $1,4\,\text{մ}^2$  է:
154. 75 կգ զանգվածով դահուկորդը կանգնած է դահուկների վրա: Յուրաքանչյուր դահուկի երկարությունը  $1,75\,\text{մ}$  է, իսկ լայնությունը՝  $10\,\text{սմ}$ : Որոշեք ձյան վրա դահուկորդի գործադրած ճնշումը:
155. Համեմատելով նախորդ երեք խնդիրների պատասխանները՝ պատասխանեք հետևյալ հարցերին:
  - Քանի՞ անգամ է ձյան վրա դահուկորդի ճնշումը փոքր այն ճնշումից, որ գործադրում է առանց դահուկների կանգնած մարդը: Ինչո՞ւ է դահուկորդի գործադրած ճնշումն ավելի փոքր: Ի՞նչ եզրակացության կհանգեք:
  - Ինչո՞ւ են բեռնատար ավտոմեքենաների դրդերը զգալիորեն ավելի լայն պատրաստում մարդատարների դրդերից:
  - Թրուրավոր տրակտորի գործադրած ճնշումը գետնին համեմատեք կանգնած մարդու ճնշման հետ: Շա՞տ են արդյոք տարբերվում այդ ճնշումներն իրարից:
156. Կոճգամին կիրառված ուժը մոտավորապես  $70\,\text{Ն}$  է, իսկ կոճգամի սայրի մակերեսը՝  $1\,\text{մ}^2$ : Որքա՞ն է կոճգամի գործադրած ճնշումը պատիմ: Քանի՞ անգամ է այն մեծ գետնին թրուրավոր տրակտորի գործադրած ճնշումից (տե՛ս 155 խնդիրը):

157. Ինչո՞ւ են կարող, ծակող գործիքների (դաճակ, մկրատ, կտրիչ, սղոց և այլն) սայրերը լավ սրում: Ի՞նչ կարող, ծակող հարմարանքների օրինակներ կարող եք բերել կենդանի բնությունից:
158. Ի՞նչ ճնշում է գործադրում գետմին 6 մ<sup>3</sup> ծավալով մարմարե սյունը, եթե նրա հիմքի մակերեսը 1,4 մ<sup>2</sup> է: Մարմարի խտությունը 2700 կգ/մ<sup>3</sup> է:
159. Վերցրեք ջրով լցված ապակե անոթ, փակեք այն խցանով: Խցանի միջով անցկացրեք երկու խողովակ: Ինչպես կարող եք անորից, առանց խցանը համեմու, ջուրը լցնել դատարկ բաժակի մեջ: Ըստ ձեզ՝ որտե՞ղ կարելի է կիրառել տվյալ երևույթը:
160. Որքա՞ն է այն ջրի գանգվածը, որն ամբողջությամբ լցնում է ուղղանկյունանիստի ծև ունեցող արվարիտումը: Արվարիտմի չափերն են՝ երկարությունը՝ 50 սմ, լայնությունը՝ 30 սմ, բարձրությունը՝ 30 սմ: Որքա՞ն է ջրի ճնշումն արվարիտումի հատակին: Խնդիրը լուծեք երկու եղանակով և արդյունքները համեմատեք:
161. Ապակե խողովակում սնդիկի բարձրությունը 76 սմ է: Որոշեք սնդիկի հիդրոտատիկ ճնշումը խողովակի հիմքին: Որքա՞ն պետք է լինի խողովակի հիմքի վրա նույն ճնշումը ստեղծող ջրի այն բարձրությունը:
162. Լողորդը սուզվում է ջրի մեջ ճնշում խորությամբ: Ինչքա՞ն է ջրի ճնշման ուժը լողորդի մարմնի յուրաքանչյուր դիմ<sup>2</sup> մակերեսով տեխնամասին:
163. Ապակե անորում մեկը մյուսի վրա լցված են տարբեր հեղուկներ՝ ջուր, ձեր (խոտություն՝ 900 կգ/մ<sup>3</sup>) և սնդիկ: Յուրաքանչյուր հեղուկի շերտի հաստությունը 10 սմ է: Նկարեք և ցույց տվեք հեղուկների դասավորության կարգը: Որոշեք ճնշումը 15 սմ խորության վրա: Հաշվեք ընդհանուր ճնշումն անորի հատակին:
164. Թիրենյա անորն ունի խորանարդի ծև, որի կողի երկարությունը 10 սմ է: Անորը լցված է մաքուր ջրով: Որոշեք ճնշումն անորի հատակին և ճնշման ուժը կողմնային պատերից մեկի վրա:
165. Ի՞նչ ճնշման տակ պոմար պետք է նոյն ջուրը, որ այն հասնի մինչև 5-րդ հարկ: (Յուրաքանչյուր հարկի բարձրությունը 3,5 մ է:)
166. Ի՞նչ շահում է տալիս ջրաբաշխական մամլիչն ուժի մեջ, եթե մեծ մխոցն ունի 500 անգամ ավելի մեծ մակերես, քան փոքրը:
167. Ջրաբաշխական մամլիչի մխոցների տրամագծերը 2 սմ և 12 սմ են: Ուժի մեջ ի՞նչ շահում է տալիս այդ մամլիչը:
168. Ջրաբաշխական մամլիչի փոքր մխոցի տրամագիծը 2,5 սմ է, իսկ մեծ մխոցինը՝ 25 սմ: Ի՞նչ ճնշման ուժ պետք է գործադրել փոքր մխոցի վրա, որ հնարավոր լինի բարձրացնել 2 տ զանգվածով ավտոմեքենան:
169. Պատմում են, թե ինչպես հոլանդացի երեխան փրկեց հայրենի քաղաքը կործանումից՝ մատով փակելով ջրամբարտակի անցքը: Ինչպես կարող եք փոքրիկ երեխան այդ կերպ դիմակայել Հյուսիսային ծովի ճնշմանը:
170. Ի՞նչ առավելագույն խորությունում ջրասուզորոր դիմուական կարող է շնչել խողովակով: Ինչո՞վ է պայմանավորված այդ խորությունը:
171. Ինչո՞ւ են արյան ճնշումը չափում թիվ շրջանում մոտավորապես նույն մակարդակում, որում սիրտն է: Չի՞ կարելի արդյոք ճնշումը չափել ուորի շրջանում:

172. Հայտնի է, որ Խաղաղ և Ատլանտյան օվկիանոսների մակարդակները Պանամայի ջրանցքի տարբեր կողմերում նույնը չեն: Չոր Եղանակին մակարդակների տարբերությունը փոքր է, բայց անձրևային ջրանում այն հասնում է մինչև 30 սմ-ի: Ինչպե՞ս կարող եք դա բացատրել:


173. Թեզմի շատերը հավանաբար նկատել են, որ ՀՀ մեջ ձագարով հեղուկ լցնելիս ժամանակ առ ժամանակ անհրաժեշտ է ձագարը փոքրինչ բարձրացնել: Ինչո՞ւ:

174. Ս-աձն խողովակի աջ ծնկում ջրի սյան բարձրությունը 20 սմ է: Գիտենալով ջրի և կերոսինի խոռոչությունները ( $1000 \text{ կգ}/\text{մ}^3$ ,  $800 \text{ կգ}/\text{մ}^3$ ) որոշել կերոսինի սյան բարձրությունը ձախ ծնկում:



Խնդիր 175

175. Ինչո՞ւ օդն արտադելիս հեղուկը միայն B խողովակով է բարձրանում (տես նկարը):




Խնդիր 177

Խնդիր 179

176. Որտե՞ղ է ավելի մեծ  $1 \text{ մ}^3$  ծավալով օդի զանգվածը՝ Երևանո՞ւ, թե՞ Սևանում: Ինչո՞ւ:

177. Ջրով լցված մեծ փորձանորի մեջ դրեք փոքր փորձանոր և դրանք շրջեք: Բացատրեք, թե ինչո՞ւ է ջուրը բափելուն զուգընթաց փոքր փորձանորը ներքաշվում մեծ փորձանորի մեջ (տես նկարը):




Խնդիր 180

178. Այրվող բուղը պահեք շրջված բաժակի մեջ, այնուհետև բաժակն արագ շրջեք և դրեք ռեստինե բաղանքին և թույլ սեղմեք: Բացատրեք դիտվող երևույթը:

179. Ի՞նչ կկատարվի, եթե բացենք ջրով լի խողովակի վերևում զոնվող ծորակը: Պատասխանը հիմնավորել (տես նկարը):

180. Կփոխվի՞ արդյոք օճառի երկու միանման պղպջակների ծավալը, եթե պղպջակներից մեկն իջեցնենք (տես նկարը):

181. Պոմպն օդն արտադրում է A անցքով: Կերոսինի սյան բարձրությունը 90 սմ է: Որքա՞ն են ջրի սյան և սնդիկի սյան բարձրությունները (տես նկարը):



Խնդիր 181

182. Ի՞նչն է ավելի ծանր՝ ֆուտրովի փշած, թե՞ չփշած գնդակը: Ինչպե՞ս ստուգել:


183. Ինչպե՞ս կփոխվի օդով լցված փուչիկի ծավալը Արագած լեռ բարձրանալիս:

184. Ինչո՞ւ է դժվար խմել հում ծուն, որը ծակված է մի կողմից: Ինչպե՞ս հեշտացնել ծուն խմելը:

185. Ի՞նչն է ստիպում լուծույթին լցվել ներարկիչի մեջ:

186. Սեղանին դրված 1 մ երկարությամբ քանոնը ծածկված է լրացրով, որը կպած է սեղանին: Քանոնի ծայ-

- ըր սեղանի եզրից դուրս է գալիս 15-20 սմ-ով: Ի՞նչ կկատարվի քանոնի հետ, եթե նրա՝ սեղանից դուրս ընկած ծայրին հարվածնը մուրճով: Բացատրեք փորձի արդյունքը:
187. Զրով լցված բաժակում դրված է փորձանոր՝ բաց ծայրը դեպի ներքև: Բաժակը դնենք օդահան զանգի տակ և պոմախ օգնությամբ ճնշումը փորբացնենք միջն սնդիկի սյան 50-60 մմ: Կտեսնենք, որ փորձանորից ջրի միջով դուրս են գալիս օդի պուրակներ: Ի՞նչ կկատարվի, եթե օդահան զանգի տակ ճնշումը նորից հավասարվի արտաքին ճնշմանը: Բացատրեք դիտվող երևոյթը:
  188. Ինչքա՞ն կլինի կերոսինի սյան բարձրությունը Տորիչելիի փորձում՝ նորմալ մքնոլորտային ճնշման դեպքում:
  189. Հայտնի է, որ Հրատ մոլորակի վրա մքնոլորտային ճնշումը  $700 \text{ Pa}$  է: Արտահայտեք այն «սնդ. սյան մմ» միավորով:
  190. Ի՞նչ ուժով է մքնոլորտն ազդում  $1 \text{ m}^2$  մակերեսով սեղանի վրա, եթե ճնշումը  $p = 660 \text{ mm}$  սնդ. սյան:
  191. Լուսամուտի ապակու մակերեսը  $2 \text{ m}^2$  է: Ի՞նչ ուժով է մքնոլորտն ազդում ապակու վրա: Ինչո՞ւ ապակին չի կոտրվում:
  192. Խողովակն ուղղաձիգի հետ կազմում է  $60^\circ$  անկյուն: Ինչքա՞ն է նրանում սնդիկի սյան երկարությունը, եթե ճնշումը՝  $p = 760 \text{ mm}$  սնդ. սյան:
  193. Ինչպե՞ս կփոխվի սնդիկի սյան բարձրությունը ուղղաձիգ խողովակում, եթե շրջապատի օդի ջերմաստիճանը բարձրանա, իսկ ճնշումը մնա անփոփոխ:
  194. Ինչպիսի՞ն կլինեք մքնոլորտի հաստությունը, եթե օդու ունենար  $1,2 \text{ kg/m}^3$  հաստատուն խոռոչություն:
  195. Հնարավո՞ր է կատարել Տորիչելիի փորձը, եթե սնդիկով լցված խողովակը բաց ծայրով իջեցվի ջրով լցված անորի մեջ: Արտաքին ճնշումը՝  $p_0 = 760 \text{ mm}$  սնդ. սյան:
  196. Սնդիկով լցված խողովակի A անցքը փակված է խցանով: Ի՞նչ կկատարվի, եթե հանենք խցանը (տե՛ս նկարը):
  197. Ինչո՞ւ իր փորձում Տորիչելին օգտագործեց սնդիկ, այլ ոչ թե ջուր:
  198. Աշակերտը պնդում էր, որ ծանրաշափի ցուցմունքը սենյակում պետք է ավելի փոքր լինի, քան դրսում, քանի որ դրսում ծանրաշափի վրա ազդում է մքնոլորտային օդի շատ ավելի մեծ բարձրությամբ սյուն: Եթի՞շ է արդյոք աշակերտը:
  199. Մքնոլորտային ճնշումից մե՞ծ, թե՞ փոքր է անորում զագի ճնշումը (տե՛ս նկարը): Որքա՞ն է անորում զագի և արտաքին օդի ճնշումների տարրերությունը, եթե ճնշաչափում սնդիկի մակարդակների տարրերությունը 7 մմ է:
  200. Բացի մքնոլորտային ճնշումից՝ ի՞նչ գործոնները են ազդում անհերթու ծանրաշափի ցուցմունքի վրա:
  201. Մարմինը լրիվ խորասուզված վիճակում լողում է մաքուր ջրում: Ի՞նչ վիճակում կգտնվի այդ նույն մարմինը կերոսինում, սպիրտում:



202. Փայտե խցանի խտությունը 2 անգամ փոքր է ջրի խտությունից: Ի՞նչ դիրք կգրավի այն ջրում: Պատկերեք համապատասխան նկարը:
203. Աղյուսի և երկարի կտորի զանգվածները հավասար են: Դրանցից ո՞րն է ավելի հեշտ պահել ջրում: Ինչո՞ւ:
204. Որոշեք ծովի ջրում  $1,6 \text{ m}^3$  ծավալով քարի վրա ազդող արքիմենյան ուժը:
205. Որքա՞ն է գրանիտի բեկորի վրա ազդող արքիմենյան ուժը լրիվ խորասուզված վիճակում, եթե այն արտանել է  $0,8 \text{ m}^3$  ծավալով ջուր:
206.  $3,5 \text{ m} \times 1,5 \text{ m} \times 0,2 \text{ m}$  չափերով երկարքետոնե սալի իր ծավալի կետով ընկդմված է ջրի մեջ: Ի՞նչ արքիմենյան ուժ է ազդում նրա վրա:
207. Հեղուկի մեջ խորասուզելիս  $1 \text{ dm}^3$  ծավալով մարմնի վրա ազդում է  $9,8 \text{ N}$  ուժով մղող ուժ: Ի՞նչ հեղուկ է դա:
208. Որքա՞ն է փոքրանում մարդու կշիռն անօդ տարածությունում՝ օդում ունեցած կշռի համեմատությամբ: Մարդու ծավալը  $60 \text{ dm}^3$  է:
209. Որքա՞ն է կերոսինի մեջ լրիվ խորասուզված 1կգ զանգվածով բրոնզե մարմնի վրա ազդող արքիմենյան ուժը, եթե բրոնզի խորությունը  $8800 \text{ kg/m}^3$  է, իսկ կերոսինի խտությունը՝  $800 \text{ kg/m}^3$ :
210. Պարզե՞լ է, որ կերոսինի մեջ ամրողությամբ ընկդմվելիս պղնձակտորի կշիռը փոքրանում է  $160 \text{ N}$ -ով: Որքա՞ն է այդ պղնձակտորի ծավալը:
211. Կարո՞ղ է արդյոք  $350 \text{ kg}$  զանգվածով մարմնը լողալ ջրի երեսին, եթե նրա ծավալը  $0,4 \text{ m}^3$  է:
212. Մարմինն օդում կշռելիս ուժաչափը ցույց է տալիս  $4,3 \text{ N}$  ուժ, իսկ ջրում՝  $1,6 \text{ N}$ : Որքա՞ն է մարմնի ծավալը:
213. Լողացող մարմինն արտամղում է  $120 \text{ m}^3$  ծավալով կերոսին: Ի՞նչ ծավալով ջուր կարտամի այդ մարմինը: Որոշեք մարմնի զանգվածը:
214.  $6 \text{ m}$  կշռով մարմնի ծավալը  $400 \text{ m}^3$  է: Կսուզի՞ արդյոք այն ջրում: Ինչո՞ւ: Պատկերեք այդ մարմնի վրա ազդող ուժերը:
215. Ի՞նչ ուժ է հարկավոր  $1000 \text{ kg}$  զանգվածով մարմարի կտորը ջրում լրիվ խորասուզված վիճակում պահելու համար:
216. Ի՞նչ ուժ պետք է կիրառել  $30 \text{ kg}$  զանգվածով և  $0,012 \text{ m}^3$  ծավալով քարը ջրի տակ պահելու համար:
217. Երկարե խարիսխը ծովի ջրում խորասուզելիս  $120 \text{ N}$ -ով թերև է կշռում: Որոշեք խարիսխի ծավալը և նրա կշիռն օդում:
218. Լաստը կազմված է  $12$  չոր սոճու չորսուներից: Յուրաքանչյուր չորսուի երկարությունը  $4 \text{ m}$  է, լայնությունը՝  $30 \text{ m}$ , հաստությունը՝  $25 \text{ m}$ : Կարելի՞ է արդյոք այդ լաստով տեղափոխելել  $10 \text{ kg}$  կշիռ ունեցող ավտոմեքենան:
219. 5մ երկարությամբ և  $3\text{m}$  լայնությամբ ուղղանկյուն կցանավը բեռնավորման հետևանքով խորասուզվեց  $50\text{m}^3$ -ով: Որոշեք կցանավին բարձած թեորի զանգվածը:
220. Խցանի կտորը լողում է կերոսինի մեջ: Նրա ծավալի ո՞ր մասն է կերոսինից դուրս:

221. Սաղակտորը լողում է ջրում: Նրա՝ ջրից դուրս գտնվող մասի ծավալը  $20 \text{ m}^3$  է: Որքա՞ն է ջրի տակ գտնվող մասի ծավալը:
222. Սաղակարի վերջրյա մասի ծավալը  $5000 \text{ m}^3$  է: Որոշել նրա լրիվ ծավալը:
223.  $0,6 \text{ m}^3$  ծավալով մարմինը լողում է ջրի մակերևույթին: Որքա՞ն է մարմնի՝ ջրից դուրս գտնվող մասի ծավալը, եթե նրա վրա ազդող արքիմեդյան ուժը  $5 \text{ kN}$  է:
224. Ի՞նչ ծավալով ջուր է արտադրում  $3 \text{ m}^3$  երկարությամբ,  $30 \text{ m}$  լայնությամբ և  $20 \text{ m}$  բարձրությամբ լողացող փայտե շրտում: Փայտի խտությունը  $600 \text{ kg/m}^3$  է:
225. Քաղցրահամ ջրում մինչև ջրագիծը սուզված նավն արտադրում է  $15000 \text{ m}^3$  ջուր: Նավի կշիռն առանց բեռի  $5000000 \text{ N}$  է: Որքա՞ն է բեռի կշիռը:
226. Ի՞նչ նվազագույն ծավալ պետք է ունենա 7կգ զանգվածով փշովի նավակի ջրասուզված մասը, որպեսզի ջրի վրա պահի երեխային, որի կշիռը  $380 \text{ N}$  է:
227. Մաքուր ուկու՞ց է արդյոք պատրաստված արքայական քազը, եթե նրա կշիռն օդում  $28,2 \text{ N}$  է, իսկ ջրում՝  $26,4 \text{ N}$ :
228. Երկու միանման փուչիկներից մեկի մեջ ջրածին է լցված, մյուսի մեջ՝ նույն ծավալով հելիում: Փուչիկներից ո՞րն ավելի մեծ վերամբարձ ուժ ունի: Ի՞նչո՞ւ:
229.  $3,4 \text{ q}$  զանգվածով փուչիկը լցված է ջրածնով, որի ծավալը  $0,03 \text{ m}^3$  է: Որքա՞ն է փուչիկի վերամբարձ ուժը:
230.  $10 \text{ m}^3$  ծավալով ռադիոգոնի մեջ՝ լցված է ջրածին լցված: Ի՞նչ կշռով ռադիոսարքավորում կարող է այն բարձրացնել, եթե զոնդի բաղամքի կշիռը  $6 \text{ N}$  է:

## ԽՆԴԻՐՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

### ԳԼՈՒԽ II.

1. Ուղիղ զիծ է:
2. Ω:
3. 40 մ:
4. 8 մ:
5. 700 մ:
6. 10 մ/վ:
7. 500 սմ/վ, 5 մ/վ:
8. Դելֆինի:
9. 40 կմ/ժ:
10. 36 կմ/ժ:
11. 2400 կմ/ժ, 667 կմ/ժ:
12. 1,2 կմ:
13. 3,36 մ:
14. 946 000 000 կմ:
15. 20ր, 9վ, 6վ, 3վ:
16. 500վ:
17. Ω:
18. Լողորդինը:
20. 80 ր:
21. 40 կմ/ժ, 400 կմ:
22. 90վ:
23. 15 ր:
24. 2Ժ, 180 կմ, 144 կմ:
25. 75 կմ:
26. 10 մ, 15 մ, 5 մ/վ, 15 մ/վ:
28. 30 մ/վ, 0, 30 մ:
29. 16.40
30. Ω:
32. 2700 կգ/մ³:
33. 0,07 գ/սմ³:
34. Բենզին:
35. Ուսիի:
36. 1,6 գ/սմ³:
37. 1,35 կգ:
38. 22,6 կգ, 21,5 կգ,  
19,3 կգ:
39. 1 կգ:
40. 44,712 կգ:
42. 20 սմ³:
43. 3,1 լ:
44. Այն, η, ω, αյն:
45. Ω, αյն:
46. 3 կգ:

47. 2, 25:

49. Այն:

50. 50 սմ³:

51. 19:

52. 1,2 գ/սմ³:

53. 66,3 գ:

54. 216 ր:

55. 19,6 կԵ:

56. 4,9 Ն:

57. Հավասար են:

58. Ω:

59. 9,18 կգ:

60. Այն:

61. 78,4 Ն:

62. 20 Ն:

63. 200 կԵ, դեպի վեր:

64. 14 Ն:

65. 200 Ն/մ:

66. 20 սմ:

67. 22,5 մմ:

68. 2,45 կգ:

69. 0,84 կԵ:

70. 0,8 մ:

71. 784 Ն:

72. 1960 Ն:

73. 882 Ն:

74. 6,8 Ն:

75. 882 Ն, 45000 անգամ  
մեծ է:

76. ա) դադարի,  
բ) դադարի, գ) սահրի,  
դ) գլորման:

77. 10 Ն:

79. 4,9 Ն:

### ԳԼՈՒԽ III.

80. 100 Զ:

81. 4 մ:

82. 490 Զ:

83. 29400 Զ:

84. 400 կԶ:

85. 1 մ/վ:

86. 245 Վտ:

87. 60 կԵ:

88. 196 կՎտ:

90. 179,67 կՎտ:

92. ω) 30 Ն, p) 10 Ն:

93. 2,45 Ն:

94. Մեծ զմուի կախման  
կետից 0,25 մ ձախ:

95. 8 Նմ, 8 Նմ, αյն:

96. 40 Ն:

97. 19,6 Ն, հավասար են:

98. 98 Ն:

99. 0,2 մ:

100. 4 ամօնամ:

101. 81,(6)%:

102. 81,(6)%:

103. 24,5 Զ, 35 Զ, 70%:

104. 441 Զ, 531 Զ, 83%:

105. 1500 Զ:

106. 57,14 կգ:

### ԳԼՈՒԽ IV.

111. 25 Ա:

112. 10 Ա:

119. Դիֆուզիայի հետևան-  
քով ածխաթրու գազը,  
որն օդից ծանր է, տա-  
րածվում է օդում, իսկ  
անորդ լցվում է օդով:  
Կշեռք՝ ածխաթրու  
գազով անորի նժարը  
բարձրանում է:


120. Ջրածնի դիֆուզիայի  
հետևանքով:

Ջրածնով անորի  
նժարն իջնում է:

122. 3-րդ բաժակում:

124. Յուրաքանչյան:

126. Բաժակի կտորներն  
իրար կիալ մոտենում  
են միայն փոքր  
քվով կետերում,  
որտեղ ի հայտ են  
զալիս մոլեկուլների  
փոխադարձ  
ձգողության ուժերը:

- 127.** Զքի մոլեկուլների փոխադարձ ձգողության ուժերի պատճառով:
- 128.** Պողպատի, կապարի, մոմի:
- 129.** Մեծ ճնշման տակ մոտադների առողջները պետք է մոտենան այսքան, որ փոխադարձ ձգողության ուժերը դառնան գերալշողող:
- 130.** Զքի և ապակու մոլեկուլները փոխազդում են զգալիորեն մեծ ձգողության ուժերով:
- 131.** Դիմոց:
- 132.** Սոսնձի և զրդանյութի մասնիկները հնարավորինս մոտենում են իրար կացվող մարմինների մակերևույթին՝ ապահովելով ձգողության ուժերի ազդեցությունը:
- 133.** Զքի և ապակու մոլեկուլների փոխադարձ ձգողության ուժերի շնորհիվ:
- 134.** Պղնձի և սննդիկի ատոմների փոխադարձ ձգողության ուժերն ավելի մեծ են, քան սննդիկի ատոմների փոխադարձ ձգողության ուժերը:
- 135.** Մազականության շնորհիվ:
- 140.** Սյան երկարությունը կփոքրանա:
- 141.** Սառը:
- 142.** Զերմաշափի ցուցմունքը կնվազեր:
- 143.**  $t_f = 45\,000\,032^{\circ}\text{F}$ :  
 $32^{\circ}\text{F}$ -ը կարելի է անտեսել  $45\,000\,000^{\circ}\text{F}$ -ի նկատմամբ:
- 147. Ո.Հ.:**
- ԳԼՈՒԽ V.**
- 152.** 21 ԿՊա:
- 153.** 35 ԿՊա:
- 154.** 2,1 ԿՊա:
- 156.** 70000 ԿՊա,  
 2000 անգամ:
- 158.** 113,4 ԿՊա:
- 159.**
- 
- Եթե խողովակներից մեկով օդ փչենք ջրով լցված անորի մեջ, ապա ջրի վրա ճնշումը կմնանա, և ջուրը երկրորդ խողովակի միջով կրաքանակ լցվելով դատարկ բաժակի մեջ:
- 163.** Ներքինից՝ սննդիկ,  
 ջուր, ծեր: 1372 Պա,  
 15190 Պա:
- 164.** 980 Պա, 4,9 Ն:
- 167.** 36 անգամ:
- 168.** 196 Ն:
- 169.** Երեխայի մատի վրա ջրի ճնշումը կախված է միայն ջրի խոռությունից և այն բանից, թե որքա՞ն է ամբարտակին բացված անցքի
- մակարդակը ցածր ծովի մակարդակից:  
 Ծովի չափերը, բնականարար, ոչ մի նշանակորյուն չունեն:
- 170.** Որքան խորն է ընկողմված ջրասուզորդը, այնքան ավելի մեծ է ճնշումը նրա կրծքավանդակին և թոքերին: Արդեն  $1\frac{1}{2}$  մ խորությունում ջրի ճնշումն այնքան է մեծ, որ խողովակի միջոցով մքնողորտային օդը շնչելը դառնում է անհնար:
- 171.** Չափման նույն պայմաններն ապահովելու նպատակով: Եթե, օրինակ, ճնշումը չափվեր սրունքների շրջանում, ապա չափման արդյունքը կախված կլիներ նարդու հասակից, որը բարդություն կատեղծեր ստացված արդյունքները մեկնաբանելիս:
- 172.** Օվկիանոսների մակարդակների տարրերությունը Պանամայի ջրանցքի տարքեր կողմերում մասամբ պայմանավորված է այդ օվկիանոսների տարքեր աղիությամբ: Խաղաղ օվկիանոսի ջուրն ավելի աղի է, հետևաբար՝ նաև ավելի խիտ: Ուստի Պանամայի ջրանցքի դեպի Խաղաղ օվկիանոս տանող ելքի մոտ ջրի մակարդակն ավելի

յածր է, քան Ատլանտ-  
յան օվկիանոսի եղի  
մոտ:

173. Ծշում հեղուկի ավե-  
լացմանը գուզընթաց  
նրանում ողը սեղմ-  
կում է, և նրա ճնշումը  
մեծանում է: Այդ  
ճնշմամբ հավասա-  
րակշռվում է ձագարի  
միջի հեղուկի ճնշումը:  
Այժմ հասկանալի է,  
որ, ձագարը մի փոքր  
բարձրացնելով, սեղմ-  
կած ողի համար դեպի  
դորս ելք ենք բացում,  
և այդ դեպքում նոր հե-  
ղուկը ձագարի միջից  
սկսում է հոսել:

174. 25 սմ:

175. Օդն արտամղելիս  
ճնշումն ԱԲ խողովա-  
կում դառնում է մքնո-  
լորտայինից փոքր:  
Մքնոլորտային  
ճնշման ազդեցու-  
թյամբ աջ անորի  
ջուրը մղվում է Յ  
խողովակի մեջ:

176. Երևանում: Սևանը  
Երևանից մոտ  
1000 մ-ով ավելի  
բարձր է, ուստի ողի  
խողովայինը Սևանում  
ավելի փոքր է, քան  
Երևանում:

177. Փորձանորները շրջե-  
լիս մեծ փորձանորից  
ջուրը բափկում է,  
փոքր փորձանորի  
վրա ջրի գործադրած  
ճնշման ուժը վերնից  
փոքրանում է, ուստի  
մքնոլորտային  
ճնշման ուժից

ազդեցությամբ փոքր  
փորձանորը մղվում է  
մեծ փորձանորի մեջ:

178. Այրվող բուղը տա-  
քացնում է բաժակի  
օդը, որն ընդարձակ-  
վելով, մասամբ  
դուրս է զալիս բաժա-  
կից: Բաժակն արագ  
շրջելով և դնելով ռե-  
տինե բաղանքին՝  
ապահովում ենք  
ողի քանակի  
անփոփոխությունը  
բաժակում: Սաշելիս  
ողի ճնշումը բաժա-  
կում փոքրանում է  
և մքնոլորտային  
ճնշման ազդեցու-  
թյամբ ռետինե բա-  
ղանքը ներքաշվում է  
բաժակի մեջ:

179. Օորակը բացելիս ջրի  
սյան վրա, բացի  
հիմքուստատիկ  
ճնշման ուժից, վերնից  
կազդի նաև մքնոլոր-  
տային ճնշման ուժը,  
ուստի հեղուկը լրիվ  
կրատարկվի անորից:  
Չանի որ ծորակով  
անորը և լայն անորը  
հաղորդակցվում են,  
ապա նրանց վրա  
միննույն արտաքին  
(տվյալ դեպքում՝  
մքնոլորտային)  
ճնշման դեպքում  
հավասարակշռության  
վիճակում ջուրը  
կկանգնի նույն  
մակարդակի վրա:

180. Այս: Իջեցված  
պղպջակի ծավալը  
կփոքրանա, քանի  
որ մքնոլորտային

ճնշումը ներքև իջնե-  
լիս մեծանում է:  
Իջեցված պղպջակից,  
մեծացած ճնշման  
ազդեցությամբ ողի մի  
մասը կլցվի վերևում  
մնացած պղպջակի  
մեջ, և նրա ծավալը  
կմնանա:

181. 72 սմ, 5,3 սմ:

182. Փչածը: Փչած զմյա-  
կում ողը ավելի մեծ  
ճնշման տակ է, քան  
մքնոլորտայինն է,  
ուստի այն ավելի  
մեծ խոտություն ունի:  
Ստոգել կարելի է  
լծակավոր կշեռքով:

183. Կմեծանա:

184. Խմելուն խոչընդո-  
տում է մքնոլորտային  
ճնշումը: Խմելը կա-  
րելի է հետացնել մի  
նոր անոր բացելով:

185. Մքնոլորտային  
ճնշման ուժը:

186. Վերնից լրագրի վրա  
ազդում է մքնոլոր-  
տային ճնշման ուժը:  
Եթե քանոնի ծայրը  
դանդաղ սեղմենք, ողը  
կրափանցի լրագրի  
և սեղանի արանքը և  
մասամբ կհամակշռի  
վերնից ազդող  
ճնշման ուժը: Կտրուկ  
հարվածի դեպքում  
ողը, իներցիայի հե-  
տևանքով, չի հասցնի  
բափկանցի լրագրի  
տակ, ճնշման ուժը  
վերնից գագալիրեն  
գերազանցում է ներ-  
քնից ազդող ուժը, և  
քանոնը կոտրվում է:

187. Օղի պղպջակները փորձանորից դրւու և զայխու օդահան զանգի տակ ճնշման փորձանալու հետևանքով, ուստի փորձանորում օղի ճնշումը գործնականում դառնում է զրո: Եթե օդահան զանգի տակ ճնշումը նորից հավասարվի մընոլորտային ճնշմանը, փորձանորը կլցվի զրով:
188. 12,92 մ:
189. 5,3 մմ:
190. 87965 Ն:
191. Նորմալ մընոլորտային ճնշման դեպքում մի կողմից լուսամուտի ապակու վրա ազդում է  $202650 \text{ Ն}$  ուժ: Ապակին չի կոտրվում, որովհետև ապակու վրա երկու կողմից ազդող ճնշման ուժերը միմյանց համակշռում են:
- 192.
- 
- $h = 760 \text{ մմ}$
- $l = 2h = 1520 \text{ մմ}$
193. Անփոփոխ ճնշման դեպքում շրջապատի ջերմաստիճանի աճի հետ սնդիկն ընդարձակում է, իսկ նրա խտությունը՝ փորձանում: Հետևաբար սնդիկի սյան բարձ-
- րույթունն աճում է (ներադրվում է, որ ապակե խողովակի ջերմային ընդարձակումը կարելի է անտեսել սնդիկի ջերմային ընդարձակման համեմատությամբ):
194. 8,6 կմ:
195. Ոչ: Սնդիկը, որ ջրից 13,6 անգամ խիտ է, կնատի անորի հատակին, իսկ սնդիկից ազատված անոքը լրիվ կլցվի զրով:
196. Խցանը հանելիս մթնոլորտային ճնշման ազդեցությամբ անցրից վեր գննող սնդիկի մասը կլցնի տորիքելյան դատարկությունը, իսկ ստորին մասը կլցվի լայն անորի մեջ:
197. Տորիքելիի փորձը զրով կատարելու համար կալահանջվեր 10 մ-ից ավելի երկարությամբ խողովակ: Բայց այդ, փորձը զրով կատարելիս պետք է հաշվի առնել նաև ջրի գոլորշու ճնշումն անորի՝ ջրից վեր գտնվող մասում:
198. Ոչ: Համաձայն Պասկալի օրենքի՝ գազի վրա գործադրված ճնշումը հաղորդվում է բոլոր ուղղություններով առանց փոփոխության, հետևաբար սննյակում կիմի նույն ճնշումը, ինչ դրսում:
199. Փոքր է: Ծնչումների տարրերությունը հավասար է  $h = 7 \text{ մ}$  բարձրությամբ սնդիկի սյան հիմքուստատիկ ճնշմանը. 933 Պա:
204. 16,15 կՆ:
205. 7840 Ն:
206. 5145 Ն:
207. Զուր:
208. 0,758 Ն:
209. 0,89 Ն:
210.  $0,02 \text{ մ}^3$ :
211. Այն:
212.  $275,5 \text{ սմ}^3$ :
213.  $96 \text{ սմ}^3, 96 \text{ գ}$ :
214. Կառուցվի:
215.  $6,17 \text{ կՆ}$ :
216.  $176,4 \text{ կՆ}$ :
217.  $11,89 \text{ դմ}^3, 908,7 \text{ Ն}$ :
218. Կարելի է:
219.  $7,5 \text{ տ}$ :
220.  $0,7$ :
221.  $180 \text{ մ}^3$ :
222.  $50000 \text{ մ}^3$ :
223.  $0,09 \text{ մ}^3$ :
224.  $0,108 \text{ մ}^3$ :
225.  $140000 \text{ կՆ}$ :
226.  $45,8 \text{ դմ}^3$ :
227. Ոչ:
228. Զրածնով լցվածը:
229.  $1,96 \text{ մ}^3$ :
230.  $111,6 \text{ Ն}$ :

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

## ԳԼՈՒԽ I

### ՖԻԶԻԿԱԿԱՆ ՄԵԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ: ՊԱՐՁԱԳՈՒՅՆ ՉԱՓՈՒՄՆԵՐ

§1. Ֆիզիկայի ուսումնասիրնան առարկան: Ֆիզիկական երևույթներ	3
§2. Ֆիզիկոսների մասին: Հայ ֆիզիկոսներ	5
§3. Խնչակն են ուսումնասիրում ֆիզիկական երևույթները	8
§4. Ֆիզիկական մեծություններ: Ֆիզիկական մեծությունների չափումը: չափման սխալ	10
§5. Լարորատոր աշխատանք 1. Հեղուկի ծավալի չափումը չափանորի միջոցով	14
§6. Ֆիզիկայի կապը մյուս բնական գիտությունների հետ: Ֆիզիկան և տեխնիկան	15

## ԳԼՈՒԽ II

### ՄԱՐՍԻՆՆԵՐԻ ՏԱՐԺՈՒՄ ԵՎ ՓՈԽԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ

§7. Մեխանիկական շարժում: Շարժման հարաբերականությունը	18
§8. Նյութական կետ: Շարժման հետազիծ: ճանապարհ	21
§9. Հավասարաչափ շարժում: Արագություն	24
§10. Հավասարաչափ շարժման գրաֆիկական պատկերումը	29
§11. Իներցիայի երևույթը	33
§12. Մարմինների փոխազդեցությունը	36
§13. Մարմնի զանգված	38
§14. Լարորատոր աշխատանք 2. Զանգվածի չափումը լծակավոր կշեռով	41
§15. Նյութի խտություն	42
§16. Մարմնի զանգվածի և ծավալի հաշվումը	44
§17. Լարորատոր աշխատանք 3. Պինդ մարմնի խտության որոշումը	46
§18. Ուժ	48
§19. Տիեզերական ձգողության ուժ: Ծանրության ուժ	51
§20. Մի ուղղով ուղղված ուժերի գումարումը	55
§21. Առաձգականության ուժ: Հուկի օրենքը	57
§22. Ուժաչափ	61
§23. Լարորատոր աշխատանք 4. Ուժաչափի աստիճանավորումը և ուժի չափումն ուժաչափով	63
§24. Մարմնի կշիռ	64
§25. Ըիմման ուժ	66
§26. Ըիմման ուժի դերը բնության մեջ, տեխնիկայում և կենցաղում	68

## ԳԼՈՒԽ III

### ԱԵԽԱՏԱՆՔ ԵՎ ՇՅՈՐՈՒԹՅՈՒՆ: ՊԱՐՁ ՄԵԽԱՆԻՉՄՆԵՐ

§27. Մեխանիկական աշխատանք	70
§28. Հզորություն	73
§29. Պարզ մեխանիզմներ: Լծակ: Լծակի կանոնը	77
§30. Մոմենտների կանոնը: Լծակի կիրառությունները	79
§31. Լարորատոր աշխատանք 5. Լծակի հավասարակշռության պայմանի ուսումնասիրումը	82


§32. Ծախսարակ: Ոլորան: Թեք հարթություն	83
§33. Մեխանիզմի օգտակար գործողության գործակից	86
§34. Լարորատոր աշխատանք 6. Թեք հարթության ՕԳԳ-ի որոշումը	88
<b>ԳԼՈՒԽ IV</b>	
<b>ՆՅՈՒԹԻ ԿԱՌՈՒՅՎԱԾԵԸ</b>	
§35. Ֆիզիկական մարմնի և նյութի: Նյութի կառուցվածքը	91
§36. Մեծ և փոքր բվերի գրառումը	95
§37. Ասումներ և մոլեկուլներ	97
§38. Մոլեկուլների շարժումը: Դիֆուզիա	100
§39. Մոլեկուլների փոխազդեցությունը	103
§40. Մոլեկուլների քառային շարժման արագությունը և մարմնի ջերմաստիճանը	107
§41. Ջերմաչափ: Ջերմաստիճանային սանդղակ	109
§42. Նյութի ազրեզատային վիճակները: Գագերի, հեղուկների և պինդ մարմինների կառուցվածքը	114
§43. Լարորատոր աշխատանք 7. Փոքր մասնիկների շափերի որոշումը	118
<b>ԳԼՈՒԽ V</b>	
<b>ՃՆՇՈՒՄ</b>	
§44. Ճնշման ուժ և ճնշում: Ճնշման միավորը	119
§45. Գազի ճնշումը	122
§46. Ճնշման ուժերի բնույթը հեղուկներում: Հեղուկի ճնշումը	126
§47. Ճնշման հաղորդումը հեղուկներով և գազերով: Պասկալի օրենքը	129
§48. Հիդրոստատիկ ճնշում: Հեղուկի ճնշումն անոքի հատակին և պատերին	132
§49. Ճնշումը ծովերի և օվկիանոսների հատակին: Ծովային խորությունների ուսումնասիրումը	136
§50. Հաղորդակից անորներ: Հաղորդակից անորներում հեղուկի հավասարակշռության պայմանները	139
§51. Ջրաբաշխական մամլիչ	142
§52. Մքնոլորտային ճնշում	146
§53. Մքնոլորտային ճնշման շափումը: Տորիէլիի փորձը	150
§54. Ծանրաչափ: Անհեղուկ ծանրաչափ: Մխոցավոր հեղուկ պոմապ	154
§55. Մքնոլորտային ճնշման կախումը բարձրությունից	157
§56. Հեղուկի և գազի ազդեցությունը նրանց մեջ ընկրնված մարմինների վրա	160
§57. Արքիմեդի օրենքը	162
§58. Լարորատոր աշխատանք 8. Արքիմեդի օրենքի փորձնական ստուգումը	164
§59. Մարմինների լողալը	165
§60. Կենդանիների և մարդու լողալը	168
§61. Նավերի լողալը: Օդագնացություն Խնդիրներ Խնդիրների լուծումներ	170 175 190

**ԵՐԱՌԱՐԻ ՂԱԶԱՐՅԱՆ  
ԱԼԲԵՐՏ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ  
ԳԱԳԻԿ ՄԵԼԻՔՅԱՆ  
ՈՂՍՏՈՒ ԹՈՍՈՒՆՅԱՆ  
ՍՈՍ ՄԱԻԼՅԱՆ**

## **ՖԻԶԻԿԱ-7**

**Հանրակրթական դպրոցի 7-րդ դասարանի դասագիրը  
Հաստատված է  
ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից**

**Ձևավորումը, Էջապրումը, նկարները՝  
Արքուր Հարությունյանի**



**ԷՐԻԿ ՊՐԻԱՆ  
հրամանափակչություն**

**Թումանյան 12  
(37410) 52 08 48  
(37410) 56 08 41**

**Տպագրված է «Էրիկ Պրիան» ՍՊԸ տպարանում:  
Թուրք օֆսեր: Չափսը՝ 70x100 1/16:  
Տպագրական 12 1/4 մամոլ:  
Տպարանակը՝ 32020:**

# ՖԻԶԻԿԱ

Գլուխ I

ՖԻԶԻԿԱԿԱՆ ՄԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
ՊԱՐԱՊՈՒՅԵՍ ՀԱՓՈՒՄՆԵՐ

Գլուխ II

ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՏԱՐԺՈՒՄԸ  
ԵՎ ՓՈԽԱՊԼԵԱԲԵՐԵՄՆԵԾ

Գլուխ III

ԱՏՄՈՍՓԱՏԱԿԱՆ ԵՎ ՇՋՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
ՊԱՐԱԿԱՆԱԿՑՄԱՆ

Գլուխ IV

ԶԱՐԱԿԱՆՈՒԿ ԿԵՐԱԿՈՒՅՆ

Գլուխ V

ՄԱՐՄԻՆ

